

## ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱԶՅԱՆ

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱԾԱՆ ԵՎ  
ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ  
ԱՐԵՎԱՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
1912-1914 ԹԹ.

9(47.925)

f - 84

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿADEMİYI  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՆԱՏԻՏՈՒՏ

**ԲՈՅԱԶՅԱՆ ՀՈՎԱԿԻՄ ՍԵՐԳԵՅԻ**

ՊՈՂՈՍ ՆՈՒԹԱՐ ՓԱԾԱՆ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ  
ԽՆԴԻՐՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ 1912-1914 ԹԹ.

4325

ՄԵՄՐՈՊ ԱՐԲ. ԱՇԽԱՆ  
ՄԱՏԵՆԱԿՈՐ

53



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

53

Երևան  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ  
2010

ՀՏԴ 941 (479.25)

Գ.ՄԴ 63.3 (22)

Բ 842

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. Ս. Ս. Ստեփանյան

Բոյաջյան Հ.

Բ 842 Պողոս Նուրար Փաշան և քարենորդումների խնդիրներն  
Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ. - Եր.: Պատմության  
ինստիտուտ, 2010.- 208 էջ:

Մենագրության մեջ արխիվային նորահայտ փաստաթղթերի, պատ-  
մագիտական գրականության և պարբերական մամուլի նյութերի հիման վրա  
ուսումնասիրված և լուսաբանված է առաջին համաշխարհային պատերազմի  
նախօրյակին Հայկական հարցի լուծմանը նպաստելուն ուղղված եղիպատ-  
հայ հասարակական-քաղաքական գործի Պողոս Նուրար Փաշայի գործու-  
մերությունը: Ներկայացված են ականավոր գործի ջանքերն եվրոպական  
դեկավար շրջանների և հասարակական կարծիքի վերաբերմունքն Արևմտյան  
Հայաստանում քարենորդումների իրականացմանն ի նպաստ դարձնելու  
ուղղությամբ:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների և  
ընթերցող լայն հասարակայնության համար:

ISBN 978-99941-73-38-9

ՀՏԴ 941 (479.25)

Գ.ՄԴ 63.3 (22)

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Վերականգնված հայկական անկախ պետականության պայման-  
ներում երկրի արտաքին քաղաքական հիմնական խնդիրներից մեկը  
հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելն է: Դրա  
կարևոր գրավականներից է՝ որքան հնարավոր է շատ պետություննե-  
րի կառավարությունների, խորհրդարանների համախմբումը և նրանց  
ջանքերի ներգավումն ու ծառայեցնելը ցեղասպանության ճանաչման  
գործին: Այս ինաստով «Պողոս Նուրար Փաշան և քարենորդումների  
խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ.» թեմայի ուսումնա-  
սիրությունն ունի քաղաքական արդիականություն: Իսկ ովկանագի-  
տության պատմության մեջ Պ. Նուրարն առաջիններից էր, որ փորձեց  
ձեռք բերել մեծ տերությունների դեկավար շրջանների աջակցությունը  
Հայկական հարցի լուծման խնդրում: Այս շրջանի նրա գործունեութ-  
յան ուսումնասիրումը կարող է օգտակար լինել հայ ովկանագետների  
համար:

Թեմայի գիտական արդիականությունն այն է, որ նվիրված է հայ  
ժողովրդի պատմության առանցքային հիմնախնդիրներից մեկին՝ Հայ-  
կական հարցին, որը, շնայած քազմաքիլ հետազոտությունների, դեռևս  
ուսումնասիրման կարիք ունի: Աշխատությունում, մասնավորապես,  
փորձ է արվում լուսաբանել առաջին համաշխարհային պատերազմի  
նախօրյակին Հայկական հարցի լուծմանը նպաստելուն ուղղված ե-  
ղիպատհայ ականավոր հասարակական-քաղաքական գործի Պողոս  
Նուրար Փաշայի գործունեությունը:

Աշխատության թեման ընդգրկում է 1912 թ. հոկտեմբերից մինչև  
1914 թ. հուլիս ամիսներն ընկած ժամանակաշրջանը, որն առանձին  
փուլ է Հայկական հարցի ովկանագիտական պատմության մեջ և հա-  
րուստ պատմական իրադարձություններով:

Աշխատության նպատակն է համակողմանի ուսումնասիրել և լու-  
սաբանել 1912-1914 թթ. հայկական քարենորդումների խնդրի միջա-

գային դիվանագիտական քննարկման ընթացքում Պողոս Նուբար Փաշայի ծավալած գործունեությունը: Ելնելով ուսումնասիրության նպատակից՝ աշխատությանում հարուստ փաստական նյութի հիման վրա խնդիր է դրվել:

- բացահայտել Հայկական հարցի վերաբացման նախադրյալները և այդ խնդրում մեծ տերությունների ունեցած դիրքորոշումներն ու շահախնդրությունները,

- ներկայացնել տերությունների դիկավար շրջանների մոտ Հայկական հարցի պաշտպանության համար Պողոս Նուբարի գլխավորությամբ Հայ Ազգային Պատվիրակության կազմավորման գործընթացը,

- լուսաբանել հայկական քարենորդումների խնդրի լուծման վերաբերյալ Պ. Նուբարի ունեցած հայացքները,

- ցույց տալ Պ. Նուբարի ձեռնարկները եվրոպական դեկավար շրջանների և հասարակական կարծիքի վերաբերմունքն Արևմտյան Հայաստանում քարենորդումների իրականացմանն ի նպաստ դարձնելու ուղղությամբ,

- վեր հանել Պ. Նուբարի ջանքերը Հայկական հարցում Գերմանիայի դիմադրությունը մեղմելու խնդրում,

- ներկայացնել հայկական վիճակների ընդհանուր քննիչների ընտրության և նրանց իրավասությունների պաշտպանության գործում Պ. Նուբարի դերը:

Աշխատության աղբյուրագիտական հիմքը կազմում են արխիվային նյութերը, դիվանագիտական փաստարդերի ժողովածուները, ժամանակի մամուլը և պետական, քաղաքական, հասարակական գործիչների ու դիվանագետների հուշագրությունները:

Խնդրո առարկա հիմնահարցի ուսումնասիրության համար կարելոր նշանակություն ունեն Հայաստանի Ազգային Արխիվի /ՀԱՍ/ տարրեր ֆոնդերում /ֆ. 57, գ. 5; ֆ. 113, գ. 1; ֆ. 430, գ. 1; ֆ. 503, գ. 1/ պահպող նյութերը, որոնք հնարավորություն են ընձեռում ճիշտ պատ-

կերացում կազմելու Հայկական հարցի վերաբացման և դրա շուրջ ծավալող դիվանագիտական պայքարի մասին, ինչպես նաև լուսաբանելու եվրոպական դեկավար շրջանների և հասարակական կարծիքի վերաբերմունքն արևմտահայության խնդրին ի նպաստ դարձնելու ուղղությամբ Պ. Նուբարի կատարած ձեռնարկներն ու հայկական քարենորդումների իրականացման վերաբերյալ նրա ունեցած հայացքները:

Հայկական հարցի վերաբացումը, Ազգային Պատվիրակության կազմավորումն ու Պ. Նուբարի ձեռնարկները լուսաբանելու համար արժեքավոր են ՀՀ Ե. Զարենցի անվան Գրականության և Արվեստի Թանգարանի /ՀՀ ԳԱԹ/ Ա. Չոպանյանի, Գ. Զոհրաբյանի, Հ. Առաքելյանի և Վ. Մալեզյանի ֆոնդերում գետեղված փաստաբրերը:

Հիմնահարցի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային ֆոնդերում /Կարողիկոսական դիվան, Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ/ և ՀՀ Գյուղությունների Ազգային Ակադեմիայի Պատմության ինստիտուտի Լեոյի անձնական արխիվում /ֆ. 1, գ. 1/ եղած ուշագրավ նյութերը:

Հայկական հարցի քննարկման շուրջ ծավալող իրադարձությունները, եվրոպական մայրաքաղաքներում Պ. Նուբարի կատարած ձեռնարկներն ու դրանց նկատմամբ լուսական իշխանությունների ունեցած վերաբերմունքը լուսաբանվում է Ռուսաստանի Արտաքին Քաղաքականության Արխիվի «Քաղաքիսիվ» ֆոնդում հավաքված փաստաբրերում, որոնք միկրոժապավեճների տեսքով պահպում են Հայաստանի Ազգային Արխիվում:

1913 թ. հունիս – 1914 թ. փետրվար ամիսներին Պ. Նուբարի ծավալած գործունեության ուսումնասիրության համար մեծ արժեք ունեն Փարիզի Նուբարյան Մատենադարանի Հայ Ազգային Պատվիրակության արխիվի փաստաբրերը /թղթ. 1/1, 1/2/:

Հայկական քարենորդումների խնդրի շուրջ Գերմանիայի դեկավար շրջանների հետ Պ. Նուբարի վարած քանակցությունների լուսա-

բանման համար հետաքրքրություն են ներկայացնում գերմանական Հալլ քաղաքի Յուհաննես Լեփսիուսի Արխիվի որոշ փաստաթղթերը:

Հիմնահարցի ուսումնասիրության համար կարելոր աղյուրագիտական նշանակություն ունեն դիվանագիտական փաստաթղթերի և նյութերի ժողովածումները, որոնք ընդգրկում են Հայկական հարցի վերաբերյալ վավերագրեր<sup>1</sup>, հնարավորություն են տալիս լրսարաններ արևմտահայերի անտանելի ծանր կացությունը<sup>2</sup>, 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների հարցի շուրջ տեղի ունեցած դիվանագիտական թնարկումներն ու պայրարձ, այդ խնդրում տերությունների դրանորած դիրքորոշումներն ու շահախնդրությունները<sup>3</sup>: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Վ. Ղազարյանի խմբագրությամբ լույս տեսած արխիվային նյութերի ժողովածում<sup>4</sup>, որ տեղ են գտնել Հայկական հարցի պաշտպանությամբ Պ. Նորարի 1915-1918 թթ. ժամանակաշրջանը վերաբերող փաստաթղթերը:

Աշխատության համար աղյուրագիտական կարելոր հիմք են հանդիսանում ժամանակի դեպքերի ու իրադարձությունների ականա-

<sup>1</sup> Էջ, Հայոց հարցի վաերագրերը, Թիֆլիս, 1915; Լազին Գ., Հայաստանի և հայդաստանում ժամանակի դեպքերի ու իրադարձությունների ականա-

<sup>2</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայությունում. Փաստաթղթի և նյութի ժողովածու, Ս. Ներփայանի խմբ., Երևան, 1991:

<sup>3</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթղթում /1828-1923/, Զ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972; Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 года – 10 мая 1914 года, Петроград, 1915; Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/. Материалы политического архива Министерства Иностранных Дел Кайзеровской Германии, под ред. В. Микаеляна, Ереван, 1995; Материалы по истории франко-русских отношений за 1910-1914 гг., Сборник секретных дипломатических документов бывшего Императорского Российского Министерства Иностранных Дел, Москва, 1922; Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. Сборник документов и материалов в 2-х томах, под ред. С. Степаняна, том 1, Ереван, 1991; Будущее устройство Армении по официальным документам Оранжевой книги, трактующей Реформы в Армении, Петроград, 1915; Ohandjanian A., K. u. K. Dokumente Armenien in Österreichischen Archiven, Band I, 1912-1914, Wien, 1988.

<sup>4</sup> Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, ed. by V. Ghazarian, Waltham, 1996.

տես և մասնակից պետական, քաղաքական, հասարակական գործիչների և դիվանագիտների հուշագրությունները: Այդ հուշագրությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում այնպիսի գործիչների հուշագրությունները, ինչպիսիք են Կ. Պոլսի Ազգային Կենտրոնական Վարչության և Ապահովության Հանձնաժողովի անդամ Վ. Փափազյանը<sup>5</sup>, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական Վարչական Ժողովի ատենապիր, Ազգային Պատվիրակության ընդհանուր քարտուղար Վ. Մալեզյանը<sup>6</sup>, ՀՔԸՄ հիմնադիրներից Ե. Աղարոնը<sup>7</sup>, հայկական վիլայեթների ընդհանուր քննիչներից Լ. Վեստենենկը<sup>8</sup>, որոնք, անմիջականորեն շփում ունենալով Պ. Նորարի հետ, իրենց աշխատություններում անդրադեկ են երա 1912-1914 թթ. գործունեությանը: Երկրորդ խմբի մեջ մտնող հուշագրությունների հեղինակները՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքայիսկոպոսը<sup>9</sup>, Թիֆլիսի քաղաքապետ, Հայոց Ազգային Բյուրոյի անդամ Ա. Խատիսյանը<sup>10</sup>, Աղանայի հայոց նախկին առաջնորդ Մ. Սերոբյանը<sup>11</sup>, Լենն<sup>12</sup>, բուրքական խորհրդարանի պատգամավոր Ա. Գարոն<sup>9</sup>, Ռուսաստանի արտօրծնախարար Ս. Սաղնովը<sup>10</sup>, Վ. Պոլսի ուսական դեսպանատան առաջին քարգման Ա. Մանդելշտամը<sup>11</sup>, Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավոր, կադետական կուսակցության առաջնորդ Պ. Միլյուկովն<sup>12</sup> իրենց աշխա-

<sup>1</sup> Փափազեան Վ., Խմ. յուշերը, հու. Բ., Պէյրուր, 1952; նոյնի, Հայկական բարենորոշումները (1912-1914), «Աճ», Փարիզ, 1933, N 1-2, 1934, N 1-2:

<sup>2</sup> Մալեզեան Վ., Շամբու վրայ /Յուշարապ/, Բարիզ, 1950; նոյնի, Շամբու ծայրը, հու. Ա., Բ., Փարիզ, 1954, 1955:

<sup>3</sup> Աղարօն Ե., Կահանի յիշատակները, Ժբեկ, 1931:

<sup>4</sup> Westerenen L., Diary Concerning the Armenian Mission, "Armenian Review", Boston, 1986, vol. 39, N 1, pp. 29-89.

<sup>5</sup> Զավեն Արքայիսկոպոս, Պատրիարքական յուշերս. Վահերագրեր և վկայութիւններ, Գահիրէ, 1947:

<sup>6</sup> Խատիսյան Ա., Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք», ամսագիր, Բուստին, 1932, N 11:

<sup>7</sup> Սերոբյան Մ., Կիտումներ և դասումներ /Եջեր օրագրես/, Պէյրուր, 1932:

<sup>8</sup> Լենն, Անյալից հուշեր, բոքեր, դասումներ, Թիֆլիս, 1925:

<sup>9</sup> Գարոն Ա., Արքայած օրեր, Բուստին, 1948:

<sup>10</sup> Հայոց Ս., Վուստանանական գույքը, 1991.

<sup>11</sup> Մանդելշտամ Ա., Մլատուրեցիա դրժանա, Մոսկվա, 1915.

<sup>12</sup> Միլյուկով Պ., Վուստանանական գույքը, 1990.

տուրքուններում ներկայացրել են հայկական բարենորդումների խնդրի շուրջ ծավալվող դեպքերն ու իրադարձությունները:

Դժբախտաբար Պողոս Նորքարն իր ծավալած գործունեության վերաբերյալ չի քողել հուշագրություններ: Հայկական հարցին նվիրված իր միակ փորբաժակալ աշխատության մեջ<sup>1</sup>, Պ. Նորքարը, ամփոփի ձևով ներկայացնելով դրա պատմությունը՝ ծագումից մինչև առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը, շատ համառոտակի անդրադարձել է նաև 1912-1914 թթ. հայկական բարենորդումների խնդրին ի նպաստ կատարած ձեռնարկներին:

Աշխատության համար աղբյուրագիտական նշանակություն ունեն նաև մի շաբթ հեղինակների աշխատություններ, որոնք նվիրված են Պ. Նորքարին: Դրանց թվին առաջին հերթին պատկանում է Ե. Օսյանի աշխատությունը<sup>2</sup>, որտեղ կենսագրական տեղեկություններից բացի ներկայացված են նաև հայկական բարենորդումների իրականացման ի նպաստ եկրոպական թերթերում Պ. Նորքարի տպագրած հոդվածներն ու հայափրական կոնֆերանսներում կարդացած բանախտությունները: 1912-1914 թթ. Պ. Նորքարի ծավալած գործունեության վերաբերյալ Ե. Օսյանը տպագրության եր պատրաստել և մեկ աշխատություն՝ «Բարենորդումների խնդիրը և Պողոս Նորքար Փաշան», որը բանկված առաջին աշխարհամարտի պատճառով լույս չի տեսել<sup>3</sup>: Պողոս Նորքարին է նվիրված նաև Բարկեն Վարդապետի աշխատությունը<sup>4</sup>, որտեղ ներկայացված է 1913 թ. նոյեմբերի 17-ին Փարիզում կայացած միջազգային հայափրական կոնֆերանսում Պ. Նորքարի կարդացած բանախտությունը: Հետաքրքրություն են ներկայացնում նաև Ա. Թերզիապաշանի աշխատությունը<sup>5</sup>, ինչպես նաև Պ. Նորքարի կենսագրությանը նվիրված երկու գրքույները<sup>6</sup>: Պ. Նորքարի

<sup>1</sup> Nubar B., Note sur la Question Arménienne, Paris, 1916.

<sup>2</sup> Օտեան Ե., Պողոս Փաշա Նորքար Աթենսագրական նօթեր, Կ. Պոլիս, 1913:

<sup>3</sup> Shu, Սիրումի Յ., Գիծեր Երևանի Օտեանի կեանքեն, «Հայրենիք», ամսագիր, Բռնունն, 1927, Ն 8, էջ 51:

<sup>4</sup> Բարգեն Վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նորքար փաշան, Վաղարշապատ, 1914:

<sup>5</sup> Թերզիապաշեան Ա. Նորքար, Փարիզ, 1939:

<sup>6</sup> Հուշամատեան Պողոս Նորքար փաշայի, Լու Ամբելիս, 1986; Նորքար և Նորքարաշեան, Փարիզ, 1929:

կյանքին և գործունեությանն է նվիրված Ս. Պողոսյանի աշխատությունը<sup>1</sup>:

Աշխատության մեջ լայնորեն օգտագործված են նաև թեմային առնչվող ժամանակի հայկական և ուսական պարբերական մամուլի շուրջ երկու տասնյակ օրգաններից բաղված փաստական ուշագրակ նյութերը:

Հայկական հարցը հայ պատմագրության ամենաընդգրկուն հարցից մեկն է: Դրան նվիրված բազմաթիվ աշխատություններում լուսաբավել է նաև առաջին աշխարհամարտի նախօրյակին Արևատյան Հայաստանում բարենորդումների իրականացման խնդիրը: Այդ մասին մի շաբթ աշխատություններ են ստեղծվել ժամանակի հասարակական և քաղաքական գործիչներ L. դը Քոնքանտնի<sup>2</sup>, Ասոմի /Հ. Ծահրիկյան/<sup>3</sup>, Հ. Աճառյանի<sup>4</sup>, Ե. Գեղամյանցի<sup>5</sup>, Ա. Չոպանյանի<sup>6</sup>, Ս. Բյուրատի<sup>7</sup>, Մ. Սերոբյանի<sup>8</sup>, Լեոյի<sup>9</sup>, Գ. Չոփրապի<sup>10</sup>, կողմից, որոնք դեպքերի անմիջական մասնակիցներ և ականատեսներ էին: Վերոհիշյալ հեղինակները, ներկայացնելով 1912-1914 թթ. հայկական բարենորդումների իրականացման շուրջ ծավալվող իրադարձությունները, շատ մակերեսորեն անդրադարձել են նաև այդ շրջանում Պ. Նորքարի կատարած ձեռնարկներին:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Հայկական հարցի վերաբերյալ, դրանում մեծ տերությունների դ իրքորոշումները, հակասություններն ու դիվանագիտական պայքարը լուսաբանվել է խորհրդական աշխատություններում:

<sup>1</sup> Պողոսեան Ս., Պողոս Նորքար Փաշա. Ազգային գործիչը, Երևան, 2004:

<sup>2</sup> Քօնքանտն L. դը, Հայկական հարցին վերջին փոսքը, Կ. Պոլիս, 1913:

<sup>3</sup> Ասոմ, Բարենորդումներու հարցը, Կ. Պոլիս, 1914:

<sup>4</sup> Աճառյան Հ., Տաճկահայոց հարցի պատմությունը /Ակզրից մինչև 1915 թ./, Նորանիշեան, 1915:

<sup>5</sup> Գեղամեանց Ե., Հայերի պատագրակամ շարժումները XX դարում /Հայկական հարցի նօթերու շրջանը/, Բարու, 1916:

<sup>6</sup> Շապանեան Ա., Հայաստանը բոլոր լուծին տակ, Պուտոն, 1918:

<sup>7</sup> Թիրատ Ա., Արեւելյան խնդիր և Հայկական հարց, Կ. Պոլիս, 1919:

<sup>8</sup> Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փոսքը, Թեյոնոր, 1937: Առյանի պայքարը հայ պատագրութեան ուղիով. Վերտուումներ Հայկական հարցին շուրջ. Գահիք, 1948:

<sup>9</sup> Լեռ, Թուրքահայ հեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Խո Բ., Փարիզ, 1935:

<sup>10</sup> Չոփրապ Գ., Հայկական հարցը փաստարութերու լոյսին տակ, Պեյրու, 1973:

դահայ պատմաբաններ Ե. Սարգսյանի<sup>1</sup>, Զ. Կիրակոսյանի<sup>2</sup>, Ա. Ավետյանի<sup>3</sup>, Ս. Հակոբյանի<sup>4</sup>, Մ. Արզումանյանի<sup>5</sup>, Ս. Ստեփանյանի<sup>6</sup>, Ծ. Աղայանի<sup>7</sup>, Ա. Համբարյանի<sup>8</sup>, Ն. Կարապետյանի<sup>9</sup>, Հ. Սիմոնյանի<sup>10</sup>, Մ. Քոչարի<sup>11</sup>, Ն. Սարգսյանյանի<sup>12</sup> աշխատություններում։ Այդ իմաստով հետաքրքրություն են ներկայացնում նաև Ա. Նովիչինի<sup>13</sup>, Ա. Մոդիլիկիչի և Մ. Հայրապետյանի<sup>14</sup>, Լ. Խատյագինի<sup>15</sup>, Մ. Լազարեկի<sup>16</sup>, աշխատությունները։

Խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել նաև մի շարք սփյուռքահայ հեղինակներ՝ Կ. Խզմիր-

<sup>1</sup>Սարգսյան Ե., Թուրքիան և նրա ճավաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Երևան, 1964։

<sup>2</sup>Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմ և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1965; Առյանի, Երիտրուրքերը պատմության դաստիարակության 19-րդ դարի 90-ական թթ.-1914 թ., գիրք առաջին, Երևան, 1982։

<sup>3</sup>Ավետյան Ա., Գերմանական իմperiալիզմ և Արևելք, Երևան, 1966։

<sup>4</sup>Ակոպյան Ս., Զապահական պատմությունը Ակոպյան Ս., Զապահական պատմությունը, Երևան, 1967։

<sup>5</sup>Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969։

<sup>6</sup>Ստեփանյան Ս., Արմենիա և Արևելք 1914-1918 թթ. /կոչեց Ստեփանյան Ս./, Երևան, 1975։

<sup>7</sup>Աղայան Ծ., Հայ ժողովության ազատագրական պայքարի պատմությունը, Երևան, 1976։

<sup>8</sup>Համբարյան Ա., Երիտրուրքերի ազգային և հողային քաղաքականությունը Արևմտահայաստանում /1908-1914/, Երևան, 1979։

<sup>9</sup>Կարապետյան Ն., Հայկական քարենորդությունների խնդիրը 1912-1914 թթ., Հայ ժողովության պատմություն, հուն 6, Երևան, 1981։

<sup>10</sup>Սիմոնյան Հ., Թուրք ազգային բրոֆուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականության մոդի և պատմագրության մեջ, Երևան, 1986; Առյանի, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991։

<sup>11</sup>Կոչար Մ., Արմաно-ուրուցկական հայության պատմությունը և արական պատմությունը, Երևան, 1988։

<sup>12</sup>Սարգսյան Ե., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մոդի և պատմագրության մեջ, Երևան, 1997։

<sup>13</sup>Նովիչև Ա., Օчерки экономики Турции до первой мировой войны, Москва-Ленинград, 1937։

<sup>14</sup>Մոգիլևիչ Ա., Արարապետյան Մ., Հայ ժողովությունը 1914-1918 թթ., Երևան, 1940։

<sup>15</sup>Իստացին Լ., Էքսպանսия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу /1912-1914 թ./, Из истории агрессивной внешней политики германского империализма /Сборник статей/, Москва, 1959։

<sup>16</sup>Լազարև Մ., Կուրդский вопрос /1891-1917/, Москва, 1972։

յանը<sup>1</sup>, Լ. Չորմիսյանը<sup>2</sup>, Ռ. Հովհաննիսյանը<sup>3</sup>, Վ. Տատրյանը<sup>4</sup>, Ա. Նահապետյանը<sup>5</sup>։

1912-1914 թթ. Հայկական հարցի արծարծումը և դրա նկատմամբ տարբեր տերությունների դիրքորոշումները լուսաբանվել են Ո. Կոջոյանի<sup>6</sup>, Մ. Մարտիրոսյանի<sup>7</sup>, Ա. Խաչատրյանի<sup>8</sup>, Ա. Ղամբարյանի<sup>9</sup> թեկնածուական ատենախոսություններում։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը լուրջ ուսումնասիրության չի ենթարկվել արևմտահայության և ամերիկյան պատմաբանների կողմից։ Այդ իմաստով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ո. Դիկտոնի<sup>10</sup>, Վ. վան Պեր Դյուսենի<sup>11</sup> և Հ. Գոլցի<sup>12</sup> հոդվածները։

Հայկական հարցի պատմությունը միտումնավոր կեղծվում է բուրք պատմագրության կողմից։ Թուրք պատմաբանները Հայկական հարցը փորձում են ներկայացնել որպես Ռուսաստանի և այլ մեծ տերությունների կողմից արհեստականորեն ստեղծված խնդիր՝ Թուր-

<sup>1</sup>Իգմիրիսան Կ., Հայ ժողովության քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս քննական տեսուրին/, Պէյրուր, 1964։

<sup>2</sup>Չորմիսան Լ., Համապատկեր արևմտահայության մեկ դարու պատմութեան, հու 4, 1908-1922/, Պէյրուր, 1975։

<sup>3</sup>Hovannisian R., Armenia on the Road to Independence, Los Angeles, 1974.

<sup>4</sup>Dadrian V., The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Oxford, 1995.

<sup>5</sup>Nassibian A., Britain and the Armenian Question 1915-1923, New-York, 1984.

<sup>6</sup>Կոջօյան Բ., Հայության պատմությունը 1912-1914 թթ. և Երիտրահայության քաղաքականությունը 20-րդ դարի սկզբին (թեկնածուական ատենախոսություն), Երևան, 2000։

<sup>7</sup>Մարտիրոսյան Մ., Հայության պատմությունը 1912-1914 թթ. (կանդидատական ատենախոսություն), Երևան, 1990։

<sup>8</sup>Խաչատրյան Ա., Բարենուորդությունները Արևմտահայաստանում 1912-1914 թթ. և Գերմանիայի քաղաքականությունը Թուրքիայում 20-րդ դարի սկզբին (թեկնածուական ատենախոսություն), Երևան, 2000։

<sup>9</sup>Ասմարյան Ա., Հայկական հարցը 1912-1914 թթ. և Սեծ Բրիտանիան (թեկնածուական ատենախոսություն), Երևան, 2000։

<sup>10</sup>Davison R., The Armenian Crisis 1912-1914, "The American Historical Review", New York, 1948, vol. LIII, N 3.

<sup>11</sup>Dussen W. van der, The Question of Armenian Reforms in 1913-1914, "Armenian Review", Boston, 1986, vol. 39, N 1.

<sup>12</sup>Goltz H., Die "Armenischen Reformen" im Osmanischen Reich, Johannes Lepsius und die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft, "75 Jahre Deutsh-Armenischen Gesellschaft Festschrift", Maintz, 1989:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՄԱՐՑՈՒՄԸ 1912 Թ.

ԵՎ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱԾԱՆ

1) Հայկական հարցի վերաբարձումը  
և տերությունների շահախմղությունը

1877 թ. ապրիլին սկսված ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Թուրքիայի ծանր պարտությամբ: Ռուսական գենքի օգնությամբ բալկանյան ժողովուրդների ազատագրումը մեծ հույսով ներշնչեց նաև արևմտահայությանը՝ օսմանյան անտանելի լուծը բարի իմաստով: Այդ հույսերը կարծես թե արդարանում էին: Պատերազմի ավարտն արձանագրող 1878 թ. փետրվարի 19-ին կնքված Սան-Ստեֆանոյի պրելիմինար պայմանագրի 16-րդ հոդվածը, որը մտցվել էր Ռուսաստանի պահանջով, վերաբերում էր արևմտահայությանը: Այնուհետ ասված էր. «Նկատի ունենալով, որ ռուսական գործիքների դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադրձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախտմների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, թ. Դուք պարտավորվում եք անհապաղ կենսագործել հայարնակ մարզերի տեղական կարիքներից բխող բարեկավումներ և բարենորոգումներ ու ապահովել հայերի անվտանգությունը քրիերից և չերեզմներից»<sup>1</sup>: Այս հոդվածով Հայկական հարցն առաջին անգամ մտավ միջազգային դիվանագիտության մեջ. այն իրական երաշխիք էր ստեղծում արևմտահայության կացության բարեկարգման համար, որը պայմանավորված էր գրաված տարածքներում ռուսական գործերի ներկայությամբ /այդ փաստն ամրագրված էր պայմանագրի 25-րդ հոդվածով/: Սակայն Բալկաններում և Փոքր Ասիայում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը մեծ դժգոհություն առաջ բերեց մյուս տերությունների, հատկապես Անգլիայի և

քիայի ներքին գործերին միջամտելու համար՝ ամբողջովին անտեսելով արևմտահայության ողբայի կացությունն ու քուրքական անտանելի լուծը բորբագիր նրանց բնական ճգոտումները: Այդ իմաստով առաջին աշխարհամարտի նախօրյակին մեծ տերությունների դեկանակար շրջանների մոտ հայկական բարենորոգումների պաշտպանության համար Պ. Նուբարի գլխավորությամբ Ազգային Պատվիրակության կազմությունն ու կատարած ձեռնարկները ևս ներկայացվում են որպես Ռուսաստանի կողմից հրահրված: Նման կերպ պատմական իրականությունը խեղաքարտվում է բուրք պատմաբաններ Է. Կարայի<sup>1</sup>, Է. Ռուսասի<sup>2</sup>, Ս. Քոչարի<sup>3</sup>, աշխատություններում, ինչպես նաև երիտրության առաջնորդներից Զեմալ փաշայի հուշերում<sup>4</sup>:

Աշխատությունը 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների խնդրի պաշտպանությամբ մեծ տերությունների դեկանակար շրջանների մոտ Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի կատարած ձեռնարկների խորը և համակողմանի ուսումնասիրության առաջին փորձն է: Քննարկվող հիմնահարցի վերաբերյալ գիտական շրջանառության մեջ են դրվում մի շարք նորահայտ արխիվային նյութեր ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի արխիվներից:

Աշխատության մեջ ընդգրկված հարուստ նյութը, հետևություններն ու եզրակացությունները կարող են օգտագործել Հայկական հարցի, հայ ժողովրդի նոր շրջանի և հայ դիվանագիտության պատմության նվիրված աշխատությունների ստեղծման, բուհական դասագրքերի և դասընթացների կազմման համար:

Աշխատությունը գրված է պատմական սկզբնադրյուրների և աշխատությունների համակողմանի հետազոտության, համադրության և քննական վերլուծության եղանակով: Ուսումնասիրությունը կատարվել է օրյեկտիվության պահպանման դիրքերից, զերծ է կողմնակալ մոտեցումներից և գործի դերի գերազնահատության միտումից:

<sup>1</sup> Karal E., Armenian Question (1878-1923/, Ankara, 1975.

<sup>2</sup> Uras E., The Armenians in History and the Armenian Question, İstanbul, 1988.

<sup>3</sup> Koças S., Tarihte Ermeniler ve Türk Ermeni İlişkiler, İstanbul, 1990.

<sup>4</sup> Джемаль Паша, Записки 1913-1919, Тифлис, 1923.

<sup>1</sup> Сборник договоров России с другими государствами /1856-1917/, под ред. Е. Адамова, Москва, 1952, стр. 168-169.

Ավստրո-Հունգարիայի դեկավար շրջաններում, որոնք պահանջեցին վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Պատրաստ չինելով նոր պատերազմի՝ Ռուսաստանը հարկադրված համաձայնում է այդ առաջարկին: 1878 թ. ամռանը Բեռլինում գրամարվում է տերությունների և Թուրքիայի ներկայացուցիչների վեհաժողով, որի արդյունքում հուլիսի 1/13-ին ստորագրվում է նոր պայմանագիր: Դրա 61-րդ հոդվածում նշված էր. «Բ. Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից բխող բարելավումներ և բարենորագումներ ու ապահովել հայերի անվտանգությունը չերենգներից և քրդերից: Այդ նպատակով ձևնարկած միջոցների մասին թ. Դուռը պարբերաբար կահորդի տերություններին, որոնք կիևունեն դրանց իրագործմանը»<sup>1</sup>: Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որը փոխարինեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին, իր բովանդակությամբ էականորեն տարբերվում էր վերջինից: Դրանում «Հայաստան» անվանումը վերափոխվեց «հայաբնակ մարզեր» ձևակերպմամբ և, որ ամենազլիսավորն էր, բարենորագումների իրագործման վրա հսկողության իրավունքը վեցըրվեց Ռուսաստանից և տրվեց բոլոր մեծ տերություններին: Քանի որ հակառիք և իրարամերժ շահեր ունեցող տերությունների միջև անհնար էր այդ իմաստով ապահովել միասնական և համաձայնեցված գործունեություն, ապա Հայկական հարցի լուծումը, փաստորեն, իրական ճանապարհից դրվեց բոլորվին անիրագործելի և վերջին հաշվով կործանարար ուղղու վրա: Այսպիսով արևմտահայոց խնդիրը դադարում էր Օսմանյան կայսրության ներքին հարց լինելոց՝ վերածվելով միջազգային քաղաքականի և դիվանագիտության պատմության մեջ մտնում էր որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս:

Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված բարենորագումները չիրականացվեցին և մնացին թղթի վրա: Իր հերթին սուլթան Արդուլ-Համիդ 2-րդը Հայկական հարցի «լուծման» և Թուրքիայի ներքին գործերին տերությունների հնարավոր միջամտություններից խուսափելու համար իրականացնում է հայահալած քաղաքականություն:

<sup>1</sup> Сборник договоров России с другими государствами /1856-1917/, стр. 205.

Նման պայմաններում, չնայած սուսանձնած հանձնառությանը, Եվրոպական դիվանագիտությունը ոչ մի գործնական քայլ չի ձեռնարկում արևմտահայության պաշտպանության և նրա կացության բարեկավման ուղղությամբ: 1880 թ. հունիսի 11-ի և սեպտեմբերի 7-ի թ. Դուռը ուղղված տերությունների հուշագրերը, որը նշվում էր հայկական բարենորագումների իրականացման անհրաժեշտության մասին, շոշափելի արդյունք չեն ունենում: 1894 թ. Սաստիւմ կազմակերպված կրտսրածից հետո համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ Կ.Պոլսի ռուսական, անգլիական և ֆրանսիական դեսպանները 1895 թ. մայիսի 11-ին բուրքական կառավարությանը ներկայացնում են բարենորագումների ծրագիր: Ըստ դրա հայկական վեց վիլայեթներում /Երզրում, Վան, Բիթլիս, Դիարբերի, Խարբերդ, Սերբաստիա/ պետք է կատարվեին վարչական և դատական բարեփոխություններ՝ ապահովելու համար արևմտահայերի կյանքի ու գույքի անվտանգությունն ու պաշտպանելու բրյուրի կամայականություններից: Բարենորագումների իրականացման վերահսկողության համար թ. Դուռը կից պետք է ստեղծվեր մշտական հանձնաժողով<sup>1</sup>: Սակայն Արդուլ-Համիդը, օգտվելով տերությունների միջև գոյություն ունեցող հակասություններից և նրանց անտարբերությունից, ոչ միայն չիրականացրեց այդ բարենորագումները, այլ էլ ավելի սաստկացրեց բռնություններն ու հալածանքներն արևմտահայության նկատմամբ, որոնց զոհ զնաց մոտ 300 000 մարդ:

1908 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կողմից կատարվում է հեղաշրջում, որի արդյունքում երկրում վերահստատվում է 1876 թ. սահմանադրությունը: Այդ փոփոխությունը խանդավառությամբ ու ոզերությամբ է ընդունվում կայսրության ոչ բուրք ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերի կողմից և մեծ հույսեր է ներշնչում իրենց ուսմահարված իրավունքների վերականգն-

<sup>1</sup>Ծրագրի տերսուն ամրողությամբ տես, Հայաստան միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթուրքում /1828-1923/, Զ. Երևակույսանի խմ., Երևան 1972, էջ 136-147:

ման, անձի, գույքի, պատվի անձեռնմխելության ապահովման իմաստով: Հավատալով առաջ քաշված «ազատություն», «հավասարություն», «եռայրություն» սին կարգախոսներին՝ արևմտահայությունը միամտորեն կարծում էր, որ Երիտրուրքերը կրաքելարգեն Երկիրն ու Վերջ կտան իշխող բռնատիրական կարգերին: «Սկզբի օրերն այնքան վառ ու խոստումնալից եղան, եռչակուած սահմանադրութենեն ակնկալություններն այնքան մեծ,- նշում էր ականատեսներից մեկը,- որ հայերս հավատացինք, թե այլևս վերջ գտած են մեր դարավոր տառապանքները, այսինքն թե՝ ոչ բուրք և ոչ ալ մանավանդ բուրդ ավազակը ալ այսու շիալածեն ու չկոտորեն մեզի»<sup>1</sup>: Սակայն այդ համատարած խանդավառությունը չափազանց կարճատև եղավ և շուտով փոխարինվեց լիակատար հիասքափությամբ: Իրենց գործունեությամբ Երկրի նոր տերերը ցույց տվեցին, որ համիլյան բռնակալական ռեժիմի հարազատ հետևորդներն են: Կայսրության ամենակնճոռու հարցերից մեկում, ինչպիսին ազգայինն էր, Երիտրուրքերը, որդեգրելով պանթությատական զաղափարախոսությունը, հանդես եկան որպես ավելի բունու ազգայնամունքը և քննամական կեցվածք բռնեցին ոչ բուրք և հատկապես հայ բնակչության նկատմամբ: Նման վարքագծի եռյունն ամբողջովին բացահայտվեց 1909 թ. ապրիլին Արանայում և նրա շրջակա գյուղերում կազմակերպված արյունահեղության ընթացքում, որին զոհ գնացին մոտ 30 000 կիլիկիահայեր:

Երիտրուրքերը լուծում չտվեցին նաև ազրարային հարցին: Հին վարչակարգի օրոք արևմտահայությունից զավթված հաղերը ոչ միայն ետ չվերադարձեցին, այլև մեծ չափերի հասան նոր բռնագրավուները: «Իշխանությունները,- Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սագոնովին հղած 1912 թ. նոյեմբերի 26-ի նամակում գրում էր Թուրքիայում ռուսական դեսպան Միխայիլ Գիրսը,- ոչ միայն չեն արգելում, այլև

հովանավորում և աջակցում են այդ զավթումները»<sup>2</sup>: Բռնագրավված հողերը հիմնականում տրվում էին Բալկաններից Անատոլիա տեղափոխված մահմեդական զաղթականությանը /մուհաջիրներին/: Իշխանությունների այդ ծեռարկներն արդարացնելու համար բուրքական «Թասֆիրը Էֆրյար» բերքը ցինիկորեն գրում էր, թե «հայ բնակչությունն անկարող է հանդիսանում մշակել մեծ տարածությամբ ազատ մնացած հողերը»<sup>3</sup>: Գլխավորապես Երկրի հայկական վիլայեթներում մուհաջիրների վերաբռնակեցման հիմնական նպատակը տեղում մահմեդական բնակչության հոծ զանգված ստեղծելն էր, որն էլ իր հերքին ավելի էր բարդացնում առանց այդ էլ լարված իրավիճակը: «Սուհանրանները,- գրում էր արևմտահայ հայտնի գործիչ Վահան Փափազյանը,- ատելավառ վրեժինողությամբ լցված էին քրիստոնյաների հանդեպ. կասկած չունեինք, որ մորեխների պես պիտի լավինին հայերի ունեցվածքը և նոր եղեռն նյութեին նրանց դեմ»<sup>4</sup>:

4325

Նոր վարչակարգի օրոք շարունակվեցին և մեծ չափերի հասանարևմտահայության նկատմամբ իրականացվող բռնությունները, հայածաներն ու կողոպուտները, որոնք, որպես կանոն, մնում էին անպատճիժ: «Հայաստանի մեջ,- գրում էր Ա. Ալպյաջյանը,- համիլյան շրջանին հատուկ կեղերումները, հարստահարություններն ու ջարդի սպառնալիքները շարունակվեցան ավելի հավելյալ և ճոխացյալ»<sup>5</sup>: Ներկայացնելով Արևմտյան Հայաստանում տիրող ողբալի կացությունը՝ Կ.Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին Թուրքիայի արդարադատության նախարարին հղած 1911 թ. փետրվարի 14-ի բարիրում ընդգծում էր, որ «հայերուն վիճակվեցավ կրել այնպիսի

<sup>1</sup> Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 г.-10 мая 1914 г., /далее Реформы в Армении/, Петроград, 1915, стр. 3.

<sup>2</sup> Տես, «Մշակ», Թիֆլիս, 1913, N 52:

<sup>3</sup> Փափազյան Վ., Խմ յուշերը, Խո. Բ., Պետրով, 1952, էջ 181:

<sup>4</sup> Ալպյաջյան Ա., Փատմություն Սալարին հայոց, Բեյրութ, 1961, էջ 879:

<sup>5</sup> Տես, Միմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 127-128:

ենթանական, սուսկալի արհավիրք մը, որ համիտյան շրջանի պատմական արյունահեղություններն ու տառապանքները գերազանցեց»<sup>1</sup>:

Երիտրուրքերի վարած հետադիմական և հայահալած քաղաքականությունը նախադրյալներ ստեղծեց Հայկական հարցի վերարձրածման համար, որին նպաստեց նաև 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը: Օգտվելով ստեղծված իրավուրյունից՝ արևմտահայությունն իր կացության բարելավման խնդրամբներով նորից որոշում է դիմել տերությունների և առաջին հերթին Ռուսաստանի աջակցությանը՝ հաշվի առնելով վերջինիս քաղաքանության փոփոխությունը, որն այդ շրջանում բացահայտորեն հայամետ էր դարձել<sup>2</sup>: Քննինի վեհաժողովից հետո ռուսական դեկավար շրջանները, շրջադարձ կատարելով Հայկական հարցի լուծման հանդեպ ունեցած դիրքորոշման մեջ, իրաժարվել էին արևմտահայերի արդարացի պահանջների բավարարման իմաստով ճնշում գործադրել սուլթանի վրա: «Առաջին անգամ ըլլալով,- այդ մասին գրում էր Լյուդվիկ դը Քոնքանտոնը,- Ռուսիա իր պարտականութեան մէջ կը թերանար՝ իրը պաշտպան Թուրքիոյ քրիստոնեաններուն, անտարեր կը գտնուէր հայկական թշվառութեանց հանդեպ»<sup>3</sup>: Ռուսաստանի այդ վերաբերմունքն իր արտահայտությունը գտավ երկրի արտգործնախարար Նիկոլայ Գիրսի հայտարարության մեջ: «Հայաստանը, ճիշտ է, սպասում է Քեռլինի տրակտատի որոշումների կատարմանը, բայց Ռուսաստանը նրանցում շահագրգոված չէ և ոչինչ չի անի կյանքում դրանց իրականացումն արագացնելու համար»<sup>4</sup>: Դրա հետ մեկտեղ ցարական կառավարությունը սկսել էր բիրտ քաղաքականություն վարել նաև իր տիրապետության տակ գտնվող հայության նկատմամբ: 1903 թ. հունիսի 12-ի օրենքով երկրում բռնագրավվում են հայկական

<sup>1</sup>Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում /Մ. Ներսիսյանի խմբ./, Երևան, 1991, էջ 270:

<sup>2</sup>Սիմոնյան Հ., Անդրամիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996, էջ 364:

<sup>3</sup>Զօնքանտն Լ. տք, Հայկական հարցին վերջին փողեղը, Կ.Պոլիս, 1913, էջ 38:

<sup>4</sup>Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1965, էջ 100-101:

եկեղեցիների հողերն ու գույքը, 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության տարիներին իշխանությունները իրահրում են հայ-քարարական ընդհարումներ և բռնություններ սկսում Հ. Յ. Գաշնակցություն կուսակցության անդամների Ակատմամբ: Այդ ամենը պատճառաբանվում էր այսպես կոչված «հայերի անջատողական ձգտումների», «հայկական ընդհանուր ապստամբության բարձրացման և անկախ պետություն ստեղծելով» մտավախությամբ: Սակայն այդ վիճակն երկար չունեց: 1910-ական թթ. սկզբներին ռուսական արտաքին քաղաքանության ուղղվածությունն էական փոփոխություններ է կրում: Ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունից, երկրում սկսված հեղափոխությունից հետո վերականգնելով իր ուժերը Ռուսաստանը նորից իր ուշադրությունը դարձնում է մերձավորարևելյան խնդիրներին: Այդ իմաստով կարևորվում էր ռուսական դիրքերի ամրապնդումն Արևմտյան Հայաստանում, որը դիտվում էր որպես ուսումնա-ստորագիր հենակետ դեպի հարավ /Միջերկրական ծով, Պարսից ծոց/ հետագա առաջխաղացման համար: Բացի այդ Օսմանյան կայսրության այդ տարածքը թիւ կարևորություն չուներ նաև Ռուսաստանի սևծովյան ափերի և կովկասյան տիրույթների պաշտպանության տեսանկյունից: Այդ նկատառումներով էլ արևմտահայոց խնդիրը ևս դառնում է ռուսական դիվանագիտության ուշադրության առարկա: Ս. Սագոնովին հղած 1912 թ. նոյեմբերի 26-ի նամակում Ս. Գիրսն այդ հարցը բնորոշում էր որպես «առաջնակարգ պետական կարևորություն ունեցող»<sup>1</sup>: Ռուսական կառավարությունը մեծ տեղ էր հատկացնում արևմտահայերի համակրական վերաբերմունքին, որը կնպաստեր իր ազդեցության ամրապնդմանն ու Թուրքիայի հետ հնարավոր պատերազմի դեպքում կապահովեր վերջիններիս աջակցությունը: Զանքեր են գործադրվում նաև ձեռք բերելու արևելահայերի աջակցությունն ու գրավելու նրանց համակրանքը: Դրան էր

<sup>1</sup> Реформы в Армении, стр. 4.

ուղղված Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի վարած «հաշտար» քաղաքականությունը:

Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին հետաքրքրում էր նաև տնտեսական տեսանկյունից: Սակայն ի տարբերություն մյուս տեղույթունների, Ռուսաստանի տնտեսական դիրքերն այստեղ քավականին թույլ էին: Այդ հանգամանքը ստիպում էր ռուսական իշխանություններին ավելի արժեվորել արևմտահայության շրջաններում ունեցած վստահությունն ու հաճակրանքը: «Հնարավորություն չունենալով ուստի կապիտալիստներին և ձևնարկատերներին հակառակ օտարներին, - Ռուսաստանի վարչապետ Վ. Կոկովցևին հղած նամակում գրում էր Ս. Սագոնովը, - մեզ մնում է միայն կենտրոնացնել մեր ուշադրությունն այն մախաղորյալների վրա, որոնք ստեղծում են մեզ համար առավելություններ հակառակորդների համեմատությամբ: Այդ նախաղորյալները Փոքր Ասիայի քրիստոնյաների, հատկապես հայերի՝ դեակի մեզ ձգտումն է»<sup>1</sup>:

Ինչպես և անցյալում, արևմտահայերի համակրանքը Ռուսաստանի կողմն էր, և տիրում էր այն համոզմունքը, որ միայն նրա օգնությամբ կարելի է ազատագրվել քուրքական լծից: «Վաճի, Բիբլիսի, Բայազետի, Երգորումի, Տրապիզոնի մեր հյուպատոսները, - արտգործնախարարին հղած վերոհիշյալ նամակում գրում էր Ս. Գիրսը, - միաձայն վկայում են, որ բոլոր հայերը՝ առանց կուսակցական տարրերությունների, Ռուսաստանի կողմն են»<sup>2</sup>: Այդ էին վկայում նաև 1912 թ. Վերջերին Ռուսաստանի արտգործնախարարության հրահանգով Վ. Պոլիս այցելած ուստահայ գործիչներ Ն. Ալոնցն ու Ս. Տիգրանյանը, նշելով, որ «ուստահությունը քուրքահայերի շրջաններում հանդիսանում է ժողովրդական քաղաքականություն»<sup>3</sup>:

<sup>1</sup> Истягин Л., Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу /1912-1914 гг./, “Из истории агрессивной внешней политики германского империализма” /Сборник статей/, Москва, 1959, стр. 13.

<sup>2</sup> Реформы в Армении, стр. 4.

<sup>3</sup> Ներփական Ա., Հայկական հարցի արձարումը 1912 թ., «Պատմա-քանախրական հանդիսա», Երևան, 1992, N 1, էջ 214:

Հանդիսանալով սահմանամերձ և ամենաշահագրգիռ պետությունը Ռուսաստանը ձգտում էր Արևմտյան Հայաստանի հետ կապված բոլոր հարցերի լուծման մեջ առաջնայնությունն ու նախաձեռնությունը վերապահել միմիայն իրեն և կասկածանքով էր վերաբերում այդ իմաստով որևէ այլ տերության կատարած յուրաքանչյուր ձեռնարկին: «Տիրապետումը Կովկասին, - կայսր Նիկոլայ 2-րդին հղած 1912 թ. նոյեմբերի 28-ի նամակում գրում էր Վորոնցով-Դաշկովը, - պետք է հարկադրի մեզ բոլոր ուժերով ձգտել նրան, որպեսզի դրա հարևան Փոքր Ասիայի տարածքներին առնչվող հարցերը կազմեն բացառապես Ռուսաստանի ազդեցության ոլորտը»<sup>1</sup>: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ ուստական կառավարությունը դրական է արձագանքում արևմտահայության խնդրանքին և պատրաստականություն հայտնում միջոցներ ձեռնարկել նրա կացության բարեկավման ուղղությամբ: Ռուսական այդ դիրքորոշումն իր արտահայտությունն էր գտնում նաև մամուլում: «Հայերին պաշտպանելը, - գրում էր «Ռուսկոյն պլով» թերթը, ոչ միայն օգտակար է ինելու Ռուսաստանին, այլև անհրաժեշտ է նրա իսկ ապահովության համար»<sup>2</sup>: Միանգամայն ակնհայտ էր, որ Ռուսաստանի քաղաքականության այդ փոփոխությունը պայմանավորված էր իր պետական շահերով, որոնք, սակայն, համընկնում և համապատասխանում էին արևմտահայության ազատագրական ձգտումներին: «Թէև չէինք անգիտանար որ այդ շահագրգորութիւնը սեփական հաշույն էր, - գրում էր Վ. Փափազյանը, - սակայն կը գերադասեիմք այդ վայրկեանին օգտագործել բոլոր ուժերը միայն թուրքիայէն մեր անփեալ ճակատագիրը անջատելու համար»<sup>3</sup>: Սակայն պետք է նշել, որ Ռուսաստանը, հաշվի առնելով միջազգային առկա իրադրությունը, չէր պատրաստվում գրավել Արևմտյան Հայաստանը: Դրանով կառաջադրվեր թուրքիայի բաժանման հարցը, որն էլ կարող էր համաշխարհային պատերազմի առիթ հանդիսանալ: Իսկ երկիրը դրան պատ-

<sup>1</sup> Архив Внешней Политики России /далее АВПР/, ф. Политархив, г. 1912, д. 3459, л. 57.

<sup>2</sup> Տես, Կիրակոսյան Զ., Երիտրուրերը պատմության դատաստանի առաջ, գիր 1, Երևան, 1982, էջ 283:

<sup>3</sup> Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Վեմ», Փարիզ, 1933, N 1, էջ 96:

րաստ չեր ոչ ռազմականապես, ոչ տնտեսապես և ոչ էլ դիվանագիտություն: «Հայկական վիլայեթների մեր բռնակցումը,- գրում էր Մ. Գիրսը, -որի մասին երազում են հայերից շատերը, ներկա պահին վաղաժամ է»<sup>1</sup>: Փաստորեն, տվյալ պայմաններում ուսական կառավարությունը հանդես էր գալիս Օսմանյան կայսրության տարածքային ամրողականության պահպաննան դիրքերից:

Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքանությունը հանդիպում էր մյուս տերությունների հակառակություններին, որոնք Օսմանյան կայսրության այդ շրջանում ևս ունեին իրենց շահերն ու հետաքրքրությունները: Հատկապես սուր էին ռուսականական հակառակությունները: XIX դ. վերջերին Գերմանիայում ձևավորվել էր «Գրոհ դեպի Արևելք» արտաքին-քաղաքական պաշտոնական կորպոր, որն ուղղված էր Մերձավոր և Սիցիլի Արևելքում առևտրական շուկաների, կապիտալի արտահանման և ներդրման, գաղութների նվաճման ու քաղաքական ազդեցության ընդլայնմանը: Դեպի Արևելք առաջխաղացման հեռուն գնացող այդ պլաններում առանձնահատուկ նշանակություն էր տրվում Թուրքիային, որն աստիճանաբար ենթարկվում էր Գերմանիայի ռազմական և տնտեսական ազդեցությանը: Օսմանյան կայսրությունում ունենալով հսկայական շահեր՝ գերմանական իշխանությունները ձգտում էին պահպանել նրա տարածքային ամրողականությունը: «Թուրքիան,- Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմին հղած նամակում գրում էր արտօրծության արքարար Յագովը,- պետք է գոյատեսի այնքան ժամանակ, մինչև գերմանացիներն այնտեղ չամրապնդեն իրենց դիրքերը»<sup>2</sup>: Որպես Օսմանյան կայսրության քաղկացուցիչ մաս, աշքարող չեր արքում նաև Արևմտյան Հայաստանը՝ շնորհիլ նրա ունեցած ստրատեգիական կարևոր դիրքի: «Յուրաքանչյուր երկիր,- գրում էր «Ֆրանկուրտեր Յայտունգ» թերթը,- որը ձգտում է տիրապետության Առաջավոր

Ասիայում, պետք է գրավի Հայաստանը»<sup>3</sup>: Արևմտյան Հայաստանը դիտվում էր որպես կարևոր պատճեց Ռուսաստանի հնարավոր առաջիաղացումն արգելելու համար: Բեռլինում գիտակցում էին, որ գերմանական զավթողական նպատակների հաջող իրականացման համար անհրաժեշտ էր ձեռք բերել արևմտահայության բարյացական վերաբերմունքը: Այդ նկատառումով սկսվում են մեծ ջանքեր գործադրվել նրանց շրջաններում Գերմանիայի հանդեպ համակրական վերաբերմունք ստեղծելու և միաժամանակ հակառական տրամադրություններ սերմաներու ուղղությամբ: «Բողոքականություն քարոզելու նպատակով,- նշում էր ականատեսներից մեկը, - Հայաստանի ամենախոչ անկյուններում հայտնվել են գերմանացի միսիոներներ, որոնք, սակայն, հետաքրքրվում են ոչ այնքան կրոնի հարցերով, որքան ձգտում են գրավել հայերին Գերմանիայի կողմը և գրգռել Ռուսաստանի դիմք»<sup>4</sup>: Սակայն այդ ջանքերն արդյունք չեն ունենալ, քանի որ ռուսասիրությունն արևմտահայության մեջ խոր արմատներ ուներ: Դա հասկացան նաև գերմանական դեկավար շրջաններում: «Ֆրականում հայերը պետք չեն Գերմանիային, քանի որ Թուրքիայի թուլության աղբյուրն են», - հայտարարում էր Գերմանիայի արտգործնախարարի տեղակալ Ա. Ֆիմմերմանը<sup>5</sup>:

Օսմանյան կայսրության և հատկապես նրա արևելյան շրջանների նկատմամբ Ռուսաստանի և Գերմանիայի ծեռնարկները մեծ անհանգստություն էին առաջ բերում անզիական դեկավար շրջաններում, որը պայմանավորված էր իրենց գաղութային տիրապետության անվտանգության ապահովմամբ: Այդ նկատառումով անզիական իշխանությունները հանդես էին գալիս ավանդական ստատուս-քվոյի քաղաքականությամբ՝ պաշտպանելով Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիությունն ու ջանում խափանել այնտեղ մյուս

<sup>1</sup> Տիրապայան Հ., Առաջին համաշխարհային պատերազմը..., էջ 126:

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1913, N 77:

<sup>3</sup> Ավետյան Ա., Գերմանական իմպերիալիզմը և Բայրութի պատմությունը, Երևան, 1975, стр. 20.

տերությունների դիրքերի ամրապնդումը: Այդ մտահոգությամբ էլ Լոնդոնում չէին ցանկանում ճնշում գործադրել Թուրքիայի վրա արևմտահայերի արդարացի պահանջների բավարարման իմաստով: Այս խնդրում անզիւժական կառավարությունը ստիպված էր հաշվի առնել նաև իր գաղութների մահմեղական բնակչության տրամադրություններն ու Վերաբերմունքը: «Անգլիայի գործողությունները,- 1912 թ. սեպտեմբերին ցարին հղած նամակում գրում էր Ս. Սագոնվը,- ենթարկվում են մեկ մտահոգության՝ իր հանդեպ չհարուցել մահմեղական աշխարհի դժգոհությունը: Այստեղից էլ նրա թվացող անտարբերությունը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների ճակատագրի նկատմամբ»<sup>1</sup>:

Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիության պաշտպանությամբ հանդես էր գալիս նաև Ֆրանսիան: 1912 թ. օգոստոսին Ֆրանսիայի արտգործնախարարության քաղաքական դեպարտամենտի տնօրին Մորիս Պավելովը բուրքական դեսպան Ռիֆար Փաշայի հետ հանդիպման ժամանակ վերջինիս հավաստիացնում է, որ արևելյան գործերում Ֆրանսիայի արտաքին քաղաքականության խնդիրներից է Թուրքիայի ամրողականության պահպանումն ու նրա ամրապնդումը<sup>2</sup>: Եվ դա պատահական չէր: Փարիզում լավ գիտակցում էին, որ Օսմանյան կայսրության փլուզման դեպքում խիստ կամրապնդվեն Գերմանիայի և Ռուսաստանի դիրքերը, որով մենք վեցական կիասցրվեր Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի ունեցած շահերին: Դեպքերի նման ընթացքը Լ. դը Շնորհանունը համարում էր Ֆրանսիայի համար «քաղաքական, տնտեսական և քարոյական աղետու»<sup>3</sup>: Դրա հետ մեկտեղ Ֆրանսիան Թուրքիայում ուներ մեծ տնտեսական շահեր և հսկայական գումարներ էր /մոտ 2 մլրդ. ֆրանկ/ ներդրել այնտեղ, որոնք, բնականաբար, չեր ցանկանում կորցնել: Ինչ վերաբերում է

<sup>1</sup>Могилевич А., Айрапетян М., На путях к мировой войне 1914-1918 гг., Ленинград, 1940, стр.107.

<sup>2</sup>Материалы по истории франко-русских отношений за 1910-1914 гг., Сборник секретных документов бывш. Императорского Российского Министерства Иностранных Дел, Москва, 1922, стр. 243.

<sup>3</sup>«Офицер» Л. տր, հՀՎ. աշխ., էջ 46:

Հայկական հարցին, ապա ֆրանսիական կառավարությունն այն օգտագործում էր բուրքական իշխանություններից նոր գիշումներ կորզելու համար, ինչպես նաև ծգուում էր թույլ չտալ ուսական ազդեցության ուժեղացումն Արևմտյան Հայաստանում:

Ավստրո-Հունգարիան և Խոտալիան, որոնք կենսական շահեր չունեին Արևմտյան Հայաստանում, գրեթե չէին մտահոգված Հայկական հարցով: «Հայաստանը,- XIX դ. վերջերին նշում էր Ավստրիայի արտգործնախարարը,- չափազանց հեռու է գտնվում, որ մենք այսուեղ որևէ հետաքրքրություն ունենանք»<sup>4</sup>: Դրա հետ մեկտեղ այդ տերությունների դիմակար շրջաններն իրենց դաշնակից Գերմանիայի նման հանդիս էին գալիս Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելության պաշտպանությամբ և դրա արևելյան շրջաններում ուսական դիրքերի ամրապնդման դեմ:

Նման պայմաններում էլ հայկական բարենորդումների հարցը նորից դառնում է մեծ տերությունների բնարկման և շահարկման առարկա: Ինչպես և անցյալում, «քաղաքակիրը» Եվրոպան ենելով իր շահերից, այդ խնդիրն օգտագործում է Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, նրա ներքին գործերին խառնվելու, նոր արտոնություններ ստանալու և իր դիրքերն ամրապնդելու համար, միաժամանակ անտեսելով արևմտահայության անտանելի ծանր կացությունն ու նրա նկատմամբ իրականացվող դաժան հալածանքներն ու բռնությունները:

## 2) Պողոս Նուրար Փաշան և Հայ Ազգային Պատվիրակության կազմավորումը

1911-1912 թթ. խոալո-բուրքական պատերազմում Թուրքիայի պարտությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում բալկանյան ժողովրդական ժողովությունը:

<sup>4</sup>«Օհանջանյան Ա.», 1915 թվական. Անհերքելի վկայություններ /Ավստրիական վակիրագրերը հայոց ցեղասպանության մասին/, Երևան, 1997, էջ 21:

դրվուրդների ազգային-ազատազրական պայքարի վերելիքի համար: Օսմանյան լծի դեմ Մակեղոնիայում ծագած ապստամբությունն առիթ է ծառայում 1912 թ. հոկտեմբերի 9-ին Բալկանյան պատերազմի բռնկման համար: Մի շարք ժանր պարտություններ կրելուց հետո՝ բուրքական բանակը, բալկանյան դաշնակիցներին զիջելով կայսրության եվրոպական տիրությունների մեծ մասը, նաև անջում է դեպի Չարալշի: Իրական վտանգ է ստեղծվում բուրդարների կողմից Կ. Պոլսի գրավման համար: Նման պայմաններում բուրքական կառավարությունը 1912 թ. նոյեմբերի 3-ին դիմում է մեծ տերություններին՝ խաղաղարար միջնորդությամբ հանդիս զայտ խնդրանքով: 1912 թ. դեկտեմբերի կեսերին պատերազմող կամների միջև կնքվում է զիմայադար:

Օսմանյան լծից ազատազրվելու պայքարում բալկանյան ժողովուրդների ունեցած հաջողությունները մեծ հույսեր են ներշնչում արևմտահայությանը: «Թիւրք-պալկանեան պատերազմը,- զրում էր Վ. Փափազյանը,- մէկ անգամէն մընուրտը պարզեց և մեր բնելիք դիրքը ճշտելու հնարաւորութիւններ ստեղծեց»<sup>1</sup>: Օգովելով պատերազմում Թուրքիայի պարտությամբ և Արևելյան հարցի վերաբացմամբ ստեղծված բարենպաստ պայմաններից՝ հայ դեկավար շրջանները որոշում են տերություններին նորից իիշեցնել Բեղլինի դաշնագրի 61-րդ հոդվածով իրենց ստանձնած պարտավորությունների իրականացման մասին և նորից միջազգային սեղանի վրա դնել հայկական բարենրոգումների հարցը: Գիտակցելով հանդերձ ընտրված ճանապարհի բարդությունն ու անցյալում այդ իմաստով ունեցած հիասթափությունները՝ նրանք գտնում էին, որ տվյալ իրավիճակում նման միջոցին դիմելու միակ հնարավորությունն է արևմտահայերի անտանելի կացության բարեկամանը հասնելու: Խնդրի լուծման նման եղանակի վերաբերյալ ստեղծված էր միակարծություն: «Պատրիարքարանը, կուսակցությունները, հանրային կարծիքը, բովանդակ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտության հայերի վիճակը չի բարեփոխվի,- զրում էր դաշնակցական հայտնի գործիչ Սիմոն Վրացյանը,-

որիշ հեռանկար չէր տեսնվում»<sup>2</sup>: Այդ էր վկայում նաև Ս. Սերոբյանը: «Երտաւորումներ գոյութիւն չունեին Հարցին եւ անոր լուծման հետապնդումի ուղղութեան մէջ»<sup>3</sup>:

Հայկական հարցի լուծման ամենաշահագրգիտ կողմը լինելով հանդերձ՝ Կ. Պոլսի Ազգային Պատրիարքարանը հնարավորություն չուներ իր վրա վերցնել ոյս միջազգային արձարժման առարելությունը: Ենթակա լինելով և պաշտօնական հարաբերությունների մեջ գտնվելով Բ. Դուան հետ, Պատրիարքարանը չէր կարող բաղադրական գաղտնի բանակցություններ վարել օտար պետությունների հետ: Նման քայլը, որի հետևանքը կիրար եվրոպական միջամտություն առաջ բերել երկրի ներքին գործերին, բուրքական կառավարության կողմից կրիստու որպես դավաճանություն: «Քացարձակապէս անհնար է,- Գևորգ Ե կարողիկոսին հղած նամակում զրում էր պատրիարքի քարտուղար Գ. Պալարյանը,- Ազգային Պատրիարքարանիս յայտնի կերպով գործին մէջ միշրճվիլ որ կրնայ ոչ միայն օգտակար չըլլա, այլև աղետաբեր հետևանքներ ունենալը»<sup>4</sup>: Այդ նկատառումներով էլ Հայկական հարցը միջազգային քննարկման առարկա դարձնելու առարելությունն իր վրա է վերցնում Ամենայն Հայոց Գևորգ Ե կարողիկոսը: «Արտաքստ,- զրում էր արևմտահայ հայտնի գործիչ Գրիգոր Զոհրապը,- Վեհական Կարողիկոսին յանձնեցինք Պետութեան մոտ կատարուելիք դիմումները, բան մը որ իոս մեզի համար անհնարին էր»<sup>5</sup>: Հայկական հարցի լուծմանը նպաստելու, ինչպես նաև այդ իմաստով կարողիկոսի ծավալած գործունեությանն աջակցելու համար ստեղծվում են երկու բաղադրական մարմններ: 1912 թ. հոկտեմբերի վերջերին Ռուսաստանի հայարձնակ վայրերի ներկայացուցիչների Թիֆլիսի համագումարում ընտրվում է Ազգային Բյուրո /նախագահ

<sup>1</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 4-5:

<sup>2</sup> Սերոբյան Ս., Սեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, 1948, էջ 225:

<sup>3</sup> ՀՀ Ս. Մաշտոցի անվ. Մատենադարան, Կարողիկոսական դիլան, թղթ. 238, վավ. 64, թ. 1:

<sup>4</sup> ՀՀ Գրականության և Արվեստի Թանգարան /այսուհետն՝ ՀՀ ԳԱԱ/ Գ. Զոհրապի ֆ., գ. 91, թ. 3:

Ա. Հարությունյան, անդամներ՝ Հ. Առաքելյան, Ա. Խատիսյան, Ն. Աղբայան, Ա. Քալանքար, Ա. Պողոսյան, Հ. Թումանյան/, իսկ ավելի ուշ Կ. Պոլսում կազմվում է Ապահովության Հանձնաժողովը / նախագահ Ե. Դուրյան, անդամներ՝ Գ. Պալարյան, Ա. Գարայան, Ռ. Մարտիկյան, Վ. Փափազյան, Լ. Տեմիրճիպաշյան/:

Ինչպես և անցյալում, արևմտահայությունն իր խնդրի քարեհաջող լուծման հույսերը մեծամասամբ կապում էր Ռուսաստանի հետ: Դրան մեծապես նպաստեց նաև տվյալ ժամանակաշրջանում ռուսական կառավարության վերաբերմունքի փոփոխությն ի նպաստ այդ խնդրի: Այդ նկատառումով էլ աշխարհի տարբեր կողմերում գտնվող հայության կողմից կարողիկությի անունով ստացվում են քազում նամակներ և հեռագրեր, որտեղ ցանկություն էր հայտնվում արևմտահայերի կացության քարելավման խնդրանքով դիմել ռուսական կառավարությանը: Այդ իդերի քարզման դատմալով՝ Գևորգ Ե կարողիկոսը Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոսի միջոցով 1912 թ. հոկտեմբերի 2-ին դիմում է Կովկասի փոխարքա Վոլոնցով-Դաշկովին միջնորդելու կայսր Նիկոլայ II-ի մոտ՝ «Ռուսաստանի հզոր հովանափորության տակ առնել Թուրքահայաստանի քազմաշարչար ժողովը-դիմ»<sup>1</sup>: Թիֆլիսի քաղաքապետ Ա. Խատիսյանն իր հուշերում գրում էր, որ կարողիկությի այդ դիմումը «համապատասխանում էր հայ ժողովով, մտավորականության և կուսակցական շրջանակների ծգություններին»<sup>2</sup>:

Դրական արձագանքելով հանդերձ՝ ռուսական կառավարող շրջանները, Օսմանյան կայսրությունում մյուս տերությունների ունեցած կենսական շահերն ու հետաքրքրությունները հաշվի առնելով, գիտակցում էին, որ Ռուսաստանը չի կարող առանց նրանց հետ համաձայնության առանձին քայլեր ձեռնարկել Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Սակայն դա չէր նշանակում, որ Ռուսաստանը ցանկա-

նում էր Հայկական հարցի լուծմամբ հանդես գալու նախաձեռնությունը բողնուել այլ տերության:

Պետերբուրգում Սեպուհ Եպիսկոպոսի հետ ունեցած հանդիպումների ժամանակ Ռուսաստանի վարչապետ Վ. Կոկովցևը և արտօրծնախարար Ա. Սագոնվը խորհուրդ են տալիս դիմել նաև մյուս տերություններին և պատգամավորություն ունենալ բականյան խնդիրները կարգավորելու համար առաջիկայում գումարվելիք կոնֆերանսում<sup>3</sup>: Դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը քաջ գիտակցում էին նաև հայ քաղաքական շրջանները: Այդ նկատառումով է Ամենայն Հայոց Գևորգ Ե կարողիկոսը, տերություններին հովելիք դիմումները մեկ ուղղությամբ կենտրոնացնելու, այդ իմաստով անհատական կամ մասնակի նախաձեռնություններից և գործողություններից խոսափելու, ինչպես նաև արևմտահայության պահանջները խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու համար, որոշում է իր առունից գործող պատվիրակ ունենալ Եվրոպայում: Այդ պատասխանատու առարելությունը տրվում է եղիպտահայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ, ազգային քարերար Պողոս Նուրար Փաշային: 1912 թ. նոյեմբերի 10-ի թիվ 1482 կոնդակով Գևորգ Ե կարողիկոսը նրան նշանակում է իր ներկայացուցիչը Եվրոպական երկրներում և խնդրում «յանձն առնել երթալ ի վեհաժողով և առաջի առնել պատգամաւրաց Եվրոպական Պետութեանց գիտնիլիք Հայոց, գուղեկազիք մեր հայցելով զմիջնորդությին նոցա առ ողբալի կացութեան հայ ժողովրդեան Տաճկաստանի»<sup>4</sup>: Կ. Պոլսի Ազգային Պատրիարքարանն ու Ապահովության Հանձնաժողովը իրենց կողմից և կարևորում և վավերացնում են Պ. Նուրարի նշանակումը<sup>5</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 6:

<sup>2</sup> Օտեան Ե., Պողոս Փաշա Նուրար / կենսագրական նօրեր/, Կ. Պոլս, 1913, էջ 46-47:

<sup>3</sup> Փափազյան Վ., Հայկական քարենորդությունները /1912-1914/, «Վեմ», Փարիզ, 1933, Ն 1, էջ 94:

<sup>1</sup> Հայաստանի Ազգային Արխիվ /այսուհետև՝ ՀԱԱ/, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 6:

<sup>2</sup> Խատիսյան Ա., Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1932, Ն 11, էջ 121:

Պոլոս Նուրարը ծնվել էր 1851թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում: Նուրարյանների տոհմը սերում էր Սյունյաց աշխարհի Շիկահող գյուղի<sup>1</sup>: Դավիթ-Բեկի զինակիցներից Նուրարը, Սյունիքի ազատագրական շարժման անկումից հետո, զարթել և հաստատվել էր Զմյուռնիայում: Պ. Նուրարի հայրը Եզիպոտոսի նշանավոր պետական-քաղաքական գործիչ Նուրար Փաշան էր, իսկ մայրը՝ Ֆուլիկ Երամյանը: Նախնական կրթությունը Պ. Նուրարը ստացել էր Շվեյցարիայի և Ֆրանսիայի վարժարաններում, այնուհետև ավարտել էր Փարիզի Էքու Սանքրալը՝ ստանալով ճարտարագետ-երկրաչափի մասնագիտություն և աշխատել Ֆրանսիայի հանրերի և երկաքուղիների վարչություններում: 1878-1879, 1891-1898 թթ. եղել էր Եզիպոտոսի պետական երկաքուղիների ընդհանուր տնօրին, 1888, 1900-1904 թթ.<sup>2</sup> Ակերսանդրիայի հայոց Ազգային Թաղական Խորհրդի ատենապետ, 1905 թ. Կահիրեկի Թաղական Խորհրդի ատենապետ, ինչպես նաև Բենեթայի երկրագործական, Ակերսանդրիայի հանրակառերի, Սենզալեի հողերի բարելավման և շահագործման, Կահիրեկի ջրի ընկերությունների իիմնադիր և նախագահ: 1906 թ. ապրիլի 15-ին Պ. Նուրարը մի խումբ համախոհների հետ /Յաղուր Արքին Փաշա, Մ. Անդրանիկյան, Ե. Աղարոն, Վ. Մալեզյան, Կ. Շերիտչյան, Հ. Հակոբյան/ Կահիրեկում հիմնել էր Հայկական Քարեգործական Ընդհանուր Սիուրյունը և դարձել նրա նախագահ: Պ. Նուրարը պարզեատրվել էր մի շարք շքանշաններով, այդ թվում՝ ֆրանսիական Պատվո Լեզենի ասպետության խաչով /կարծ հողերը ճեղքելու համար ինքնաշարժ արորի ատեղման համար/, Սեղիդին, Օսմանին, Նեղոսի, բեղջիական «Օրտըր տղ Լեռպոլը» և այլն: Պ. Նուրարը հանդես էր եկել բազում ազգանպաստ ծեռարկներով և գրադվել բարերարությամբ<sup>3</sup>:

<sup>1</sup>Խաչատրյան Հ., Պետրոսյան Տ., Հայկազումը /հայ գրավարներ, ուղղմական, պետական գործչներ, դիվանագետներ/, Երևան, 2002, էջ 466:

<sup>2</sup>Պ.Նուրարի կենազգության մասին ավելի մանրամասն տես, Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 4-19; Նուրար և Նուրարաշեն, Փարիզ, 1929, էջ 5-23; Զարդարեան Վ., Ֆիշառակարան /1512-1933/ Խն. Գ., Գահիրէ, 1934, էջ 29-41; Հուշամատյան Պոլոս Նուրար Փաշայի, Լու Անջելես, 1986, էջ 15-32; Գալուստշեն Ա., Նիւրեր Եզիպոտոսի հայոց պատմության համար, Խն. Գ., Պատմության Եզիպոտոսի բարերարներու և կրթական հաստատություններու, Վենետիկ-Ս.Ղազար, 1987, էջ 177-186; Ալյօմաննան Ա., Արարական Սիացնալ Հանրապետության Եզիպոտոսի նահանգը և հայերը /սկզբէն մինչեւ

Կարողիկոսական կոնդակը Պ. Նուրարը ստանում է 1912 թ. դեկտեմբերի 2-ին Փարիզում, որ նա գտնվում էր ընտանիքով: Գիտակցելով իրեն վստահված առաքելության բարդությունն ու պատասխանաւությունը, նա համաձայնում է ստանձնել այն: Կ. Պոլսի նախկին պատրիարք Մահաքիա Օրմանյանին 1912 թ. դեկտեմբերի 8-ին հղած նամակում Պ. Նուրարը գրում էր. «Զվարանեցայ ընդունելու այս ծանր պաշտօնը զօր կը նկատեմ ի գործ հանելիք հայրենասիրական պարտականություն մը»<sup>4</sup>:

Պոլոս Նուրարի, որպես կարողիկոսի պատվիրակի ընտրությունը՝ Եվրոպական Երկրների ղեկավար շրջանների մոտ Հայկական հարցը պաշտպանելու, լավագույնն էր, քանի որ նա օժտված էր այն բոլոր հատկություններով, որոնք հարկավոր էին այդ գործը զուխ բերելու և ամենահարմար անձնավորությունն էր նման առաքելությունը ստանձնելու համար: «Ազգը, - գրում էր Ա. Ալպոյաջյանը, - աւելի յարմար ընտրությին մը չէր կրնար ընել եվրոպական դիւնագիտութեան առջեւ իր դատը պաշտպանելու համար»<sup>5</sup>: Առաջին հերթին հաշվի էին առնվել Պ. Նուրարի բարձր դիրքն ու եվրոպական, հատկապես անգլիական, ֆրանսիական ֆինանսական, տնտեսական, քաղաքական և մտավոր շրջանների հետ ունեցած ծանոթություններն ու կապերը: «Ան, - գրում էր Ա. Գարբիելյանը, - Երոպացի միլիոնատէր ճենքլմեններու լաւագոյն դասին դասակիցն է եւ նախարարներու եւ դեսպաններու հիրն կամ ասպարականն կ'ըլլայ իրեւ անոնց հավասարապատի ընկերն, ոչ թէ անոնցմէ ունկնդրութիւններ կը հայցէ իրեւ դիւնագիտական մուրացկան մը»<sup>6</sup>: Սա շատ կարևոր իրություն էր և մեծապես կմապաստեր Պ. Նուրարի առաքելության հաջողությանը: Օգտագործելով իր լայն կապերը՝ նա հեշտությամբ կարող էր արևմտահայության պահանջներն ու բաղձանքները պարզաբանել ու պաշտպանել եվրոպական ղե-

մեր օրերը/, Գահիրէ, 1960, էջ 167-168; Թոփուզյան Հ., Եզիպոտոսի հայկական գաղութի պատմության /1805-1952/, Երևան, 1978, էջ 116; Սելրույան Ե., Հայկական Քարեգործական Ընդհանուր Սիուրյունը Խորհրդային Հայաստանում 1923-1937, Երևան, 1999, էջ 8; Հակոբյան Մ., Նախափորձ Նուրարյան սոհմագրության, «Բանքի Հայաստանի արխիվների», Երևան, 1983, Ն 2, էջ 123-140:

<sup>1</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 50:

<sup>2</sup> «Նոր Հայաստան», Կ. Պոլսի, 1918, Ն 3:

<sup>3</sup> «Կոչնակ», Նիւ Եռը, 1913, Ն 42:

կավար շրջանների մոտ, ինչպես նաև տեղյակ լինել Հայկական հարցում վերջիններիս դիրքորոշմանը և ըստ այդմ ձեռք առնել անհրաժեշտ քայլեր ու դիմումներ: «Ընորիի իր ընկերային բարձր դիրքին և համբավին, գրում էր «Կոչնակ» թերթը, - Փաշան ամեն դիրութիւն ունի նախարարներ, նախարարապետներ, դեսպաններ տեսնելու և անոնց հաեցրներուն ծանոթանարու»<sup>1</sup>: Պ. Նուրարի նշանակման համար պակաս կարևոր դեր չէր խաղացել նաև իր հոր՝ նշանավոր պետական գործիչ, Եզիզոսի նախկին վարչապետ Մեծն Նուրար Փաշայի /1825-1899/ ունեցած միջազգային համբավն ու հեղինակությունը: «Պօղոս փաշան, - գրում էր Ե. Օսյանը, - լաւագոյն կերպով կններկայացնել իր ազգը, քանի որ իր անձնական ճշմարիտ արժանիքներուն և տաղանդին կը միացնել նաև հօրենական աշխարհահոչակ անոն մը»<sup>2</sup>: Կարևորվել էր նաև Պ. Նուրարի մտավորական լայն և բազմակողմանի զարգացումը, ինչպես նաև ֆրանսերենի և անգլերենի գերազանց իմացությունը, ինչը օտար միջավայրում արդյունավետ աշխատելու առաջին նախապայմանն էր: Ժողովրդական լայն զանգվածների մոտ Պ. Նուրարը հայտնի էր և ուներ մեծ համբավ որպես Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիր: Հաշվի էր առնվել նաև Պ. Նուրարի ունեցած հարատությունը, որը նույնպես ի սպաս կղուվեր իր գործունեության արդյունավետության համար: «Պ. Նուրարն ունի անսահման ծախսելու դյուրություն, - գրում էր «Մշակ» թերթը, - ինչ որ մեծ զիդ է այս տեսակ գործերի մեջ»<sup>3</sup>: Այդ իմաստով հարկ է նշել, որ 1913-1914 թթ. Ազգային Պատվիրակության գործունեության հետ կապված բոլոր ծախսերը նա ամբողջությամբ վերցրեց իր վրա»<sup>4</sup>:

Սեծ տերությունների նեկավար շրջանների մոտ որպես կարողիկոսի ներկայացուցիչ Հայկական հարցը պաշտպանելու համար Պ. Նուրարին նշանակելը հարմար էր որոշակի քաղաքական նկատումներով: Նախ Պ. Նուրարը քաղաքական չեզոք գործիչ էր, ոչ մի կո-

սակցության անդամ չէր և հայտնի էր իր չափավոր հայացրներով: «Հայերի շրջաններում հայտնի և ազդեցիկ Պ. Նուրարը, - Վորոնցով-Դաշկովին հղած նամակում գրում էր Թիֆլիսի Նահանգային ժանդարմերիայի վարչության պետը, - համարվում է չեզոք անձնավորություն, չի անդամակցում որևէ հեղափոխական կուսակցության և հանդիսանում է զիխավորապես չափավոր /հայացրներ ունեցող - Հ. Բ./ հայության ներկայացուցիչ»<sup>5</sup>: Հատկապես կարևոր էր, որ կարողիկոսի պատվիրակը Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության շարքերից չէր, հակառակ դեպքում դա կարող էր մեծ դժգոհություն առաջ բերել ոուսական դեկավար շրջաններում /1905-1907 թթ. հեղափոխությունից հետո դաշնակցականները կառավարության կողմից ենթարկվել էին հալածանքների՝ մեղադրվելով հեղափոխականության և անջատողականության մեջ/: Պ. Նուրարի առաքելության հաջողության համար շատ էական էր, որ նա ոչ մի կապ կամ առնչություն չուներ Ռուսաստանի հետ՝ չհարուցելու համար բուրքական և եվրոպական պետությունների կասկածները, թե Եվրոպայում հայկական պատվիրակություն ունենալու գաղափարը ներշնչվել էր ոուսական կառավարության կողմից՝ այն իր շահերին ծառայեցնելու համար:

Պ. Նուրարը քաղաքական չեզորության, հայացրների չափավորության և ունեցած անառակելի հեղինակության շնորհիվ կարողացավ իր շուրջ համախմբել հայ կուսակցական և ազգային տարրեր շրջանների ներկայացուցիչներին՝ միասնական ջանքերով աշխատելու ի նպաստ Հայկական հարցի լուծման: Նման համերաշխությունը միայն կարող էր լինել գործի հաջողության զիխավոր գրավականը: «Ամբողջ Ազգը, - գրում էր «Յուսարեր» թերթը, - միահամուր բոլորվեցավ Ազգային Պատվիրակության շուրջ և աջակցեց նրան – պարագա, որ բարոյական մեծ ազդեցություն ունեցավ մեր քարեկամների վրա և մեր քննամիներին անզամ մտածել տվեց»<sup>6</sup>:

<sup>1</sup> Նոյեն տեղում, N 17:

<sup>2</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 26:

<sup>3</sup> «Մշակ», Թիֆլիս, 1913, N 2:

<sup>4</sup> «Անակիտ», Փարիզ, 1930, N 1, էջ 121:

<sup>5</sup> ԱԲՊՐ, ֆ. Պոլիտարխ, գ. 1914, ձ. 3484, լ. 26.

<sup>6</sup> «Յուսարեր», Կահիրե, 1913, N 138:

Պ. Նուրարի ունեցած հեղինակության, իր ստանձնած առաքելության ամենահարմար թեկնածուն լինելու և այդ իմաստով նրա հետ կապվող հույսերի մասին էր խոսում այն փաստը, որ նրա անունը եղել էր Թիֆլիսի Ազգային Բյուրոյի կազմած հարմար անձանց անվանացուցակում, որոնք կարող էին լինել կաթողիկոսի պատվիրակները Եվրոպայում<sup>1</sup>: Պ. Նուրարին Եվրոպայում պատվիրակ նշանակելու խնդրանքով կաթողիկոսին դիմել էին նաև եզիպտահայ գաղութի ներկայացուցիչները<sup>2</sup>: «Ոչ ոք, Կ. Պոլսի պատրիարք Հ. Արշարոնուն հետաձ նամակում գրում էր Վահան Մալեզյանը, - ավելի բարձրորեն և ծեռնհասորեն պիտի կրնայ թարգման հանդես գալ Ազգի բաղծանքներին, քան Պոլոս Նուպարը»<sup>3</sup>:

Պ. Նուրարի ընտրությունը կրում էր նաև որոշակի խորհրդանշական բնույթ: Քանի այն է, որ ժամանակին, դեռևս 1878 թ., նրա հորը՝ Մեծն Նուրար Փաշային մերժվել և չէր հանձնվել Թեղլինի վեհաժողովում Հայկական հարցի պաշտպանության առաքելությունը, մինչեւ վերջինս, շնորհիվ իր դիվանագիտական հմտության և կարողությունների, միզուցե կվարողանար հասնել որոշակի դրական արդյունքի: Եվ այժմ ազգը, կարծես, փորձում էր շտկել երեսունչորս տարի առաջ իր բույլ տված սխալը:

Վերոհիշյալ բոլոր արժանիքների կողքին Պ. Նուրարն ուներ մեկ պակասություն: Ապրելով իր հայրենիքից դուրս՝ նա կտրված էր արևմտահայ իրականությունից և մոտիկից լավ ծանոթ չէր այնտեղ տիրող կացությանը: Այդ պակասը լրացնելու համար իր գործունեության ամրող ընթացքում Պ. Նուրարն աշխույժ նամակագրական կապեր հաստատեց արևմտահայ գործիչների հետ, ծանրացավ Հայկական հարցին վերաբերող փաստարդերին, վավերագրերին, ինչպես նաև իրեն շրջապատեց այդ խնդրին քաջածանոթ անձնավորություններով:

<sup>1</sup>ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 211, թ. 3:

<sup>2</sup>Մալեզյան Վ., ճամրոս վրայ /Յուշաբաղ/, Բարիգ, 1950, էջ 137:

<sup>3</sup>ՀՀ ԳԱԹ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 52:

Պ. Նուրարի՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակի նշանակումը Եվրոպայում բացառիկ դրական արձագանք գտնավ իայ ազգային շրջաններում և մամուլում: Դաշնակցական հայտնի գործիչ Սիրայել Վարանդյանը, բարձր գնահատելով նրա արժանիքները, նշում էր, որ «պատմական մոմենտը գտել է իր համապատասխան մարդուն և այդ մարդն է - Պոլոս Նուրար Փաշան»<sup>1</sup>: «Կարողիկոսը դրանից աւելի լաւ ընտրութիւն չէր կրնար ընել», - գրում էր «Հնչակ» թերթը<sup>2</sup>: Իսկ «Կոչնակ» թերթն ընդգծում էր, որ «մեր ազգին համար մեծ բարերադյուրին մ' որ Նուպար Փաշա կը նախագահէ այսօր Հայ ճակատագրին»<sup>3</sup>:

Հայկական բարենորդումների հարցը տերությունների մոտ պաշտպանելու համար իր կողմից պատվիրակ նշանակելու մասին գերզ Ե կաթողիկոսն անհրաժեշտ է համարում հայտնել ուսական կառավարությանը: Նրա հրահանգով արեւելահայերից կազմված մի պատգամավորություն /Բարկեն Վարդապետ, Ա. Հարությունյան, Ա. Խատիսյան/ 1912 թ. դեկտեմբերի 24-ին այցելելով Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին և նրան փոխանցելով կայսրին ուղղված արևմտահայության կացության բարեկաման վերաբերյալ խնդրագիրը, տեղեկացնում է նաև Պ. Նուրարի նշանակման մասին: Պատվիրակներն ընդգծում են, որ նա պետք է աշխատի Եվրոպայում թեղլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով խստացված հայկական բարենորդումները Ռուսաստանի նախաձեռնությամբ և վերահսկողությամբ իրականացնել տալու ուղղությամբ<sup>4</sup>: Իր հերթին Վորոնցով-Դաշկովն այդ մասին գրում է արտգործնախարար Ս. Սագնովին: «Ազգային Ժողովի, Պատրիարքի և ամրող հայ ժողովրդի լիազորությամբ կարողիկոսը բալկանյան խնդիրները լուծելու համար հրավիրված կոնֆերանսում հայկական բարենորդումների հարցը պաշտպանելու առարկանում հայկական բարենորդումների հարցը պաշտպանելու հայ գործիչ Պոլոս Նուրարի դրել է շատ հոչակափր հայ գործիչ Պոլոս Նուրարի

<sup>1</sup>«Յուսարեր», Կահիրե, 1913, N 121:

<sup>2</sup>«Հնչակ», Փարիզ, 1914, N 1:

<sup>3</sup>«Կոչնակ», Նի Եռք, 1913, N 17:

<sup>4</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 41:

վրա»<sup>1</sup>: «Պ. Նուրարի առաքելության մասին Թուրքիայում ռուսական դեսպանատան առաջին քարգման Ա. Մանդելշտամին տեղեկացնում է նաև Ապահովության Հանձնաժողովի անդամ Ռուկան Մարտիկյանը, նշելով, որ այն հանդիսանում է Պետերբուրգում կարողիկոսի անոնից Մեսրոպ Ենիկոպոսի վարած քանակցությունների քնական արդյունքը<sup>2</sup>:

Ռուսական կառավարության վերաբերումը Պ. Նուրարի առաքելությանն ընդիմանուր առմամբ դրական էր: Հայկական հարցի լուծման դիմումները բոլոր տերություններին ինչ-որ տեղ ձեռնուու էին Ռուսաստանին՝ ցույց տալու համար, որ արևմտահայության քարենորդական պահանջները իրակրված և թելադրված չեն իր կողմից: Բացի այդ ռուսական կառավարությունը դեմ չէր օգտագործել նաև Պ. Նուրարի գործունեությունը՝ Հայկական հարցում իր քաղաքականությունը տերությունների ճոտ պաշտպանելու համար:

Պ. Նուրարը միայնակ չէ, որ պիտի զլուխ բերել ստանձնած առաքելությունը: Նրան աջակցելու և Հայկական հարցն ավելի պատշաճ ներկայացնելու համար իր զիսավորությամբ ստեղծվելու էր պատվիրակություն՝ կազմված աշխարհիկ և հոգևորական անձանցից: Վերջիններին ընտրության իրավունքը վերապահվում է Պ. Նուրարին, որն էլ անմիջապես ձեռնամուխ է լինում այդ գործին: Պատվիրակության անդամների թեկնածուներ շատ կային, սակայն նրանցից պեսոք էր ընտրել լավագույն և այդ պաշտոնին համապատասխան անձնագործյուններ: Գլխավոր չափանիշը, որով Պ. Նուրարն առաջնորդվեց թեկնածուների ընտրության խթնդրում, այն էր, որ վերջիններս անպայման լինեին թուրքահպատակներ: Այդ բանը նրան խորհուրդ էին տվել նաև Ազգային Պատրիարքարանից: Սրա հիմնական նպատակն էր քուրքական կառավարությանը ցույց տալ, որ Արևմտյան Հայաստանում տիրող կացության քարենավմամբ առաջին հերթին մտահոգված են հենց իրենք՝ քուրքահայերը և, որ ամենակարևորն էր, տերություններին դիմելու և ընդիմանապես պատվիրակության կազմության գա-

ղափարը ներշնչված կամ իրակրված չէ ոչ մի պետության և հատկապես Ռուսաստանի կողմից: «Ազգային Պատվիրակությունը, հետագայում զրում էր Պ. Նուրարը, կազմվեց քացառապես օսմանյան հպատակներից՝ քացառելով Ռուսաստանի հայերին, որպեսզի մեկընդիշտ փարատվի անջատողական քաղաքականության ամեն կասկած»<sup>3</sup>: Որպես իր խորիրդական և աջակից, Պ. Նուրարն առաջին հերթին որոշում է Փարիզ իրավիրել Կ. Պոլսի նախկին պատրիարք Մարտիան արքեպիսկոպոս Օրմանյանին և նույնիսկ ուղարկում է ճանապարհածախսը<sup>4</sup>: Պ. Նուրարի այդ ընտրությունը պատահական չէր և պայմանավորված էր Ս. Օրմանյանի հեղինակությամբ, Եվրոպայի, հատկապես Անգլիայի դեկանար և մտավորական շրջաններում նրա ունեցած ծանությամբ, ինչպես նաև արևմտահայության կացության ու նրա խնդրի քաջատեղյակությամբ: «Օրմանյան սրբազնը, զրում էր «Մշակ» թերթը, քեզ դիվանագիտական աշխարհում առատ քարեկամներ ունի և քեզ գործը գերազանցապես ուսումնասիրած է»<sup>5</sup>: Հարկ է նշել, որ Հայկական հարցը Եվրոպայում պաշտպանելու խնդրանքը Ս. Օրմանյանին դիմել էին նաև Եգիպտահայ գաղութի ներկայացուցիչները: Վ. Մալեզյանը 1912 թ. նոյեմբերի 13-ի նրան հղած նամակում զրում էր: «Ազգը սպասում է, որ Դուք ասպարեզ իշնելով՝ հայության դատը ձեռք առնեք և նրան ի սպաս դնեք Զեր անոնի և տաղանի հզոր հեղինակությունը»<sup>6</sup>: Բայց Ս. Օրմանյանին վիճակված չէր անդամակցելու Պ. Նուրարի զիսավորությամբ կազմվելիք պատվիրակությանը. դրան խանգարում էին մի շարք լուրջ հանգամանքներ: Առաջինը նրա՝ ամրաստանյալի կեցվածքն էր: 1908 թ. Թուրքիայում նրիտրութերի իշխանության զլուխ անցնելոց հետո, Ս. Օրմանյանը ստիպված իրաժամկել էր պատրիարքությունից՝ մեղադրվելով համիլյան ուժինին զրծակցության, ուխտադրժության և անձնական դիրքի չարաշահման մեջ<sup>7</sup>: Վ. Մալեզյանին հղած նամակում նա զրում էր: «Իմ ներ-

<sup>1</sup> ՀՀԱ, ֆ. 113, գ. 3, գ. 1172, թ. 6:

<sup>2</sup> Օրմանեան Ս., Խորհ ի խօսք, Երուաղեմ, 1929, էջ 302:

<sup>3</sup> «Մշակ», Թիֆլիս, 1912, N 29:

<sup>4</sup> ՀՀ ԳԱԹ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 123/ա, թ. 1:

<sup>5</sup> Սրբան Ս., Օրմանեան համրային խոճին և դատաստանին առջև, Կ. Պոլս, 1913, էջ 15-16:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 1172, թ. 6:

<sup>7</sup> Ներսիսյան Ս., Հայկական հարցի արձարծումը 1912 թ., «Պատմա-քանասիրական հանդիս», Երևան, 1992, N 1, էջ 201:

կայ դիրքիս մեջ չեմ կրնար հրապարակ ելլալ և գործի ճեռնամուխ ըլլալ, առանց նախապէս Ազգային Ժողովն գործը մաքրուելու, որ ազգին փստահութիւնը երաշխաւորուի»<sup>1</sup>: Չնայած այդ ամենին Պ. Նուբարը բնավ չի հրաժարվում Մ. Օրմանյանին հրավիրելու իր մտադրությունից: Ավելին, նա սկսում է ջանքեր գործադրել հասնելու վերջինիս արդարացմանը և դրա համար դիմում Կ. Պոլսի պատրիարքին՝ խնդրելով աջակցել նրա Փարիզ մեկնելու<sup>2</sup>: Պետք է նշել, որ Մ. Օրմանյանին անմեղ ճանաչելու խնդիրն ի վերջո լուծվում է: Ազգային Ժողովի 1912 թ. դեկտեմբերի 21-ի նիստում ձայների մեծամասնորյանը /դաշնակցականները շմասնակցեցին թվեարկությանը/ նա արդարացվում է: Բախտորոշ օրերին այդ քայլն ավելի շատ ուղղված էր հայության մեջ եղած տարածայնությունները հարթելուն և համախըմբված ու միասնարար հանդես գալուն: Կարողիկոսական պատվիրակությանը Մանուկյանը Ս. Օրմանյանի անդամակցելուն խոշննուող մյուս հանգանքն արևմտահայ դեկապար շրջանների դիրքորոշումն էր. նրանք գտնում էին, որ թուրքական կառավարության դժգոհությունը չհարցելու համար Կ. Պոլսից ոչ ոք, և հատկապես Մ. Օրմանյանի պես հանրածութ անձնավորությունը, չպետք է մասնակցի տերություններին ուղղված դիմումներին: Սրա հետ մեկտեղ Մ. Օրմանյանը՝ Եվրոպա մեկնելուն և որպես արևմտահայության խնդրի պաշտպան հանդես գալուն մեծամասամբ ընդիմանում էր Հ. Յ. Դաշնակցություն կոսակցությունը: «Ոչ մի նարդ, գրում էր դաշնակցական «Հորիզոն» թերթը, ավելի վատ ծառայություն չի կարող անել հայկական դատին, քան քրքամոլ Օրմանյանը»<sup>3</sup>: Այդ նկատառումներով էլ Մ. Օրմանյանը՝ կարողիկոսի կողմից պատվիրակ նշանակվելու վերաբերյալ տարածված կեղծ լուրերը հերքելու, այդ իմաստով առաջացած բոլոր կասկածները փարատելու համար Կարողիկոսական Դիվանը «Մշակ» և «Հորիզոն» թերթերում պաշտոնապես հանդես է գալիս հայտարարությամբ, որ «Մադարիս արքեպ. Օրմանյանը թուրքահայոց խնդրի վերաբերմամբ

<sup>1</sup> Մալէքեան Վ., ճամրու ծայրը, հտ Բ, Փարիզ, 1955, էջ 80-81:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 15. թ. 58:

<sup>3</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1912, Ն 277:

Ամենայն Հայոց կարողիկոսից ոչ մի պաշտոն չի ստացել»<sup>1</sup>: Այս հայտարարությունը վերջնականապես համոզեց Պ. Նուբարին, որ իրեն վստահված առաքելության կատարման ընթացքում այլևս անհմաստ է ակնկալել Մ. Օրմանյանի օժանդակությունը, որը, սակայն, բավականին օգտակար կլիներ: Կազմվելիք պատվիրակության եկեղեցական անդամների հարմար թեկնածուներ էին դիտվում նաև Կ. Պոլսի Ապահովության Հանձնաժողովի նախագահ, նախկին պատրիարք Ե. Դորյանը, կարողիկոսի դիվանապետ Քաջրատ Եպիսկոպոսը, կարողիկոսի տեղապահ Հուսիկ արքեպիսկոպոսը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսը<sup>2</sup>: Սակայն նրանցից և ոչ մեկը չընտրվեց, քանի որ Ե. Դորյանի Եվրոպա մեկնելը կարուցեր թուրքական կառուպարության դժգոհությունը, իսկ ինչ վերաբերում է մյուս թեկնածուներին, ապա նրանք բոլորն էլ ուսահայտակներ էին, որոնց նշանակումը համարվել էր աննպատակահարմար: Բացի այդ, վերջիններս կատարելապես չեն տիրապետում ֆրանսերենին, որի իմացությունը շատ անհրաժեշտ էր ստանձնվելիք առաքելության կատարման համար: Պատվիրակության եկեղեցական անդամի պաշտոնը ստանձնելու հրավերներ եղան նաև Վիեննայի Սլյախարյան Սլյաքանության արքահայրեր Գ. Մենիկչյանը և Գովիլիկյանը: Սակայն ի վերջո ընտրությունը կանգ առավ Եվրոպայի հայոց առաջնորդ Գևորգ Եպիսկոպոսուն Ութուջյանի վրա:

Նշանակումից անմիջապես հետո, Պ. Նուբարը դիմում է նաև ՀԲԸ փոխնախագահ Յաղոր Արքին փաշային՝ հրավիրելով անդամակցել իր գլխավորած պատվիրակությանը: Վերջինս սիրով ընդունում է այդ հրավերը: Որպես պատվիրակության աշխարհիկ անդամներ ընտրվեցին Մինաս Զերազը և Հարություն Մոստիչյանը: Հ. Առաքելյանի, Մ. Հարությունյանի թեկնածությունները չընդունվեցին՝ նրանց ուսահայտակ լինելու պատճառով:

Գևորգ Եպիսկոպոս Ութուջյանը ծնվել էր 1851 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում: Նախնական կրթությունը ստացել էր Նարեկյան վարժարա-

<sup>1</sup> «Մշակ», Թիֆլիս, 1912, Ն 282:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 20, թ. 13:

նում: 1873 թ. ծեսնադրվել էր սարկավագ, իսկ 1875 թ.՝ վարդապետ: 1886 և 1890 թթ. ընտրվել էր պատրիարքի փոխանորդ, 1891թ.՝ Եզիպտոսի հայոց թեմի առաջնորդ: 1895 թ. հոկտեմբերի 25-ին ծեսնադրվել էր Եպիսկոպոս և ընտրվել Եվրոպայի հայոց առաջնորդ: Յաղոր Արքին փաշան ծնվել էր 1842 թ. ապրիլի 15-ին Կահիրեում: Նախնական կյուրությունը ստացել էր Փարիզի Սամոել-Մուրադյան վարժարանում: 1883-1906 թթ. եղել է Եզիպտոսի կրթական նախարարության խորհրդական: Յաղոր Արքինը հանդիսանում էր Եզիպտոսի Հայ Կաթոլիկ հասարակության նախագահը: Մինաս Չերազը ծնվել էր 1852 թ. հունիսի 13-ին Կ.Պոլսում: Նախնական կյուրությունը ստացել էր Ներսիսյան վարժարանում: 1886-1889 թթ. եղել էր Կ.Պոլսի կենտրոնական Վարժարանի տնօրենը: 1889-1898 թթ. Լոնդոնում, իսկ 1898-1906 թթ. Փարիզում հրատարակել էր «Հայաստան» գրական-քաղաքական թերթը՝ հայ մշակույթին օտար ազգերին ներկայացնելու և Հայկական հարցի պաշտպանության համար Եվրոպայում քարենպաստ հասարակական կարծիք ստեղծելու նպատակով: Հարություն Մոստիչյանը 1890-1896 թթ. եղել էր Կ.Պոլսի Կենտրոնական Վարժարանի տնօրեն: 1909 թ. նա օսմանյան խորհրդարանի պատգամավոր Հ.Պապիկյանի հետ անդամակցել էր հատուկ հանձնաժողովին, որը պետք է պարզեր Աղանայում կազմակերպված հայերի ջարդերի պատճառները<sup>1</sup>:

Պ. Նուրարի կողմից պատվիրակության անդամների ընտրության հիմնական չափանիշներն էին, քուրքահպատակությունից քացի, նաև հայրենասիրությունը, քաջատեղյակությունը Հայկական հարցին, ինչպես նաև Եվրոպական և հատկապես անգլիական /քանի որ խաղա-

<sup>1</sup> Պատվիրակության անդամների կենսագրությունների մասին ավելի մանրանասն տես, Գարստանան Ա., Նիբեր Եզիպտոսի հայոց պատմութեան համար, հա. Ա, Գահիրէ, 1943, էջ 193-194; Ուկենածաւեան Հայկական Քարեզործական Ընդհանուր Միութեան /1906-1913/, Գահիրէ, 1913, էջ 40-41; Զարդարեան Վ., Եղվ. աշխ., էջ 41-43; Սելրոյան Է., Եղվ. աշխ., էջ 13-14; Սալգեան Վ., ճամրու ծայրը, հա. Ա. Բարիզ, 1954, էջ 304-305; Ալպոյան Ա., Մինաս Չերազ. Իր կյանքը և գործը, Կահիրէ, 1927, էջ 176-183; Կոչար Մ., Արմաно-ուրեցիկ գումարական հայության պատմությունը և առաջնային գործառնությունները, Երևան, 1988, ստ. 172.

դուրյան կոնֆերանսը գումարվելու էր Լոնդոնում/ կառավարական շրջաններում ունեցած ծանրություններն ու կապերը: Պետք է նշել, որ ընտրված թեկնածուներն ամրոջովվին համապատասխանում էին Վերը նշված չափանիշներին: Այսպես, Հ. Մոստիչյանն ու Գ. Ուրուցյանն անգլիական էին, ապրում էին համապատասխանարար Լոնդոնում և Մանչեստրում, ոներն ծանոր քազմարիվ պետական գործիչներ և խորհրդարանի անդամները: Սրա հետ մեկտեղ նրանք մեծ աշխատանք էին կատարել անգլիական իշխանությունների գործակցությունն արևմտահայության կացության քարելակնան խնդրում շահելու համար և նպաստել երկրում հայանպատ շարժման ակտիվացմանը:

Անգլիայի քաղաքական, հատկապես գիտական ու մտավորական շրջաններում հարգանք և հեղինակություն էր վայրում նաև Յաղոր Արքին փաշան: Ինչ վերաբերում է Ս. Չերազին, ապա Պ. Նուրարը հաշվի էր առել Հայկական հարցին նրա քաջատեղյակությունը, որը լուծմանն ուղղված գործընթացում ունեցած անմիջական մասնակցությունն ու Եվրոպական կառավարությունների մոտ արևմտահայության պահանջների պաշտպանությամբ հանդիս գալու հարուստ փորձը: Այսպես, 1878 թ. նա, որպես քարտուղար և քարգմանիչ, անդամակցել էր Հայկական հարցը Բելլինի վեհաժողովում պաշտպաններու համար այնտեղ մեկնած պատվիրակությանը, 1880 թ. որպես պատրիարք Ն. Վարժապետյանի պատվիրակ ներկայացել էր Անգլիայի քաջազնությունին: Խնդրելով նրա միջամտությունը հայկական քարենությունների լուծման համար: 1883 թ. նման առաքելությամբ նա եղել էր Ֆրանսիայում և Իտալիայում, իսկ 1908 թ. կարողիկոս Ս. Իզմիրլի հետ այցելել էր Պետերբուրգ և հանդիպել վարչապետ Պ. Ստոլի-պինի հետ<sup>1</sup>:

Իր կողմից ընտրված պատվիրակության անդամների անվանացնակը /Յաղոր Արքին փաշան, Գ. Ուրուցյան, Հ. Մոստիչյան, Ս. Չերազ/ Պ. Նուրարը 1913 թ. հունվարի 1-ին հեռագրում է Գևորգ Ե կարողագործ Ստոլի-պինի հետ:

<sup>1</sup> Տես, Ալպոյան Ա., Մինաս Չերազ. Իր կյանքը և գործը, էջ 185:

դիկոսին՝ հաստատման համար: Վերջինս հունվարի 2-ի պատասխան հեռագրում հաստատում է Վերոհիշյալ անձնափորտյունների ընտրույթունը, իսկ հունվարի 4-ին ուղարկում նրանց՝ պատգամավորներ նշանակվելու կոնյակները<sup>1</sup>:

Այսպիսով, կարողիկոսի 1912 թ. նոյեմբերի 10-ի կոնդակով, որը Դ. Անանունը համարում էր «պատմական արժեքավոր վավերագիր»<sup>2</sup>, սկզբ է դրվում Հայ Ազգային Պատվիրակության ձևավորմանը, որը 1913 թ. հունվարի 4-ին ամբողջապես կազմավորվում է Պողոս Նուրարի գլխավորությամբ և անդամակցությամբ Յաղութ Արքին փաշայի, Գևորգ Ութուշյանի, Հարություն Մոստիշյանի և Սիմաս Չերազի: «Պատգամավորությունը,- գրում էր «Հայրենիք» թերթը,- կազմված է ամեն վստահության արժանի և հայկական խնդրի մասին որոշ ձեռնահատության տեր անձանցից և կապատրասովի կատարելու հայության գերազույն ճիզեն արևելյան եղեքերգության այս վճռական բովելին»<sup>3</sup>:

1913 թ. հունվարի 13-ին Պ. Նուրարի իրավերով Ազգային Պատվիրակության ընդհանուր քարտուղարի պաշտոնը ստանձնում է ՀԲԸ Կենտրոնական Վարչական Ժողովի ատենադպջիր Վահան Մալեզյանը: Պետք է նշել, որ այդ պաշտոնի և ընդհանուրապես պատվիրակության անդամակցելու համար շատ հարմար էր հայտնի գրող, հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի թեկնածությունը, որը, սակայն, չներգրավվեց դրա կազմում: Նույնիսկ Վ. Մալեզյանը խոստվանում էր, որ «մեծ եղանակ պատճենը որ Պօղոս Նուրար կը պնդեր իս ունենալ իբրև անմիջական օգնական, մինչդեռ Քարիզ կը գտնուեր Չօպանյանի նման կարող գրագետ մը եւ ազգաւեր գործիչ մը, որ ազգային դատով կը գրադիր տարիներէ ի վեր, եւ յարմարագոյն քարտուղարը ինըը իսկ ըլլալ կը քուէր»<sup>4</sup>: Մյա պատճառն այդ ժամանակ Պ. Նուրարի և Ա. Չոպանյանի միջև ի հայտ եկած զաղափարական տարածայնություններն էին, որոնց հետևանքով ժամանակավորապես նրանց հարաբերությունները խզվել էին /այդ մասին ավելի մանրամասն կխոսվի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 30, թ. 18:

<sup>2</sup> Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, Խո. 3, Վենետիկ, 1926, էջ 523:

<sup>3</sup> «Հայրենիք», Բոստոն, 1913, N 8:

<sup>4</sup> Մալեզյան Վ., ճամրոս վրայ /Յուշարադ/, էջ 250:

հաջորդ ենթագլխում: Սակայն հարկ է նշել, որ Վ. Մալեզյանի թեկնածությունն էլ պատահական չէր: Այդ նշանակումը կատարելով Պ. Նուրարը հաշվի էր առել այն հանգամանքը, որ 1912 թ. դեկտեմբերի սկզբներին Վ. Մալեզյանը հատուկ առաքելությամբ այցելել էր Կ. Պոլիս և տեղում ծանոթացել Հայկական հարցի լուծման շուրջ ծավալվող անցուղաձերին և այդ խնդրում ազգային շրջանների ունեցած վերաբերմունքին ու դիրքորոշմանը: Այդ իմաստով նա բավականին օգտակար կլիներ Ազգային Պատվիրակությանը: «Փաշան,- իր հուշերում գրում էր Վ. Մալեզյանը, ինձի պէտք ուներ միատեղ գործի սկսելու և նախապատրաստական աշխատանքները կատարելու համար»<sup>1</sup>:

Ազգային Պատվիրակության և Եվրոպական տարբեր երկրների հայկական զաղութերի ու հայասիրական կոմիտեների միջև կապեր հաստատելու և գործունեության միասնական ուղղություն ապահովելու համար 1913 թ. հունվարի 14-ին Պ. Նուրարի գլխավորությամբ կազմվում է հատուկ Բյորո, որի անդամներ են դառնում Վ. Մալեզյանը, Հ. Առաքելյանը, Ա. Չոպանյանը, Պ. Էսմերյանը, Գ. Սարգսյանը, Հ. Թնկյանը, Ս. Սվաճյանը<sup>2</sup>:

1913 թ. հունվարի 27-ին Պ. Նուրարի ստորագրությամբ իրապարակվում է Ազգային Պատվիրակության շրջաբերականը, որտեղ պարզաբանվում էր Վերջինիս պաշտոնի էռյունը, այն է՝ «Եվրոպական պետություններից պահանջել այն բարենորդումների իրագործումը, որոնք Բ. Դուռը հանձն առած էր գործադրել Բեղլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով»<sup>3</sup>:

Կազմակերպչական բնույթի աշխատանքներն ավարտելուց հետո՝ Ազգային Պատվիրակությունը, առանց ավելորդ ժամանակ կրցնելու, անցնում է իր ստանձնած առաքելության կատարմանը: «Հայ Ազգային Պատվիրակութեան մերենան այլեւս լարուած ըլլալով,- գրում էր

<sup>1</sup> Մալեզյան Վ., ճամրոս վրայ /Յուշարադ/, էջ 138:

<sup>2</sup> ՀՀ ԳԱԹ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 714, թ. 1:

<sup>3</sup> Նոյն տեղում, գ. 738, թ. 3:

Վ. Մալեզյանը, - Վսեմ. Նախագահը հոգեախնդ գործի լծուեցաւ, իսկապէս հազուագիտ անձնուիրութեամբ եւ ձեռնհասութեամբ»<sup>1</sup>:

### Յ) Պողոս Նուրարի հայացքներն Արևմտյան Հայաստանուժ քարենորդումների իրականացման վերաբերյալ

1912 թ. վերջերին նորից հրատապ դարձած հայկական քարենորդումների խնդրի բարեհաջող լուծումը մեծապես պետք է կախված լիներ նաև տերությունների դեկավար շրջանների մոտ արևմտահայերի պահանջների պաշտպանությամբ հանդես եկող Ազգային Պատվիրակության ծավալած գործունեությունից: Վերջինիս հանձնված այդ պատասխանառու առաքելությունը չէր կարող պասկել հաջողությամբ, եթե դրա նախագահը, որը ուներ Եվրոպայում արդյունավետ աշխատելու համար անհրաժեշտ բոլոր կարողություններն ու հնարավորությունները, ծանոթ չիներ նաև իր հետապնդած խնդրի զարգացման պատմությանը, չպատկերացներ հնարավոր լուծմանը հասնելու միջոցները և ցւնենար գործողությունների որոշակի ծրագիր: Ի պատիվ Պողոս Նուրարի պետք է ասել, որ այդ իմաստով ևս նա ամբողջովին արժանի էր ստանձնելու գատակած պաշտոնն ու արդարացրեց իր հետ կապվող հույսերը:

Հայկական հարցով Պ. Նուրարի հետաքրքրվելը սկսվել էր դեռևս 1878 թ.-ից, այսինքն խնդրի ծագման ակունքներից, շնորհիվ իր հոր՝ Սեծն Նուրար Փաշայի, որն այդ ժամանակ որոշ շափով ներգրավված էր դրա լուծման գործընթացում: 1878 թ. գումարված Բեռլինի վեհաժողովին արևմտահայության պահանջները ներկայացնելու համար նա կազմել էր քարենորդումների շափակոր ծրագիր, որով նախատեսվում էր կատարել գարշական և դատական քարեփոխություններ ժողովում:

Դուքրդի նորմալ կացությունն ապահովելու համար<sup>1</sup>: Սակայն այդ ծրագիրն անտեսվեց հայ դեկավար շրջանների կողմից, որոնք ավելի նպատակահարմար գոտան տերությունների առջև դնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը, որը հաշվի չառնվեց: Դեպքերի նման ընթացքը, Հայկական հարցի լուծման վերաբերյալ Սեծն Նուրարի հայացքներն ու կազմած ծրագիրն իրենց ազդեցությունն ունեցան նրա որդու վրա: Զափակոր պահանջներով հանդես գալն իր արտահայտությունը գոտավ Պ. Նուրարի 1912-1914 թթ. ծավալած գործունեության ամրող ընթացքում:

Պ. Նուրարի մտահոգությունն արևմտահայերի կացությամբ սկսվել էր հատկապես XIX դ. 90-ական թթ., երբ նա, շարունակելով հոր գործը, ջանքեր էր գործադրում արդուլ-համիլյան բռնությունների հետևանքով Եգիպտոսում ապաստանած փախստականների բնակության խնդիրը լուծելու, ինչպես նաև բազմաբնույթ օճնություն և օժանդակություն ցուցաբերելու համար: «Եթէ Նուպարեանց քարոյական և նիրական աջակցությունները չըլլար, - այդ մասին գրում էր Զերտուչտը, - ոչ Եգիպտոս, ոչ ալ Եվրոպա լայն չը պիտի բանային իրենց դրսերը այն ահազին զարթականութեան առջեւ, որ կազմուեցաւ 1895ին և 1896ի հայկական ջարդերու փաջողութեն»<sup>2</sup>: Այդ իմաստով Պ. Նուրարի կատարած ավելի նշանակալից ձեռնարկներից էր մի խումբ համախոնների հետ 1906 թ. ապրիլի 15-ին Հայկական Քարենորդական Ընդհանուր Սիուրյան հիմնումը, որի նպատակն էր քարեկալել հայ ժողովրդի նյութական և տնտեսական կացությունը: 1912 թ. Քաղկանյան պատերազմում Թիվրիխայի պարուությունն ու առաջիկայում խաղաղության կոնֆերանսի գրিমարումը Պ. Նուրարի մոտ ևս մեծ հույսեր արքացրեց՝ օգովելու ստեղծված քարենապատ քաղաքական պայմաններից և տերություններին ներկայացնելու արևմտահայության արդարացի պահանջները: Այդ ուրբությամբ նա, դեռևս ստանձնած շինելով Ազգային Պատվիրակության նախագահի պաշտոնը, կատա-

<sup>1</sup> Տես, Սարովսան, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիվրիխայում /1860-1910/, Խո. Ա, Թիֆլիս, 1912, էջ 435-444:

<sup>2</sup> Զերտուչտ, Նուպար Փաշա իշխան Նուպարեան Ծագումն և կենսագրութիւնը, ա.ա., 1920, էջ 30:

թե էր որոշակի քայլեր: 1912 թ. նոյեմբերի սկզբներին Կ. Պոլսի պատրիարք Հ. Արշարոնու և Եօֆիպտահայ գաղորի ներկայացուցիչների խնդրանքով Պ. Նուրարը, որպես ՀՔԸՄ նախագահ, մասնավոր, ոչ պաշտոնական հանդիպում էր ունեցել Ֆրանչիայի վարչապետ և արտօրքնախարար Ռ. Պուանկարեի հետ, որը, ինչպես գրում էր Վ. Մալեզյանը, «այդ վայրկեանին կը դեկտարէր եւ իր ձեռքին մէջ կը կենտրոնացնէր Եւրոպական քաղաքականութիւնը Արեւելան խընդույն մէջ»<sup>1</sup>: Ներկայացնելով Արևմտյան Հայաստանում տիրող անժխթար և ծանր վիճակը՝ Պ. Նուրարը վարչապետին խնդրել էր քաղաքան հարցերի լուծման հետ մեկտեղ քավարարել նաև արևմտահայության բարենորոգչական պահանջները<sup>2</sup>: Այդ նույն ժամանակաշրջանում է ստացվում և Ամենայն Հայոց Գևորգ Ե կարողիկոսի կոնդակը, որով Պ. Նուրարին պաշտոնապես իրավունք էր վերապահվում Եվրոպական երկրների դեկավար շրջանների մոտ հանդես գալ Հայկական հարցի պաշտպանությամբ:

Ստեղծված բարենպատ պայմաններում, երբ հնարավորություն էր ընծեռնել Հայկական հարցի լուծման խնդրանքով դիմել տերությունների օժանդակությանը, հայ դեկավար շրջաններին՝ գործի հաջողության համար անհրաժեշտ էր ճիշտ կողմնորոշվել և ունենալ պահանջների մեկ հստակ ծրագիր: Պատմական տվյալ ժամանակաշրջանում միայն բարենորոգումների իրականացման խնդիրն էր, որում հնարավոր էր հասնել տերությունների աջակցությանը: Ավելին պահանջելով՝ հայերը դժվար թէ հասնեն որևէ շոշափելի արդյունքի: «Մէկ քան պարզ էր բոլորի համար, - գրում էր Վ. Փափազյանը, - թէ ցանկալի չէ եւ ոչ էլ հնարաւոր բարենորոգումները վերածելու անկախութեան պահանջի: Յեղափոխական-քաղաքական կուսակցութիւններն իսկ չեն խորհեր այդ մասին»<sup>3</sup>: Նման կարծիքն ամբողջովին կիսում էր նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պ. Նուրարը: Նա

հատկապես ելնում էր առկա քաղաքական իրավիճակից ու տերությունների բռնած դիրքից, որոնք Օսմանյան կայսրությունում ունենալով հսկայական շահեր չեն պաշտպանի հայերի արմատական պահանջները, որոնք այս կամ այն կերպ կարող էին խախտել նրա տարածքային ամբողջականությունը: Ճիշտ էր ազգային երեսփոխաններից մեկը՝ նկատելով, որ «Եւրոպայից ոչ քագավորություն, ոչ էլ ինքնավարություն կարող ենք պահանջել: Եթե Թուրքիան էլ ինքը հավանի հայերին ինքնավարություն տալը, Անատոլիայի արևելյան մասի վրա աչք ունեցող տերություններն իրենց բոլոր ուժերով կիակառակեն դրան»<sup>4</sup>: Չէր անտեսվում նաև բոլքական իշխանությունների կատաղի ընդդիմությունը, որոնք, հատկապես երկրի Եվրոպական տիրույթների կորուստից հետո, ամեն կերպ ջանում էին ամրապնդել իրենց տիրապետությունն արևելյան շրջաններում: Այդ հանգամանքները, ինչպես նաև 1878 թ. հայ դեկավարության բոլոր տված բացրողումները հաշվի առնելով Պ. Նուրարը եկավ այն համոզման, որ տվյալ պայմաններում տերություններին պեսոր է ներկայացնել միայն բարենորոգումների պահանջներ, որոնց իրագործումը չէր հակասի նրանց շահերին: «Հայ պատզամատրութեան նախագահը, - գրում էր «Կոչնակ» թերթը, - հայերու կողմը գոնուած ուժերն ու համակրութիւններն կշռելով՝ անոնց համապատասխան ակնկալութիւններ կը տածէ, պահանջներ կը բանածեն եւ կը հաշի թէ մեր իրաւունքներուն որքանը կարելի է իմաս ծնոք թերել ուստի և պահանջել»<sup>5</sup>: Այդ էր վկայում նաև Ա. Թերզիապաշյանը, գրելով, որ «Պողոս Նուրարը շատ պահանջելու փոխարեն կառչած էր հնարաւորին»<sup>6</sup>: Այսպես, Պ. Նուրարն իր կատարած դիմումներում, կարդացած բանախոսություններում և տպագրած հոդվածներում մշտապես ընդգծում էր, որ «Պատզամավորությունը հանուն հայերի չի պահանջում ոչ բաժանում, ոչ անկախություն, ոչ քաղաքական ինքնավարություն, այլ միայն՝ Թեոլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված»

<sup>1</sup> Մալեզեան Վ., Ծաճրու ծայրը, հան. Բ, էջ 218:

<sup>2</sup> ՀՀ ԳԱԹ, Վ. Մալեզյանի Փ., գ. 452ա, թ. 1-2:

<sup>3</sup> Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Աւմ», Փարիզ, 1933, Ն 2, էջ 84:

<sup>1</sup> «Ժամանակ», Կ. Պոլս, 1913, Ն 1441:

<sup>2</sup> «Կոչնակ», Նիւ Եռք, 1913, Ն 17:

<sup>3</sup> Թերզիապաշյան Ա., Նուրար, Փարիզ, 1939, էջ 107:

բարենորդումները»<sup>1</sup>: Արևմտահայերի պահանջների շափակորությունն ու անկեղծությունն ավելի ընդգծելու և այդ իմաստով տերությունների ու հատկապես Թուրքիայի ունեցած կասկածները վերջնականապես փարատելու համար, տվյալ պահին անկախության և ինքնավարության ձգութմները նա համարում էր «ցնորսատևառին»<sup>2</sup>:

Պ. Նուրարը քաջ զիտակցում էր, որ հետապնդվող խնդրի դրական լուծման կարևոր երաշխիքը միասնական, համաձայնեցված ուղղությամբ և ծրագրով գործելն էր: Ուստի նա կարևոր էր համարում ծանոթանալ ազգային դերկավար զիտակվոր կենտրոններում /Կ. Պոլիս, Թիֆլիս, Էջմիածին/ Հայկական հարցի լուծման վերաբերյալ ունեցած տեսակետներին և համոզվել, որ որպանք համապատասխանում են իր պատկերացումներին: Նման հավաստիացումներ Պ. Նուրարը ստանում է: Կարողիկոսի և արևելահայ դերկավար շրջանների այդ խնդրի համեմ ունեցած հայացքներն արտացոլված էին հենց Պ. Նուրարին ուղղված կոնդակում, որով իրեն արտոնվում էր ներկայանալ եվրոպական տերությունների ներկայացուցիչների կոնֆերանսին և «խնդրել վասն բարեկարգելոյ զիայաբնակ գաւառները»<sup>3</sup>: Ուստահայության և իր ունեցած հայացքների համապատասխանության վերաբերյալ Պ. Նուրարն ապացույցներ է ստանում նաև «Մշակ» թերթի խմբագրության անդամ Հ. Առաքելյանից, որը հատուկ առաքելությամբ եկել էր Փարիզ՝ նրան ծանոթացնելու կարողիկոսի հրահանգներին և կարևոր այլ տեղեկություններին: «Ես ավելի ուրախ եմ հետամուտ լինել իմ առաքելությանը, Գևորգ Ե կարողիկոսին հղած 1912 թ. դեկտեմբերի 8-ի նամակում այդ մասին գրում էր Պ. Նուրարը, քանի որ դրա վերաբերյալ Ձեր տված հրահանգներն ամբողջովին համապատասխանում են իմ անձնական տեսակետներին»<sup>4</sup>: Հետապնդվող խնդրի լուծման վերաբերյալ արևմտահայ ազգային շրջաններում տիրող հայացքներին

ծանոթանալու համար Պ. Նուրարի հրահանգով 1912 թ. դեկտեմբերի սկզբներին Կահիրեց Կ. Պոլիս է մեկնում Վ. Սալեզյանը, որը տեսակցություններ է ունենում և խորհրդակցում տեղի հայ պաշտոնական անձանց և կուսակցական ներկայացուցիչների հետ: Իր առաքելության արդյունքների մասին Պ. Նուրարին հղած տեղեկագրում Վ. Սալեզյանը նշում էր, որ արևմտահայերն ամբողջովին պաշտպանում են մեծ տերություններին ուղղված բարենորդումների իրականացման պահանջները<sup>5</sup>: Այսպիսով Հայկական հարցի լուծմամբ մտահոգված ազգային բոլոր կենտրոններում համաձայնություն էր հաստատված Եվրոպային ներկայացվող պահանջների խնդրում, որը կարևոր երաշխիք էր դրական արդյունքի հասնելու համար:

Թեև Պ. Նուրարը բարենորդումների իրականացման խնդրանքներով պետք է դիմեր բոլոր տերություններին, այնուամենայնիվ նա, ինչպես և հայ ժողովրդի մեծագույն մասը, քաջ զիտակցում էր, որ միայն Ռուսաստանն է, որը, բնականաբար ենելով իր շահերից, իրոք շահագրգուված էր այդ խնդրով և կարող էր օգնել արևմտահայությանը: «Պատվիրակությունը, կարողիկոսին հղած 1913 թ. փետրվարի 10-ի նամակում գրում էր Պ. Նուրարը, այն կարծիք ունի, որ անն բանից առաջ պետք է Ռուսաստանի վրա հույս դնենք բարենորդումների իրագործման համար»<sup>6</sup>: Հենց այդ նկատառումով էլ գործի հաջողության համար նա պատրաստակամություն էր հայտնում հետևել ուսական կառավարության կարգադրություններին՝ ցոյց տալու համար, որ պատվիրակության ծեռնարկներն ու դիվանագիտական դիմումները չեն հակասում Ռուսաստանի շահերին: Սակայն դա պետք է արվեր ծածկաբար, քանի որ Պ. Նուրարին առաքելություն էր վստահված աշխատել եվրոպական երկրներում, որոնք կասկածանքով էին նայում Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի կատարած յուրաքանչյուր ծեռնարկին: Ուստի ուսամետ դիրքերից հանդես գալը ոչ միայն անհնատ կղարձներ Ազգային Պատվիրակության գործունեությունը, այլև կվճատեր Հայկական հարցի լուծմանը: Հենց դրանում

<sup>1</sup> Օսեան Ե., ճշվ. աշխ., էջ 76:

<sup>2</sup> Տես նոյն տեղում:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 46:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 23, թ. 1:

<sup>5</sup> Մալեզեան Վ., ճամրու ծայրը, Խո. Բ., էջ 232:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 19, թ. 27:

Եր Պ. Նուրարի առաքելության բարդությունը, քանի որ նա պետք է այնպես վարեր իր պաշտոնը, որ մի կողմից շհարուցեր տերությունների /հատկապես Գերմանիայի/ կասկածը, թե հանդես է գալիս հայկական վկայեքներում Ռուսաստանի ազդեցության ուժեղացման դիրքերից, իսկ մյուս կողմից նույն նկատառումով շհարուցեր ոռուական կառավարության կասկածները։ Դրա հետ մեկտեղ Ազգային Պատվիրակությունն իր գործունեության ընթացքում պետք է զգուշավոր ճշտեցում ցուցաբերեր՝ շառաջացնելու համար Թուրքիայի բացահայտ դժգոհությունը։ Ի պատիվ Պ. Նուրարի պետք է ասել, որ այնպիսի մի խճճված հարցում, ինչպիսին հայկականն էր, որ բախվում էին տերությունների շահերը, նա հմտորեն վարեց ստանձնած պաշտոնը՝ շհարուցելով ոչ Ռուսաստանի և ոչ էլ մյուս տերությունների կասկածները՝ մեկի կամ մյուսների շահերին ծառայելու մեջ, ինչպես նաև լրայ մնաց Թուրքիայի հանդեպ և հանդես չեկավ ոչ մի հակաբորբական հայտարարությամբ կամ քայլով։ «Նուպար փաշան,- զրում էր «Կոչնակ» թերթ, զգուշաւոր ընթացքով ջատագովեց մեր դատը՝ առանց որևէ պետութեան դիրքազգացութիւններն վիրատրելու և առանց շատ անհաճոյ ըլլալու թուրքերուն իսկ»<sup>1</sup>։

Եվրոպական դեկավար շրջանների մոտ Հայկական հարցը պաշտպանելու համար Ազգային Պատվիրակությունը բնականարար պետք է ունենար ծրագիր, որտեղ որպազծված լինեին արևմտահայերի բարենորոշական պահանջները։ Այդ նկատառումով իր նշանակումից անմիջապես հետո Պ. Նուրարը, Փարիզում գտնվող և խնդրին բացածանոք հայ և ֆրանսիացի գործիչների /Ա. Չոպանյան, Մ. Զերազ, Վ. Բերար/ աջակցությամբ, ձեռնամուխ է լինում հայկական բարենորոգումների ծրագրի մշակմանը։ Նա քաջ գիտակցում էր, որ տերություններին պետք է ներկայացնել այնպիսի ծրագիր, որը, ինչպես զրում էր «Ժամանակ» թերթը, «իր չափազանց և անզորդադրելի պահանջներով ծիծառելի չըլլա»<sup>2</sup>։ Ծրագրի հիմնական դրույթները պետք է շհակաւելուն տերությունների շահերին, որպեսզի դրանց իրագործման համար հնարավոր լիներ ստանալ նրանց աջակցությունը։ Պ. Նուրարի հա-

մոգմամբ արևմտահայերի նման պահանջների համար որպես հիմք կարող էր ծառայել 1895 թ. բարենորոգումների մայիսյան ծրագիրը, որը ժամանակին ընդունվել էր ինչպես տերությունների, այնպես էլ Բ. Դուան կողմից, և հետևաբար իրավական բոլոր հիմքերը կային դրա գործադրությանը հետամուտ լինելու համար։ Սրա հետ մեկտեղ, ինչպես հետագայում նշում էր Պ. Նուրարը «մայիսյան ծրագիրը իրեն ուղեցոյց առնելով՝ ուղեցինք քաղաքական որևէ նպատակ մեկ կողմ դնել և մեր բարենորոգումներուն տալ զուտ վարչական նկարագիր մը»<sup>3</sup>։ 1895 թ. մայիսյան ծրագիրը որպես հիմք ընդունելով հանդերձ Պ. Նուրարը գտնում էր, որ դրանում անհրաժեշտ էր ժամանակի պահանջներին համապատասխան որոշակի փոփոխություններ կատարել։ «Յօդուածներ կան,- զրում էր նա,- որ տասնեօրեւ տարիի ի վեր անվաեր դարձած են, և ուրիշ յօդուածներ ալ ներկայ պարագաներուն պատշաճեցնելու է իհարկե»<sup>4</sup>։

Պ. Նուրարի կազմած բարենորոգումների նախագծով՝ Թուրքիայի հայկական վեց վիլայեթներից /Երզրում, Բիրլիս, Վան, Սերաստիա, Խարբերդ, Դիարբերի/ կազմվելիք մեկ նահանգում պահանջվում էր կատարել բարեփոխումներ ֆինանսական, տնտեսական, արդարադատության բնագավառներում։ Նախատեսվում էր ստեղծել նահանգային ժողով՝ կազմված հավասարապես քրիստոնյաներից և մահմետականներից։ Հավասարության այդ սկզբունքով պետք է բաշխվեին նաև բոլոր պաշտոնները և ստեղծվեր ժամդարմերին ու ոստիկանություն։ Միջոցներ պետք է ձեռնարկվեին հողային հարցի լուծման, հայերի ազգային, հոգևոր իրավունքների և արտոնությունների պահպանաման, քրդերի կամայականություններից պաշտպանման ուղղությամբ։ Բարենորոգումների գործադրությունը դրվում էր սուլթանի կողմից նշա-

<sup>1</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 66:

<sup>2</sup> Քօնրամսոն Լ. տը, նշվ. աշխ., էջ 55:

<sup>3</sup> Դժբախտաբար մեզ չի հաջողվել գտնել այդ սկզբնական նախագիծը, որի բախանակության վերաբերյալ պատկերացմանները կազմվել են արխիվային փաստաթուրերում դրա մասին եղած առանձին իշխանակությունների հնչպես նաև 1895թ. բարենորոգումների մայիսյան ծրագրի հիմնան վրա։ Հետագայում Պ. Նուրարի կազմած նախագիծը փոփոխվել և համաձայնեցվել է Ազգային Պատրիարքարանի կողմից պատասխանականությամբ հետո։ Այդ փոփոխական ծրագրի կամեր տես, Բաշտոն N., H., Travel and Politics in Armenia, London, 1914, pp. 270-271.

<sup>1</sup> «Կոչնակ», Նիւ Եորք, 1913, N 42:

<sup>2</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, N 1469:

նակված բարձր կոմիսարի, իսկ հսկողությունը՝ Թ. Դռանը կից տերությունների հավանությամբ կազմված մշտական հանձնաժողովի վրա: Որոշակի բարեփոխություններ էին նախատեսնվում նաև Օսմանյան կայսրության այն տարածքներում /Աղանայի վիլայեթ, Զեյթուն/, որտեղ հայ ազգաբնակչությունը նշանակալի քանակ էր կազմում: Ընդհանուր առմամբ բարենորոգումներ ասելով Պ. Նուրարը հասկանում էր վարչական միջոցների այն ամրողությունը, որոնք պեսոք է գործադրով վեխն Եվրոպական հակակշռի տակ արևմտահայությանը տալու համար «ապահովություն՝ ուստիկանության կազմակերպությամբ, արդարություն՝ դատարանների բարեկարգմամբ, աշխատանքի արդյունավորում՝ ֆինանսական օժանդակություններով, բռնագրավված հողերի վերադարձով, հաղորդակցության ճանապարհների շինարարությամբ»<sup>1</sup>: Հենց այդ պահանջներն էլ դրվեցին Պ. Նուրարի՝ տերությունների դեկավար շրջանների մոտ կատարած դիմումների հիմքում:

Պ. Նուրարը գտնում էր, որ իր առաքելությունն ավելի արդյունավետ կլինի, եթե նա, բարենորոգումների պահանջներ ներկայացնելով հանդերձ, բացատրի և պարզաբանի դրանց բնույթը, եռյունը, նպատակները, անհրաժեշտությունն ու համապատասխանությունը տերությունների շահերին: Այդ նկատառումներով էլ նա, որպես Ազգային Պատվիրակության նախագահ, պարբերաբար կազմում և դիվանագիտական աշխարհին է հղում հուշագրեր, որոնց նպատակն էր, ինչպես գրում էր Լ. որ Քոնքանտնը, «ճշել հայկական պահանջումների բուն ոգին»<sup>2</sup>:

Պ. Նուրարի գիսավոր նպատակն էր առաջին հերթին ցույց տալ արևմտահայերի պահանջների օրինականությունն ու հիմնավորվածությունը: «Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և հայկական պահանջները» /1913 թ. վեստրվարի 27/ խորագիրը կրող հուշագրում նա ընդգծում էր, որ դրանք բխում են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից և 1895 թ. մայիսյան ծրագրից: Բարենորոգումների իրականացման անհետաձեխությունն ու անհրաժեշտությունը մատնանշելու համար Պ. Նուրարը, ներկայացնելով արևմտահայերի անտանելի կացությու-

<sup>1</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 63:

<sup>2</sup> Քօնքանտն Լ. տը, նշվ. աշխ., էջ 52:

նը, գրում էր, որ նրանք «միշտ ենթակա են վաշկատուն ցեղերի ավագակություններին ու հալածանքներին, ապրում են կյանքի ու պատվի անապահովության և ամեն վայրկան իրենց ստացվածքները կորցնելու վտանգի մեջ»<sup>1</sup>: Վերջում նա հույս էր հայտնում, որ տերություններն այս անգամ ձեռք կառնեն և գործադրել կտան հայկական բարենորոգումները:

Քաջածանոթ լինելով Հայկական հարցի պատմությանը՝ Պ. Նուրարը գիտակցում էր, որ դրա՝ առկախ մնալու հիմնական պատճառներից էր այն, որ տերությունները շահագրգռված չեն եղել լուծում տալու այլ խնդրին: Իսկ հայերի՝ Եվրոպական դեկավար շրջաններին արված դիմումներն ու խնդրանքները հիմնաված էին եղել մարդասիրական պատճառաբանությունների վրա և ուղղված՝ նրանց կարեկցանքը ձեռք բերելուն: Նման դիմումները, բնականարար, եական արդյունք չին կարող ունենալ քանի որ, ինչպես ճիշտ նկատել էր ուսական «Նովյե վրեմյա» թերթը. «Մեծ տերության արտաքին քաղաքականությունը չի կարող սպառվել մարդասիրությամբ: Միայն մարդասիրության և բարեսրտության նկատառումներով թելադրված քաղաքականությունը երբեք չի լինում ոչ երկարատև, ոչ էլ հետևողական»<sup>2</sup>: Այդ մասին պատրիարք Հ. Արշարունուն հղած 1913 թ. ապրիլի 21-ի նամակում Պ. Նուրարը գրում էր. «Մինչև իմա Եվրոպային դիմած էիմք իրը թախանձող, կոչում ընելով նրա մարդասիրական գգացմունքներին, որի հետևանքը, դժբախտարար, եղած է համակրությունը շահել, այլ ոչ թե ազդու գործակցությունը»<sup>3</sup>: Եվ քանի որ Պ. Նուրարին ևս առաքելություն էր հանձնաված պաշտպանել արևմտահայության պահանջները, ապա նա, հաշվի առնելով անցյալի բացքողումները, բարենորոգումների իրականացումը բխեցրեց տերությունների շահերից և ցույց տվեց դրանց համապատասխանությունը: Պ. Նուրարի այդ հայացքներն իրենց արտահայտությունը գտան նրա կազմած

<sup>1</sup> ՀԱՍ, ֆ. 57, գ. 5, գ. 33, թ. 4; Քօնքանտն Լ. տը, նշվ. աշխ., էջ 55:

<sup>2</sup> «Новое время», С.-Петербург, 1913, № 13365.

<sup>3</sup> ՀԱՍ, ֆ. 57, գ. 5, գ. 34, թ. 7:

«Հայկական բարենորդումները և Ասիական Թուրքիայի ամրողությունը» /1913 թ. մարտի 22/ խորագիրը կրող հուշագրում:

Տվյալ ժամանակաշրջանում բռլոր մեծ տերությունները՝ իրենց շահերից ենթելով ձգուում էին պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամրողականությունը: Սակայն Բալկանյան առաջին պատերազմից հետո Թուրքիայի բաժանման հնարավորությունը մեծ շափթերի էր հասել: Նման վտանգը սպառնում էր հատկապես նրա ասիական տիրույթներին: Դա պայմանավորված էր թուրքական իշխանությունների վարած դաժան բաղարականության հետևանքով արևմտահայության համար ստեղծված անտանելի ծանր կացությամբ, որը վերջիններիս ամեն լրացն էր լրողել զինված պայքարի, կամ օսմաներկյա միջամտության պատճառ դառնալ: Դեպքերի նման զարգացումը չէր կարող անտարբեր թողնել հատկապես Ռուսաստանին, որն իր կովկասյան սահմանների անվտանգության տեսանկյունից կարող էր ներխուժել Արևմտյան Հայաստան: «Անկարգությունների առաջացումը մեր սահմանների հարևանությամբ,- Մ. Գիրսին հյած 1912 թ. նոյեմբերի 30-ի նամակում գրում էր Ս. Սաղոնովը,- այնքանով կոյլացի մեր շահերին, որ դա կարող է ազդել Թուրքիայի հետ մեր նորմալ հարաբերությունների վրա և անցանկալի բախումների պատճառ դառնալ»<sup>1</sup>: Այդ սպառնակիրի հնարավորությունը քաջ գիտակցում էին մյուս տերությունների դեկավարները և պատրաստ էին ձեռնարկել ամեն ինչ նման բարություններից խուսափելու համար: Ֆիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը Պ. Նուրարը ձգուում էր ցույց տալ, որ Օսմանյան կայսրության արևելյան շրջանների տարածքային անձեռնախնդիրյան պահպանման հիմնական երաշխիքը հայկական բարենորդումների իրականացումն է: «Ասիական Թուրքիայի ամրողության խնդրու առարկա դառնալը,- ընդուում էր նա հուշագրում, - մնայում վտանգ է, որի առաջը կարող է առնել բարենորդումների գոր-

ծաղրությունը միայն»<sup>2</sup>: Եվ իրոք, տեղական պահանջներից բխող բարենորդումների իրականացումով կարելի էր կանխել հնարավոր խոռվությունների առաջացումը և նպաստել երկրամասի զարգացմանն ու բարգավաճմանը: Սրա հետ մեկտեղ Պ. Նուրարն ավելացնում էր, որ երեւ այս անգամ էլ արևմտահայության պահանջները չքավարարվեն, ապա «կարելի չպիտի ըլլայ արգելել յուսահատական արարքները, որոնց հետևանքը վտանգով լեցուն է Ասիական Թուրքիոյ հողային ամրողութեան պահպանման համար»<sup>2</sup>: Տեսնելով, որ տերություններն Օսմանյան կայսրությունում ունեն նաև հսկայական տնտեսական և ֆինանսական շահեր Երկարուղիների կառուցում, փոխառությունների տրամադրում/<sup>3</sup> Պ. Նուրարն ընդգծում էր, որ այդ շահերի անվտանգությունը ևս կախված է հայկական բարենորդումների իրականացումից: «Միայն բարենորդումները կարողանան կանոնավորել Օսմանյան կայսրության տնտեսական աղբյուրներն ու ամրապնդել նրա ֆինանսական կացությունը՝ վերացնելով անշխանական կարգերը», - ասում էր նա<sup>3</sup>: Այսպիսով Պ. Նուրարն իր դիմումներում հիմնականում պատկերում էր ոչ թե արևմտահայության ծանր դրույթունն ու կրած հալածանքները՝ տերությունների կարեկցանքը շահելու համար, այլ փորձում էր ցույց տալ Հայկական հարցի լուծման և նրանց ունեցած կենսական շահերի համապատասխանությունն ու դրանց միջև եղած կապը: Հարցադրման նման եղանակը դրական արդյունք ունեցավ և որոշակիորեն նպաստեց տերությունների կողմից հայկական բարենորդումների խնդրի բննարկմանը: «Դակապէս հանձարեղ հնարք մը եղաւ Պօղոս փաշայի կողմէ ապացուցանել Եւրոպիոյ առեւտրական, ֆինանսական, տնտեսական և քաղաքական շահն ու օգուտը Հայաստանի բարենորդումների մէջ: Եւրոպական շահերուն այդ կոչն ու մատնանշումն էր որ գրաւեց ուշադրութիւնները Հայաստանի և Փոքր

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 33, թ. 10; Քօնթանտն Լ. տը, նշվ. աշխ., էջ 59:

<sup>2</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 81:

<sup>3</sup> Բարգել վարդապետ, Հայկական հարցը և Պօղոս Նուրար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 30:

Ասիոյ վրայ»,,- Վ. Մալեզյանին հղած նամակում գրում էր Ազգային Պատվիրակության անդամ Յաղոր Արքին փաշան<sup>1</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի հայկական վիլայեթներում ապրում էր նաև մահմեդական բնակչություն /թուրքեր, քրիեր/, Պ. Նուրարը նշում էր, որ վերջիններս ևս անկասկած կօգտվեն բարենորդումների իրագործումից, քանի որ դրանք ուղղված են ոչ միայն հայերի վիճակի բարեկալմանը, այլ ընդհանրապես տվյալ երկրամասում կարգ ու կանոնի, օրինականության հաստատմանը, անկարգությունների վերացմանը, ապրելու և աշխատելու համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: «Կարելի չէ ընդունել,- ասում էր նա,- թէ երկրամասի մը մէջ ապահովութիւնը, արդարութիւնը ու տնտեսական բարգավաճումը բնակչութեան մնկ մասին օգտակար ըլլայ ի վնաս միս մասերում»<sup>2</sup>: Նման հայտարարությունն արվում էր նաև այն նկատառումով, որ թուրքական իշխանությունները, որոնք ծգուում էին խոսափել բարենորդումների իրականացումը, շփորձելին պատճառարանել, թէ դա կարող է առաջացնել մահմեդական բնակչության դժգոհությունը: «Բարենորդումների նշանակությունը չեն ընթանում,- «Հայկական բարենորդումները և իսլամ բնակչությունը» խորագիրը կրող հուշագրում /1913 թ. մայիսի 5/ գրում էր Պ. Նուրարը,- երբ կարծում են, թէ դրանք ուղղված են իսլամ բնակչության դեմ: Ընդհակառակը, բարենորդումներն անաշառ հավասարությամբ բոլորին էլ ապահովություն պիտի պարզեն»<sup>3</sup>: Պ. Նուրարը վերոհիշյալ հուշագրում մատնաճշելով մոլաջիրներին հայկական վիլայեթներում վերաբնակեցնելու աղետալի հետևանքները, տերություններին կոչ էր անում արգելել թուրքական իշխանությունների՝ այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Պ. Նուրարը հասկանում էր, որ միայն բարենորդումների իրականացման պահանջներով հանդես գալը դեռ բավական չէ, հետապնդած

<sup>1</sup> Մալեզյան Վ., Շամբուա վրայ /Ցուշարադ/, էջ 318:

<sup>2</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 66:

<sup>3</sup> Քոնրանտն Լ. տք, նշվ. աշխ., էջ 62:

նպատակին հասնելու համար: Հայտնի էր, որ թուրքական կառավարությունը բազմ անգամ պարտավորվել էր բարենորդումներ կատարել, սակայն միշտ դժուկ էր իր խոստումը: «Օսմանյան կայսրութեան ամրող բաղարական պատմութիւնը,- գրում էր Գ. Զոհրապը,- կամփուփուի քանի մը բառերու մէջ - բարենորդումներ խոստանալ Քրիստոնեաներուն և զգրծադարձել»<sup>1</sup>: Դրա հիմնական պատճառը Թուրքիայի կողմից բարենորդումների գործադրման իրաշխիքի բացակայությունն էր: Իսկ նման երաշխիք կարող էր լինել տերությունների վերահսկողությունը /հակակշիռ/: «Փորձը ցոյց տուած է,- գրում էր Պ. Նուրարը,- որ բարենորդումներն երբ հակակշողը մը չեն պաշտպանուած, ճակատագրականօրէն խոստումի վիճակին մէջ կը մնան և երէ նոյն իսկ գործադրութեան դրուին, թէլ ատենէն կը դադրին»<sup>2</sup>: Հենց եվրոպական վերահսկողության պահանջն էլ հանդիսացավ Պ. Նուրարի՝ տերությունների դեկավար շրջաններին ուղղված դիմումների անկյունաբարը: Այդ խնդրում իր ունեցած հայացքները նա ամփոփեց 1913 թ. հունիսի 14-ին կազմած «Հայկական բարենորդումները և եվրոպական հակակշիռ» խորագիրը կրող հուշագրում: Այսուղի, հիմնավորելով հակակշիռ կարևորությունը, նա մեջ էր բերում եվրոպական մի շարք պետական և բաղարական գործիքների լորդ Գրանվիլ, լորդ Սույսբերի, Կլեմանսոն, Վ. Բերար/ խոսքերը, որոնք նույնպես արտահայտվել էին վերահսկողության ներք բարենորդումների գործադրմանն ի նպաստ: Ինչ վերաբերում է վերահսկողության իրագործման ձևին, ապա Պ. Նուրարը, թէն իր կազմած նախագծում, հենվելով 1895 թ. բարենորդումների ծրագրի վրա, այդ պարտականությունը դնում էր Բ. Դուանը կից կազմված մշտական հանճնաժողովի վրա, նշում էր, որ տերությունների իրավասությունն է որոշել, թէ ինչ ձևով գործադրել հակակշիռը<sup>3</sup>:

<sup>1</sup> Զօհրապ Գ., Հայկական հարցը փաստարքերու լոյսին տակ, Պէյրու, 1973, էջ 19:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 33, թ. 13; Արմանական գույնը պահանջն է արտադրությունը /1913-1919/, ուժ բարենորդումների ծրագրի վրա, այդ պարտականությունը դնում էր Բ. Դուանը կից կազմված մշտական հանճնաժողովի վրա, նշում էր, որ տերությունների իրավասությունն է որոշել, թէ ինչ ձևով գործադրել հակակշիռը:

<sup>3</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 75:

Բարենորդումների իրականացման վրա եվրոպական վերահսկության սահմանման վերաբերյալ այդ պահանջն ամենից շատ հանդիպեց բուրքական իշխանությունների կատաղի դիմադրությանը, որոնք այն համարում էին անօրինական: Այսպես բուրքական «Թասֆիրը Էֆրյա» թերթը դա որակում էր որպես «իսկությունն ու սահմաններն անձանոթ պահանջ»<sup>1</sup>: Մինչեւ դա կեղծիք էր: Դեռև 1878 թ. Թեղինի դաշնագիրի 61-րդ հոդվածով Բ. Դուռը պարտավորվել էր հայկական վիլայեթներում բարենորդումներ կատարել՝ տերությունների վերահսկողության ներք: «Օսմանեան կառավարութիւնը, - այդ նախն զրում էր Պ. Նուրարը, - հակա- կշխն ընդունելով նոր զիջողութիւն մը շնորհը, այլ միայն կատարած կ'ըլլայ յանձնառութիւն մը զոր իր նախորդներն ընդունած են և որով ինքն ալ կապուած է»<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է «Հայկական բարենորդումների ծրագրի նկատմամբ առաջ եկած մի քանի առարկությունների վերաբերյալ» /1913 թ. օգոստոսի 5/ և «Հայկական բարենորդումները, Բ. Դուռն նախագիծը և եվրոպական խորհրդականները» /1913 թ. նոյեմբերի 22/ խորագրերը կրող հուշագրերին, ապա դրանցում, ի տարրերություն վերը նշվածների, տրված էին ոչ թե բարենորդումների ընդհանուր եռորյան պարզաբնումներ, այլ ամփոփված էին տերությունների կողմից դրանց քննարկման գործընթացում առաջ եկած որոշակի կոնկրետ իրադարձությունների վերաբերյալ Պ. Նուրարի վերաբերմունքն ու գնահատականները /դրանց մասին կյուսվի համապատասխան տեղերում/:

Բարենորդումների իրականացման վերաբերյալ հուշագրերում ամփոփած իր տեսակետները Պ. Նուրարը ներկայացրեց նաև եվրոպական թերթերում տպագրած հոդվածներում, կարդացած բանախոսություններում և տերությունների դեկավար շրջանների հետ ունեցած հանդիպումների ընթացքում:

<sup>1</sup> Տես, «Թիւգանովին», Կ. Պոլս, 1913, N 5196:

<sup>2</sup> Օսման Ե., նշվ. աշխ., էջ 70:

Ստանձնելով իր առաքելությունը, որի նպատակն էր հայկական բարենորդումների իրականացման խնդրում ձեռք բերել տերությունների գործակցությունը, Պ. Նուրարը գիտակցում էր, որ այն կիարուցի բուրքական իշխանությունների դժգոհությունը, որոնք ձգտում էին խոսափել երկրի ներքին գործերին օտար միջամտությունից: Այդ նկատմաններով էլ նա ամեն ինչ արեց ցույց տալու համար, որ իր գործունեությունն ու հետապնդած նպատակն ամենին ուղղված չեն Օսմանյան կայսրության շահերի դեմ: «Այնպիսի բարենորդումներ ենք պահանջում, - նշում էր Պ. Նուրարը, - որոնք որևէ կերպով չեն դիպչում Թուրքիոյ վեհապետութեանը և Օսմանեան գահին ազդեցութեանը»<sup>1</sup>: Իր առաքելության վերաբերյալ կասկածներ չհարուցելու համար Պ. Նուրարը 1912 թ. դեկտեմբերի կեսերին հանդիպում է Ֆրանսիայում բուրքական դեսպան Ռիֆար Փաշայի հետ: Հանդիպման ընթացքում նա դեսպանին պարզաբնում է ստանձնած պաշտոնի էությունը, այն է՝ պահանջել բարենորդումներ միջազգային վերահսկողությամբ և նշում, որ հայության այդ քաղաքանիքներն օրինական են և հիմնված են Քեղինի դաշնագրի 61-րդ հոդվածի վրա: «Ես հանձն առած եմ գրադրություն մեր հայրենակիցներուն պահանջներով, այն պայմանով որ անոնք կորնած ըլլան հաստատուն իմի, անհարուածելի իրավունքներու վրայ որ ձեռք բերուած են յանձնառություններով ոչ միայն Թուրքիոյ, այլ նաև պետութեանց կողմէ», - նշում էր նա դեսպանին<sup>2</sup>: Պետք է նշել, որ Պ. Նուրարի հանդիպումը Ռիֆար Փաշայի հետ ուներ մեկ այլ նպատակ ևս: Բանն այն էր, որ իր պաշտոնավարման սկզբնական շրջանում Պ. Նուրարը կարծում էր, որ Հայկական հարցի լուծմանը կարելի է հասնել թուրքերի հետ համաձայնությամբ<sup>3</sup>: Ուստի նա փորձում էր դեսպանի միջոցով համոզել բուրքական կառավարությանը բարենորդումների իրականացման անհրաժեշտության մեջ: Պ. Նուրարի նման պատկերացումների ձևավորման վրա իր որոշակի ազդե-

<sup>1</sup> Օսման Ե., նշվ. աշխ., էջ 78:

<sup>2</sup> Մարեզան Վ., Տամրու վրայ /Յուզարադ/, էջ 305-306:

<sup>3</sup> Տես, ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, թ. 45:

ուրբյունն էր ունեցել ֆրանսիացի գործիչ Վ. Բերարը, որն աջակցում էր Ազգային Պատվիրակությանը՝ իր առաքելության կատարման ընթացքում: Հայասեր լինելով համերձ՝ վերջինս առաջին հերթին ֆրանսիացի էր և բնականարար, եղելով իր պետության քաղաքական շահերից, հաստիապես դեմ էր, որպեսզի Ռուսաստանը, հենվելով արևմտահայրքան համակրանքի վրա և օգտագործելով քարենորդությունը իննդիրը, իր ազդեցությունն ուժեղացնի Արևմտյան Հայաստանուա: Այդ նկատառումն էլ Վ. Բերարը շատ էր փափազում Հայկական հարցի լուծմանը հասնել հայերի և քուրքերի համաձայնությամբ: Խնդրի լուծման նման տարրերակին կողմ էր նաև արևմտահայ հրապարակագիր Տիրան Քելեկյանը<sup>1</sup>, որը, ակտիվ նամակագրական կապերի մեջ գտնվելով Պ. Նուրարի հետ, ևս այդ իմաստով կարող էր ազդած լիներ նրա վրա:

Թուրք դեսպանի հետ Պ. Նուրարի ունեցած հանդիպումը նեծ անհանդություն և դժգոհություն է առաջ բերում արևմտահայ քաղաքական շրջաններում: Եվ դա պատճական չէր. նախ Պ. Նուրարին վստահված առաքելության շրջանակներից դրւում էր քարենորդությունների խնդրի վերաբերյալ բուրքերի հետ բանակցելով և երկրորդ, որն ամենակարևորն էր, մտավախություններ կային, որ բուրքական իշխանությունները, օգտվելով այդ հանգամանքից, կարող էին հայտարարել, որ հարցը կլուծվի երկուատեր համաձայնությամբ և անհրաժեշտություն չկա տերությունների միջամտության համար: Այդ իմաստով Ազգային Պատրիարքարանից գրում են Պ. Նուրարին և «քաղաքավարությամբ զգացնել տալիս իր սխալը»<sup>2</sup>: Պ. Նուրարի վերոհիշյալ այցելությունն առաջ էր բերել նաև հայ նշանավոր գրող, հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի վրդովնութը, որը գտնում էր, որ միայն Ռուսաստանի օգնությամբ կարելի է հասնել հայկական հարցի լուծմանը և կարողիկութին հղած նամակում խնդրում էր համապատասխան կարգադրությունը:

րուբյուններ ամեն Պ. Նուրարին<sup>3</sup>: Պ. Նուրարի և Ա. Չոպանյանի միջև առաջացած այդ զաղափարական տարածայնությունները նույնիսկ ժամանակավորապես նրանց հարաբերությունների խզման պատճառ դարձան: «Բաժնվեցա,- Վ. Մալեզյանին հղած նամակում գրում էր Ա. Չոպանյանը,- քանզի տեսա, որ այլև անհնար է շարունակել աշխատակցելով իրար հետ»<sup>4</sup>: Այդ էր պատճառը, որ Ա. Չոպանյանը, չնայած արևմտահայոց խնդրին իր քաջատեղյակությանը, չի ընդգրկվում Ազգային Պատվիրակության կազմի մեջ, այլ միայն զվարություն է Փարիզի Հայկական մասնախումը: Այդ կապակցությամբ նա հաճախակի գանգատվում էր Վ. Մալեզյանին, նշելով, որ «իր բուն տեղն Ազգային Պատվիրակութեան մեջ է՝ իբրեւ անդամակից, եւ ոչ թէ այս կամ այն Յանձնախումը մեջ՝ իբրեւ օժանդակի»<sup>5</sup>:

Պետք է նշել, որ Պ. Նուրարի հանդիպումը Ռիֆաթ փաշայի հետ դուր չեկավ նաև ոռական կառավարությանը, որը նույնպես գիտակցում էր դրա բացասական հետևանքները: Մ. Գիրսը Ս. Սաղոնովին հղած 1912 թ. դեկտեմբերի 17-ի նամակում անդրադառնալով այդ այցին, Պ. Նուրարին որակում էր որպես «քուրքատեր»<sup>6</sup>:

Պ. Նուրարը, բնականարար, չէր կարող անտեսել և հաշվի չառնել նման բացասական արձագանքները: Նա փորձում էր ցույց տալ, որ իր այցը կրում էր զուտ քաղաքավարական բնույթ: «Ծէի կարող պետություններին դիմել առանց Ռիֆաթ փաշային հաղորդելու իմ պաշտոնի մասին և չէի կարող այն ծածկել, որը նա իմացած կլիներ թերթերից»,՝ պատրիարք Հ. Արշարունուն հղած 1913 թ. փետրվարի 8-ի նամակում գրում էր Պ. Նուրարը, միաժամանակ ավելացնելով, որ նրա հետ կրկին հանդիպելու միտք չլինի<sup>7</sup>: Շոտով, համոզվելով, որ քարենորդությունների իրականացման խնդրում բուրքերի վրա հույս դնելն անհմաստ է, Պ. Նուրարը փոխում է իր ունեցած դիրքորոշումն այդ հարցում: Կարողի-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 31, թ. 47:

<sup>2</sup> ՀՀ ԳԱԱ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 430/6, թ. 10:

<sup>3</sup> Մալեզյան Վ., ճամրու ծայրը, հն. Բ, էջ 251:

<sup>4</sup> ԱՎՊՐ, ֆ. Պոլիտարխ, թ. 1912, ձ. 3459, լ. 98.

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 19, թ. 37:

<sup>6</sup> Տես, ՀՀ ԳԱԱ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 531/գ, թ. 36; Ա. Չոպանյանի ֆ., գ. 2453/1, թ. 3:

<sup>7</sup> ՀՀ ԳԱԱ, Ա. Չոպանյանի ֆ., գ. 2451/1, թ. 2:

կոսին հյած 1913 թ. փետրվարի 10-ի նամակում նա նշում էր, որ «պատվիրակությունն երթեր չի հավատում Բ. Դուան խոստումներին և անտրամարանական է համարում քանակցել նրա հետ»<sup>1</sup>: Իսկ հետագայում՝ 1914 թ. նա Ա. Չոպանյանին խոստվանում էր, որ իր ունեցած սխալ պատկերացումների պատճառն այն էր, որ «առաջին օրերուն խնդիրը լավ չէր հասկցած»<sup>2</sup>:

Այդ ամենի հետ մեկտեղ Պ. Նուրարը համոզված էր, որ Հայկական հարցի հաջող լուծման համար անհրաժեշտ է, որպեսզի բորբական իշխանություններն զգան քարենորդումների կարևորությունն ու շահագրրգովեն դրանցով: Նա հասկանում էր, որ ինչքան էլ տերությունները ճնշում գործադրեն Բ. Դուան վրա, միևնույն է՝ քարենորդումների ընդունումն ու իրականացումը մեծապես պետք է կախված լինի նրա կամքից: Իսկ ճնշման տակ ընդունված քարենորդումների գործադրությունը, ինչպես դա եղել էր անցյալում, ամեն կերպ կլուզընդուտվեր կառավարության կողմից: «Այս խնդիրը, - Վ. Մալեզյանին հյած նամակում գրում էր Տ. Քելեկյանը, - բուրքերուն ալ յօժարութիւնովը պիտի լուծվի - Ռուսիա չի կրնար ֆերման մը իրատարակել Հայոց համար, ֆերմանը նորեն Թուրքերը պիտի իրատարակեն»<sup>3</sup>: Ուստի Պ. Նուրարը ջանք չխնայեց ցույց տալու, որ հայկական քարենորդումների գործադրությունն առաջին հերթին բխում է հենց Թուրքիայի շահերից, քանի որ կնպաստի «հողային ամրողության պահպաննար, խոռվության նատնված երկրամասի հանդարտնանը և տնտեսական լիակատար քարգավաճմանը»<sup>4</sup>: Նույն նկատառումով էլ Պ. Նուրարը Տ. Քելեկյանին որոշակի գումար էր հատկացրել, որպեսզի վերջինս «Հայաստանի քարեկարգության խնդրին ի նպաստ բուրք շրջանակներին մէջ բրոպագանեներն ընդարձակի»<sup>5</sup>: Այդ ամենի նպատակն էր հասնել նրան, որպեսզի բորբական իշխանությունները քա-

րենորդումներն իրականացնեին ոչ թե տերությունների ճնշման տակ, այլ՝ անհրաժեշտությունն զգալով: «Պ. Նուրարի փափազն է, - գրում էր «Կոչնակ» թերթը, - որքան որ կարելի է մեր դաշնագրական իրավունքները ստանանք բուրքաց ալ համարութեամբ, ոչ թե ի հեծուկս անոնց»<sup>6</sup>: Սակայն այդ ջանքերն արդյունք չտվեցին և չնպաստեցին բուրքական կառավարության՝ քարենորդումների իրականացման նկատմամբ ցուցաբերած հակառակության բուլացմանը: Բ. Դուան նման համար կեցվածքն ապացուցում էր, որ նա չէր փորձում այդ խնդյում տեսնել իր պետության շահը:

Տերությունների ղեկավար շրջանների մոտ Հայկական հարցի պաշտպանությամբ հանդիս գալով՝ Պ. Նուրարը միաժամանակ արևմտահայությանը կոչ էր անում հեռու մնալ չմտածված արարքներից, գտնելով, որ դրանք կարող են մնեալ պնակել խնդրի լուծմանը: «Պետք է քացարձակապես զգուշանալ այնպիսի քայլերից, - հայտարարում էր նա, - և մինչև անգամ մտածումներից, որոնք կարող են որևէ կերպ արգելք հանդիսանալ գործին»<sup>7</sup>: Խոսքը վերաբերում էր Թուրքիայի դեմ ապստամբությանն ու զինված ելույթներին: Պ. Նուրարը համոզված էր, որ տվյալ պահին ապստամբական շարժումներն արևմտահայությանը կարող են դնել ծանր կացության մեջ, քանի որ թուրքերը, օգտվելով առիթից, կիրականացնեին նրանց բնաջնջման իրենց վաղենի երազանքները, իսկ տերություններին կիարկադրեին վերապահումով մոտենալ հետապնդվող խնդրի կարգավորմանը: Այդ դիրքորոշումն առաջին հերթին պայմանավորված էր Հայկական հարցի նման եղանակով լուծման հանդիպ: «Պօդոս Նուպարը, - գրում էր Ե. Օսյանը, - առաջին վայրկեանէն դատապարտած է հեղափոխական տարրերու գործումներին եղանակը զոր ազգին համար վնասակար գուած է»<sup>8</sup>: Այդ էր պատճառը, որ նա միշտ մերժել էր արևմտահայության ապստամբական և հեղափոխական շարժումները նյութապես օժանդակելու

<sup>1</sup> Տես նոյն տեղում, թ. 21:

<sup>2</sup> ՀՀ ԳԱԱԹ, Գ. Զոհրապի ֆ., գ. 67, թ. 21:

<sup>3</sup> Մալեզեան Վ., ճամբուս ծայրը, հուն. Բ, էջ 47:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 12:

<sup>5</sup> «Նոր Հայաստան», Կ. Պոլիս, 1919, Ն 7, էջ 112:

<sup>1</sup> «Կոչնակ», Նիւ Եռոր, 1913, Ն 17:

<sup>2</sup> «Ազգ», Բոստոն, 1913, Ն 35:

<sup>3</sup> Օսկան Ե., նշվ. աշխ., էջ 16:

խընդրանքներով իրեն՝ որպես մեծահարուստի, արվող դիմումները: «Ֆենց որ ինե կպահանջեն՝ զայն ամբողջապես պիտի տամ ազգին, ասում էր Պ. Նուրարը, - ցույց տալու համար թե դրամը խնայել չեմ ուզեր, այլ այդ ուղղությունն է որ կը դատապարտեմ ու չեմ քաջալերեր»<sup>1</sup>: Բացասարար վերաբերելով արևմտահայության զինված ելույթներին՝ Պ. Նուրարը հաշվի էր առել նաև դրանց համար ստեղծված անքարենապաստ պայմանները: Առաջին եկեղին զինված պայքարին տրամադիր և պատրաստ չէր արևմտահայությունը, որի բոլոր ջանքերն ուղղված էին օգտվել ստեղծված իրադրությունից և լուծել քարենորդումների հարցը: «Հայկական հարցի արձարժման բնորոշ արտահայտություններից է այն, զրում էր «Մշակ» թերթը, - որ աննպատակահարմար են ճանաչված ապստամբական ակտիվ շարժումները, որոնք ժամանակակից պայմաններում չեն կարող համապատասխանել բորբակացների բնած դիրքերին և նրանց լյանքի պայմաններին»<sup>2</sup>: Այդ էր վկայում նաև 1912թ. դեկտեմբերի վերջերին Կ. Պոլիս այցելած Վ. Սալեզյանը, Պ. Նուրարին հղած նամակում. «Թուրքիոյ մեր բոլոր հայրենակիցները, առանց դատանական, կուսակցական եւ այլ խորութեան, հակառակ են զինեալ ապստամբութեան մը՝ ներկայ անդոհալից շրջանին»<sup>3</sup>:

Արևմտահայության ապստամբական շարժումներին դեմ էին նաև մեծ տերությունները, որոնք, հատկապես Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթների կորուտից հետո, իրենց բոլոր ջանքերը գործադրում էին նրա տարածքային ամբողջականությունը պահպանելու և նոր քարդություններից ու քախումներից խոսափելու համար: Ուստի զինված ելույթները ոչ միայն չեն արժանանաւ տերությունների դեկավար շրջանների համակրանքին, այլև կվնասեին քարենորդումների խնդրին, որի լուծնան համար հայությունը դիմել էր նրանց օժանդակությանը: «Ես համոզված եի, - Կիլիկիայի Սահակ կարողիկոսին հետազայում գրում էր Պ. Նուրարը, - որ Եվրոպան՝ մտահոգված լինելով իր քաղաքական և տնտեսական շահերով, ուշադրություն չէր դարձնի

<sup>1</sup> Օսյան Ե., Երկերի ժողովածու, հն. 4, Երևան, 1962, էջ 376:

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1913, N 1:

<sup>3</sup> Սալեզյան Վ., ճամրուած ծայրը, հն. Բ, էջ 227:

մեր տկարության վրա և միայնակ կրողներ մեր կեղերիչների դեմ»<sup>1</sup>: Տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի դեմ արևմտահայերի ապստամբական շարժումները պաշտպանություն չեն գտնի նաև Ռուսաստանի դեկավարության կողմից, որը ջանում էր խոսափել իր երկրի սահմանների հարևանությամբ անկարգությունների և բախումների առաջացումից, ինչպես նաև մտավախություններ ուներ, որ դրանք կարող են արձագանքներ ունենալ նաև արևելահայության մեջ: Բացի այդ ուսական կառավարական շրջաններում իրավացիորեն գտնում էին, որ մյուս տերություններն ու Թուրքիան այդ ելույթների հրահրման և կազմակերպման պատասխանատվությունը կցցեն իրենց վրա: Այդ էր պատճառը, որ երբ 1913 թ. ապրիլին Վորոնցով-Դաշկովի զինվորական գծով օգնական գեներալ Շատիլովին ներկայանում է կովկասահայերից քաղկացած մի պատվիրակություն և արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերի համար գենը խնդրում, ուսական կառավարությունը մերժում է և հանձնարարում է հանդես բերել «ծայր աստիճան զավածություն և հանդարտություն»<sup>2</sup>: Նույն ոգով էր արտահայտվել նաև Ս. Գիրսն արևմտահայ դեկավար շրջանների հետ ունեցած հանդիպումների ժամանակ<sup>3</sup>: Այդ բոլոր հանգամանքները հաշվի առնելով Պ. Նուրարը տվյալ պահին հանդիս եկավ արևմտահայության ապստամբական շարժումների դեմ: Սակայն արդեն առաջին հանաշխարհային պատերազմի տարիներին, երբ քաղաքական պայմաններն ամբողջովին փոխվել էին, նա պաշտպանեց Թուրքիայի դեմ հայերի զինված պայքար մղելու անհրաժեշտությունը: «Այժմ, - Ս. Վարանդյանին հղած 1915 թ. ապրիլի 7-ի նամակում գրում էր Պ. Նուրարը, - հայ կամավորները, մարտնչելով դաշնակցի երկրների /Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա-Հ. Բ./ կողքին, ուժ կտան մեր դատին և նոր իրավունքներ կստեղծեն մեզ համար»<sup>4</sup>:

<sup>1</sup> Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918, ed. by V. Ghazarian, Waltham, 1996, p. 14.

<sup>2</sup> ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի անձական արխիվ, ֆ. 1, գ. 1, գ. 2006, թիվ 1, Անցյալից /հուշեր, թորեր, դատումներ/, Թիֆլիս, 1925, էջ 271:

<sup>3</sup> Ռեֆորմն Արմենիա, շահութափական պահանջման պատճենագիրը, 1915 թ. մայիսի 1:

<sup>4</sup> Boghos Nubar's Papers ..., p. 9.

Չնայած այդ ամենին, վերոհիշյալ խնդրում Պ. Նորարի դիրքորոշումը քննադատության էր ենթարկվել: Այսպես, Ս.-Դ. Հնչալյան կուսակցության առաջնորդներից Ս. Սապահ-Գյուլյանը մեղադրում էր վերջինիս իր գործունեության ընթացքում /1912-1914թ./ «Երկարեւ Շերեփի /հեղինակը նկատի ուներ Խրիմյան Հայրիկի այլախոսությունը. Հ. Բ./ և Յեղափոխական շարժման զաղափարների պաշտպանությամբ» հանդես չգալու համար<sup>1</sup>: Այդ մեղադրանքն անհինն էր մի շարք պատճառներով: Եթե նույնիսկ մի կողմ դնենք և հաշվի շառնենք այդ ժամանակ հեղափոխական շարժման համար ստեղծված անքարենապատ պայմանները, ապա առաջին հերթին Պ. Նորարն իրավասությունը հանդես գալ նման դիրքերից, քանի որ նրան՝ որպես Ամենայն Հայոց կարողիկոսի ներկայացուցչի, պաշտոն էր հանձնված տերությունների դեկանար շրջանների մոտ պաշտպանել բարենորոգումների իրականացման պահանջները: Երկրորդ, Պ. Նորարի նման կեցվածքն ամբողջովին անհմաստ կդարձներ և կիսափառ Ազգային Պատվիրակության գործունեությունը: Եվ վերջապես երրորդ, Պ. Նորարը չէր, որ եվրոպական մայրաքաղաքներից պետք է հեղափոխական շարժման կոչեր աներ, այլ հայ քաղաքական և կուսակցական դեկանար շրջաններն էին, այդ թվում նաև Ս.-Դ. Հնչալյան կուսակցության առաջնորդները, որ պետք է տեղերում աշխատանք տանեին նման շարժում կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ:

Թուրքիայի դեմ գինված ապստամբություն բարձրացնելու հանդեպ Պ. Նորարի, մի շարք հայ քաղաքական գործիչների բացասական վերաբերմունքը, տերությունների դիրքորոշումը, ինչպես նաև արևմտահայության տրամադրվածությունն ու պատրաստվածության աստիճանն իրենց արտահայտությունը գտան 1912 թ. վերջերին - 1913 թ. սկզբներին Կիլիկիայի շուրջ ծավալող իրադարձություններում: Օգտվելով Բալկանյան պատերազմի հետևանքով առաջացած բարենպատ պայմաններից՝ հայ գործիչներ Ս. Տամատյանն ու Պ.

Օհանյանը Կահիրենում ստեղծում են Ազգային Պաշտպանության կոմիտե, որի նպատակն էր Կիլիկիայում բուրքական իշխանությունների դեմ գինված ապստամբության կազմակերպումը: Այդ խնդրում իր աջակցությունն էր հայտնել նաև հունական կառավարությունը՝ խոստանալով ռազմական օգնություն ցույց տալ կիլիկիահայությանը: Ս. Տամատյանի խնդրանքով ապստամբության դեկանարությունը ստանձնում է Աղանայի հայոց նախկին առաջնորդ Մուշեղ Սերոբյանը, որն այդ նպատակով Ամերիկայից մեկնում է Եգիպտոս: Սրա հետ մեկտեղ աշխատանք էր տարվում ապստամբության համար դրամական միջոցների հայրայրման ուղղությամբ: Սակայն շուտով պարզ է դառնում, որ դեռևս չկաված՝ ապստամբությունն արդեն դատապարտված էր անհաջողության: Դա պայմանավորված էր մի շարք հանգանքներով: Առաջին հերթին գրեթե բացակայում էր գինված պայրարի նկատմամբ կիլիկիահայության միասնական ողին, պատրաստվածությունն ու տրամադրվածությունը, մի հանգամանք, որը նման գործի հաջողության հիմնական գրավականն էր: «Յեղափոխութեան և ապստամբութեան գնտին չկար,- հետազայում խոստովանում էր Ս. Սերոբյանը:- Հակառակ տրուած հաւաստումներու կատարելիքը պիտի ըլլար արուեստական յեղափոխութիւն նը»<sup>1</sup>: Երկրորդ, ապստամբության նախապատրաստական աշխատանքները կատարվել էին խիստ անգաղտնապահորեն և չին վրիպել բուրքական իշխանությունների ուշադրությունից: Երրորդ, ռազմական օգնություն խոստանալով և դրանով նպաստելով Կիլիկիայում ապստամբության բարձրացմանը՝ հունական կառավարությունը հետապնդում էր իր շահերը: Երկրում առաջացած ներթին խոռվությունը կիարկարեն բուրքական իշխանություններին որոշակի գիշումների գնալ հույների հետ տարվող խաղաղության բանակցությունների ընթացքում: «Սեր աղեկության համար չէ հունաց առաջարկած աջակցությունը», - Ա. Չոպանյանին հղած նա-

<sup>1</sup> Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատունները, Բեյրութ, 1974, էջ 133-134:

<sup>1</sup> Սերոբյան Ս., Դիտումներ և դատումներ / Էջեր օրագրես, Փեյրութ, 1932, էջ 80:

մակում գրում էր Հ. Մոստիչյանը<sup>1</sup>: Նման անքարենպաստ պայմաններում սկսված զինված պայքարը, բնականարար, չէր կարող պսակվել հաջողությամբ և ոչ միայն կվճառեր Հայկական հարցի լուծմանը, այլև կիլիկիահայության կոտորածի պատճառ կիանոլիսանար: Այդ նկատառումներով էլ ապստամբության բարձրացման փորձը բացասական արձագանքներ գտավ հայ քաղաքական շրջաններում: «Ծրագրված շարժումը,- նշում էր Վ. Մալեզյանը,- անկազմակերպ, անխորհուրդ և անժամանակ է»<sup>2</sup>: «Դէյքունի ապստամբութիւն մը՝ այսպիսի բոպէի մը՝ ջախջախման միայն կը յանգի», - գրում էր Ա. Չոպանյանը<sup>3</sup>: Կիլիկիայի շուրջ ծավալվող դեպքերը բննարկվում են 1913 թ. հունվարի 20-ին գումարված Ազգային Պատվիրակության պատգամավորական ժողովում: Պատվիրակության բոլոր անդամները միաձայն դատապարտում են ապստամբություն բարձրացնելու ձեռնարկները և որոշում դիմումներ իդել Ամենայն Հայոց կարողիկոս Գևորգ Ե-ին, Կիլիկիայի Սահակ կարողիկոսին, Մ. Սերոբյանին, Կահիրեի և Ալեքսանդրիայի Քաղաքային ժողովներին նրանց ուշադրությունը հրավիրելու այն աղետալի հետևանքների վրա, որոնց պատճառ կարող էր դառնալ այդ զինված ելույթը: «Նմանօրինակ շարժում մը,- Մ. Սերոբյանին հղած 1913 թ. փետրվարի 7-ի նամակում ընդգծում էր Պ. Նուրարը,- բնոյք ունի անվիտիպելիօրէն վտանգելու մեր դատը, և պատվիրակութեան պաշտօնը դարձնելու դժուար, շըսելու համար անհնար»<sup>4</sup>: Նման բացասական արձագանքները շիմ կարող անտեսել և հաշվի շառնվել ապստամբության կազմակերպիչների կողմից: Բոլոր հանգամանքներն ուսումնասիրելով՝ Մ. Սերոբյանը ևս զայխ է այն եզրակացության, որ ծրագրված շարժումը չի կարող հաջողություն ունենալ, ուստի

իրաժարվում է այն ղեկավարելուց: «Այս ձախող պարագաներու տակ,- ասում էր նա,- շարժումը՝ ազգային ինքնասպանություն է»<sup>5</sup>:

Այսպիսով ձախողվում է Կիլիկիայում Թուրքիայի դեմ զինված ապստամբության բարձրացման փորձը, որը ստեղծված անքարենպաստ պայմանների բերումով կարող էր աղետաբեր հետևանքներ ունենալ արևմտահայության համար: Դեպքերի նման ընթացքը որոշ առումով ձեռնտու էր նաև Եվրոպական իշխանություններին, որոնք հատկապես առաջին Բալկանյան պատերազմից հետո, ջանքեր էին գործադրում խոսափելու Օսմանյան կայսրության տարածքում նոր ընդհարումների բռնկումներից: «Ընորիկ հայ դեկավար շրջանների ջանքերի,- գրում էր Պ. Նուրարը,- այդ ծրագիրը /ապստամբության Հ.Բ./ բարեբախտաբար վիթեց, և մենք, անկասկած, շահեցինք տերությունների համակրանքը»<sup>6</sup>: Այդ էր վկայում նաև ուսական «Նովյե վլեմյա» բերքը. «Զի կարելի շողջունել հայերի չափավորությունը, որոնք կարողացան խոսափել զայքակիլի արկածից և պատրաստ են սպասելու Եվրոպայի կողմից խոստացված բարենորոգումներին»<sup>7</sup>: Այդ իմաստով Կիլիկիայի շուրջ ծավալվող դեպքերն ունեցան որոշակի դրական հետևանք, քանի որ ապացուցեցին, որ Թուրքիայի դեմ զինված ապստամբության բարձրացման վտանգը գոյություն ունի, և արևմտահայերի՝ բարենորոգումների իրականացման պահանջների մերժման դեպքում, այն կրառնա իրականություն: Տերությունների դեկավար շրջաններին ուղղված դիմումներում Պ. Նուրարը մշտապես մատնացույց արեց այդ հանգամանքը:

Ընդհանուր առնամք սրանք էին այն տեսակետներն ու վերաբերունքը, որ ուներ Հայ Ազգային Պատվիրակության նախազահ Պոլոս Նուրարը հայկական բարենորոգումների խնդրի լուծման հանդիս և այն հիմնական դրույթները, որոնք նա, հաշվի առնելով միջազգային կացությունն ու տերությունների դիրքը, առաջ քաշեց Եվրոպական

<sup>1</sup> ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., գ. 4758, թ. 1:

<sup>2</sup> ՀՀ ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆ., գ. 1022, թ. 7:

<sup>3</sup> Սերոբյան Մ., նշվ. աշխ., էջ 78:

<sup>4</sup> Սերոբյան Մ., նշվ. աշխ., էջ 79:

<sup>1</sup> ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., գ. 6557, թ. 3:

<sup>2</sup> Nubar B., Note sur la Question Arménienne, Paris, 1916, p. 10.

<sup>3</sup> «Новое время», С.-Петербург, 1913, N 13524.

մայրաքաղաքներում: Դրանք, թվում էր, նվազագույն և ամենամերածեշտ այն պահանջներն էին, որոնց իրագործումը հնարավոր էր ծեռք բերել տվյալ ժամանակաշրջանում՝ արևմտահայության կացությունը բարեկավելու համար: «Ինչ, որ կարողիկոսի Պատվիրակությունը պահանջեց, - գրում էր «Կոչնակ» թերթը, - մեզ համար անխուսափելի էր: Հաջող թե անհաջող, անիկա ներկա պարագաներու տակ միակ բանն էր, որ կրնայինք պահանջել»<sup>1</sup>:

## ԳԼՈԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊՈՂՈՍ ՆՈՒԹԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ  
ԾՐԶԱՆՆԵՐՈՒՄ/1912 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ-1913 թ. ՕԳՈՍՏՈՒ/

1) Պողոս Նութարի ՃԵՇՆԱՐԿՅԵՐՔ Հայկական բարենրոգումների  
բննարկման նախօրյակին

Բականյան առաջին պատերազմում դաշնակիցների ունեցած հաջողություններն ու Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթների մեծ մասի ազատազրումը թուրքական լծից մեծ հույսեր են ներշնչում հայ դեկապար շրջաններին և նպաստավոր պայմաններ ստեղծում դեռևս թեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով խոստացված և այլպես էլ շիրականացված հայկական բարենրոգումների հարցը եվրոպական դիվանագիտության առջև նորից բարձրացնելու համար: Սիցազգային ատյանը, որին նախատեսվում էր դիմել վերոհիշյալ խնդրանքով, մեծ տերությունների ներկայացուցիչների Լոնդոնի խաղաղության կոնֆերանսն էր, որը պետք է գումարվեր լուծելու համար բարկանյան խնդրիները: «Եւրոպա,- գրում էր Վ. Մալեզյանը, - որ կը բուի որոշած ըլլալ թրքական լուծեն ձերբագատել երոպական թուրքից քրիստոնեաները, պիտի կարողանայ բարենրոգումներ հարկադրել նաև յօդուն Ասիական թուրքիոյ մէջ շատ աելի անգրօնն հարատակարած հայերուն»<sup>1</sup>:

Եվրոպայում պատվիրակ նշանակելուց հետո, կարողիկոսը կարելոր էր համարում նրան ծանրացնել առաքելության կատարման համար անհրաժեշտ հրահանգների, Հայկական հարցի արծարծման ուղղությամբ արդեն կատարված ճեղնարկների և դիմումների, ինչպես նաև այդ խնդրին վերաբերող փաստաթղթերի և նյութերի հետ: Բացի

<sup>1</sup> «Կոչնակ», Նիւ Երրը, 1913, N 41:

այդ Պ. Նուրարին պետք է հանձնվեր նաև կոնֆերանսին ներկայացվելիք Հայկական հարցի վերաբերյալ հուշագիրը, որը Գևորգ Ե-ի հրահանգով պատրաստվել էր Ազգային Բյուրոյի կողմից: Հուշագրում, որի հիմքը կազմում էին կաթողիկոսի անունով Ազգային Պատրիարքարանից և տեղական առաջնորդարաններից ստացված տեղեկագրերը, խնդրագրերը, նամակներն ու դիմումները, պատկերված էին արևմտահայության ամտանելի ծանր կացությունը, նրա նկատմամբ կիրառվող բռնություններն ու հալածանքները և ընդգծված էր քարենորդումների իրականացման անհրաժեշտությունը: Այդ ամենը Պ. Նուրարին փոխանցելու համար կաթողիկոսի հրահանգով Փարիզ է ուղարկվում «Մշակ» թերթի խմբագրության անդամ Համբարձում Առաքելյանը: Վերջինիս պետք է ընկերակցեր Ազգային Բյուրոյի նախագահ Ս. Հարությունյանը, որը, սակայն, չի մեկնում: Հ. Առաքելյանը Փարիզ է ժամանում 1912 թ. դեկտեմբերի 14-ին, որ նրան անհամբեր սպասում էր Պ. Նուրարը: Դա պայմանավորված էր նրա՝ ժամանակի ավելորդ կորուստից խուսափելու ցանկությամբ, քանի որ նախապատրաստական շատ աշխատանք կար կատարելու: «Դեպքերն այնպիսի արագութեամբ իրարու կը յաջորդեն,- Ս. Օրմանյանին հղած 1912 թ. դեկտեմբերի 8-ի նամակում գրում էր Պ. Նուրարը,- որ անմիջապես գործի սկսելու է, առանց ժամանակ կորսցնելու»<sup>1</sup>: Նախ պետք էր վերջնականապես խմբագրել, ֆրանսերեն ու անգլերեն քարզմանել հուշագիրը և պատրաստել հայկական քարենորդումների ծրագիր: Բացի այդ հարկավոր էր կազմավորել այն պատվիրակությունը, որը Պ. Նուրարի զլսավորությամբ պետք է ներկայանար կոնֆերանսին: Ակսած 1912 թ. դեկտեմբերի 16-ից ֆրանսիացի գործիչ, հայասեր Վ. Քերարի բնակարանում պարբերաբար հրավիրվում են խորհրդակցություններ, որոնց ընթացքում սրբազրվում և քարզմանվում է հուշագիրը, տարվում են քարենորդումների ծրագրի մշակման և այլ կազմակերպչական աշխատանքներ: Խորհրդակցություններին մասնակցում և Պ. Նուրարին

մեծապես աջակցում էին Վ. Քերարը, Հ. Առաքելյանը, Մ. Չերազը, Ա. Չոպանյանը, Ե. Աղարոնը, Գ. Ավանը, Հ. Սոստիշյանը, ինչպես նաև Պ. Նուրարի երկու որդիները՝ Առաքելը և Զարեհը<sup>2</sup>:

1912 թ. դեկտեմբերի 17-ին Լոնդոնում իր աշխատանքներն է սկսում տերությունների խաղաղության կոնֆերանսը: Պ. Նուրարը, եւ ներկ կարողիկոսական կոնդակով իրեն վերապահված իրավունքից, որոշում է մեկնել այնտեղ: Բայց մինչ այդ նա հեռազրում է կարողիկոսին՝ պարզելու համար այդ կապակցությամբ ուսական կառավարության վերաբերմունքը: Սակայն Մայր Արքունիք չգիտեին Հայկական հարցի նկատմամբ ուսական պաշտոնական դիրքորոշումը, քանի որ կարողիկոսի՝ Վորոնցով-Դաշկովի միջոցով Նիկոլայ 2-րդին հղած 1912 թ. հոկտեմբերի 2-ի և դեկտեմբերի 5-ի նամակներին, որ խնդրվում էր Ռուսաստանի պաշտպանությունն ու հովանավորությունը, պատասխան դեռ չէր ստացվել:

Գևորգ Ե կարողիկոսի խնդրանքը ներկայացնելով ցարին՝ Վորոնցով-Դաշկովը կարևորել էր դրա բավարարման անհրաժեշտությունը և ընդգծել, որ «Եկել է ժամանակը վերադառնալ քորքահայերի հովանավորության ուսական վաղեմի քաղաքականությանը»<sup>3</sup>: Սակայն ուսական կառավարության դիրքորոշումը տվյալ պահին այդքան էլ հուսադրող չէր: Այստեղ, հաշվի առնելով Օսմանյան կայսրության ներկա ծանր կացությունը, գտնում էին, որ արևմտահայության պաշտպանությամբ Ռուսաստանի հանդես գալը կլինի ոչ ժամանակին, չի ունենա որևէ գործնական արդյունք, և կարող է առաջ բերել Ասիական Թուրքիայի բաժանման հարցը, որին երկիրը պատրաստ չէր ոչ ովհանագիտորեն, ոչ էլ ուազմական տեսանկյունից: Այդ նկատառումներով էլ անպատճակահարմար էր համարվում Հայկական հարցը կոնֆերանսի օրակարգ մտցնելը<sup>3</sup>: Ուստի կարողիկոսի խնդրագրի վրա կայսր Նիկոլայ 2-րդի կողմից դրվում է «Բալկանյան պատերազմի

<sup>1</sup> Տես, ՀՀ ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆ., գ. 206, թ. 1-5:

<sup>2</sup> ԱՅՊՐ, ֆ. Պոլիտարխիս, թ. 1912, ձ. 3459, լ. 57.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 1172, թ. 1:

ավարտից հետո» մակագրությունը<sup>1</sup>: Փաստորեն ոռուական կառավարությունը մտադիր էր բալկանյան խնդիրների կարգավորումից հետո նոր միայն զրադաշտ Հայկական հարցով: Խնդրի վերաբերյալ բռնելիք այդ դիրքորոշման մասին արտգործնախարար Ս. Սաղոնովը 1912 թ. դեկտեմբերի 13-ին հեռագրում է Լոնդոնի և Փարիզի ոռուական դեպաններին<sup>2</sup>: Այդ նույն օգոստի էլ Վորոնցով-Դաշկովը 1912 թ. դեկտեմբերի 22-ին պատասխանում է կարողիկոսին, նշելով, որ թեև ոռուական կառավարությունը, ինչպես և դարեր շարունակ, բարյացակամ է վերաբերում արևմտահայությանը, սակայն նրանց իսկ շահերին անհամապատասխան է համարում Հայկական հարցի քննարկումը խաղաղության կոնֆերանսում: Նման դիրքորոշումը բացատրվում էր այն մտավախությամբ, որ տերություններն այդ հարցում չեն ունենալ լիակատար միարանություն, որից և կօգտվի քուրքական վարչակարգը: Միաժամանակ փոխարքան իր նամակում ընդգծում էր, որպեսզի հայերը «հաստուկ զավածություն ու տակտ ցուցաբերեն և անժամանակյա կողեկտիվ դիմումներով չխանգարեն նրանց կացության բարելավմանն ուղղված կառավարության ձեռնարկներին»<sup>3</sup>: Սրանից հետևում էր, որ Ռուսաստանը վճարակար էր համարում Հայկական հարցի բարձրացման խնդրանքներով դիմումները ոչ միայն կոնֆերանսին, այլև ընդհանրապես տերությունների դեկավար շրջաններին: Այսինքն պարզուց երևում էր ոռուական կառավարության մտավախությունը, որ հայկական բարենորոգումների խնդրի բարձրացման նախաձեռնությունը շանցնի այլ տերության ձեռքը: «Եթե այդ նախաձեռնությունն առաջանա մեկ այլ պետության կողմից, - ցարին հղած 1912 թ. նոյեմբերի 28-ի նամակում զրում էր Վորոնցով-Դաշկովը, - ապա դրանով անուղղելի վճար կհասցըվի Ռուսաստանի հեղինակությանը փորձախական քրիստոնյաների մեջ»<sup>4</sup>:

<sup>1</sup> Истягин Л., указ. соч., стр. 26.

<sup>2</sup> Реформы в Армении, стр. 10.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 26, թ. 9; Լեռ, Անցյալից հուշեր, բոքեր, դատումներ/, էջ 249-250:

<sup>4</sup> АВР, ֆ. Политархив, գ. 1912, ձ. 3459, լ. 57.

Ոռուաստանի պաշտոնական դիրքորոշումը պարզելու համար գելոր Ե կարողիկոսը 1912 թ. դեկտեմբերի 24-ին մի պատվիրակություն է ուղարկում փոխարքայի մոտ՝ ցարին ուղղված նոր խնդրագրով: Պատվիրակների հետ հանդիպման ժամանակ Վորոնցով-Դաշկովը հայտնում է կարողիկոսին հղած իր պատասխանի բովանդակությունը: Այդ ընթացքում էլ Էջմիածնում ստացվում է փոխարքայի դեկտեմբերի 22-ի նամակը, որի մասին էլ ամսիջապես հեռագրվում է Պ. Նուրարին: Սինչ այդ Պ. Նուրարը, դեռևս չստանալով կարողիկոսին հղած երկու հեռագրերի պատասխանները, ժամանակ շահելու համար որոշում է Ռուսաստանի վերաբերմունքն իմանալ Փարիզի ոռուական դեսպանատանը: 1912 թ. դեկտեմբերի 18-ին նա՝ ներկայանալով դեսպան Իգվոլյսկուն, հայտնում է, որ ոռուական կառավարության գիտությամբ և համաձայնությամբ կարողիկոսի կողմից հանձնարարություն է ստացել արևմտահայերի պահանջները ներկայացնել Լոնդոնի կոնֆերանսին<sup>1</sup>: Այդ հայտարարությունը զարմանք է պատճառում Իգվոլյսկուն: Նա կասկած է հայտնում նման քայլի նկատմամբ Ռուսաստանի համաձայնության վերաբերյալ և խորհուրդ տալիս Պ. Նուրարին ոչ մի տեղ չմեկնել և սպասել կարգադրությունների Պետերբուրգից<sup>2</sup>: Հայկական հարցը կոնֆերանսին ներկայացնալու Պ. Նուրարի որոշումը մեծ անհանգստություն է առաջացնում ոռուական պետական շրջաններում: Կ. Պոլսի ոռուական դեսպանատան առաջին բարգման Ա. Մանդելշտամը, Ապահովության Հանձնաժողովի անդամ Ռ. Մարտիկյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ, իր զարմանքն է հայտնում այդ կապակցությամբ, նշելով, որ դա չի համապատասխանում ոռուական կառավարության շահերին<sup>3</sup>: Պ. Նուրարի հետ ունեցած հանդիպման մասին Իգվոլյսկին հեռագրում է Պետերբուրգ, որին ի պատասխան ստանում է Վորոնցով-Դաշկովի վերոհիշյալ նամակի պատճեն, որն էլ

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 102.

<sup>2</sup> Տես նոյն տեղում:

<sup>3</sup> Ներսիսյան Մ., նշվ. աշխ., «Պատճա-բանասիրական համելիս», 1992, №1, Երևան, էջ 202:

դեկտեմբերի 21-ին հանձնում է Պ.Նուրարին՝ ցանկություն հայտնելով, որպեսզի այն հաղորդվի հայ հասարակության ի գիտություն իրքն ուսական կառավարության «ներկայում ունեցած տեսակետը Հայկական հարցի նկատմամբ»<sup>1</sup>: Հարկ է նշել, որ ոչ միայն Ռուսաստանի, այլև մյուս տերությունների դեկավար շրջանները ևս աննպատակահարմար էին համարում Հայկական հարցը Լոնդոնի կոնֆերանսի օրակարգ մտցնելը: Կոնֆերանսը հրավիրված էր լուծելու միայն բալկանյան խնդիրները և դրանից դուրս ոչ մի հարց չպետք է բնարկվեր այնտեղ: Այսպես, Պ.Նուրարին՝ Լոնդոն մեկնելու մտքից խորհուրդ են տալիս հրաժարվել նաև Ֆրանսիայի վարչապետ Ռ.Պուանկարեն և Փարիզում անգլիական դեսպանը, որն այդ իմաստով հարցում էր արել արտգործնախարար Է.Գրեյին<sup>2</sup>: Նույն ոգով էր արտահայտվել նաև Մխիթարյան Միարանության արքահայր Գովրիկյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ավստրո-Հունգարիայի վարչապետ Բերխուլը, նշելով, որ եթե ներկայանաք կոնֆերանսին, ապա «անձեռնիասութեան պատասխանի մը առջև պիտի գտնուիք»<sup>3</sup>:

Իգլուսկու հետ հանդիպումն անակնկալի է բերում Պ.Նուրարին: «Այդ խօսակցութիւնը, - զբում էր նա Վ. Մալեզյանին, - այնքան ալ նպաստաւոր չեղաւ, ինչպէս կ'ակնկալի»<sup>4</sup>: Բանն այն էր, որ կարողի կոսից ստացած հրահանգներն ու Իգլուսկու ասածն ամբողջովին հակասում էին իրար: Ստեղծված կացությունը պարզելու և կարգադրություններ ստանալու համար Պ.Նուրարը դեկտեմբերի 23-ին հետազոտ է Էջմիածին: Ծուտով ստացվում է կարողիկոսի պատասխան նամակը, որտեղ ներկայացվում էր ուսական կառավարության դիրքորոշումն ու հրահանգվում հետևել այդ ընթացքին: «Այժմյան քաղաքական պայմաններում, - զբում էր Գևորգ Ե կարողիկոսը, - այլ ճանապարհով զոր-

ծելն ամօգուտ է և վճասակար»<sup>1</sup>: Այդ նկատառումներով Պ. Նուրարն էտ է կանգնում Լոնդոնի կոնֆերանսին ներկայանալուց: Խիստ կարևորելով Ռուսաստանի դերը Հայկական հարցի լուծման մեջ՝ նա համաձայնում է ուսական կառավարության կարգադրություններին հնագանդվելուն: «Մենք պետք է հետևենք այս ընթացքին և հարմարվենք Ռուսաստանի ցուցումներին, որոնց հետ պետք է համամիտ ընթանանք», - Գևորգ Ե-ին հղած 1912 թ. դեկտեմբերի 29-ի նամակում ընդգծում էր Պ.Նուրարը<sup>2</sup>: Պ.Նուրարի կոնֆերանսին ներկայանալու մտադրությունից հրաժարվելու մասին կարողիկոսը զբում է փոխարքային, որն էլ իր հերթին տեղեկացնում է Ս.Սագոնովին: Այսպիսով Ռուսաստանի դեկավարությանը ցույց է տրվում, որ առանց նրա համաձայնության միայնակ քայլեր չեն ձեռնարկվի: Իգլուսկու հետ հանդիպման ժամանակ Պ. Նուրարը ևս հավաստիացնում է վերջինիս, որ հայերը, իրենց հույսները դնելով Ռուսաստանի հզոր աջակցության վրա, «վճռականորեն մտադիր են ամեն ինչում հետևել ուսական կառավարության հրահանգներին»<sup>3</sup>: Պետերբուրգում կարուր էին համարում նման հավաստիացումներ ստանալը հատկապես Պ. Նուրարից, քանի որ մտավախություններ կային, որ եվրոպական երկրներում նրա ծավալած ձեռնարկները կարող էին հակասել Ռուսաստանի շահերին:

Հայկական հարցի լուծման շուրջ ծավալվող գործընթացում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով, բնականաբար պետք է փոփոխվեր նաև Ազգային Պատվիրակության առաքելության բնույթը: Ստեղծված պայմաններում ինքնաբերաբար անհմաստ էր դարձել Պ. Նուրարի՝ մինչ այդ հետևելիք գործունեության ընթացքը, այն է՝ Լոնդոնի կոնֆերանսին արևմտահայության պահանջները ներկայացնելուն նախապատրաստվելը: Սակայն դրանով Ազգային Պատվիրակության դերն ու նշանակությունը բնավ չեր նվազելու, այլ ընդհակառակն ավելի էր արժեորվելու: Նրա հետապնդած նպատակը մնալու էր նույնը՝

<sup>1</sup> «Ժամանակ», Կ.Պոլիս, 1913, N 1341:

<sup>2</sup> «Ազգատամարտ», Կ.Պոլիս, 1913, N 1111:

<sup>3</sup> Մալեզյան Վ., Ծամրու վրայ /Յուշարադ/, էջ 309:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 308:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 19, թ. 22:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 20, թ. 16:

<sup>3</sup> Реформы в Армении, стр. 24.

նպաստել հայկական քարենորդումների խնդրի լուծմանը: Փոփոխություն էր կրելու միայն դրան հասնելու բնույթն ու գործելակերպը: Այսպիսով, ավարտվում է Պողոս Նուբարի՝ որպես Եվրոպայում կարողիկոսի ներկայացուցչի, գործունեության առաջին շրջանը, որը տևեց ընդամենը մեկ ամիս՝ 1912 թ. դեկտեմբեր - 1913թ. հունվարի սկիզբ: Այդ ընթացքում նրա ջանքերը հիմնականում նպատակատղվեցին իր գլխավորությամբ պատվիրակության ձևավորմանը, Լոնդոնի խաղաղության կոնֆերանսին արևմտահայության պահանջները ներկայացնելուն և այլ իմաստով կազմակերպչական այլ հարցերի լուծմանը:

Հետևելով ոռսական կառավարության կարգադրություններին և ետ կանգնելով Հայկական հարցը տերությունների քննարկմանը ներկայացնելուց՝ Պ. Նուբարը կարիք ուներ ծանոթանալու իր գործունեության նոր ընթացքին, որին պետք է հետևեր այժմ: «Պատգամավորության դերը, - կարողիկոսին հղած նամակում գրում էր նա, - շատ դժվար կրառնա և հնար պիտի չին իր գործել մինչև նոր հրահանգներ ստանալը»<sup>1</sup>: Ստեղծված պայմաններում, երբ Հայկական հարցի արծարժման իմաստով դիմումները տերություններին համարվել էին աննպատակահարմար, Պ. Նուբարին մնում էր միայն աշխատանք տանել դրա նկատմամբ եվրոպական հասարակական կարծիքն արքուն պահելու և դեկանար շրջանների վերաբերմունքը քարենորդումների իրականացման խնդրում նպաստավոր դարձնելու ուղղությամբ: Գործունեության նման ընթացքին հետևելու վերաբերյալ էլ Պ. Նուբարը հրահանգներ է ստանում Գևորգ Ե կարողիկոսից: Այդ ուղղությամբ տարբեյիր աշխատանքը շատ կարևոր էր և այն ճիշտ ու արդյունավետ կազմակերպելու դեպքում հնարավոր էր դրական արդյունք ակնկալելը:

Գործելով եվրոպական երկրներում Պ. Նուբարն ինչ-որ առումով կտրված էր Հայկական հարցի լուծումը հետապնդող ազգային կենտ-

րոններից: Բայց նա լավ գիտակցում էր, որ իր առաքելության հաջողության համար հարկավոր է մշտական կապի մեջ լինել Կ. Պոլսի, Էջմիածնի և Թիֆլիսի հայ դեկանար, քաղաքական և կուսակցական շրջանների հետ: Նման կապերն անհրաժեշտ էին ամենուրեք փոխհամաձայնեցված և միասնական գործունեության հետևելու համար: Այդ առումով Պ. Նուբարը հատկապես կարևորում էր մշտական հարաբերությունների հաստատումն իր և Կ. Պոլսի հայ գործիչների հետ, որոնք ամենից քաջատեղյակ էին ինչպես արևմտահայության կացությանն ու նրա խնդրին, այնպես էլ դրա հետ կապված Օսմանյան կայսրությունում տիրող անցուղարձերին, թուրքական իշխանությունների դիրքուշմանն ու կատարած ձեռնարկներին: Այդ իմաստով Կ. Պոլսից ստացված տեղեկություններն ու խորհուրդները մեծապես կնպաստեին Ազգային Պատվիրակության ծավալած գործունեությանը: «Իբրև գործի բան տերը և առաջին շահագրգուղը, - իր հուշերում այդ մասին գրում էր Կ. Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը, Ազգային Պատրիարքարանը միշտ իր խորհուրդներն ու թելադրանքներն էր տալիս Պ. Նուբարի պատվիրակությանը»<sup>1</sup>: Պ. Նուբարի և արևմտահայ դեկանար շրջանների միջև համերաշխ գործունեության ապահովման տեսանկյունից հատկապես կարևոր էր Վ. Մալեզյանի 1912 թ. դեկտեմբերի կեսերին Կ. Պոլսի կատարած այցը՝ տեղի պաշտոնական անձանց և կուսակցական ներկայացուցիչների հետ խորհրդակցելու նպատակով: Այդ այցը, որը Պ. Նուբարի հավանությամբ կազմակերպել էին եղիպատահայ գաղութի ներկայացուցիչները, շատ կարևոր նշանակություն ունեցավ ազգային երկու կենտրոնների՝ Կ. Պոլսի և Ազգային Պատվիրակության միջև փոխհամաձայնության հաստատման համար: «Պողոս Նուպարի անոնք, - գրում էր Վ. Մալեզյանը, խանդակառութեամբ ողջունուեցավ եւ անխստիր հաւաստիրներ տրուցան ամենուտեք համերաշխ եւ անվերապահ գործակցութեան մը հաս-

<sup>1</sup>Զաւեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերու. Վաերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 30:

մար»<sup>1</sup>: Առաքելության արդյունքների մասին Վ. Մալեզյանը Պ. Նորարին հղեց մի ընդարձակ տեղեկագիր, որ հաղորդում էր իր ունեցած հանդիպումների, Հայկական հարցի լուծան ուղիների վերաբերյալ տիրող տեսակետների ու հայացքների, այդ իմաստով կատարվող աշխատանքների, տեղի ունեցող անցուղարձների մասին, որոնք շատ արժեքավոր էին Պ. Նորարի համար: Վ. Մալեզյանին հղած նամակում նա նշում էր, որ այդ տեղեկագիրն իրեն «կատարելապես իրազեկ ըրա կացութեան»<sup>2</sup>: Իր այցի արդյունքներից գոհ էր նաև Վ. Մալեզյանը: «Այս պատգամավորությունս անհրաժեշտ էր,- Մ. Անդրանիկյանին հղած նամակում գրում էր նա,- և մեծ օգտավետություն պիտի ունենա»<sup>3</sup>: Պ. Նորարը կապեր է հաստատում նաև Թիֆլիսի Ազգային Բյուրոյի հետ: Նա հատկապես մշտական նամակագրության մեջ էր Բյուրոյի անդամ Հ. Առաքելյանի հետ: Ինչ վերաբերում է Գևորգ Ե կարողիկոսին, ապա Պ. Նորարը, լինելով նրա պատվիրակն եվրոպական երկրներում, իր կատարած քայլերի և տերությունների դիրքորոշման մասին մշտապես տեղյակ էր պահում վերջինիս և ըստ այդմ ստանում համապատասխան կարգադրություններ ու իրահանգներ: Հայկական հարցի լուծամբ մտահոգված բոլոր ազգային կենտրոնների հետ հաստատած կապերն ու հարաբերությունները մեծապես կնպաստեին Պ. Նորարի առաքելության արդյունավետ կատարմանը:

Ստանալով հետագա գործունեության ծավալման վերաբերյալ համապատասխան կարգադրություններ, ավարտելով իր գլխավորած պատվիրակության կազմելու աշխատանքներն ու կապեր հաստատելով ազգային մյուս կենտրոնների հետ՝ Պ. Նորարը ձեռնամուխ է լինում ստանձնած առաքելության իրականացմանը: «Վսեմ Պոլոս Փաշա Նուպար,- կարողիկոսին հղած 1913 թ. հունվարի 17-ի նամակում գրում էր Գ. Ութուջյանը,- ի Փարիզ սրտով յարած ու գոր-

ծին»<sup>1</sup>: Նրա ձեռնարկներում վերանում է մինչ այդ նկատվող շտապողականությունը, որը պայմանավորված էր առանց ավելորդ ժամանակ կորցնելու խաղաղության կոնֆերանսին արևմտահայության պահանջները ներկայացնելու մտահոգությամբ: Այսպես, Ազգային Պատվիրակության անդամ նշանակված Յաղոր Արքին փաշային, որին Պ. Նորարը պատվիրել էր Եգիպտոսից անմիջապես զալ Փարիզ, այժմ հեռագրում է և նշում, որ այլևս հարկ չկա շտապելու<sup>2</sup>:

Նման պայմաններում Պ. Նորարը՝ որպես Ազգային Պատվիրակության նախագահ, առաջին հերթին կարևոր էր համարում իր պաշտոնակիցներին ներկայացնել ստեղծված իրավիճակն ու ըստ այդմ պատվիրակության բոնելիք դիրքը, ծանրքացնել կարողիկոսի հրահանգներին և կարգադրություններին, ինչպես նաև ուրվագծել իրենց հետագա գործունեության ընթացքը: Այդ նկատառումով նա որոշում է հրավիրել պատգամավորական ժողով և պատվիրակության անգլիարնակ անդամներ Հ. Մոստիչյանին և Գ. Ութուջյանին հեռագրում է զալ Փարիզ: Պատգամավորական առաջին ժողովը տեղի է ունենում 1913 թ. հունվարի 20-ին Պ. Նորարի բնակարանում և տևում 2 օր: Փարիզի Տրոկսերո պողոտայի վրա գտնվող այդ բնակարանն այսուհետև վեր է ածվում Ազգային Պատվիրակության գործունեության յուրահատուկ կենտրոնատեղին, նրա նախագահի նատավայրի և, ինչպես հետագայում գրում էր «Հորիզոն» թերթը, դառնում «շատ մը հայերու համար փառարանը բոլոր հույսերի»<sup>3</sup>: Պատգամավորական ժողովի ընթացքում ընդգծվում է Լոնդոնի խաղաղության կոնֆերանսին դիմելու աննպատակահարմարությունն ու որոշում կայացվում պատվիրակության հետագա գործունեության բնույթի մասին, այն է՝ աշխատանք տանել եվրոպական կառավարող և ազդեցիկ անձանց ու հասարակական կարծիքի վերաբերմուճը հայկական քարենորդությունների իրականացման օգտին դարձնելու ուղղությամբ: Քննարկվում են նաև կազմակերպչական այլ հարցեր:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 31, թ. 77:

<sup>2</sup> ՀՀ Գ.Աթ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 452, թ. 7:

<sup>3</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1914, N15:

<sup>1</sup> Մալեզյան Վ., ճամրոս ճայրը, հս. Բ, էջ 225:

<sup>2</sup> Մալեզյան Վ., ճամրոս վրայ /Յուշարադ/, էջ 304:

<sup>3</sup> ՀՀ Գ.Աթ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 48, թ. 2:

Տերությունների ղեկավար շրջանների մոտ Հայկական հարցի պաշտպանությամբ հանդս գալու համար Ազգային Պատվիրակության անհրաժեշտ էր ունենալ ծրագիր, որտեղ ուրվագծված լինեին արևմտահայության պահանջները: Բարենորոգումների ծրագրի պատրաստման աշխատանքները Պ.Նուրարը սկսել էր դեռևս 1912 թ. ղեկանական 18-ից՝ հոյս ունենալով այն ներկայացնել Լոնդոնի կոնֆերանսին: Այդ ձեռնարկը հաջողությամբ գլուխ բերելու համար Պ. Նուրարն օգտվում էր Հայկական հարցին քաջատեղյակ ինչպես հայ, այնպես էլ ֆրանսիացի մի շարք գործիչների ծառայություններից: Այդ իմաստով նրան մեծ աջակցություն էր ցույց տալիս ֆրանսիացի հայսեր գործիչ, Մ.Վարանյանի բնորոշմամբ «արևմտյան աշխարհի առջև հայ դատի անխոնջ ու գիտուն փաստարան»<sup>1</sup> Վիկտոր Բերարը, որն ըստ Պ.Նուրարի «ուրիշ որեւէ մեկտ աւելի լաւ զիտէ այս խնդիրները»<sup>2</sup>: Բարենորոգումների ծրագրի խմբագրման աշխատանքներն ավարտվում են 1913 թ. հունվարի կեսերին: Պատրաստված այդ նախագիծը Հ.Առաքելյանը տաճում է Էջմիածին՝ կարողիկոսի հաստատմանը: Ծրագրի մեկ օրինակ էլ ուղարկվում է Կ.Պոլիս՝ արևմտահայ ղեկավար շրջաններին ծանոթացնելու նպատակով: Միևնույն ժամանակ կարողիկոսի հաստատման էր ուղարկվել նաև բարենորոգումների մեկ այլ ծրագիր, որը կազմվել էր Կ.Պոլսում՝ Ազգային Պատրիարքարանի նախաձեռնությամբ: Ըստ այդ ծրագրի հայկական վեց վիլայեթներից /Երզրում, Վան, Բիրլիս, Սեբաստիա, Խարբերդ, Դիարբերդիր, որոնցից անջատվելու էին արհեստականորեն միացված և մահմելական բնակչության հոծ զանգված ունեցող մի շարք տարածքներ/ պետք է կազմվեր մեկ նահանգ՝ տերությունների կողմից ընտրված և սուլթանի կողմից վավերացված եվրոպացի կառավարչի ղեկավարությամբ: Վերջինս իրավունք էր ունենալու ընտրել և հրաժարեցնել նահանգի բոլոր պաշտոնյաներին, պատրաստել և գործադրել օրենքներ: Պետք է կազմվեր նահանգային ժողով՝ բաղկացած հավասար բվով քրիստոնյաներից և մահմետականներից: Նոյն իմունքով պետք է ստեղծվեր նաև ոստիկանություն և ժանդարմերիա, բաշխվեին բոլոր

<sup>1</sup> Վարանյան Մ., Վիկտոր Բերար, «Հայրենիք», ամսագիր, Բուտոն, 1932, N 5, էջ 53:

<sup>2</sup> Մալեկեան Վ., Շամբուս Վրայ /Յուղարար/, էջ 307:

պաշտոնները: Միջոցներ պետք է ձեռնարկվեին բռնագրավված հողերի վերադարձման, հայերի ազգային և կրոնական իրավունքների պահպանման, հայկական վիլայեթներում մուհացիրներ շրնակեցնելու, հայոց լեզվի գործածության, կիլիկիահայության վիճակի բարեկաման ուղղությամբ: Բարենորոգումների գործադրման անմիջական վերահսկողությունը պետք է հանձնվեր տերություններից մեկին /նկատի էր առնվում Ռուսաստանը -Հ.Բ./: Ծրագրին կցված էին նաև գեկուցագիր, ուր պատմական և վավերագրական իրողությունների վրա հիմնավորված էին հայերի պահանջները, հայկական և վիլայեթների քարտեզը, որտեղ պետք է իրականացվեին բարենորոգումները, տեղի ազգաբնակչության վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ /ըստ դրանց հայերի թվով կազմում էր 1.018.000, բուրբերին՝ 666.000, քրդերին՝ 424.000/<sup>2</sup>/, ինչպես նաև պատրիարքի կողմից Բ.Դումը ներկայացված բագրիներն ու այլ փաստարդեր, ուր նկարագրված էր արևմտահայության անտանելի կացությունը: Ծրագրի կետերի վերաբերյալ ծանուցվում է նաև Ազգային Պատվիրակությանը: Պ.Նուրարի և Ազգային Պատրիարքարանի կողմից մշակված նախագծերը Գևորգ Ե կարողիկոսն իր հերթին ուղարկում է Թիֆլիսի Ազգային Բյուրոյին՝ ըննարկման և դրանց հիմնան վրա արևմտահայության բաղանջների վերաբերյալ միասնական ծրագրի կազման համար, որը կրելու էր «համեմատարար համագային կնիքը»<sup>3</sup>:

Ծանոթանալով մինյանց կազմած ծրագրերին՝ Պ. Նուրարն ու Կ.Պոլսի պատրիարքը հայտնաբերում են դրանցում առկա մի շարք սկզբունքային տարբերություններ: Այդ կապակցությամբ կողմերի միջև առաջանում են լորջ տարածայնություններ, քանզի յուրաքանչյուրը պնդում էր իր տեսակետի վրա և չէր պատրաստվում հօգուտ մյուսի հրաժարվել դրանից: Արա հետ մեկտեղ երկուստեր ջանքեր են բարդարակ ամեն գնով խափանել և արգելել միմյանց ծրագրերն ինչ-որ ձևով ընթացրի մեջ դրվելու հնարավորությունը: Այսպես, Գևորգ Ե-ին

<sup>1</sup> Ծրագրի տերսուն ամբողջությամբ տես, ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 15, թ. 110-118:

<sup>2</sup> Լազեան Գ., Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիր, 1942, էջ 239-240:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 35, թ. 9:

հղած 1913 թ. հունվարի 22-ի նամակում Պ.Նուրարը, նշելով, որ ինքնուրույնության սկզբունքի վլա հիմնված Պատրիարքարանի ծրագիրն իրեն «քարեպատեհ և զործնական չի թվում», խնդրում էր ոչ մի կերպ չգրծածել այն<sup>1</sup>: Նման խնդրանքով կարողիկոսին դիմում է նաև պատրիարք Հ. Արշարումին: Ծրագրային տարբերությունների հետևանքով առաջացած հակասությունների հիմնական պատճառներից էր այն, որ կողմերը Հայկական հարցի պաշտպանության և դրանից ելնելով նաև բարենորոգումների ծրագիր կազմելու ու այն տերություններին ներկայացնելու խնդրում առաջնայնությունը վերագրում էին իրենց: «Թէ Պատրիարքարանը եւ թէ Պատուիրակութիւնը, - իր հուշերում գրում էր Վ.Փափազյանը, - հաւասարապէս կը կարծէին թէ ունին պէտք եղած հեղինակութիւնը եւ կարողութիւնը եւ մանաւանդ երկուրն ալ կը կարծէին ապահոված ըլլալ մէկ կողմէ Պոլսոյ և միւս կողմէ Փարփակ բարեկամ պէտութիւններու ներկայացուցիչներու համաձայնութիւնը իրենց նախագիծներու այս կամ այն կետերու նկատմամբ»<sup>2</sup>: Այդ իրողությունը պատահական չէր: Պ.Նուրարի նման դիրքորոշումը պայմանավորված էր առաջին հերթին նրա համոզվածությամբ, որ Ազգային Պատրիարքարանը, Բ.Դուան հետ իր հարաբերությունները պահպանելով, միաժամանակ չէր կարող Հայկական հարցի լուծման տեսանկյունից բանակցություններ վարել տերությունների հետ: Երկրորդ, նա գտնում էր, որ այդ ուղղությամբ ջանքերի գործադրումը մտնում է միայն իր գլխավորած պատվիրակության իրավասությունների մեջ: Այդ պատճառով էլ Պ. Նուրարն իր դժողովությունն էր հայտնում Կ. Պոլսում տերությունների դեսպանների հետ արևմտահայ ազգային շրջանների վարած առանձին բանակցությունների կապակցությամբ: «Երբ կարողիկոսն ինձ նշանակեց, - գրում էր նա պատրիարքին, - կարծեցի հասկանալ, թէ ձեռք է առել եվրոպական բանակցությունների տնօրինությունը Պատրիարքարանի խնդրանքով իսկ, որ որանք ուրակի

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 19, թ. 21:

<sup>2</sup>Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Աւմ», Փարփ, 1933, Ա. Մանդելշտամն արևմտահայ դեկապար շրջանների հետ համույթաման ժամանակ նշել էր, որ «միայն Պատրիարքարանը, իբրև

մշակվեմ դեսպանախորհրդի կամ տերությունների հետ՝ խուսափելու համար Վ.Պոլսի դեսպանների միջնորդությունից»<sup>1</sup>: Այդ նկատառումներով էլ բարենորոգումների ծրագրի կազմության իրավասությունը Պ. Նուրարը ևս վերապահում էր իրեն: Այդ էր վկայում նաև այն փաստը, որ տեղեկանալով ծրագրի կազմության վերաբերյալ Պատրիարքարանում կատարվող աշխատանքներին նա Վ. Մալեզյանին հղած 1912 թ. դեկտեմբերի 21-ի նամակում գրում էր: «Չատ օգտակար պիտի ըլլայ որ ժամ առաջ ունենամ այդ նախագիծը, բայցատեմ մերինի հետ և ջանամ, անոնք միաձուլելով, յանգի գործնական եւ վերջնական բանաձևին մը»<sup>2</sup>: Եվ վերջապես երրորդ, Պ. Նուրարը, հաշվի առնելով այն համգամանը, որ Լոնդոնում Թուրքիայի հետ վարվում էին խաղաղության բանակցություններ, իսկ Փարփում առաջիկայում պետք է ընճարկվեին նրա ֆինանսական որությանը վերաբերող հարցերը, կարծում էր, որ բարենորոգումների խնդրի շուրջ բանակցությունները ևս կկենտրոնանան Եվրոպայում և կգտնվեն Ազգային Պատվիրակության ուշադրության կենտրոնում:

Ինչ վերաբերում է Պատրիարքարանի վերոհիշյալ կեցվածքին, ապա դա պայմանավորված էր նրա՝ Հայկական հարցի լուծման առաջին շահագրգիռ կողմն ու արևմտահայության կացությանն ամենից բաջատելյակը լինելու հանգամանքով: «Նախագծի պատրաստելու իրավունքը, - կարողիկոսին հղած նամակում գրում էր պատրիարք Հ. Արշարումին, - բնականարար մեզ վերապահված կկարծենք, քանի որ երկրի մեջ կապը և բուրքահայերի ցավերին և պահանջներին ավելի գիտակ կհամարվենք»<sup>3</sup>: Այդ հարցում Ազգային Պատրիարքարանն ամբողջովին վայելում էր Կ.Պոլսի ուսական դեսպանատան բաջականական արևմտահայ դեկապար շրջանների հետ համույթաման ժամանակ նշել էր, որ «միայն Պատրիարքարանը, իբրև

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 19, թ. 35:

<sup>2</sup>Մալեզյան Վ., Շամբարությունների /Յուղարար/, էջ 307:

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 35, թ. 47:

արևմտահայերի ներկայացուցիչ, կարող է պահանջներ իրապարակ դրել կամ ներկայացնել եվրոպական մեծ տերություններին: Միայն նա պետք է գործը դեկավարի, իսկ կարողիկոսն ու պատվիրակությունը պետք է հետևեն նրա գծած ուղղությանը<sup>1</sup>: Բացի այդ արևմտահայ դեկավար շրջանները համոզված էին, որ բարենորոգումների հարցի բնարկումները տեղի էին ունենալու Կ. Պոլսում: Այդ ուղղությամբ աշխատանք էր տանում նաև ուսական կառավարությունը և Հայկական հարցի շորջ ծավալվող իրադարձություններին հետևելու խնդրում առաջնությունը տախս էր Կ. Պոլսի ուսական դեսպանատանը: Այդ էր վկայում թերևս այն փասոք, որ այստեղ շատ էին մտահոգված, որ պեսզի Պ. Նորարն իր կազմած ծրագիրը չհանձնի Ֆրանսիայում ուսական դեսպան Խզվոլսկուն: Այդ կապակցությամբ Գևորգ Շ կարողիկոսը նույնիսկ իր զարմանքն է հայտնում, թե ինչ տարբերություն կա Գիրսի և Խզվոլսկու միջև, քանի որ միևնույնն է՝ երկուսն էլ այդ ծրագրերը հաստատման համար պետք է ուղարկեին Պետերբուրգ<sup>2</sup>:

Քննության առնելով Պ. Նորարի կազմած բարենորոգումների ծրագիրը՝ Կ. Պոլսի Ապահովության Հանձնաժաղովի անդամները զախս են այն եզրակացության, որ դրա որոշ դրույթներն ու հատկապես վերահսկողության մնայուն մարմնի /մշտական հանձնաժողովի/ ստեղծման առաջարկը չեն համապատասխանում արևմտահայության ձգտումներին: «Անմիջապես նկատելի էր, - իր հուշերում գրում էր Վ. Փափազյանը, - որ այդ ծրագիրը խմբագրուած է հայ իրականություններ ու անոր պահանջներէն հեռու վայրի մը մէջ»<sup>3</sup>: Պ. Նորարի ծրագիրը ներկայացվում է նաև Մ. Գիրսին, որը նույնպես բացասարար է գնահատում տեղ զուած բարենորոգումների վրա վերահսկողության սահմանման եղանակը: Այդ մասին Պատրիարքարանից հաղորդում են Պ. Նորարին՝ հույս ունենալով, որ դա կստիպի նրան իրա-

ժարվել այդ կետից: «Տարակարծութիւնը մեր միջնի գաղտնի չէր կրնար պահիլ ուս դեսպանատունն, քանի որ անոր խողովակով պիտի անցնելին մեր բաղձանքները», - գրում էր Վ. Փափազյանը<sup>4</sup>:

Ազգային երկու կենտրոնների միջև առաջ եկած տարածայնությունները, այն էլ այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին բարենորոգումների ծրագիրն էր, անշուշտ բացասարար կանդրադառնախն հետապնդվող խնդրի լուծման վրա: «Այս անհամածայնությունը, - կարողիկոսին հղած 1913 թ. փետրվարի 10-ի նամակում գրում էր Պ. Նորարը, - կվնասի հայկական դատին և ապարդյուն կճգի մեր բոլոր ջանքերը»<sup>5</sup>: Դեպքերի նման զարգացումից խուսափելու համար երկուստեր կարևորվում է արևմտահայերի պահանջների վերաբերյալ մեկ միասնական տեսակետի շուտափույթ հանգելու անհրաժեշտությունը, որի ուղղությամբ էլ սկսվում են ձեռնարկվել գործնական քայլեր: «Երկու դեկավար մարմիններու միջև տարբերութիւնները այնքան էական էին, - գրում էր Վ. Փափազյանը, - որ անկարելի էր բորբակցութամբ իրար հասկնալ եւ համոզել»<sup>6</sup>: Հենց այդ նկատառումներով էլ պատրիարքին հղած 1913 թ. փետրվարի 8-ի նամակում Պ. Նորարն առաջարկում է պատվիրակ ուղարկել Փարիզ՝ բանակցություններ վարելու և երկուստեր համածայնության հասնելու համար: «Տարակոյս շունչն, - Վ. Մալեզյանին հղած նամակում գրում էր Հ. Մոստիշյանը, - որ եթե Պատրիարքարանը ձեռնիաս ներկայացուցիչ մը դրէտ Բարիզ, դիւրութեամբ կարելի է ծրագրին տալ իր վերջնական ձեւը»<sup>7</sup>: Այդ առաքելությունը հանձնվում է Ազգային Կենտրոնական Վարչության և Ապահովության Հանձնաժողովի անդամ Վահան Փափազյանին, որը փետրվարի կեսերին ժամանում է Փարիզ: Կ. Պոլսից ժամանած պատվիրակի հետ բարենորոգումների ծրագրերի բննարկումները կազմակերպե-

<sup>1</sup> Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Վեմ», Փարիզ, 1934, N1, էջ 70:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, թ. 19, թ. 29:

<sup>3</sup> Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Վեմ», Փարիզ, 1934, N1, էջ 65:

<sup>4</sup> Մալեզյան Վ., ճամքիս վրայ /Թուշարալ/, էջ 315:

<sup>1</sup> Միքայելյան Ն., Արխիվային նոր նյութեր Արևմտյան Հայաստանում հայ ժողովոյի վիճակի մասին /1912-1913թթ./, «Էջմիածն», Էջմիածն, 1965, N Ե-Զ-Ե, էջ 184:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, թ. 35, թ. 11:

<sup>3</sup> Փափազեան Վ., իմ յուշերը, հան. Բ, էջ 221:

լու համար Պ. Նուրարը որոշում է հրավիրել պատգամավորական ժողով, որը տեղի է ունենում 1913 թ. փետրվարի 23-ին: Դրան, քացի Պ. Նուրարից, Հ. Մոստչյանից, Գ. Ուրուցյանից և Մ. Չերազից, մասնակցում էր նաև Վ. Փափազյանը: Ժողովի ընթացքում, ինչպես կարդիկոսին հղած 1913 թ. փետրվարի 26-ի նամակում գրում էր Գ. Ուրուցյանը, կատարվեցին երկու ծրագրերի «մանրազնին և խղճմիտ ուսումնասիրություններ»<sup>1</sup>: Հավաբռության հիմնական նապատակն էր հարթել երկուստեր գոյություն ունեցող տարածայնություններն ու հասնել հայացքների համաձայնեցմանը, որը, սակայն, այդքան էլ դյուրին գործ չէր: Ծրագրի վերաբերյալ բանակցությունները շարունակվեցին նաև հետագայում զիյավորապես Պ. Նուրարի և Վ. Փափազյանի միջև:

Սկզբնական շրջանում երկու կողմերն էլ որոշակի հիմնավորումներով համառորեն պաշտպանում էին իրենց տեսակետներն ու հրաժարվում զիջումներ անելուց: Հիմնական տարածայնությունները վերաբերում էին բարենորդումների իրականացման վրա սահմանվելիք վերահսկողության եղանակին: Պ. Նուրարը վերահսկողության մնայուն մարմին ստեղծելու առաջարկը հիմնավորում էր նրանով, որ այն չափավոր է, չի դիմում թուրքիայի հնքնասիրությանը և կարժանանա տերությունների հավանությանը: «Պօլոս Նուսարի պահանջը, - գրում էր Ա. Թերզիազյանը, - մեծ ոխոր մը չէր ներառեր և դիրաւ ալ գործադրելի էր»<sup>2</sup>: Սակայն պետք է նշել, որ վերահսկողության այդ եղանակը չէր կարող գործնական նշանակություն ունենալ և արդյունավետ լինել, քանի որ բուրքական իշխանությունները, օգտվելով տերությունների միջև գոյություն ունեցող հակասություններից, հեշտությամբ կկարողանային խափանել այդ մարմնի աշխատանքները: Այդ նկատումներով էլ Վ. Փափազյանն առաջարկում էր հրաժարվել այդ պահանջից, նշելով, որ այլապես «Հայաստանը նորեն պիտի դառնայ բատր պետութիւններու փոխադարձ խաղերուն և մրցումներուն, որմէ

պիտի օգտուի Բ. Դուտը»<sup>3</sup>: Սակայն ինց այդ նույն հակասությունների պատճառով անիրականանալի էր նաև վերահսկողության վերաբերյալ Պատրիարքարանի առաջարկած, թեպես և ավելի նախընտրելի, ծևակերպումը, որով այդ իրավունքը վերապահվում էր տերություններից մեկին: Բանն այն էր, որ տերությունները ոչ մի դեպքում չէին քոյլ տա, որ նրանցից որևէ մեկը, և հատկապես Ռուսաստանը, ստանար նման առավելություններ ու վերահսկեր հայկական բարենորդումների գործադրությունը, դրանով իսկ ուժեղացնելով իր ազդեցությունն Օսմանյան կայսրության այդ հատվածում: Այդ իրողությունը հաշվի առնելով էլ Պ. Նուրարը դեմ էր Պատրիարքարանի ծևակերպմանը, չնայած որ ինքը ևս շատ էր փափազում միայն Ռուսաստանի վերահսկողությունը՝ այն համարելով «քուն և անմիջական ներգործություն, իրական ճնշում թուրքիայի վրա»<sup>2</sup>: Պ. Նուրարը չէր ընդունում նաև հայկական նահանգի ընդիհանուր քննիչի նշանակման կարգի /տերությունների ընտրությամբ/ և Բ. Դուտ վավերացմամբ/ վերաբերյալ Պատրիարքարանի ծևակերպումը, այն իրավացիորեն համարելով անիրազործելի: Սակայն չնայած այդ ամենին Պ. Նուրարի և Վ. Փափազյանի միջև տարվող բանակցությունները, որոնք տևեցին մոտ 1,5 ամիս, անարդյունք չեն անցնում: Շուտով Պ. Նուրարը, գիտակցելով համաձայնության շուտափույր հասնելու անհրաժեշտությունը, զնում է որոշակի զիջումների և հրաժարվում է վերահսկողության մնայուն մարմին ստեղծելու պահանջից: «Փաշան, - իր հուշերու գրում էր Վ. Փափազյանը, - աստիճանաբար կը լինը իր դիրքերը»<sup>3</sup>: Պետք է նշել, որ Պ. Նուրարի այդ գիջողականությունը որոշակիորեն պայմանավորված էր նաև ուսական կառողիկոսին հղած ուղրորոշմամբ: Կարողիկոսին հղած նամակում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը պահանջում էր ցուցումներ տալ

<sup>1</sup> Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, բոք. 3, փալ. 99:

<sup>2</sup> Բարգեն վարդապետ, նշվ. աշխ., էջ 20; Քօնքանան տղ Լ., նշվ. աշխ., էջ 54:

<sup>3</sup> Փափազյան Վ. Իմ յուշերը, հու. Բ, էջ 226:

Պ. Նուրարին՝ «համակերպվելու Պատրիարքարանի ծրագրին և գործունեությանը»<sup>1</sup>:

1913 թ. մարտի վերջերին ոռոսական կառավարությունը ցանկություն է հայտնում ծանոթանալ արևմտահայոթյան բաղդանքների հետ: Այդ նկատառումներով ապրիլի սկզբներին պատրիարք Հ. Արշարունին ոռոսական դեսպան Մ. Գիրսին պաշտոնավես հանձնվում է Պատրիարքարանի կազմած բարենորոգումների ծրագիրը: Ծանոթանալով դրան՝ Մ.Գիրսը փոփոխություններ է կատարում որոշ կետերում, որոնք, ըստ նրա, «հակառակ էին սուլթանի իրավունքներին և ենթադրում էին անջատական ճգումներ»<sup>2</sup>: Այսպես, նահանգապետը, որը կարող էր լինել ոչ միայն օտարերկրացի, այլ նաև թուրքահայատակ քրիստոնյա, պետք է նշանակվեր սուլթանի կողմից՝ տերությունների հավանությամբ, չափազանց համարվեց օրենքներ պատրաստելու և գործադրելու նահանգապետի իրավունքը, վերահսկողությունը բարենորոգումների գործադրության վրա պետք է իրականացվեր ոչ թե մեկ, այլ բոլոր տերությունների կողմից: «Պետք է նշել, որ Մ. Գիրսի կատարած վերոհիշյալ փոփոխությունները դրականորեն ազդեցին և նպաստեցին Պ. Նուրարի և Ազգային Պատրիարքարանի միջև տարածայնությունների հարթմանն ու համաձայնության հաստատմանը: Այդ նոր ծևակերպումները հավասարապես ընդունվեցին ինչպես արևմտահայ դեկավար շրջանների, այնպես էլ Պ. Նուրարի կողմից, որի շնորհիվ հնարավոր դարձավ «Երկուստեր կատարյալ համաձայնությամբ և համեմաշխությամբ խմբագրել և ընդունել վերջնական ծրագիր»<sup>3</sup>: Նման պայմաններում միակ բանը, որ պահանջում էր Պ. Նուրարը, այն էր, որպեսզի արևմտահայոթյան պահանջների համար որպես իմրե համարվի իր կազմած ծրագիրը և վերոհիշյալ սրբագրություններն ու փոփոխությունները կատարվեն դրա վրա: Նա դեռևս հույս ուներ, որ Հայկական հարցի շուրջ տերությունների միջև բանակցությունները կայանալու են Եվրոպայում և արևմտահայոթյան բաղդանքները ներկայացվելու են Ազգային Պատվիրակության կողմից: Սակայն այդ

պահանջը չի բավարարվում: Այսպիսով, վերջնականապես հարթվում են Պ. Նուրարի և արևմտահայ դեկավար շրջանների միջև բարենորոգումների ծրագրի մի շարք էական կետերի շուրջ ծագած հակասությունները: «Այժմ,- Ա. Չոպանյանին հղած 1913 թ. մայիսի 14-ի նամակում գրում էր Վ. Փափազյանը,- մեր մէջ ոչ մեկ անհամածայնութիւն կայ»<sup>1</sup>: Դա շատ կարևոր իրողություն էր, քանի որ հակառակ դեպքում մեծապես կարող էր վտանգվել Հայկական հարցի լուծումը: Իրա պատճառ կարող էր հանդիսանալ ոչ այնքան ծրագրային տարրերությունները, որքան որ վերջիններիս հետևանքով կողմների միջև առաջացած ցանկությունը՝ խափանել միմյանց կատարած ծեռնարկները: Պատրիարքարանի կողմից, համենայն դեպքում, նման փորձ եղել էր: Այդ էր վկայում, թերևս, կաթողիկոսին հղած պատրիարքի 1913 թ. հունիսի 14-ի նամակը, որ նա գրում էր. «Այժմ մենք ոչ միայն չենք աշխատում չեզորոցներ Պատվիրակության դերը, այլ, խորապես գիտակցելով նրա նշանակությունը, ամեն կերպ ջանում ենք ամրապնդել և արդյունավետ դարձնել նրա պաշտոնը»<sup>2</sup>: «Պետք է նշել, որ ազգային երկու կենտրոնների միջև ծագած տարածայնությունների փաստը հնարավորին չափ գաղտնի պահվեց և բոլոր չափակի պահպանությունների մասնակի իշխանությունների, այլ նաև տերությունների կողմից և օգտագործվել արևմտահայոթյան դեմ: 1914 թ. մարտին, երբ բարենորոգումների վերաբերյալ բանակցություններն արդեն ավարտվել էին և կճրվել էր համաձայնագիր, լրագրողներից մելիք հարցին, թե Ազգային Պատրիարքարանի հետ նրա հարաբերություններն արդյոք միշտ գոհացուցիչ են եղել Պ. Նուրարը, լրելով տարածայնությունների մասին, պատասխանել էր. «Այս, եւ ինքզիմը բարեբաղ կը համարին որ ամեն կերպով Պատրիարքարանին անձնուեր աջակցութիւնը վայելեցի ինձի վստահուած առաքելութեան մէջ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, Կարողիկոսական դիվան, թղթ. 238, փակ. 168, թ. 2:

<sup>2</sup> Միքայելյան Ն., նշվ. աշխ., «Եջմիածին», Եջմիածին, 1965, N Բ-Գ-Դ, էջ 164:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 31, թ. 94:

<sup>1</sup> ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի Փ., գ. 7456, թ. 2:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 35, թ. 47:

<sup>3</sup> «Արշակունյակ», Նիւ Եռոք, 1914, N17; «Յուսարել», Կահիրե, 1914, N 210:

Ազգային Պատրիարքարանի ներկայացուցի այցը Փարիզ և Պ. Նուբարի հետ ունեցած հանդիպումներն ու վարած բանակցությունները կարևոր նշանակություն ունեցան ոչ միայն բարենորոգումների ծրագրի շուրջ երկուստեր համաձայնության հասնելու տեսանկյունից, այլև մեծապես նպաստեցին ազգային երկու կենտրոնների միջև հաստատված կապերի ամրապնդմանը, նրանց հետապնդած խնդրի լուծմանն ուղղված միասնական գարծունեության մշակմանն ու դրան հետևելուն: Այդ հանդիպումների ընթացքում կողմները միմյանց ծանոթացրեցին նաև Հայկական հարցի պաշտպանության ուղղությամբ իրենց կատարած ձեռնարկներին: Այդ իմաստով Պ. Նուբարին հասկապես անհրաժեշտ էր տեղեկություններ ստանալ արևմտահայության ընդհանուր կացության, պահանջների, դրանց նկատմամբ բուրքական իշխանությունների ունեցած վերաբերմունքի մասին տեղեկություններ: «Պօլոս Նուպարը, - իր հուշերում գրում էր Վ. Փափազյանը, - մանկական հետաքրքրութեամբ և խիստ ուշադիր ու յարգանքով մը կը լսէր Երկրէն եկած, հայ ժողովրդի ծայնն ու բաղդամբներն իրեն քերող բաների մը»<sup>1</sup>: Վ. Փափազյանին էլ իր հերթին հետաքրքիր էր Պ. Նուբարից իմանալ Հայկական հարցի նկատմամբ եվրոպական դեկապար շրջաններում տիրող վերաբերմունքի և արևմտահայերի բարենորոգչական պահանջները՝ նրանց կողմից պաշտպանություն գտնելու հնարավորությունների մասին:

Բարենորոգումների ծրագրի մշակման և այն Պատրիարքարանի հետ համաձայնեցման աշխատանքներին զուգահեռ Պ. Նուբարն ակտիվ քայլեր էր ձեռնարկում նաև իր՝ որպես կաքողիկոսի պատվիրակի, առաքելության կատարման ուղրությամբ: Տեղեկանալով ուսական կառավարության դիրքորոշմանը, ինչպես նաև ծանոթանալով մյուս տերությունների վերաբերմունքին, նա զայս է այն համոզման, որ մինչև բալկանյան խնդիրների կարգավորումը, Հայկական հարցը չի կարող դառնալ քննարկման առարկա: Այդ նկատառումներով Պ. Նու-

բարն արդյունավետ է համարում իր ջանքերը իմբնականում նպատակամունք եվրոպական դեկապար շրջանների և հասարակական կարծիքի վերաբերմունքը բարենորոգումների խնդրի հանդեպ միշտ արթոն պահելուն և դրա մոտակա քննարկումը նախապատրաստելուն: Այդ իմաստով նրա ծավալած գործունեությունը բնորոշվում է տերությունների կառավարական շրջանների հետ ունեցած անմիջական հանդիպումներով, եվրոպական ազդեցիկ քերքերում տպագրած հոդվածներով, Հայկական հարցին նվիրված կոնֆերանսներում ունեցած ելույթներով, ինչպես նաև դիվանագիտական աշխարհին հղած բարենորոգումների եռոյթում, նշանակությունը և կարևորությունը պարզաբանող հուշագրերով: «Փաշան, - գրում էր «Եզիպտահայ տարեցոյցը», - միքինկներու կը մասնակցի, զօնֆերանսներու մէջ խօսք կ'առնէ, հանրային խղճմտանքին հետ դէմ յանդիման կուզայ, ամրօխներու լուստեան մէջ իր ցեղին իրաւապահանց կոչը կը հնչեցնէ»<sup>1</sup>:

Պետք է նշել, որ այդ ժամանակաշրջանում արևմտահայերի պահանջների նկատմամբ տերությունների բռնած դիրքն այդքան էլ բարենապատ չէր: Դա պայմանավորված էր դեռևս չկարգավորված բարկանյան խնդիրներով, որոնց լուծմանը տրվում էր առաջնայնությունը և, որ ամենակարևորն էր, Օսմանյան կայսրության հնարավոր փլուզման մտավախությամբ:

Պ. Նուբարի՝ եվրոպական դեկապար շրջաններին ուղած դիմումների անկյունաքարը կազմեց արևմտահայության պահանջների շափակորթյան և օրինականության ցույց տալն ու բարենորոգումների իրագործման և տերությունների շահերի միջև գոյություն ունեցող կապի բացահայտումը՝ որպես Օսմանյան կայսրության արևելյան տիրույթների տարածքային ամրողականության պահպանման միակ միջոցի: Պ. Նուբարը համոզված էր, որ միայն այդ ճանապարհով հնարավոր կիմներ Հայկական հարցի լուծման խնդրում շահել տերությունների աջակցությունը: Ակզբանական շրջանում Պ. Նուբարն իր գործու-

<sup>1</sup> «Եզիպտահայ տարեցոյցը», Կահիրե, 1914, էջ 41:

Ներքյունը կենտրոնացնում է միայն Փարիզում: «Դեռ պատշաճ չենք համարում այցելել մայրաքաղաքաները», - կարողիկոսին հղած 1913 թ. մարտի 12-ի նամակում գրում էր նա<sup>1</sup>: 1913 թ. Փուլքարի վերջերին Պ. Նուրարը հանդիպում է Ֆրանսիայի արտգործնախարար Ժոննարի հետ և մանրամասնորեն ներկայացնում արևմտահայության պահանջները՝ միաժամանակ մատնանշելով այն բոլոր բարդությունները, որոնք կարող էին առաջանալ դրանց մերժման դեպքում: Համոզվելով այդ խնդրի կարևորության մեջ Ժոննարը՝ Ֆրանսիայի ուսական դեսպան Իզվոլսկու հետ ունեցած գրույցի ընթացքում այդ կապակցությամբ ընդգծում էր, որ «հայկական բարենորդությունների հարցն արժանի է ամենալուրջ ուշադրության»<sup>2</sup>: Այսուհետև Պ. Նուրարի այցերը Ֆրանսիայի արտգործնախարարություն և հանդիպումները բարձրաստիճան պաշտոնյաների հետ սկսում են կրել պարբերական բնույթ, որի նպատակն էր մշտապես տեղյակ լինել Հայկական հարցում ֆրանսիական կառավարության ունեցած դիրքորոշմանը: Պ. Նուրարն անհրաժեշտ էր համարում հանդիպել նաև Ֆրանսիայի դաշնակից երկրներում հավատարմագրված դեսպանների հետ՝ պարզելու նրանց վերաբերմունքն արևմտահայերի պահանջների նկատմամբ: Այսպես, 1913 թ. ապրիլի կեսերին նա հանդիպում է արձակուրդով Փարիզում գտնվող Ռուսաստանի ֆրանսիական դեսպան՝ Դեկլասեին, իսկ Լոնդոն կատարած այցի ժամանակ՝ տեղի դեսպան Պոլ Գամպոնին: Զերք բերված արդյունքների մասին Պ. Նուրարը գոլունակությամբ նշում էր, որ «քեզ Գամպոն և թե Դեկլասե տրամադիր և հաստատուն տեսա մեզ պաշտպանելու խնդրում»<sup>3</sup>: Ֆրանսիական դեկանար շրջանների հետ ունեցած հանդիպումներից Պ. Նուրարը գալիս է այն եզրակացության, որ այսուղեղ համակրանքով են վերաբերում արևմտահայության պահանջներին և կպաշտպանեն նրա կացության բարելավմանն ուղղված

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 19, թ. 40:

<sup>2</sup> Պեֆորմս Յարմենի, ստ. 25.

<sup>3</sup> Մ.Մաշտոնի անվ. Մատենադարան, Գյուտ Եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, թիվ. 3, փակ. 105:

Ռուսաստանի ծեռնարկները: «Երբ Ռուսաստանը նախաձեռնարկ լինի, - կարողիկոսին հղած 1913 թ. մարտի 12-ի նամակում գրում էր նա, Ֆրանսիայի կողմից կասկածելու բան չունեմ»<sup>4</sup>:

Պ. Նուրարը ջանքեր է գործադրում նաև բարենորդությունների իրականացման օգտին դարձնել նաև անզիական կառավարող շրջանների վերաբերմունքը: Այդ առումով հատկանշական են 1913 թ. ապրիլ ամսին նրա կատարած պարբերական այցերը Լոնդոն ու հանդիպումներն արտգործնախարարի տեղակալ Ա. Նիքոլսոնի և այլ պաշտոնատար անձանց հետ: Մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների միջնորդությամբ Պ. Նուրարին հաջողվում է տեսնել նաև Վնգիայի բազավոր Գևորգ 5-րդին և զրուցել Հայկական հարցի շորջ<sup>5</sup>: Սակայն Լոնդոնում վարած բանակցությունների արդյունքներն այդքան էլ քաջալերական չեն, քանի որ անզիական իշխանությունները վերապահումով էին մոտենում Հայկական հարցի արձարծնանն ու նպատակահարմար համարում բարենորդությունների խնդրի լուծումը թողնել բուրքական կառավարությանը: Դրանով էր բացատրվում նաև այն փաստը, որ արտգործնախարար Է. Գրեյը խոսափում և մշտապես հետաձգում էր տեսակցություն շնորհել Պ. Նուրարին<sup>6</sup>:

Ֆրանսիական և անզիական կառավարական շրջանների հետ վարած բանակցությունների ընթացքում Պ. Նուրարն անդրադառնում է նաև բարենորդությունների հարցի բնարկումները կազմակերպելու վայրի ընտրության խնդրին: Նրա համոզմամբ ամենահարմարը Լոնդոնն էր Լոնդոնությունների ներկայացուցիչների կոնֆերանսում/ կամ Փարիզը /Միջազգային ֆինանսական հանձնաժողովովում/: Այդ դեպքում Պ. Նուրարը հնարավորություն կունենար անմիջականորեն հետևել բնարկումների ընթացքին, ինչպես նաև տերությունների դեկանար շրջաննե-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 19, թ. 40:

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1913, Ն 103; «Ասպարեզ», Ֆրեզն, 1913, Ն 253:

<sup>3</sup> Տես, Bibliothèque d'Armenologie Nubar de l'UGAB, Paris, Archives de la Delegation Nationale Armenienne 1913-1923 /այսուհետև՝ ADNA/, Liasse 1/1, Correspondance juin-novembre 1913, թ. 686; Մ.Մաշտոնի անվ. Մատենադարան, Գյուտ Եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, թիվ. 3, փակ. 104:

ի հետ բանակցությունների, Եվրոպայում ունեցած լայն ծանրությունների ու կապերի շնորհիվ որոշակի ազդեցություն գործել խնդրի բարենպաստ լուծմանը նպաստելու առումով: Պեսոր է նշել, որ վերոհիշյալ հարցը քննարկման առարկա էր դարձել նաև Անտանտի երկրոների կառավարությունների միջև: Բանակցությունները Լոնդոնում անցկացման տարրերակին կողմնակից էր Անգլիայի արտգործնախառար Է.Գրեյը<sup>1</sup>: Ինչ վերաբերում է բարենրոգումների խնդրի քննարկումը Փարիզի միջազգային հանձնաժողովին հանձնարարելուն, ապա դրան դեմ էր ֆրանսիական կառավարությունը, որը չէր ցանկանում դա կապել Թուրքիայի ֆինանսական հարցերի հետ: Իզվոլսկու հետ հանդիպման ժամանակ Ֆրանսիայի արտգործնախառար Պիշոնը նման հնարավորությունը համարել էր «քոլորովին անիրազրժեկի»<sup>2</sup>: Ի վերջո այդ խնդիրը լուծվում է ըստ ոռական կողմի ցանկության, որը քննարկումների ամենահարմար վայրը համարում էր Կ.Պոլիսը, ուր «գեսապանները, - ինչպես նշում էր Ս.Սագոնովը, - ավելի լավ են տեղեկացված, և, կապի մեջ լինելով Բ.Դուն ու հայերի հետ, լավագույնս կարող են կատարել իրենց վրա դրված առաջարկանքը»<sup>3</sup>: Խնդրի նման լուծմամբ այդքան էլ գոհ չի մնում Պ.Նուրարը, որն Իզվոլսկու հետ ունեցած համփաման ժամանակ իր ափսոսանքն է հայտնում այդ կապակցությամբ<sup>4</sup>:

Ֆրանսիայի և Անգլիայի դեկավար շրջանների հետ վարած բանակցությունների ընթացքում Պ.Նուրարը փորձեր է ձեռնարկում վերջիններիս համոզելու՝ բարենրոգումների քննարկման խնդրում նախաձեռնությունը վերցնել իրենց ծեռքը<sup>5</sup>, թեև պարտավորվել էր իր դիմումներում այդ իրավունքը վերապահել Ռուսաստանին: Սակայն

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթրելում /1828-1923/, էջ 189:

<sup>2</sup> АВПР, ф. Политархив, գ. 1913, ձ. 3460, լ. 123.

<sup>3</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթրելում, էջ 189:

<sup>4</sup> АВПР, ф. Политархив, գ. 1913, ձ. 3462, լ. 26.

<sup>5</sup> Stein, Dr. Johannes-Lepsius-Archiv an der Martin-Luther Universität Halle-Wittenberg /այսուհետև՝ LAH/, 1719, S. 2.

նման առաջարկը մի շարք դրդապատճառներով չէր կարող ընդունվել ոչ ֆրանսիական, ոչ էլ անգլիական կառավարությունների կողմից: Առաջին հերթին դա պայմանավորված էր իրենց դաշնակից Ռուսաստանի կասկածները չհարցուելու մտահոգությամբ: Եվ Փարիզում և Լոնդոնում լավ գիտեին, թե ոռուսական կառավարությունը որքան անբարյացակամությամբ է վերաբերում որևէ պետության կողմից Արևմտյան Հայաստանի նկատմամբ կատարած յուրաքանչյուր ձեռնարկին: Բացի այդ Անգլիան և Ֆրանսիան ցանկանում էին խուսափել բուրքական իշխանությունների դժգոհությունից, որն անխուսափելիութեան կառաջանար նրանց կողմից նման քայլի ձեռնարկման դեպքում: «Ոչ մի այլ տերություն, բացի Ռուսաստանից, - իր հուշերում այդ մասին գրում էր Ս.Սագոնովը, - չէր ցանկանա վտանգի ենթարկել Թուրքիայի հետ իր լավ հարաբերությունները՝ բարձրացնելով Բ. Դունի համար տհաճ հայկական բարենրոգումների իրականացման հարցը»<sup>1</sup>: Հենց այդ նկատառումներով էլ բարենրոգումների խնդրի քննարկման նախաձեռնությունից հրաժարվում է նաև գերմանական կառավարությունը: Կ. Պոլիսի գերմանական դեսպան Վանգենիհայմն արտգործնախառար Յագովին հղած նամակում գրում էր, որ պեսոր է խուսափել հարցի հարուցումից, քանի որ Գերմանիան, Թուրքիայում ունենալով բազմակողմանի շահեր, ստիպված է հույս դնել նրա բարեհաճության վրա<sup>2</sup>:

Եվրոպական երկրներում հայանպաստ քարոզություն ծավալելու խնդրում Պ.Նուրարը կարևոր տեղ էր հատկացնում Հայկական հարցին նվիրված կոնֆերանսներում բանախոսություններով հանդիս գալուն ու արևմտահայության օրինական պահանջները պաշտպանելուն: «Դրրեւ Հայ, - ասում էր նա, - պարտականությին ունեմ բացատրութիւններ տալու, ամեն անգամ որ առիթը կը ներկայանայ, մեր բարենրոգումներու վրայ»<sup>3</sup>: Այսպես, 1913 թ. ապրիլի 15-ին անգլիական խոր-

<sup>1</sup> Сазонов С., Воспоминания, Москва, 1991, стр. 169.

<sup>2</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, стр 53.

<sup>3</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 61:

իբրյարանի շենքում հրավիրված նման մի հանդիպմանը, որին ներկա էին նաև պատգամավորներ, իր երույթում Պ. Նուրարը կարևորում է արևմտահայության բարենորոգչական պահանջները: «Բաշան,-Ա. Չոպանյանին հղած նամակում գրում էր հանդիպմանը մասնակցած Հ. Մոստիչյանը, -շատ լավ խոսեցավ և հիմնավի տպագրություն ըրավ ամենուն վրա»<sup>1</sup>: 1913 թ. հունիսի 3-ին Պ. Նուրարն ելույթ է ունենում Փարիզի Առևտրական-Աշխարհագրական Ընկերությունում, իսկ հունիսի 14-ին՝ Ֆրանսիական Ասիայի կոմիտեի կողմից կազմակերպված հայասիրական կոնֆերանսներում, ուր ևս անդրադառնում է Հայկական հարցի լուծման անհրաժեշտությանն ու անհետաձգելիությանը:

Տերությունների դեկավար շրջանների մոտ կատարած անհատական դիմումներից և կարդացած բանախոսություններից բացի, Պ. Նուրարը հայկական բարենորոգումների եռթյան և կարևորության վերաբերյալ պարզաբանումներով ու իր տեսակետներով հանդիս է զայխ նաև մամուլում: «Պօղոս փաշա, - գրում էր Ե. Օսյանը, - չի բաւականացած գործելով ու խօսելով ի նպաստ հայկական բարենորոգումներուն, այլ հարկը պահանջած ատեն գրիչ ալ շարժած է»<sup>2</sup>: Նա քաջ գիտակցում էր, որ հետապնդած խնդրի նպաստավոր լուծումը մեծապես կախված է նաև դրա նկատմամբ եվրոպական հասարակական կարծիքի վերաբերմունքից: Իսկ հասարակական կարծիքի ձևավորման գործում կարևոր տեղ է գրադենում ճամուղը: Ազգային Պատրիարքարանի պատվիրակների հետ հանդիպման ժամանակ Մ. Գիրար, օգտակար համարելով այդ ուղղությամբ կատարված ճեղնարկները, ընդում էր, որ «այսպիսի պարագաներու մեջ ժողովրդի համակրանքը և հանրային կարծիքը մեծ դեր կիսադան»<sup>3</sup>: Այլ նկատառումներով էլ Պ. Նուրարը պարբերաբար Հայկական հարցի վերաբերյալ հոդվածներ է հղում ֆրանսիական «Թան», անգլիական «Թայմ» կիսապաշտոնաթերթներին, ինչպես նաև ֆրանսիական «Լ'Հոմ Լիրո» թերթին: Նման

<sup>1</sup> ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., գ. 4762, թ. 2:

<sup>2</sup> Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 74:

<sup>3</sup> Միքայելյան Ն., նշվ. աշխ., «Եջմիածին», Եջմիածին, 1965, Ն Բ-Գ-Դ, էջ 166:

ազիցիկ թերթերում տպագրված հոդվածները բնականաբար ավելի մեծ կշիռ էին ծեռոք թերում: ««Թան»-ի և «Թայմ»-ի պես կարևոր թերթերում հայասեր մի հոդվածն ահազին նշանակություն ունի և ավելի մեծ ազիցություն կործի, քան հարյուրավոր հոդվածները ուրիշ թերթերում», - գրում էր Հ. Առաքելյանը<sup>1</sup>: Հոդվածներից բացի մամուլում տպագրվում էին նաև Հայկական հարցի վերաբերյալ լրագրողներին տված Պ. Նուրարի հարցագրույցները: Արևմտահայության պահանջների եռթյունը պարզաբանելու հետ մեկտեղ, գործի հաջողության համար Պ. Նուրարը, խստագույնս հետևելով գաղտնապահության նախն կարողիկոսի արված կարգադրություններին, մամուլի էջերից ոչ մի տեղեկություն չէր տալիս դրանց բավարարմանը հասնելու ուղղությամբ իր ծեռնարկած քայլերի, վարած բանակցությունների և ստացած արդյունքների վերաբերյալ: «Պատգամավորություննը, - այդ մասին գրում էր «Ժամանակ» թերթը, - շատ ժլատ է իր գործունեության վրա տեղեկություններ տալու մասին և ասոր համար, անշուշտ, դատապարտելի չէ, քանի որ իր պաշտոնին բնույթն այդ կապահանջե»<sup>2</sup>:

Եվրոպական երկրներում իր ծավալած առաջնային դիմացքում Պ. Նուրարի գլխավորած Ազգային Պատվիրակությունը վայելում էր առանձին անհատների և կազմակերպությունների աջակցությունը, որոնք իրենց ծավալած գործունեությամբ նպաստում էին հետապնդող խնդրի դրական լուծմանը: Առաջին հերթին պետք է նշել պատվիրակության հավանությամբ կազմված Փարիզի հայկական մասնախումբը /նախագահ Ա. Չոպանյան/, որի հիմնական նպատակն էր «ըրագիրներում հոդվածներ հրատարակել տալը, հայոց պատմության, գրականության, հայ ժողովրդի արողի կացության և հայկական դասի մասին բանախոսություններ և միթինգներ սարքելը և այլ նմանօրինակ ձեռնարկներով Փարիզում հայանպատ պրոպագանդային մղում տալը»<sup>3</sup>: Ինչ վերաբերում է եվրոպական մյուս մայրաքաղաքներին, ապա այս-

<sup>1</sup> «Մշակ», Թիֆլիս, 1912, N 288:

<sup>2</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, N 1469:

<sup>3</sup> ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., գ. 690, IV թ., թ. 5:

տեղ Պ. Նուրարի հետ համաձայնեցված նման աշխատանք էին տանում հայազգի՝ առանձին ծեռնիաս գործիչները՝ Կ. Թումայանն ու Ս. Գարբիելյանը՝ Լոնդոնում, Մխիթարյան միաբանության արքահայր Մեմիշյանը՝ Վիեննայում, Հայր Նորիխսանը՝ Հռոմում և ուրիշները: Բացի այդ, վերջիններս օժանդակում էին Պ. Նուրարին՝ նրա այդ երկրներ կատարած այցելությունների ժամանակ:

Պ. Նուրարը վայելում էր նաև Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների գործոն աջակցությունը: Այդ իրողությունը կարևորվում էր հատկապես այն նկատառումով, որ հետապնդվող խնդրի լուծման վերաբերյալ նրանց ունեցած տեսակետները, մեղմ ասած, չին համընկնում: «Տարակարծությունը, - գրում էր դաշնակցական օրգան «Դրոշակ» թերթը, - մեծ է նրա և մեր հայացքների միջև»<sup>1</sup>: Սակայն գաղափարական տարածայնություններն արգելք չհանդիսացան համագործակցության համար՝ ի նպաստ Հայկական հարցի լուծման: Դա առաջին հերթին պայմանավորված էր գործի հաջողության համար միասնական և համախմբված հանդես գալու անհրաժեշտությամբ: Բացի այդ պակաս կարևորություն չունեին նաև Պ. Նուրարի ունեցած անձնական հատկանիշները, որոնք ևս նպաստեցին համագործակցությանը: «Չատ կետերում կարելի է լինել անհամաձայն, նույնիսկ հակոտնյա Պ. Նուրարի հետ, - գրում էր Ս. Վարանյանը, - բայց նրա բարձր արժանիքները՝ պաշտպանած խնդրի բոլոր կնճիրներին քաջածանորությունը, իր լայն ու զնահատելի կապերի օգտագործման կարողությունը և ամենաշերմ հայրենասիրությունը, պարտավոր է ընդունել յուրաքանչյուր շիտակ անհատ»<sup>2</sup>:

Պ. Նուրարի ծեռնարկներին մեծապես օժանդակում էին Փարիզում հաստատված դաշնակցական հայտնի գործիչներ Ս. Վարանյ-

յանն ու Ա. Ահարոնյանը<sup>3</sup>: Այդ մասին հետազայում՝ 1916 թ. փետրվարի 5-ին Ս.Վարանյանին հղած նամակում Պ. Նուրարը գրում էր. «Պահել եմ ամենալավ հիշողություններ մեր հարաբերություններից իիշելով այն շիտակ և ազդու աջակցությունը՝ որ դրա ցույց տվեցիք ինձ բարենորոգումների բանակցությունների ժամանակ»<sup>4</sup>: Սակայն դրա հետ մեկտեղ Պ. Նուրարը, հաշվի առնելով Հ.Յ.Դաշնակցության կուսակցության գործունեության նկատմամբ ուստական իշխանությունների ունեցած բացասական վերաբերմունքը, վնասակար և անբոլղատրելի էր համարում այդ կուսակցության որևէ ներկայացուցչի անդամակցությունն իր զիսավորած պատվիրակությանը /մամուլում կեղծ լուրեր էին տարածվել, թե իրը դաշնակցականներ Ա.Ահարոնյանն ու Սահակ Եպիսկոպոս Այվատյանը նշանակվել են պատվիրակության անդամներ/, գտնելով, որ դա կնշանակի «ուղղակի ցույց անել ուստական կառավարության դեմ, որի բարյացակամ վերաբերմունքից է կախված Հայկական հարցի լուծումը»<sup>5</sup>:

Ազգային Պատվիրակության ջանքերին մեծապես նպաստում էին նաև եվրոպացի հայասեր գործիչների ծեռնարկները, որոնք ուղղված էին իրենց երկրների կառավարական շրջանների և հասարակական կարծիքի վերաբերմունքը բարենորոգումների իրականացման խնդրում նպաստավոր դարձնելուն: Այդ խմասով հիշատակության արժանի են ֆրանսիացիներ Վ. Բերարը, Ֆ. Պրեսանսեն, Դ. Ռոշենը, Ռ. Փիմոնը, անգլիացիներ Ա. Բրայը, Ն. Բարստոնը, Օ'Կոննորը, գերմանացի Յ. Լեխիսուսը, շվեյցարացի Լ. Ֆալքը և ուրիշները: Պ. Նուրարի կատարած ծեռնարկներին անհատապես աջակցում էր Վիկտոր Բերարը, որը, ինչպես գրում էր Ս. Վարանյանը, «ճիզ ու ժամանակ չեր խնդրում սպառագինելու կարողիկոսական Պատվիրակությանը՝ նրա բարոզչական դժվարին աշխատանքի մեջ»<sup>6</sup>:

<sup>1</sup> տես, Ալարօն Ե., Կեանըիս յիշատակները, Ժրնե, 1931, էջ 202; Վահան Մալէզեանի կեանը ու գործը. Ցուցանատեամ իր ուրսումանեակին առքի. /1871-1951/, Փարիզ, 1951, էջ 176; ՀՀ ԳԱԹ, Հ.Սարկիսյանի ֆ., գ. 2095, թ. 15:

<sup>2</sup> Ամանոն Դ., նշվ. աշխ., էջ 528:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, թ. 20, թ. 14:

<sup>4</sup> Վարանյան Ս., նշվ. աշխ., էջ 60:

<sup>1</sup> «Դրոշակ», Ժնև, 1914, Ն 1:

<sup>2</sup> «Յոսաբեր», Կահիրե, 1913, Ն 121:

Հայկական հարցի վերաբացման համար ստեղծված բարենպաստ պայմանները խթանել էին Եվրոպայում հայասիրական շարժման ակտիվացմանը: Տարբեր երկրներում ստեղծվել կամ իրենց գործունեությունն էին վերսկսել կոմիտեներ, որոնք կոչված էին հայանպատ բարոզություն ծավալելու և ինչ-որ տեղ նաև աջակցելու Ազգային Պատվիրակության առաջելությանը: Արևմտահայության պահանջների պաշտպանությամբ հանդես եկող այդ ոժերի միջև գործունեության միասնական և փոխահամաձայնեցված ուղղություն ուրվագծելու առումով, որը շատ անհրաժեշտ էր խնդրի բարեհաջող լուծմանը հասնելու համար, կարևոր դեր խաղաց Լոնդոնում անզիական կոմիտեի նախաձեռնությամբ գումարված հայասիրական կոնֆերանսը: Կոմիտեի բարտուղար Ա. Սայմոնյանը 1913 թ. ապրիլի կեսերին դիմել էր մյուս երկրների կոմիտեներին առաջարկել պատգամավորներ՝ կոնֆերանսին մասնակցելու համար: Պետք է նշել, որ Պ. Նորբարը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանում դեռևս չեր ստեղծվել նման կոմիտե և կարևորելով կոնֆերանսում ուսական պատվիրակի ներկայությունը, որոշ ջանքեր էր գործադրել այդ ուղղությամբ: 1913 թ. ապրիլի 24-ին նա Փարիզում հանդիպել էր ուս հրապարակախոս, գիտնական, «Վեստիկ Եվրոպի» ամսագրի խմբագիր Մարսիս Կովալսկուն և խնդրել մասնակցել հավաքույթին: Սակայն վերջինս չկարողանալով մեկնել Լոնդոն՝ մի գործություն է իրում կոնֆերանսի նախագահին, որ հույս էր հայտնում, որ Հայկական հարցին շուտափույթ լուծում կտրվի<sup>1</sup>:

Հավաքույթը տեղի է ունենում անզիական խորհրդարանի նիստերի դահիճներից մեկում 1913 թ. ապրիլի 25-ին: Դրան մասնակցում էին Ա. Վիլյամսը, Ա. Սայմոնյանը, Հ. Շաբենդերը, Է. Բոյլը, պատգամավորներ Ա. Բրայսը, Ն. Բարսոտոնը, Օ'Կոնոնը /անզիական կոմիտե/, Լ. Ֆավորը, Ա. Հոֆմանը /շվեյցարական կոմիտե/, Ո. դը Քեն /ֆրանսիական կոմիտե/, Յ. Լեփսիուս /գերմանական կոմիտե/, Լոնդոնի և Սանչեստրի հայկական գաղութի ներկայացուցիչներ Կ. Թումայանը, Հ. Ասլանյանը, Մ. Մանուկյանը, Դ. Խալիկյանը, ինչպես նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նորբարն ու նրա գործընկեր Հ.

<sup>1</sup>ՀՀ ԳԱԹ, Ա. Զոպանյանի ֆ., գ. 4763, թ. 3:

Առաջիշյանը: Կոնֆերանսի նախագահ Ա. Վիլյամսը հավաքույթի նպատակները ներկայացնելուց հետո, խորը տավիս է Պ. Նորբարին: «Երջինս իր ելույթում նախ անդրադառնում է Հայկական հարցի պատվիրակության ու ներկա իրավիճակին: «Պ. Նորբարը, - Ա. Զոպանյանին հղած նամակում գրում էր Հ. Մոստիշյանը, - իհանալի կերպով պարզեց մեր խնդիրը»<sup>2</sup>: Այնուհետև նա ներկաներին ծանոթացնում է պատվիրակության կազմած հայկական բարենրոգումների ծրագրի նախագծին /Ազգային Պատվիրաբարանի հետ համաձայնեցված տարրերակը/, որն արժանանում է հավանության: Հետագա մտքերի փոխանակումից հետո կոնֆերանսը միաձայն ընդունում է բանաձև, ըստ որի եվրոպական հայասիրական կոմիտեները պարտավորվում են ներկայացված ծրագրի կետերի շրջանակներում բարենրոգումների իրականացման պահանջներով դիմումներ հղել իրենց կառավարություններին<sup>3</sup>: Լոնդոնի հայասիրական կոնֆերանսը կարևոր նշանակություն ունեցավ, քանզի դրա շնորհիվ ամրապնդվեցին կապերն ինչպես եվրոպական կոմիտեների, այնպես էլ Ազգային Պատվիրակության միջն, ուրվագծեց գործունեության միասնական ուղղություն, որն էլ իր հերթին ուժ տվեց Պ. Նորբարի ձեռնարկներին:

Պետք է նշել, որ Ամենայն Հայոց կարողիկոսի կողմից վստահված առաքելության իրականացման ծանրությունը գրեթե ամրողությամբ ընկած էր Պ. Նորբարի վրա: «Եթե Ազգային Պատվիրակության մեջ հոգով, սրտով աշխատող մեկը կար, այն նախագահ Պողոս Փաշա Նուպարն էր», - իր հոշերում գրում էր Ե. Աղարքոնը<sup>3</sup>: Ազգային Պատվիրակությունը, որպես այդպիսին, ինչ-որ տեղ ձեռք էր բերել ձևական բնույթ, թեպես և Պ. Նորբարի բոլոր ձեռնարկները կատարվում էին նրա անունից: Այդ մասին էր վկայում թերևս այն փաստը, որ պատգամավորական շորորությունը հետո, որը տեղի էր ունեցել 1913 թ. մարտի 30-ին, մինչև 1914 թ. փետրվարի 11-ը, երբ բարենրոգումների խնդիրն արդեն ստացել էր իր լուծումը, նման հավաքույթներ չեն կազ-

<sup>1</sup>ՀՀ ԳԱԹ, Ա. Զոպանյանի ֆ., գ. 4763, թ. 3:

<sup>2</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, стр. 41-42; Nassibian A., Britain and the Armenian Question 1915-1923, New York, 1984, p. 51.

<sup>3</sup>Աղարք Ե., նշվ. աշխ., էջ 236:

նակերպիում: Այստեղ, անշուշտ, իր բացասական ազդեցությունն էր գործել ստեղծված պայմանների քերմամբ՝ Ազգային Պատվիրակության ստացած նախնական իրահանգների փոփոխության և Լոնդոնի խաղաղության կրնֆերանսին չներկայանալու փաստը: Բացի այդ թիվ դեր չեր խաղացել նաև պատվիրակության անդամների ցրվածությունը: Այսպես, Հ. Մոստիշյանն ու Գ. Ութուջյանը մեծամասամբ գտնվում էին Անգլիայում և Պ. Նորարին աջակցում էին զլսավորապես նրա՝ Լոնդոն կատարած այցերի ընթացքում: Պատվիրակության մյուս անդամ Յաղուր Արքին փաշան 1913 թ. ապրիլի վերջերին նոր էր միայն Եգիպտոսից ժամանել Փարիզ՝ իրեն վստահված առաքելությունը ստանձնելու համար հոկտեմբերին նորից են է վերադառնում: Ինչ վերաբերում է Փարիզում գտնվող Մ. Չերազին, ապա վերջինս գրեթե ոչ մի եական դեր չի ունենում և կարողիկուսին հղած 1913 թ. մայիսի 6-ի նամակում «անձնական տկարության» պատճառով հրաժարվում է պատվիրակությանն անդամակցելուց<sup>1</sup>: «Դրականում, - ինչպես ճիշտ նկատել էր Ասոմբը, - պատվիրակության մյուս անդամները մնացին անվանական և յուրաքանչյուրն իր սեփական գործի գլուխը»<sup>2</sup>: Հենց այդ պատճառով էլ հայասիրական տարրեր ուժերի ծավալած գործունեությունը կրկնակի կարևոր էր Պ. Նորարի համար:

Հաշվի առնելով Քաղաքացիան պատերազմի մոտակա ավարտն ու հաշտության պայմանագրի կնքումը՝ Պետերբուրգում նպատակահարմար են գտնում զբաղվել հայկական բարենրոդումների խնդրով: «Այժմ, - կարողիկուսին հղած 1913 թ. մայիսի 24-ի նամակում գրում էր Կովկասի փոխարք Վորոնցով-Դաշկովը, - Կայսերական կառավարությունը հնարավոր գտավ անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկել բուրքահպատակ հայերի կացության բարելավման համար»<sup>3</sup>: Հարցի բարձրացման նախաձեռնությունն իր ձեռքում պահելու համար ուսական կառավարությունը ձեռնամուխ է լինում կոնկրետ քայլերի: Առաջին հերթին կարևորվում էր արևմտահայության պահանջներին ծանրանալը: Այդ նկատառումով 1913 թ. ապրիլի սկզբներին Մ. Գիրսին է

հանձնվում Պատրիարքարանի կողմից կազմված բարենրոդումների ծրագիրը: Ծանոթանալով և որոշ փոփոխություններ կատարելով՝ դեսպանը գտնում էր, որ այն տերությունների քննարկմանը պետք է ներկայացվի ոչ թե որպես հայերի պահանջ, այլ իրեն ուսական նախագիծ: Սեփական նախազիծ ունենալու ավելի կամրապնդեր Ռուսաստանի՝ որպես Հայկական հարցի պաշտոնական հովանավորի, դերը: Ռուսի Մ.Գիրսի հանձնարարությամբ դեսպանատան առաջին բարգման, Հայկական հարցի գիտակ Անդրեյ Մանդելշտամի կողմից հայկական պահանջների հիմն վրա կազմվում է բարենրոդումների նոր նախագիծ: Ըստ որա հայկական 6 վիճակներից պետք է կազմվեր մեկ նահանգ՝ 5 տարի ժամկետով տերությունների համաձայնությամբ՝ սուլթանի կողմից նշանակված բուրքահպատակ քրիստոնյայի կամ եվրոպացի նահանգապետի զլսավորությամբ, որն իրավունք էր ունենալու նշանակել և ազատել վարչական բոլոր պաշտոնյաներին: Պետք է ստեղծվեին նահանգական ժողով, ուստիկանության և ժամանակաշրջայի մարմիններ՝ կազմված հավասար բվով քրիստոնյաներից և մահմեդականներից: Նոյն սկզբունքով ընտրվելու էին նաև նահանգի վարչական և դատարանների պաշտոնյաները: Համիլիե գնդերը պետք է արձակվեին: Ընտրելու իրավունքից օգտվելու էր միայն նատակյաց բնակչությունը: Բոլոր օրենքները, իրովարտակները, իրամանները, դատարանի վճիռները պետք է արձանագրվեին բուրքերն, հայերեն և քրդերեն: Նահանգում արգելվելու էր բնակեցնել մուհաջիրներին: Առանձին բարեփոխություններ պետք է կատարվեին կիլիկիահայության կացությունը բարելավելու համար: Վերոհիշյալ կետերի իրականացման վերահսկողությունը դրվելու էր մեծ տերությունների վրա<sup>1</sup>: 1913 թ. մայիսի 24-ին ուսական կառավարությունը դիմում է մյուս տերություններին առաջարկելով «Թուրքիայի հայկական վիճակներում անդրության հաստատման համար ձեռնարկել բարենրոդումների քննարկումներ»<sup>2</sup>: Այսպիսով Ռուսաստանը նախաձեռնությունը պաշտոնապես վերցնում է իր ձեռքը: Պետք է նշել, որ դրանից առաջ տեղի էր ունեցել մի միջադեպ, որը հարկադրել էր ուսական կողմին արազաց-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 57, թ. 7: Ակդյանցան Ա., Սիման Շերազ, էջ 347:

<sup>2</sup> Ասոմբ, Բարենրոդումներու հարցը, Կ. Պոլիս, 1914, էջ 89:

<sup>3</sup> ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Լեոյի ամենական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 206, թ. 8:

<sup>1</sup> Ծրագրի տերսան ամբողջությամբ տևո, Ռեформы в Армении, стр. 61-69.

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 41:

նել նման դիմումով հանդես գալը: 1913 թ. մայիսի 2-ին Անզիայում թուրքական դեսպան Թնֆիկ փաշան իր կառավարության հրահանգով դիմել էր անզիական իշխանություններին խնդրելով տեսուչներ՝ հայկական վիլայեթներում բարենորոգումների իրականացման համար<sup>1</sup>: Թուրքական այդ առաջարկի հիմնական նպատակն էր հակասություններ առաջացնել Ռուսաստանի և Անզիայի միջև: «Անտոլոի մէջ անզիացի մասնագէտներու գործակցութիւնը մեջտեղ նետելով,- գրում էր Հ.Փաստրմաջյանը,- բուրք դիւնագիտութիւնը ճարպիկ փորձ մը ըրավ պառակտելու Երեակ Համաձայնութեան պետութիւնները»<sup>2</sup>: Եվ իրոք, անզիական կառավարության դրական պատասխանն անկասկած կառաջացներ Ռուսաստանի խիստ դժգոհությունը, քանի որ վերջինս ոչ մի դեպքում չէր կարող բույլ տալ իր հետաքրքրությունների անմիջական դորսոր կազմող շրջանում մեկ այլ տերության ազդեցույան ուժեղացմանը: Բացի այդ, դրանով ծանր հարված կհասցրվեր արևմտահայության շրջաններում Ռուսաստանի ունեցած հեղինակությանը: Ուստի անմիջապես հետևում է ռուսական կողմի բողոքը, որը հասկացնել է տախս, որ չի կարող անտարբեր մնալ իր կայության սահմանամերձ շրջաններում բարենորոգումների իրականացման խնդրում<sup>3</sup>: Այդ նկատառումներով էլ անզիական կառավարությունը, չցանկանալով սրել հարաբերություններն իր դաշնակցի հետ, հայուառարում է, որ կիետաձգի տեսուչների ուղարկումը մինչև տերությունների կողմից բարենորոգումների խնդրի քննարկման ավարտը<sup>4</sup>: Թեպետ և միջադեպն ինչ-որ չափով հարթվեց, սակայն անհանգստություն պատճեց Ռուսաստանին, ստիպելով նրան բարենորոգումների խնդրում շուտափույթ հանդես գալ նախաձեռնությամբ՝ այն իր ձեռքից բաց շրողնելու համար: «Բարենորոգումների քննարկումներ կազմակերպելու վերաբերյալ Սազոնովի արված առաջարկությունը,- արտգործնախարար Պիշոնին հղած 1913 թ. մայիսի 23-ի նամակում գրում

<sup>1</sup>Կիրակոսյան Ա. Քրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999, էջ 407

<sup>2</sup>Պատրմանեան Հ., Հայոց պատմութիւն, Խո. Բ, Ամբիլիս, 1958, էջ 182:

<sup>3</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթուրերում, էջ 177-178:

<sup>4</sup>Davison R., The Armenian Crisis 1912-1914, "The American Historical Review", New York, 1948, N 3 , vol. LIII, p. 495.

էր Անզիայում ֆրանսիական դեսպանը,- պատճառ էր այն դյուրագացության, որ նրանում արքնացրել է Թևիկի փաշայի դիմումը Ֆորին Օֆիսին /Անզիայի արտգործնախարարություն-Հ.Բ./»<sup>1</sup>: 1913 թ. օգոստոսի սկզբներին Պ.Նուրարի հետ հանդիպման ժամանակ Գերմանիայի արտգործնախարարի տեղակալ Ա.Ցիմմերմանը ևս ուսական կառավարության վերցրած նախաձեռնությունը կապում էր վերջինիս ունեցած մտավախտությամբ, որ տեսուչների նշանակմամբ Անզիան Արևմտյան Հայաստանում ազդու մրցակցություն կցուցաբերեր Ռուսաստանին<sup>2</sup>:

Ա.Մանելշտամի կազմած բարենորոգումների ծրագիրը տերությունների քննարկմանը ներկայացնելուց առաջ ուսական կառավարությունը կարևոր էր համարում ձեռք բերել իր դաշնակիցների համաձայնությունն այդ կետերի վերաբերյալ: 1913 թ. հունիսի սկզբներին ծրագիրը քննության է առնվում Թուրքիայում ուսական, անզիական և ֆրանսիական դեսպանների միջև և ընդունվում է չնչին փոփոխություններով<sup>3</sup>:

Հայկական հարցում ուսական կառավարության նախաձեռնությամբ հանդես գալը մեծ ոգևորություն է առաջ բերում հայության շրջաններում, որոնք համբերատար սպասում էին նման քայլին: Այդ սպասումները, կարծես, արդարանում էին, ինչը՝ էլ ավելի էր ամրապնդում հավատը Ռուսաստանի հանդեպ: Լիսիուս էր նաև Պ.Նուրարը: 1913 թ. հունիսի 4-ին նա այցելում է Ֆրանսիայում ուսական դեսպան Իզվլուկուն և Ազգային Պատվիրակության անոնից նրան հանձնում շնորհակալական մի գրություն, ուր խնդրում էր «խորին երախտագիտության հարգալից հավաստիքը» ներկայացնել կայսր Նիկոլայ 2-րդին՝ բարենորոգումների հարցում նախաձեռնությունը վերցնելու համար: «Վեհափառ կայսրը,- գրում էր Պ.Նուրարը,- իր բարձր և գնա-

<sup>1</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթուրերում, էջ 181-182:

<sup>2</sup>LAH, 1719, S. 2-3.

<sup>3</sup>Տես, Будущее устройство Армении по официальным документам Оранжевой книги, трактующей Реформы в Армении, Петроград, 1915, стр. 26.

հատելի բարեացակամութեան մասին ցոյց տուած այս նոր քայլով ուժական կառավարութեան դարաւոր աւանդութիւնը շարունակած է»<sup>1</sup>:

Այս իրադարձություններով էլ, փաստորեն, ավարտվում է՝ Պողոս Նուրարի գործունեության երկրորդ շրջանը, որն ընդգրկում էր 1913 թ. հունվարից – հունիս ընկած ժամանակաշրջանը: Այն հիմնականում քննություն երանով, որ Ազգային Պատվիրակությունը հրաժարվեց արևմտահայության պահանջները Լոնդոնի խաղաղության կոնֆերանսին ներկայացնելուց և սպասողական դիրք բռնեց: Դա պայմանավորված էր զիսավորապես ուսական կառավարության պահանջով, որին Պ.Նուրարը համակերպվեց՝ հաշվի առնելով Հայկական հարցի լուծման խնդրում վերջինիս ունեցած կարևոր դերը: Այդ նկատառումով էլ նա Եվրոպայում իր կատարած ձեռնարկների մասին պարբերաբար տեղեկացնում էր Իզվոլսկուն, ցոյց տալու համար, որ Ազգային Պատվիրակության դիվանագիտական աշխատանքը չի հակասում Ռուսաստանի շահերին:

Կոնֆերանսին ներկայանալուց ետ կանգնելով՝ պատվիրակությունը բնավ անգրծության շնատնվեց: Նախ աշխատանքներ սկսվեցին տարբեկ արևմտահայերի բարենորոգչական պահանջների վերաբերյալ ծրագրի մշակման և այն Ազգային Պատրիարքարանի կազմածի հետ համաձայնեցման ուղղությամբ: Վերոհիշյալ ժամանակահատվածում, երբ Հայկական հարցը դեռ չէր դարձել տերությունների բննարկման առարկա, հետևողական ջանքեր էին անհրաժեշտ, որպեսզի այն շնատնվի մոռացության, մնա արքուն, պարարտ հող նախապատիստի և համակրական վերաբերմունք ստեղծվի դրա լուծման համար: Հենց այդ ուղղությամբ էլ Պ.Նուրարը ծավալեց իր գործունեությունը՝ այն զիսավորապես կենտրոնացնելով Փարիզում և Լոնդոնում: Կատարած անհատական դիմումների, կազմած հուշագրերի, կարդացած բանախոսությունների, տպագրած հոդվածների միջոցով, ինչպես

նաև վայելելով եվրոպական հայասիրական կոմիտեների և առանձին գործիչների աջակցությունը՝ նա աշխատեց հայկական բարենորոգումների իրականացման անհրաժեշտությանն ի նպաստ դարձնել Ֆրանսիայի և Անգլիայի դեկապար շրջանների և հասարակական կարծիքի վերաբերմունքը: «Զեր հրահանգով, - կարողիկոսին հուն 1913 թ. հունիսի 27-ի նամակում գրում էր Պ. Նուրարը, - Եվրոպայի հանրային կարծիքը պատրաստեցներով՝ բանակցություններով և լրագրական իրատարակություններով»<sup>2</sup>: Այդ ջանքերը, անշուշտ, ինչոր շափով նպաստեցին, որպեսզի բարենորոգումների խնդիրն ի վերջո դառնա տերությունների բննարկման առարկա: «Կարեւորն այս էր, - Վ. Մալեզյանին հուն 1913 թ. նամակում գրում էր Յաղոր Արքին փաշան, - որ մեզմով լրջօրեն կգրադին: Պողոս փաշայի անրու եւ դժուարին աշխատանքին կը պարտինք ձեռոք բերուած արդինքը»<sup>3</sup>:

## 2) Պողոս Նուրարի ջանքերը հայկական բարենորոգումների խնդրում մերմելու Գերմանիայի դիմադրությունը

Հայկական բարենորոգումների հարցի բննարկման կապակցությամբ ուսական կառավարության առաջարկը միանշանակ չընդունվեց Եոյակ Սիության երկրների /Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա/ կողմից և հարուցեց վերջիններիս կասկածները: Կ. Պոլսի ավատրիական դեսպան Պալլավիշինին արտգործնախարար Բերխուդին հուն 1913 թ. նամակում այդ նախաձեռնությունը համարում էր «Ռուսաստանի էքսպանսիայի հին քաղաքականության վերսկսում»<sup>4</sup>: Այնուամենայնիվ, Գերմանիան և նրա դաշնակիցները հարկադրված համաձայնում են մասնակցել բննարկումներին՝ խնդրի լուծումը միայն Անտանտի երկրներին չըողնելու համար, սակայն հաստատ գնուելով հակառակել ուսական առաջարկներին: 1913 թ. հունիսի 17-ին Կ. Պոլ-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 33, թ. 15:

<sup>2</sup> Սալտցեան Վ., Շաճրու վրայ /Ցուշարար/, էջ 317:

<sup>3</sup> Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 55:

<sup>4</sup> Ա. Մաշտոցի անվ. Աստենադարան, Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, թր. 3, վագ. 109; ԱՅՊ, ֆ. Պոլիտարք, գ. 1913, ձ. 3462, լ. 25.

սում տեղի է ունենամ 6 տերությունների դեսպանների խորհրդակցություն, որտեղ որոշվում է Ա. Մանելշտամի կազմած ծրագիրը դնել դեսպանատմերի ներկայացուցիչներից կազմված «Հայկական քարենորդությունների հաճանաժողովի» բնարկնանը: Այն իր աշխատանքները սկսում է 1913 թ. հունիսի 20-ին Կ. Պոլսի Ենի-Քյոյ վայրում գտնվող ավտորիֆական դեսպանատանը:

Հայկական քարենորդությունների խնդրի՝ տերությունների միջև քննարկման առարկա դառնալու փաստը մեծ ոգևորությամբ է ընդուվում արևմտահայության կողմից և նոր հույսեր ներշնչում նրան: Թեև հասկանալի էր, որ դա դեռ չէր նշանակում հարցի վերջնական լուծում, սակայն դիտվում էր որպես լուրջ ձեռքբերում: «Երեք ամիս առաջ,- Վ. Մալեցյանին հղած նամակում գրում էր Յաղոր Արքին փաշան,- անյուսալի էր, որ մեր պահանջները նկատողութեան պիտի առնուին բոլոր մեծ պետութեանց կողմէ, համախոհարար գոնէ այն սկզբունքին մասին թէ Հայաստանի մէջ հարկաւոր են քարենորդություններ»<sup>1</sup>: Այդ իմաստով գործի հաջողության իր գործունեությամբ որոշակիութեան նպաստել էր նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, որն այժմ իր առաքելությունը համարում էր ավարտված: «Ինչ որ խնդրած է Վեհափառ Կարողիկուր իր կոնդակով,- գրում էր Ե. Օտյանը,- անհիկա լիովին կատարուած է: Հայկական քարենորդություններու խնդիրը անցած է դեսպանախորհրդի օրակարգին մէջ»<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով Պ. Նուբարը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այժմ քանակցություններին հետևելու և անհրաժեշտ ձեռնարկներ կատարելու իրավասությունը պատկանում է Ազգային Պատրիարքարանին, կարողիկուրին հղած 1913 թ. հուլիսի 7-ի նամակում գրում էր: «Պատվիրակությունն այլևս իրական աշխատանք մը չունի, ուստի խնդրում եմ ինձ արձակել իմ պաշտոնից, որ այժմ վերջացած կիամարեմ»<sup>3</sup>: Սակայն քանի դեռ քարենորդությունների հարցը չէր հանգել իր վերջնական լուծման, Ազգա-

յին Պատվիրակության առաքելությունը չէր կարող ավարտված համարվել: Կ. Պոլսի դեսպանները, որոնց պաշտոն էր տրվել զբաղվել խնդրի քննարկմամբ, համապատասխան իրահանգներ պետք է ստանային իրենց կենտրոնական կառավարություններից, հետևաբար անհրաժեշտ էր շարունակել եվրոպական երկրներում մղվող հայանապատ քարոզչությունը: Այդ իմաստով հատկապես մեծ աշխատանք էր պետք տանել Գերմանիայի կառավարական շրջանների մոտ, որոնց ընդունությունը քարենորդությունների ուսասկան նախագծի հանդեպ ակնհայտ էր դարձել: Բացի այդ 1913 թ. հուլիսի 1-ին սկսված Բալկանյան երկրորդ պատերազմի հետևանքով խիստ սրվել էր միջազգային դրույթը, որը կարող էր բացասաբար անդրադառնալ Հայկական հարցի լուծմանը: Հենց այդ նկատառություններով էլ Գեորգ Ե կարողիկոսը Պ. Նուբարին հղած պատասխան նամակում, մերժելով նրա խնդրանքը, գրում էր: «Այժմ Զեր հեռատես դեկավարության ներքո Ազգային Պատվիրակության գործունեությունը Եվրոպայում անհրաժեշտ է: Հաճեցեք Զեր առաքելությունը շարունակել հօգուտ տաճկահայ ժողովոյի քարօրության և երջանկության»<sup>4</sup>: Այդ էր վկայում նաև կարողիկոսի դիվանագետ Բարկեն եայսկոպոսը Հ. Առաքելյանին հղած նամակում: «Այնպիսի քաղաքական պայմաններ են ստեղծվել, որ Պ. Նուբարի մնալը Եվրոպայում և ազգային դատի պաշտպանության շարունակելը միանգամայն կարևոր է»<sup>5</sup>:

Հայկական հարցի լուծման խնդրում Ռուսաստանի՝ նախաձեռնությամբ հանդես գալի առաջացնում է նաև քորքական կառավարության խիստ դժգոհությունը: Տերությունների միջև սկսված քննարկումներն ու ուսասկան ծրագրի իրագործումը խափանելու համար, նա 1913 թ. հուլիսի 1-ին իրապարակ է հանում ամբողջ երկրում քարենորդություններ իրականացնելու վերաբերյալ իր կազմած նախագիծը: Ըստ դրա կայսրությունը քածանվելու էր վեց սեկտորների, ընդ որում արևելյան շրջանները ներառնվելու էին երրորդ և հինգերրորդ սեկտորների

<sup>1</sup> Ասլեզեան Վ., Ծամրուա վրայ /Յուշարադ/, էջ 317-318:

<sup>2</sup> Օտեան Ե., Աշխ. աշխ., էջ 90:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 43, թ. 7:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 43, թ. 9:

<sup>5</sup> ՀՀ ԳԱԹ, Հ. Առաքելյանի Փ., գ. 458/II, թ. 6:

մեջ: Սեկտորների գլոխ կանգնելու էին եվլոպացի ընդհանուր վերատեսություն՝ նշանակված նախարարների խորհրդի և հաստատված սուլթանի կողմից: Նախազօռում ոչինչ չէր ասվում վարչական մարմիններում քրիստոնյաների մասնակցության և նրանց իրավունքների մասին: Թուրքական այդ նախագիծը, որը Մ.Գիրսի բնորոշմամբ կրում էր «անկապ և ծրագրային բնույթ»<sup>1</sup>, մեծապես տարբերվում էր 1895 թ. մայիսյան և Ա.Մանդելշտամի մշակած ծրագրերից և չէր կարող բավարարել արևմտահայության պահանջները: «Այդ ծրագիրը, գրում էր Պ. Նուրարը, որը հեռու է հայերի օգտին դրույթներ պարունակելուց, բուրքական կառավարությունը գործ է կամենում ներկայացնել իրեն հետապնդած նախատակին հասնելու միջոց»<sup>2</sup>: Ենի-Քյոյի խորհրդակցության առաջին խորհրդակցության մասնակի Եռյակ Միության երկրների ներկայացուցիչները պահանջում են որպես քննարկման հիմք ընդունել բուրքական նախագիծը: «Անշուշտ, - Ա.Մազմովին հղած նամակում գրում էր Մ.Գիրսը, - մենք հանդիպեցինք մի նախօրոք ծրագրված փորձի հետ, որով ճգում կար ուսասկան ծրագրին տալ երկրորդական նշանակություն»<sup>3</sup>: Թուրքական այդ ձեռնարկի իրական նպատակները բաց գիտակցում էր նաև Պ.Նուրարը: 1913 թ. հուլիսի 20-ին նա ֆրանսիական թերթերից մեկում հանդես է զայխ մի հոդվածով, որը, նշելով հայկական բարենրոդումների անհրաժեշտությունը, մասնակորապես ընդգծում էր, որ «միայն 1895 թ. ծրագիրն է, որ պետք է իրեն հիմ ծառայէ այն վերջնական բնագրին, որ խմբագրելու պաշտոն ունեն դեսպանները»<sup>4</sup>:

Գումարելով 8 նիստ՝ Ենի-Քյոյի խորհրդակցությունը, չհասնելով որևէ շոշափելի արդյունքի, 1913 թ. հուլիսի 11-ին ավարտում է իր աշխատանքները: Դրա հիմնական պատճառը Եռյակ Միության երկրների ներկայացուցիչների անհաշտ դիրքն էր Ա.Մանդելշտամի ծրագրի էական կետերի հանդեպ, ինչպես նաև Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների երկդիմի կեցվածքը,

<sup>1</sup> Реформы в Армении, стр. 72.

<sup>2</sup> ՀՀ ԳԱԹ, Վ.Մանելյանի Փ., գ. 742, թ. 3.

<sup>3</sup> Реформы в Армении, стр. 73.

<sup>4</sup> «Ասպարիզ», Ֆրեզն, 1913, N 263; Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 98:

որոնք գրեթե ոչինչ շարեցին պաշտպանելու ուսական առաջարկները: «Ուսասատանի դաշնակիցները շատ թույլ և բռնագրուիկ կերպով կը պաշտպանեին իրապարակ դրուած ծրագիրը, - գրում էր Վ.Փափազյանը: - Դա բարեացական չեզորութեան պէս դիբ էր, որ անշուշտ չէր վրիհակը Երյեակ Զինակցության բափանցող հայացքներէն»<sup>1</sup>: Ենի-Քյոյի խորհրդակցության խափանման գործում իր դերն ունեցավ նաև բուրքական կառավարությունը, որն ամեն ինչ արեց հայկական բարենրոգումների հարցի քննարկումը տապալելու համար:

Խորհրդակցության ընթացքում Եռյակ Միության երկրների ներկայացուցիչներն ընդդիմացան ուսական նախագծի այն էական կետերին, որոնց իրազործումով, ըստ իրենց, կստեղծվեր ինքնավար Հայաստան, որն էլ կարող էր հիմք հանդիսանալ Օսմանյան կայսրության բաժանման համար: Բացի այդ երկյուղ կար, որ Ա. Մանդելշտամի ծրագրով նախատեսվող բարենրոգումների իրականացումով՝ Ուսասատանը կարող է անրապնդել և ուժեղացնել իր ազգեցությունը Թուրքիայի հայկական վիլայեթներում, իսկ հնարավորության դեպքում նաև բռնագավթել դրանք: Ուսական նախագծի վիճահարուց կետերը հետևյալներն էին. 1) հայկական վեց վիլայեթներից մեկ նահանգի կազմում: Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը կանցլեր Բետման-Հոլվեգին գրած նամակում նշում էր, որ այդ առաջարկով ուսական կողմը ճգում էր ստեղծել գերազանցապես հայկական բնակչությամբ վարչական միավոր, որն իրեն համար աջակցություն կփնտեր Ուսասատանում<sup>2</sup>; 2) ընդհանոր նահանգապետի նշանակումը տերությունների համաձայնությամբ; 3) ընդհանոր նահանգապետի իրավունքը նշանակել և արձակել նահանգի բոլոր վարչական պաշտոնյաներին և դատավորներին: Ըստ Վանգենհայմի, այդ կետի իրականացումով նահանգապետը կվերածվի ինքնուրույն տիրակալի, որով և կրացառվի սուլթանական ինքնիշխանությունը; 4) նահանգային ժո-

<sup>1</sup> Փափազյան Վ., Իմ յուշերը, Խո. Բ, էջ 246:

<sup>2</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, стр. 72.

դրվի կազմությունը հավասար թվով քրիստոնյաներից և մահմեդականներից:

Չնայած Ենի-Քյոյի խորհրդակցությունն ավարտվեց անարդյունք, այնուամենայնիվ որոշակի պարզություն մտցրեց խնդրի քննարկման գործընթացի մեջ: Նախ ոռուական ծրագրում տեղ գտած որոշ հարցերի /ազգարային, լեզումերի իրավահավասարության, դպրոցների, բարենրոգումների վրա վերահսկողության սահմանման/ շուրջ տերությունների միջև համաձայնությունը կայացավ: Երկրորդ, Ռուսաստանն արևմտահայությանն ավելորդ անգամ ապացուցեց, որ միակ պետությունն է, որին իսկապես շահագրգության է և փափառում է նրանց խնդրի լուծումը: Երրորդ, իրենց կեղծավոր և երկրիմի դիրքը ցույց տվեցին Ռուսաստանի դաշնակիցները, և պարզ դարձավ, որ այսուհետև նրանց վրա հույս դնելն անհմաստ է: Եվ չորրորդ, ակնհայտորեն երևաց Գերմանիայի հակառուսական և Թուրքիայի շահերի պաշտպանի կեցվածքը: Թեև Թուրքիայում ոռուական հավատարմատար Կ. Գովկիչը հետազոյում՝ 1914 թ. հունվարի 27-ի Ս. Սազոնովին հրած նամակում նշում էր, որ եթե երբեք Ենի-Քյոյի հանձնաժողովի արձանագրությունները հրապարակվեն, այն ժամանակ հայերը կծանոթանան գերմանացիների իսկական զգացմունքների հետ<sup>1</sup>, այնուամենայնիվ դրանք արդեն ակնհայտ էին և էլ ավելի էին ամրապնդում արևմտահայերի հավատը Ռուսաստանի նկատմամբ: «Նոյնիսկ անյաջող երթի մը պարագային,- նշված էր Ապահովության Հանձնաժողովի՝ պատրիարքի տեղապահին հղած տեղեկագրում,- Ռուսեա շահած պիտի ըլլայ հայոց երախտագիտութիւնը, որոնք այդ անյաջողութեան պատճառ եղող Գերմանիայէն պիտի հեռանան»<sup>2</sup>: Սակայն որքան էլ արևմտահայերն իրենց խնդրի քարեհաջող լուծման հույսերը կապեին Ռուսաստանի հետ, ակնհայտ էր, որ ստեղծված աշխարհարարական պայմաններում առանց Գերմանիայի բարյացակամ վերաբեր-

մունքի այդ խնդրում որևէ դրական արդյունք ակնկալելը շատ դժվար էր: Դրա վառ ապացույցներից էր նաև Ենի-Քյոյի խորհրդակցությունը, որտեղ Գերմանիայի և նրա դաշնակիցների դիմադրության պատճառով բարենրոգումների ոռուական ծրագրի ընդունումը փաստորեն ձախողվեց: «Ստոյդ Է.- կարողիկոսին հղած նամակում գրում էր Պ. Նորարը,- եթե Գերմանիան յամառի իր այս բռնած դիրքին մեջ, մեր բարենրոգումները մեծ վտանգի կենքարկվեն»<sup>3</sup>:

Ստեղծված իրադրությունում ոռուական կառավարությանը մնում էր փորձել համաձայնության եղանք գտնել ուղղակի Գերմանիայի հետ, իսկ հայ քաղաքական շրջաններին՝ աշխատանք տանել մեղմեղու համար գերմանական ընդդիմությունն ու նպաստել այդ համաձայնության շուտափոյք կայացմանը:

Դեռևս մինչև Ենի-Քյոյի քննարկումների սկիզբը, բարենրոգումների խնդրի հանդեպ Գերմանիայի բարենպաստ վերաբերմունքի ստեղծման համար Կ. Պոլսում որոշակի փորձեր արդեն արվել էին: Ինչպես պատրիարքը, այնպէս էլ արևմտահայ մի շարք քաղաքական գործիչներ հանդիպումներ էին ունեցել Վանգենհայմի և գերմանացի այլ դիվանագետների հետ, ջանալով ցույց տալ հայկական բարենրոգումների իրականացման անհրաժեշտությունն ու անհետածգելիությունը: «Մենք /արևմտահայ դեկափար շրջանները - Հ. Բ./ Հայկական հարցի գլխավոր պաշտպանությունը Ռուսաստանի ծեռուում դնելով հանդերձ,- նշված էր Ապահովության Հանձնաժողովի տեղեկագրում,- Գերմանիայի համակրանքն էլ ծեռք բերելու համար կանուխէն անհատական և անպաշտոն խոսակցություններ կատարած էինք»<sup>4</sup>: Սակայն միայն այդ ջանքերը բավարար չէին հետապնդվող նպատակին հասնելու համար: Անհրաժեշտ էր զուգահեռ նման աշխատանք տանել նաև Բեռլինում՝ գերմանական դեկափար շրջանների մոտ: Այդ առաքելության կատարումը մտնում էր Պ. Նորարի գլխավորած Ազգային Պատվիրակության իրավասությունների մեջ: «Մեր առնվելիք այս տեսակ բայերը,- կաթողիկոսին հղած 1913 թ. հուլիսի 2-ի նամակում

<sup>1</sup> Реформы в Армении, стр. 167.

<sup>2</sup> ՀԱՌ, ֆ. 57, գ. 5, զ. 35, թ. 21:

<sup>3</sup> ՀԱՌ, ֆ. 57, գ. 5, զ. 33, թ. 21:

<sup>4</sup> ՀՀ ԳԱԹ, Գ. Զորիապի ֆ., զ. 91, թ. 6; Փափազեան Վ., Խմ յուշերը, Խո. Բ, էջ 528:

գրում էր պատրիարք Հ. Արշարումին,- կարող են գործնական նշանակություն ունենալ, եթե միևնույն ժամանակ Պ. Նուրարն անձամբ զնա թեռվին և աշխատի այդ ուղղությամբ»<sup>1</sup>:

Մինչ այդ Պ. Նուրարի ղեկավարած պատվիրակության գործունեությունը կենտրոնացված էր զվարապես Փարիզում և Լոնդոնում՝ ջանալով բարենորոգումների խնդրում ապահովել ֆրանսիայի և Անգլիայի իշխանությունների օժանդակությունն ու համերաշխ ընթացքն իրենց դաշնակից Ռուսաստանի հետ։ Սակայն դա բնավ չէր նշանակում, որ Պ. Նուրարը Հայկական հարցի լուծման մեջ թերազնահատում կամ երկրորդական տեղ էր հատկացնում Գերմանիային։ Ըստ հակառակը, հաշվի առնելով Օսմանյան կայսրությունում վերջինիս ունեցած կենսական շահերը, նա քաջ գիտակցում էր, որ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ գերմանական ղեկավարությունը չի կարող անտարբեր դիրք գրավել և առանց նրա բարյացակամ վերաբերմունքի գրեթե հնարավոր չէ այդ շրջանի նկատմամբ որևէ քայլ ձևոնարկել։ Բացի այդ նա աշքարող չէր անում նաև այն հանգամանքը, որ Հայկական հարցին ի նպաստ գերմանական իշխանությունների վերաբերմունքի փոփոխման դեպքում հնարավոր էր դրական արդյունք ակնկալել՝ հաշվի առնելով Թուրքիայի ղեկավարության վրա վերջիններիս ունեցած ազդեցությունը։ «Գերմանիան,- գրում էր Պ. Նուրարը,- Թուրքիայի ընկեր-պետություն լինելու առավելությամբ, կարող է մտերմարար ճնշում գործադրել նրա վրա»<sup>2</sup>։ Այդ իսկ պատճառով իր առաքելության ստանձման սկզբում Պ. Նուրարը որոշակի աշխատանք է տանում բարենորոգումների իրագործման խնդրով Գերմանիայի կառավարությանը և շահագրգելու ուղղությամբ։ Հայկական պահանջներին ի նպաստ Գերմանիայի գործակցությունը շահելուն ուղղված Պ. Նուրարի առաջին քայլը 1913 թ. փետրվարի 8-ին Ֆրանսիայում գերմանական դեսպան Շենի հետ ունեցած հանդիպումն էր, որի ընթացքում նա հայտարարում է, որ «բարենորոգումների գործի ընթացքը տեղի կշարժվի, եթե դրանում

ներգրավվի Գերմանիան»<sup>1</sup>։ Սրա հետ մեկտեղ, տեսնելով, որ շնորհիվ Բարդարի երկարօճի և տնտեսական հետաքրքրությունների զերմանական իշխանությունները մեծ շահեր ունեն Կիլիկիայում, Պ. Նուրարը Շենի, ինչպես նաև հետագայում Բեռլինում ունեցած հանդիպումների ժամանակ, առաջարկում էր Գերմանիայի նախաձեռնությամբ և Վերահսկողությամբ բարենորոգումներ կատարել այդտեղ, որի հետևանքով, ըստ նրա, «Գերմանիան կերաշխավորեր իր կարևոր տնտեսական և բարոյական ազդեցությունն այդ հեռանկարային վայրերում»<sup>2</sup>։ Պ. Նուրարը գտնում էր, որ այդ դեպքում նախ կրարելավի կիլիկիայայության ծանր կացությունը և, երկրորդ, կարելի էր հուալ, որ Գերմանիան չէր հակառակի նման բարենորոգումների իրագործմանն Արևմտյան Հայաստանում՝ Ռուսաստանի նախաձեռնությամբ։ Սակայն Գերմանիայի ղեկավարությունը չէր կարող համաձայնել այդ առաջարկին, քանզի դա կիանցեցներ Օսմանյան կայսրությունում ազդեցության ոլորտների ստեղծմանն ու նրա բաժանման պատճառ կդառնար։ Մյուս կողմից Գերմանիան ոչ մի դեպքում չէր կարող բոլով տալ Ռուսաստանի ազդեցության ուժեղացումն Արևմտյան Հայաստանում։

Ենի-Քյոյի խորիդակցության անարդյունք ավարտը ստիպեց Պ. Նուրարին ակտիվացնել իր գործունեությունը։ 1913 թ. օգոստոսի 5-ին նա կազմում և դիվանագիտական աշխարհին է ուղղում մի հուշագիր՝ «Հայկական բարենորոգումների ծրագրի նկատմամբ առաջ եկած մի քանի առարկությունների վերաբերյալ» խորագրով։ Հուշագրում Պ. Նուրարը բննադատության էր ենթարկում բաղադրական բնույթ ունեցող այն առարկությունները, որոնց թիրախ էր դարձել տերությունների քննարկմանը հանձնված և հայերի համեստ պահանջները բավարարող բարենորոգումների ուսական նախագիծը։ «Ոչնույն շարդարացված և Հայաստանում ամեն բարենորոգում ծախողելու նպատակ հետապնդող այդ առարկությունները,- գրում էր Պ. Նուրարը,- ուղղված

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 35, թ. 39:

<sup>2</sup> Nubar B., Ibid, p. 9.

<sup>1</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, стр. 31; Dusser W. van der, The Question of Armenian Reforms in 1913-1914, "Armenian Review", Boston, 1986, vol. 39, N 1, p. 17.

<sup>2</sup> Տես նոյն տեղում։

են որքան հայերի, նույնքան էլ մեծ տերություններից մեկի /Ո-ուսաստանի -Հ. Բ./ քաղաքականության դեմ<sup>1</sup>: Սրա հետ մեկտեղ նա փորձում էր փարատել Գերմանիայի հայերի անջատողական ձգտումների և Ո-ուսաստանի զավթողական նպատակների հանդեպ ունեցած կասկածները: Հուշագրի հիմնական դրույթները Պ. Նուբարը հետազայտմ ավելի մաճրամասնորեն պարզաբանեց Գերմանիայի պաշտոնատար անձանց հետ ունեցած հանդիպումների ընթացքում: Սակայն միանգամայն հասկանալի էր, որ սուկ հուշագրով հնարավոր չէր հասնել ցանկալի արդյունքի: Հարկավոր էր անհատական հանդիպումներ ունենալ Գերմանիայի դեկավար շրջանների հետ և տալ անհրաժեշտ պարզաբանումներ: Այդ նկատառումներով էլ, ինչպես նաև պատրիարքի խնդրանքով՝ Պ. Նուբարը որոշում է մեկնել Բեռլին: «Գերմանիայի ընդդիմությունը այն աստիճան ջլատեց Ազգային Պատվիրակության գործը, հետազայտմ գրում էր նա, - որ ստիպեց Բեռլին երթաւ՝ աշխատելու համար բանալ խոշընդունելը»<sup>2</sup>: Այդ ժամանակ նա փորձինչ վատառողջ էր, սակայն դա չխանգարեց նրան, որպեսզի հետաձգի իր մեկնումը: «Քանի որ ազգս այս պաշտօնը ինձի վատահած է, - ասում էր նա, - պետք է որ պարտը կատարեմ առանց րոպէ. մը իսկ կորսցնելու»<sup>3</sup>:

Թեև հայկական բարենորդումներին հակառակ էին նաև Ավստրո-Հունգարիան և Իտալիան, այնուամենայնիվ Պ. Նուբարը չէր պատրաստվում մեկնել Վիեննա և Հռոմ: Ակնհայտ էր, որ նրանց ընդդիմության հիմնական դրապատճառը հայկական խնդրում իրենց դաշնակից Գերմանիայի դիրքն էր: Պատրիարքին հղած 1913 թ. օգոստոսի 14-ի նամակում Պ. Նուբարը նշում էր, որ Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ընդդիմությունը, որոնք գորեք որևէ շահ չունեն Հայաստանում, քաղաքական բնույթ է կրում և կդադարի, եթե Գերմանիան ուժ

տա բարենորդումներին<sup>4</sup>: Այդ փաստն իր ապացույցն էր գտնում նաև Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմի՝ արտգործնախարար Յագովին զրած նամակում. «Եղյակ Սիուրյան իմ պաշտոնակիցներին ես փորձում եմ այն պահել վզափոկի վլա»<sup>5</sup>:

1913 թ. օգոստոսի սկզբներին ժամանելով Բեռլին՝ Պ. Նուբարը պատրաստվում է հանդիպել երկրի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Արտգործնախարար Յագովի՝ երկրից բացակայելու պատճառով նրան ընդդիմում է նրա օգնական Արքուր Ֆիմմերմանը: Պ. Նուբարը քաջ զիտակցում էր, որ Գերմանիայի դեկավար շրջանների մոտ արևմտահայերի պահանջների պաշտպանությամբ հանդես գալը որոշակի դժվարություն է ներկայացնում: Դա պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում Ո-ուսաստանի և Գերմանիայի ունեցած հակադիր շահերի և հակատրյունների առկայությամբ: Այդ նկատառումով էլ Պ. Նուբարը խիստ զգուշագործ դիրք է գրավում Ո-ուսաստանի հանդեպ, որի պատճառներից էր նաև փորձել փարատել Գերմանիայի դեկավարության ունեցած կասկածները՝ ուստի նվաճողական ձգտումներին արևմտահայության ծառայելու վերաբերյալ: Հետագայում 1913 թ. սեպտեմբերի 12-ին կաթողիկոսին հղած նամակում Պ. Նուբարն այդ մասին զրում էր. «Բեռլինում ստիպված էի Ո-ուսաստանի նկատմամբ վերապահ դիրքս շափազանցնել՝ անվստահությունը մեղմացնելու համար»<sup>6</sup>:

Հանդիպման հենց սկզբում Ա. Ֆիմմերմանն իր մտահոգությունն է հայտնում արևմտահայության մեջ իշխող ուստաներ միտունների կապակցությամբ: Պ. Նուբարը պատասխանում է, որ այդ մտավախությունն անհիմն է, ավելացնելով, որ հայերը կարող են միայն երախտապարտ լինել Ո-ուսաստանին բարենորդումների իրականացման խնդրում նախաձեռնությունը վերցնելու համար, սակայն «այդ երախտագիտության զգացումը չի կարող նրանց տեսադաշտից հանել իրենց

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 46, թ. 3:

<sup>2</sup>Արմանական գույքը և գենոցը արմանական ազգային պատմության մեջ /1913-1919/, էջ 105.

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 33, թ. 20:

<sup>4</sup>ՀՀ ԳԱԹ, Վ. Մայերացի ֆ., գ. 742, թ. 1:

<sup>5</sup>ՀԱԱ, ֆ. 430, գ. 1, գ. 26, թ. 6:

<sup>6</sup>Նուպար իւ Նուպարաշն, էջ 9; Հուշագրի Պողոս Նուպար փաշայի, էջ 26:

խկական շահախնդրությունը՝ մնալ օսմանցիներ, ոչ էլ նրանց կողմնուրշել՝ ծառայելու ուստաների զավթողական քաղաքականությանը<sup>1</sup>: Կասկածները վերջնականապես փարատելու համար Պ. Նուբարը հայտարարում է, որ արևմտահայությունը ցանկություն շտուի միանալ Ռուսաստանին՝ գիտակցելով, որ այդ դեպքում կարող է վտանգվել իր ազգության և կրոնի գոյությունը<sup>2</sup>: Այդ հայտարարությունը որոշակի վստահություն է ներշնչում Ա. Ցիմմերմանին: Սրա հետ մեկտեղ Պ. Նուբարը ջանում է բացատրություններ տալ բարենորոգումների ծրագրի այն կետերի վերաբերյալ, որոնք հարուցել էին Գերմանիայի կասկածն ու ընդդմությունը: Այսպես, անդրադառնալով հայկական վեց վիլայեթներից մի նահանգի տուեժման առաջարկին, նա նշում է, որ այդ ամսնենին էլ անհինն չէ, այլ բխում է 1895թ. բարենորոգումների ծրագրից և ընդունվել է ինչպես Բ. Դուան, այնպես էլ տերությունների կրղմից: Փարատելով այն մտավախությունը, թե մեկ նահանգի ստեղծումը կլյուրացնի Ռուսաստանի կրղմից դրա գրավումը Պ. Նուբարն արդարացիորեն նկատում է, որ դա պայմանավորված է ոչ թե նահանգների քանակով, այլ ընդհանուր քաղաքականությամբ և տերությունների շահերով, որոնք բույլ չեն տա դեպքերի նման զարգացումը: Ա. Ցիմմերմանի այն մտավախությանը, որ եթե բարենորոգումներ իրականացվեն միայն հայկական վիլայեթներում, ապա Օսմանյան կայսրության տարածքում ապրող մյուս ազգություններն արդյոք նման բարենորոգումներ չեն պահանջի իրենց համար, Պ. Նուբարը պատասխանում է, որ նախ արևմտահայության կրած հալածանքներն ու անտանելի ծանր դրությունը չի կարելի համեմատել մյուսների հետ և իրավական տեսանկյունից նրանց պահանջներն ամրողովին օրինական են: «Օսմանյան կայսրության ոչ մի ուրիշ շրջան, - նշում էր Պ. Նուբարը, - չի կարող իր նկրտումներին ի պաշտպանություն վկայակոչել այնպիսի ճշգրիտ միջազգային մի հանձնառություն, ինչպիսին է Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որը Թուրքիային պարտավորեցնում է տերությունների հանդեպ, իսկ վերջիններիս էլ՝ հայերի նկատ-

մամբ»<sup>1</sup>: Հայկական հարցի լուծման և Գերմանիայի պետական շահերի համապատասխանությունը ցույց տալու համար Պ. Նուբարը մատնանշում է, որ միայն բարենորոգումների իրագործմամբ հնարավոր կլինի պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամրողականությունը, քանի որ հակառակ դեպքում արևմտահայությունը ստիպված իր փրկությունը կկապի օտարերկրյա գրավման հետ: Պ. Նուբարի հանդիպումը Ա. Ցիմմերմանի հետ և տված բացատրություններն ու հավաստիացումներն անարդյունք չանցան և որոշակիորեն նպաստեցին վերջինիս ունեցած կասկածների փարատմանը: «Ես ամրողովին ազատորեն և անկեղծորեն շարադրեցի մեր բարենորոգումների հարցի էռույնը, - Յ. Լեփսիուսին հյած 1913 թ. օգոստոսի 22-ի նամակում գրում էր Պ. Նուբարը, - և կարծում եմ, որ նրան /Ա. Ցիմմերմանին - Հ. Բ./ կարողացա ցույց տալ, որ հայերը չտեն ոչ մի հետին անջատողական մտքեր, որ նրանց վերագրում են, և պահանջում են միայն բարենորոգումները Նվիրապայի վերահսկողությամբ»<sup>2</sup>: Այդ եր վկայում նաև Ա. Ցիմմերմանի հավաստիացումը, որ Գերմանիան ուժ կտա բարենորոգումներին<sup>3</sup>:

Ենի-Զյոյի խորհրդակցության ծախողման պատճառով Գերմանիայի հանդեպ արևմտահայության հոսահատական վերաբերմունքի առաջացումը չէր կարող անտեսվել Բեռլինում: Այստեղ գիտակցում էին, որ առանց վերջիններիս համակրանքը վայելելու Գերմանիային բավականին դժվար կլինի դիրքեր ամրապնդել և ազդեցություն տարածել Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում: «Գերմանիան, - գրում էր Վ. Բերարը, - ոչ միայն Ռուսաստանին դիմագրավելու համար է Հայկական հարցն իր անմիջական քաղաքական խնդիրների շարքը դասում, այլև այն պատճառով, որ նա Անատոլիայում մեծ շահեր ունի,

<sup>1</sup> ՀՀ ԳԱԹ, Վ. Մալեվանի ֆ., գ. 742, թ. 1:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 46, թ. 2:

<sup>1</sup> ՀՀ ԳԱԹ, Վ. Մալեվանի ֆ., գ. 742, թ. 2:

<sup>2</sup> ԼԱԻ, 1719, Տ. 1-2.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 46, թ. 5:

որոնց ապահովությունը որոշ չափով կախված է հայերից<sup>1</sup>: Իսկ ստեղծված պայմաններում արևմտահայության համակրանքը ձեռք բերելու միակ միջոցներից էր նպաստել բարենորդոգումների խնդրի լուծմանը: Ուստի գերմանական կառավարությունը որոշում է այդ ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկել: «Գերմանիայի ընդիմության բուլացմանը,- հետագայում գրում էր Պ. Նորարը,- մեծապես նպաստեց անհաջող երևալու նույակախությունը, հայերի համակրանքը շվայլելու և նրանց վրա ունեցած ազդեցությունը կորցնելու վտանգը»<sup>2</sup>: Այսպես, Գերմանիայի հանդեպ արևմտահայության խարարված վատահությունը վերականգնելուն էր ուղղված գերմանացի հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, հայասեր դրկտոր Յոհաննես Լեփսիուսի 1913 թ. ամունը Կ. Պոլսում ծավալած գործունեությունը, որ նա մեկնել էր արտօրծնախարարության իրահանգով: Նման առաքելությունը Յ. Լեփսիուսին վատահելը պատահական չէր: Նա մեծ համակրանք էր վայելում արևմտահայության մեջ, քանի հանդես էր եկել նրանց պաշտպանությամբ արդիվ-համիլյան բռնորդյունների ժամանակ: Յ. Լեփսիուսը, ճանապարհորդելով Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներով, որ նա իմբնականում գրադիչ գերմանական դպրոցներ և ինվանդանոցներ իմբնելով, 1913 թ. օգոստոսի սկզբներին ժամանեց Կ.Պոլիս: Ծանորանալով ստեղծված իրավիճակին նա անմիջապես միջնորդի դեր է ստանձնում արևմտահայության ու տեղի գերմանական դեսպանատան միջև և վերջինիս փոխանցում հայերի պահանջները: Տեսնելով Գերմանիայի համար դիմադրությունը՝ հայ քաղաքական շրջանները ստիպված երաժարվել էին հայկական մեկ նահանգ ստեղծելու պահանջից, շարունակելով պնդել մյուս կարևոր կետերի վրա: Իր հերթին գերմանական դեսպանատան առաջին քարզման Շնորելը որոշակի վերապահումներով ընդունում է ընդիանուր քննչիք՝ տերությունների հավանությամբ նշանակմանը և նահանգային ժողովներում ու հաճրային պաշտոններում քրիստոնյա-

ների և մահմեղականների հավասարությանը վերաբերող կետերը<sup>3</sup>: Մակայն դա կրեց ժամանակավոր բնույթ, և Յ. Լեփսիուսի՝ Կ. Պոլսից մեկնելուց հետո գերմանական դեսպանը իրաժարվեց այդ զիջումից: Յ. Լեփսիուսի միջնորդությամբ բանակցություններ են սկսվում նաև գերմանական և ռուսական դեսպանատների միջև՝ երկուստեք փոխհանձայնության զարու նայատակով:

Կ. Պոլսում բարենորդումների հարցում որոշակիորեն նպաստելով առաջընթացի հաստատմանը՝ Յ. Լեփսիուսը կարևոր էր համարում հանդիպել և բանակցել նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պ. Նորարի հետ: Այդ նկատառումով էլ նա 1913թ. օգոստոսի 20-ին հեռագրում է Պ. Նորարին և առաջարկում զալ Կ. Պոլիս՝ նշելով, որ «իրավիճակը բարենպաստ է»<sup>2</sup>: Պ. Նորարը և կարևորում էր հայկական բարենորդումների հարցի վերաբերյալ բանակցել Յ. Լեփսիուսի հետ: Վերջինիս հայանպաստ դիրքորոշումն իմանալով հանդերձ՝ Պ. Նորարը նրան համարում էր գերմանական դեկանար շրջաններին նույնական պահանջում և գիտակցում, որ նա կարող է ի նպաստ Հայկական հարցի որոշակի ազդեցություն գործել նրանց վրա: Մակայն Յ. Լեփսիուսի իրավերը մի շարք պատճառներով չէր կարող ընդունվել նրա կողմից: Առաջին հերթին Պ. Նորարի գործունեության շրջանակը սահմանափակված էր Եվրոպայով, մինչդեռ Կ. Պոլսում Հայկական հարցի շուրջ ծավալվող գործընթացներին հետևելու իրավունքը պատկանում էր Հայոց Պատրիարքարանին և ազգային իշխանություններին: Բացի այդ Պ. Նորարի մեկնումն աննպատակահարմար էր հետապնդվող խնդրի բարենպաստ լուծման տեսանկյունից, քանի որ թուրքական կառավարությունը, օգտվելով Կ. Պոլսում նրա ներկայությունից, կփորձեր բանակցությունների մեջ մտնել և խափանել հայերի դիմումները մեծ տերություններին: Այդ իսկ պատճառով Յ. Լեփսիուսին հղած պատասխան նամակում Պ. Նորարը մերժելով իրավերը նշում էր, որ իր ներկայությունը Կ. Պոլսում կարող է խոչընդոտներ հարուցել, որոնցից նա ուզում է խուսափել<sup>3</sup>: Ուստի որոշվում է հանդիպել Ժնևան լճի /Ըլի-

<sup>1</sup>Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., էջ130:

<sup>2</sup> Nubar B., Ibid., p. 9.

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 35, թ. 19:

<sup>2</sup>LAH, 1726, S. 1.

<sup>3</sup>LAH, 1719, S. 1.

ցարիա/ մոտ գտնվող Վեվեյ քաղաքում, որ այդ ժամանակ իր հանգիստն էր անցկացնում Պ. Նորարը: Հենց այդտեղ էլ 1913 թ. սեպտեմբերի 4-ին Կ. Պոլսից Բեռլին վերադառնալու ճանապարհին նրան այցելում է Յ. Լեփսիոսը, և նրանք քննարկում են քարենորդումներին ու դրանց իրազործման ուղիներին վերաբերող խնդիրները: Խնչակ Ա. Ցիմմերմանի, այնպես էլ Յ. Լեփսիոսի հետ ունեցած հանդիպման ընթացքում, Պ. Նորարը զգուշաբնոր դիրք է գրավում Ռուսաստանի հանդեպ: Նա լավ գիտակցում էր, որ մեծ հայասեր լինելով հանդերձ, Յ. Լեփսիոսն առաջին հերթին գերմանացի էր և, հանդես գալով իր պետության շահերի պաշտպանությամբ, բնականարար նույնպես կասկածներով էր վերաբերում Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի կատարած ծեռնարկներին: Պ. Նորարը Յ. Լեփսիոսի հակառական տրամադրություններին արդեն ծանոթ էր, քանի որ 1913 թ. ապրիլի 25-ին Լոնդոնում կայացած հայասիրական կոնֆերանսում վերջինս հանդես էր եկել՝ Հայկական հարցում Ռուսաստանի վարած քաղաքականության խիստ քննադատությամբ: Յ. Լեփսիոսի համոզմամբ այդ հարցը կարող էր լուծվել միայն Անգլիայի և Գերմանիայի համաձայնությամբ ու համագործակցությամբ<sup>1</sup>: Այդ հանգամանքը հաշվի առնելով, Պ. Նորարը փորձում է փարատել Յ. Լեփսիոսի՝ հայերի ռուսամետ զգացումների վերաբերյալ ունեցած կասկածները: Դեռևս 1913 թ. օգոստոսի 22-ին Յ. Լեփսիոսին հղած նամակում նա նշում էր, որ Ռուսաստանը, նախաձեռնությունը վերցնելով և քարենորդումների ծրագիր ներկայացնելով, առանց ցանկության հայերին վատ ծառայություն է մատուցել և դրել կատարված փաստի առջև, քանի որ արքանցը էլ մյուս տերությունների օրինական անվստահությունը<sup>2</sup>: Յ. Լեփսիոսի հետ հանդիպման ընթացքում Պ. Նորարը քարենորդումների խնդրի դրական լուծման մեջ կարևորում է Գերմանիայի

<sup>1</sup> Stein, Goltz H., Die "Armenischen Reformen" im Osmanischen Reich, Johannes Lepsius und die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft, "75 Jahre Deutsch-Armenischen Gesellschaft Festschrift", Mainz, 1989, S. 28; Гольц Г., Корхмазян Р., Доктор Иоганнес Лепсиус. Страницы жизни /По материалам архива И. Лепсиуса/, "Страны и народы Ближнего и Среднего Востока", т. XII, Турция, Ереван, 1985, стр. 123.

<sup>2</sup> LAH, 1719, s. 2.

դերը և ակնկալում վերջինիս աջակցությունը: Նա հայտնում է նաև, որ երկու նահանգ ստեղծելու վերաբերյալ գերմանական առաջարկը չի համարում հայկական շահերին հակասող դրույթ:

Վերադառնալով Բեռլին՝ Յ. Լեփսիոսն իր կատարած առաքելության արդյունքների վերաբերյալ Ա. Ցիմմերմանին հղում է գեկուցագիր, որ մասնավորապես նշում էր. «Բանակցությունների ամենալավագույն ծեռքբերումն ես համարում եմ այն, որ Պատրիարքարանն ու քուրքահայերի առաջատար շրջանները, ինչպես նաև կաթողիկոսի հայ պատվիրակության ղեկավար Պ. Նորարը համոզվել են, որ գերմանական դեսպանատունն ու արտգործնախարարությունը ոչ միայն չեն խոշնդրություն հայ ժողովոյի պահանջներին, այլ ընդհակառակը մտադիր են քարենորդումների իրականացնան համար ազդել Բ. Դան վրա»<sup>1</sup>: Յ. Լեփսիոսի ննան եղրակացությունը կարևոր երաշխիք էր գերմանական կառավարության համար և որոշակիորեն պարտավորեցնում էր նրան դիմելու համապատասխան քայլերի, այն է աջակցելու Հայկական հարցի դրական լուծմանը:

Ենի-Ջյոյի խորհրդակցության անարդյունք ավարտից հետո ռուսական կառավարությունը սկսել էր զգայի աշխատանք տանել քարենորդումների խնդրում Գերմանիայի դիմադրությունը մեղմելու ուղղությամբ: Ակնհայտ էր, որ տերությունների միջև գոյություն ունեցող տարածայնությունների պատճառով, Ռուսաստան՝ Հայկական հարցի լուծմանն ուղղված ծեռնարկները կարող են ամրողովնի դատապարտվել ձախողման: Դրամից խոսափելու համար ջանքեր են գործադրություն այդ խնդրում գերմանական կառավարության հետ համաձայնության զարու ուղղությամբ: Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սագոնովի օգնական Ներատովը՝ Փարիզի և Լոնդոնի ռուսական դեսպաններին հղած 1913 թ. սեպտեմբերի 6-ի նամակում գրում էր. «Ի նկատի ունենալով, որ քարենորդումների հարցում մեր ծրագրած որոշ դրույթներին ամենամեծ ընդդիմությունը ցույց տվեց Գերմանիան,

<sup>1</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, стр. 125.

մենք անհրաժեշտ համարեցինք պարտականություն դնել մեր Կ. Պոլսի դեսպանի վրա, որ շնորհիվ գերմանական դեսպանի հետ անմիջական բանակցությունների համաձայնեցնի երկու կառավարությունների հայեցակետերը»<sup>1</sup>: Պետք է նշել, որ Ռուսաստանի և Գերմանիայի միջև համաձայնության հաստատման աջակցելու համար Պ. Նուրարը կարողիկոսին հղած 1913 թ. սեպտեմբերի 12-ի նամակում նշում էր, որ պատրաստ է միջնորդի դեր ստանձնել երկու կառավարությունների միջները: Համաձայնության հասնելու համար երկուստեր անհրաժեշտ էին զիջումներ: Այդ իսկ պատճառով Ենի-Քյոյի խորհրդակցության ավարտից անմիջապես հետո 1913 թ. հուլիսի 12-ին Ս. Սագոնվը հայտարարում է, որ Ռուսաստանը ծայրահեղ դեպքում կարող է համաձայնել հայկական մեկ նահանգի փոխարեն երկու շրջան ստեղծելու գերմանական առաջարկին<sup>2</sup>:

Բարենորդումների խնդրում Ռուսաստանի հետ համաձայնության հասնելը որոշակի նկատառումներով ձեռնոտու էր նաև գերմանական կառավարությանը: Առաջին հերթին դրանով Ռուսաստանը կգրկվեր Հայկական հարցում իր ունեցած նախաձեռնությունից: Երկրորդ, Ռուսաստանին առիթ չէր տրվի օգտվել խնդրի քննարկման ձախողումից և հարձակվել Թուրքիայի վրա: Երրորդ, Գերմանիայի հետ համաձայնության եզրեր գտնելու համար Ռուսաստանը ստիպված կիրաժարվեր իր ծրագրի որոշ էական կետերից, որոնք անընդունելի էին համարվում բուրքական կառավարության կողմից: Եվ վերջապես շորրորդ՝ ոչ պակաս կարևոր, Գերմանիան կվերականգներ իր հեղինակությունն արևմտահայության շրջաններում, ինչպես նաև բարենորդումների իրականացման ծախողման դեպքում չէր դիտվի որպես հիմնական մեղավոր: Այդ նկատառումներով է Գերմանիայի արտգործ-

նախարար Յագովը նույնապես հրահանգ է տալիս Վանգենհայմին՝ որոշակի զիջողություն ցույց տալ բարենորդոգումների խնդրում<sup>3</sup>:

Հայկական հարցում Գերմանիայի դիմադրության որոշակի մեղմացումն առաջին հերթին բխում էր նրա պետական շահերից: Սակայն դրա հետ մեկտեղ վերաբերմունքի այդ փոփոխմանն իր ունեցած հանդիպումներով, տված բացատրություններով ու հավաստիացումներով նպաստեց նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուրարը: Նա ջանք չխնայեց գերմանական իշխանություններին ցույց տարու, որ արևմտահայերի պահանջները չափավոր են, օրինական և համապատասխանում են նրանց շահերին: Պ. Նուրարի այդ ուղղությամբ կատարված ձեռնարկները բարձր են զնահատվել հայության շրջաններում: «Պ. Նուրարի այցելությունը Բեռլին,- գրում էր «Կոչնակ» թերթը, - դեր մը կատարած է, ազդեցության բաժին մը ունեցած է գերման հայապաշտպան քաղաքականություն առաջ քերելու»<sup>2</sup>: «Պ. Նուրարը՝ Պերլինի մէջ կատարուած աշխատութիւններով մեծապէս նպաստեց գործին յաջողութեան», - նշված էր Ապահովության Հանձնաժողովի Զավեն պատրիարքին հղած տեղեկագրում<sup>3</sup>:

Հայկական հարցի լուծման հանդեպ Գերմանիայի ունեցած ընդդիմությունը հարթելու խնդրում Պողոս Նուրարը ցուցաբերեց դիվանագիտական տաղանդ: Գերմանիայի դեկավար շրջաններին հայկական բարենորդումների իրացործմանը շահագրգուելով՝ նա ճանաւրակի հարթեց և որոշակիորեն նպաստեց այդ հարցի շուրջ ընդիանուր համաձայնության շուտափույթ կայացմանը:

<sup>1</sup> Реформы в Армении, стр. 92.

<sup>2</sup> ՀԱՌ, ֆ. 57, գ. 5, գ. 33, թ. 21:

<sup>3</sup> Реформы в Армении, стр. 74-75.

<sup>1</sup> Реформы в Армении, стр. 82.

<sup>2</sup> «Կոչնակ», Նիւ Եռք, 1913, № 45:

<sup>3</sup> ՀՀ ԳԱԹ, Գ. Զոհրաբի ֆ., գ. 91, թ. 10; Փափազեան Վ., Խմ յուշերը, Խո. Բ, էջ 534:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾԱՎԱԼՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ԵՎ ՊՈՂՈՍ ՆՈՒԹԱՐԸ  
/1913 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1914 թ. ՀՈՒՆԻՍ/

1) Պողոս Նորարի գործունությունը ռուս-բարքական բանակ-  
ցությունների ընթացքում /1913 թ. սեպտեմբեր - 1914 թ. հունիս/

Ենի-Քյոյի կոնֆերանսում Ա. Մանդելշտամի կազմած նախագծի ընդունման տապալումը բացասարար անդրադարձավ Ռուսաստանի միջազգային հեղինակության վրա և ինչ-որ չափով թուլացրեց Հայկական հարցի լուծման խնդրում նրա ունեցած դիրքերը: Իր ցուցարերած նախաձեռնության վերջնական ճախողումից խոսափելու համար, ռուսական կառավարությունը հարկադրված էր առաջարկությունների կողմից հակառակության հանդիպած որոշակի պահանջներից: Հույս չդնելով դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի աջակցության վրա՝ Պետերբուրգում որոշում են համաձայնության համեմ գերմանական կողմի հետ: 1913 թ. օգոստոսի վերջերից Թուրքիայում ռուսական և գերմանական դեսպանների միջև սկսվում են քանակություններ: Երկուստեր կատարված որոշակի գիշումներից հետո 1913 թ. սեպտեմբերի 10-ին կողմերը համաձայնության են զալիս հայկական բարենրոդումների հետևյալ նախագծի շորջ՝ թ. Դուռը դիմելու է տերություններին խնդրելով Արևելյան Անատոլիայի 2 սելսորների համար ընդհանուր քննիչներ, վերջիններիս իրավունք էր վերապահվելու արձակել իրենց սեկոորի բոլոր պաշտոնյաններին, յուրաքանչյուր սեկտորում ստեղծվելու էր ընտրական ժողով՝ բաղկացած կեսը քրիստոնյաներից, կեսը մահմեդականներից, հավասարության սկզբունքը ընդունվելու էր բոլոր պաշտոնյանների բաշխման համար, տերություններն իրենց դեսպանների և հյուպատոսների միջոցով պետք է հետևեն բարենրոդումների գործադրությանը<sup>1</sup>: Ռուս-գերմանական

այդ ծրագիրը, որը շուտով արժանանում է նաև մյուս տերությունների հավանությանը, պետք է ներկայացվեր բուրքական կառավարությանը:

Համաձայնությունը, որը Ենի-Քյոյի կոնֆերանսի անդուլ աշխատանքներից հետո կարծես հաստատվել էր տերությունների միջև, որոշակի հույսեր է արքանացնում հայության մոտ իրենց պահանջների շուտական առումով: Թեև սեպտեմբերի 10-ի համաձայնագիրը մեկ քայլ հետ էր Ա. Մանդելշտամի կազմած ծրագրի համեմատությանը, այնուամենանիվ ընդունելի էր արևմտահայության կողմից: «Հայերը, - «Նովյե վրեմյա» բերքի Փարիզի բուրքակցին տված հարցագրուցում ասում էր Պ. Նորարը, - որոնք ռուսական ծրագրի մեջ էին տեսնում իրենց իդեալը, չեն կարող չխոստովանել, որ ռուս-գերմանական նախագիծն էլ մեծապես կրաքելավի իրենց կացությունը»<sup>2</sup>: Սակայն բոլորի համար ակնհայտ էր, որ կացության բարեկաման մասին խոսելով դեռևս վաղաժամ էր, քանի դեռ նախագծի գործադրման համար ձեռք չեր բերվել թ. Դուռն համաձայնությունը, «իսկ դա, - Հ. Առաքելյանին հղած նամակում գրում էր Պ. Նորարը, - դատելով բուրքական քաղաքականության սովորությունից, իեշտ չի լինելու»<sup>2</sup>: Թուրքական կառավարության հնարավոր և սպասվելիք դիմադրության հայրահարման համար ամենաարդյունավետ միջոց կարող էր լինել բոլոր տերությունների միասնական ծեռնարկներն ու ծրագրի հետևողական պաշտպանությունը: Այդ իրողությունը քաջ գիտակցելով՝ Պ. Նորարը փորձում է իր համեստ ջանքերը կենտրոնացնել դրան ինչ-որ կերպ նպաստելու համար: Նա առաջին հերթին կարևորում էր Ռուսաստանի հետ գերմանական կառավարության համերաշխ գործունեության ապահովումը: Այդ իմաստով երաշխիքներ ստանալու համար Պ. Նորարը 1913 թ. սեպտեմբերի վերջերին նորից մեկնում է Բեռլին և հանդիպում արտգործնախարարի տեղակալ Ա. Ֆիմերմանի հետ: Հանդիպում ընթացքում Պ. Նորարը, կարևորելով բարենրոդումների անհրաժեշտությունը, անդրադառնում է նաև տերությունների կողմից դրանց վերահսկողության խնդրին և ընդգծում, որ այն իրականացվի ոչ

<sup>1</sup> “Новое время”, С.-Петербург, 1913, N 13522.

<sup>2</sup> ՀՀ Գ.Ա. Առաքելյանի ֆ., գ. 2094, թ. 1:

թե Կ. Պոլսում՝ դեսպանների կողմից, ինչը ոչ արյունավետ կլինի, այլ տեղում՝ հյուպատոսների միջոցով<sup>1</sup>: Իր հերթին Ա. Ֆիմներմանը հավաստիացնում է, որ գերմանական կառավարությունն ուժ կտա բարենորդումների խնդրին:

Ստեղծված պայմաններում Պ. Նորարը կարևոր էր համարում հանդիպումներ ունենալ նաև ոուսական դեկավար շրջանների հետ՝ հավաստիանալու համար, որ վերջիններս անշեղորեն կիետնեն արևմտահայության պահանջների պաշտպանության քաղաքականությանը: Նա որոշում է Բեռլինից ուղևորվել Պետերբուրգ, սակայն շուտով իրաժարվում է այդ ճարից՝ տեղեկանալով, որ Ս. Սագոնվն այցելելու է Ֆրանսիա և ակնկալում է նրան հանդիպել Փարիզում: 1913 թ. հոկտեմբերի 9-ին Պ. Նորարը հեռազիր է հղում Վիշի քաղաքում գտնվող Ս. Սագոնվին և ունկնդրություն խնդրում, որին վերջինս սիրով համաձայնում է: Հանդիպումը տեղի է ունենում հոկտեմբերի 17-ին Փարիզում: Արտզործնախարարը Պ. Նորարին ներկայացնում է քարենորդումների շուրջ վարվող քանակցությունների ընթացքը, նշում, որ Ռուսաստանը ստիպված որոշակի գիտմների է գնացել այդ խնդրում տերությունների միջև հաճածայնության հաստատման համար: Անդրադառնալով ոուս-գերմանական ծրագրին՝ Ս. Սագոնվը ընդգծում է, որ դրանով պետք է զոհանալ, քանի որ այն և «պարունակում է շատ լուրջ քարենորդումներ»<sup>2</sup>: Ոուս դիվանագետը հավաստիացնում է նաև, որ իր կառավարությունը բոլոր ջանքերը կգործադրի խնդրի վերջնական լուծման համար: Պետք է նշել, որ Ազգային Պատվիրակության նախագահը քարձը տպավորություն էր թողել Ս. Սագոնվի վրա: Հետագայում՝ Հակոբ Զավրիկի հետ հանդիպման ժամանակ վերջինս իր գոհունակությունն էր հայտնել Պ. Նորարի հետ ծանոթանալու կապակցությամբ՝ նրան բնորշելով որպես շատ խելացի անձնավորություն<sup>3</sup>: Օգտվելով Փարիզում գտնվելու հնարավորությունից՝ Ս. Սագոնվը քարենորդումների խնդրի շուրջ քանակցություններ է վարում նաև Ֆրանսիայի նախագահ Ռ. Պուանկառեի, քրան-

սիացի իր գործընկեր Պիշոնի և այլ պաշտոնատար անձանց հետ: Սա որոշակի հույսեր է ներշնչում խնդրի շուտափույթ լուծման տեսանկյունից: «Այս պահուս Բարիզի մէջ Սագոնվի ներկայութիւնը մեր դատին համար ամենայարմար և ամենաերջանիկ պարագաներէն մին կը կազմի», - կարողիկոսին հղած 1913 թ. հոկտեմբերի 18-ի նամակում գրում էր Պ. Նորարը<sup>4</sup>:

Հայկական քարենորդումների խնդրի լուծմանը մինչև վերջ հետամուտ լինելու ոուսական կառավարության պատրաստակամության վերաբերյալ Պ. Նորարը նոր երաշխիքներ և հավաստիացումներ է ստանում նաև Ռուսաստանի մեկ այլ քարձրաստիճան պաշտոնյայի վարչապետ Վ. Կոկովցևի կողմից, որը 1913 թ. նոյեմբերի սկզբներին գործնական այցով գտնվում էր Փարիզում: Նրանց հանդիպման պատճառը հանդիսացավ վարչապետի՝ ֆրանսիական «Թան» քերթում տված հարցագրույցը, որ նա նշել էր, որ հայկական քարենորդումների խնդրի լուծումը չի հասունացել և դեռ կարու է ժամանակի: Այդ հայտարարությունը մեծ անհանգստություն է առաջ քերում հայության շրջաններում, քանի որ կարող էր պատճառ դառնալ և քաջալերել բորբերին ավելի ուժեղացնել իրենց ընդդիմությունը քարենորդումների իրականացման խնդրում: Բացի այդ այն առիթ հանդիսացավ Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի փոփոխման վերաբերյալ կասկածների առաջացմանը: «Քորովցևի հայտարարութիւնը, - Ա. Չոպանյանին հղած նամակում գրում էր Վ. Փափազյանը, - շատ գէշ ազդեցութիւն մը գործեց»<sup>5</sup>: Նման իրավիճակը չէր կարող չմտահոգել նաև Պ. Նորարին, որը որոշում է անմիջապես հանդիպել Վ. Կոկովցևին և պարզաբանումներ խնդրել: Ընդունելով Պ. Նորարին՝ Ռուսաստանի վարչապետը նշում է, որ իր խոսքերը սխալ են մեկնարանվել, նա ուղարկի ուզում էր ասել, որ ավելի առաջնային են Ալբանիային և հույն-բուրքական հաշտությանը վերաբերող հարցերի լուծումը: Իսկ ինչ վերաբերում է հայկական քարենորդումներին, ապա Վ. Կոկովցևը Պ. Նորարին լիազորում է լրագրերում հայտնել, որ Ռուսաստանը իր պարտականությունն է համարում հասնել դրանց

<sup>1</sup> ADNA, Liassc 1/1, p. 278.

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 47, թ. 3:

<sup>3</sup> ADNA, Liassc ½, Correspondance novembrc 1913 – fevrier 1914, p. 372.

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 47, թ. 5:

<sup>5</sup> ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., զ. 7458, թ. 2:

իրականացմանը<sup>1</sup>: Յ. Լեփախոսին հղած նամակում Պ. Նուբարն անդրադառնալով վերտիշյալ «անհանգստություն պատճառած փոքրիկ միջադեպին», գրում էր, որ չի ափսոսում դրա առաջացման համար, քանի որ հնարավոր եղավ ավելորդ անգամ հավաստիանալ, որ Ռուսաստանը՝ տերությունների հետ համաձայնությամբ, շարունակում է պայքարել քարենորդումները կյանքի կոչելու համար<sup>2</sup>:

Արևմտահայության պահանջների բավարարմանը նպաստելու վերաբերյալ Պ. Նուբարը երաշխիքներ է ստանում նաև ֆրանսիական կառավարության կողմից: 1913 թ. հոկտեմբերի 17-ին նրա հետ ունեցած հանդիպման ժամանակ Ֆրանսիայի արտօրքնախարար Պիշոնը, Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման տեսանկյունից կարևորելով հայկական քարենորդումների իրականացումը, հայտարարել էր, որ դրանցից է կախված նաև Եվրոպայի խաղաղությունը<sup>3</sup>: Այդ նույն ժամանակաշրջացրում հետազոտվում է նաև Խոտայիայի կառավարող շրջանների վերաբերմունքը քարենորդումների խնդրի նկատմամբ: 1913 թ. հոկտեմբերի վերջնին Փարիզից Եզիպոտու վերադառնալու ճանապարհին Ազգային Պատվիրակության անդամ Յաղոր Արքին փաշան այցելում է Հռոմ ու հանդիպում երկրի վարչապետ Սան Ջովիանոյին և արտօրքնախարար Ջուլիետի իշերին, որոնք իրենց «քարյացակամ տրամադրություններն են հայտնում Հայկական հարցի մասին»<sup>4</sup>: Դատելով վերոհիշյալ հանդիպումների արդյունքներից՝ մի պահ տպափորություն էր ստեղծվում, թե տերությունների դիրքորոշումներում տեղի էին ունեցել որոշակի փոփոխություններ, որոնք կարող էին նպաստել Հայկական հարցի լուծմանը: Սակայն դժբախտաբար դա միայն կարծեցյալ էր, և Կ. Պոլսում, որ շարունակվում էր դիվանագիտական պայքարը, դեպքերի հետազա զարգացումները ցույց տվեցին, որ դրությունն այդքան էլ միխրաբական չեր: Տերությունների կողմից հավանության արժանացած քարենորդումների ուսու-գերմանական ծրագիրը, որը ներկայացվել էր

Բ. Դուանը, ինչն սկզբից համովակել էր վերջինիս համառ դիմադրության: Թուրքական կառավարության նման անզիջում կեցվածքը պայմանավորված էր նաև գերմանական դեսպան Վանգենհայմի դիրքով, որը, չնայած ձեռք բերված պայմանավորվածության, ոչ մի աջակցություն չէր ցուցաբերում իր ուսու գործընկերովը: «Գերմանական կառավարությունը,- հետագայում իր հուշերում գրում էր Ս. Սագոնովը,- ոչ միայն ոչինչ չարեց համաձայնեցված նախագիծը պաշտպանելու համար, այլ, ընդհակառակը, բոլոր ոտերով խոշնդրութեց դրա ընդունմանը»<sup>1</sup>: Փաստորեն Գերմանիան չէր ցանկանում ճնշում գործադրել Բ. Դուան վրա և ստիպել ընդունել մի քան, որին վերջինս դեմ էր:

Թուրքական կառավարության դիմադրության հիմնական բիրախն էր տերությունների կողմից ընդհանուր քննիչների թեկնածուների առաջադրման պահանջը, որի գործադրմամբ, ըստ նրա, սկիզբ կորվեր Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթների բաժանմանը: Ուսու-գերմանական ծրագրով նախատեսվող այդ կետի խափանման համար Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ Հալիմը ներկայացնում է իր կառավարության հակառաջարկը, որով նախատեսվում էր Արևելյան Անատոլիայի 2 սեկտորների բուրքականակ ընդհանուր քննիչներին կից նշանակել օտարելքրացի խորհրդականներ: Սակայն վերջիններիս իրավունքների մասին նշված էր շատ անորոշ կերպով, ուստի նրանք ունենալու էին լոկ անվանական բնույթ՝ գործ իրական իշխանությունից: Այդ մասին է վկայում թերևս նաև այն փաստը, որ մեծ վեցիրն օտարելքրացի խորհրդականների առաջադրման համար նոյն նշակ պատրաստականություն հայտնեց դիմել Ուսուաստանին<sup>2</sup>: Թուրքական վերոհիշյալ հակառաջարկի բավարարումը բնականարար չէր կարող ընդունել ոչ Ուսուաստանի, ոչ էլ հայության կողմից, քանի որ դա բացահայտորեն կնշանակեր իրաժարում եվրոպական վերահսկողության կարևոր պահանջից, որը կարժեգրկեր և անհմաստ կդարձներ քարենորդումները: Այդ կապակցությամբ 1913 թ. նոյեմբերի

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 503, գ. 1, զ. 53, թ. 17; ֆ. 57, գ. 5, զ. 47, թ. 14:

<sup>2</sup>ADNA, Liassc 1/1, p. 130.

<sup>3</sup>ADNA, Liassc 1/1, p. 271:

<sup>4</sup>«Յուսաքեր», Կահիքի, 1913, N162:

<sup>1</sup> Сазонов С., указ. соч., стр. 175.

<sup>2</sup> Реформы в Армении, стр. 102.

22-ին Պ. Նուրարը դիվանագիտական աշխարհին է հղում «Հայկական քարենորդությունները, Բ.Դռան նախագիծը և Եվրոպացի խորհրդականությը» խորագիրը կրող հուշագիրը, որը քննության առնելով թուրքական առաջարկը՝ այն համարում էր ամբողջովին անընդունելի: Անդրադառնալով թուրքական նախագծի այն կետին, որով ընդիանուր քննիչների և նրանց խորհրդականների միջև ծագած վեճերը պետք է լուծվեին երկրի նախարարների խորհրդի կողմից՝ Պ. Նուրարը գրում էր. «Հաշվի առնելով օսմանյան դիվանագիտության հապաղություններն ու սովորական քաշքանկները՝ պարզ կլինի, որ հիշյալ վեճերը կլուծվեն հօգուտ ընդիանուր քննիչների, որով անհնարին կդառնա խորհրդականների արդյունավետ գործությունը»<sup>1</sup>: Ինչ վերաբերում է օտարերկրացի խորհրդականներին, ապա Պ. Նուրարը գտնում էր, որ թուրքական կառավարությունը դրանց նշանակման գաղափարը վեցրել էր՝ օրինակ ունենալով Եգիպտոսը, որը յուրաքանչյուր նախարարությունում կան նման պաշտոնյաներ՝ օժտված լայն գործադիր իշխանությամբ: Սակայն ի տարբերություն վերջինների, որոնք բոլորն անգիտաներ էին և նշանակված անզինական կառավարության կողմից, Հայաստանում այդ խորհրդականներին, որոնք օժտված էին լինելու անորոշ իշխանությամբ և պատասխանատվությամբ, պետք է սատարեին վեց տարբեր պետություններ, որոնց միջև համերաշխ և հաստատում համաձայնության հաստատման հավանականությունը շատ փոքր էր<sup>2</sup>: Հուշագրի վերջում Պ. Նուրարը նորից ընդգծում էր, որ կիսաս և թերի քարենորդությունները ոչ մի օգուտ չեն ունենա և չեն վերացնի օտար միջամտության վտանգը, որը կապանա Օսմանյան կայության տարածքային ամբողջականությանը:

Թուրքական կառավարության ներկայացրած հակառաջարկի իրական շարժադիրները քաջ գիտակցում էին նաև ոռական դեկապար շրջաններում: Ո-ուսաստանի արտգործնախարարի տեղակալ

<sup>1</sup> Uras E., The Armenians in History and the Armenian Question, Istanbul, 1988, p. 663; Քարեն վարժապետ, նշ. աշխ., էջ 28:

<sup>2</sup> Տես նոյն տեղում:

Ներատովը Մ. Գիրսին հղած նամակում գրում էր. «Ընդհանուր քննիչների նշանակումը սովորանի կողմից մենք կարող ենք ընդունել միայն այն դեպքում, եթե նրանց իրավունքը լիներ լոկ անվանական, իսկ իրական իշխանությունն ու ամբողջ իրավասությունը պատկաներ տերությունների կողմից առաջադրված օտարերկրացի խորհրդականներին»<sup>1</sup>: Այդ ոգով էլ Մ. Գիրսը թուրքական նախագծում կատարում է մի շարք եական փոփոխություններ և ներկայացնում մեծ վեզիրին: «Ուստի դասպանը, - իր հուշերում գրում էր Վ. Փափազյանը, - ճարպիկ խաղով մը խորհրդականներուն տուաւ այնպիսի լայն իրատիւններ, որ բիոք ընդիանուր քննիչները խրստիլակի կը վերածուին»<sup>2</sup>: Ո-ուսական հակառաջարկի վերաբերյալ իր համամտությունն է հայտնում նաև Պ. Նուրարը: «Ընդունեկի կլինի, - ասում էր նա, - որ բոքք ընդիանուր քննիչները բավարարվեին զոտ անվանական դիրքով և բնակվեին Կ. Պոլսում ամրող իշխանությունը թողնելով խորհրդականներին»<sup>3</sup>:

Թուրքական իշխանությունները, չենդունելով ոռաների կողմից կատարված փոփոխությունները, շուտով իրամարդկում են օտարերկրացի խորհրդականների նշանակման իրենց պահանջից:

Հայկական քարենորդությունների խնդրի շուրջ ծավալող վերջին իրադարձությունները պարզորեն ցույց տվեցին, որ թուրքական կառավարությունը, հետևելով իր ավանդական քաղաքականությանը, ամեն ինչ անում էր հարցի լուծումը ծգծելու և այն վերջնականացես ծախութելու համար: «Ընդհանրապես վերցրած, - Ս. Սաղոնովին հղած նամակում գրում էր Մ. Գիրսը, - երիտրութերը բոլոր ջանքերով ծգտում են քաղել Հայկական հարցը»<sup>4</sup>: Դեպքերի նման զարգացումը չը կարող ցարուցել հայ քաղաքական շրջանների դժգոհությունն ու անհանգըստությունը: Ստեղծված կացությամբ խիստ մտահոգված էր նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պ. Նուրարը, որը փորձում էր ոսկի-

<sup>1</sup> Реформы в Армении, стр. 106.

<sup>2</sup> Փափազյան Վ., Խմ յուշերը, հու. Բ, էջ 256-257:

<sup>3</sup> АВПР, ф. Политархив, г.1913, д. 3465, л. 31.

<sup>4</sup> Реформы в Армении, стр. 103.

ներ որոնել բուրքական իշխանությունների դիմադրությունը հաղթահարելու համար: «Չեմ տարակուաիր,- կաքողիկոսին իղած նամակով գրում էր նա,- որ Տաճկաստանն որևէ արդինք մը չի պիտի քաղինք առանց ազդում ճնշում մը բանեցնելու»<sup>1</sup>: Որպես նման արդյունավետ միջոց կարող էր հանդիսանալ տերությունների կողմից Թուրքիայի վրա ուազմական ուժ գործադրելու սպառնալիքը՝ հարկադրելու համար լուծում տալ բարենորոգումների հարցին: Սակայն ակնհայտ էր, որ դա հնարավոր չէր իրականացնել, քանի որ ոչ մի տերություն, բացառությամբ թերևս Ռուսաստանի, չէր միանա այլ ձեռնարկին: Դրա ապացույցն էր նաև դեռևս 1913 թ. հուլիսին ուսական կառավարության կողմից արված նման առաջարկը՝ ներգործել Թուրքիայի վրա և ստիպել ազատել գրաված Աղրիանապոլիս քաղաքը, որը շնորհունվեց ոչ միայն Եռյակ միության երկրների, այլ նույնիսկ իր դաշնակիցների կողմից<sup>2</sup>: Ի տարրերություն ուազմական սպառնալիքի, ավելի հավանական էր քվում տերությունների ֆինանսական ճնշումը Թուրքիայի վրա, որը կարող էր բավականին արդյունավետ լինել: Ազդեցության նման միջոցի իրականացնանք հասնելուն 1913 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Պ.Նուրարն ուղղեց իր ջանքերը: «Ես հուսով եմ,- ասում էր նա,- որ տերություններն իրենց ձեռքից բաց չեն թողնի Բ. Դռան վրա ազդելու այլ միակ խաղաղաներ միջոցը»<sup>3</sup>:

Դեռևս XIX դ. կեսերից բուրքական իշխանությունները, երկրի տնտեսական ծանր կացությունը բարենավելու համար, ստիպված էին փոխառություններ վերցնել եվրոպական պետություններից: Այդ իրավիճակը շարունակվում էր նաև XX դ. սկզբներին, որի հետևանքով Թուրքիայի արտաքին պարտքը զնալով ավելանում էր: Միայն 1908-1914 թթ. երիտրուրերի կնքած փոխառությունների գումարը

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 47, թ. 23:

<sup>2</sup>Տես, Материалы по истории франко-русских отношений за 1910-1914 гг., стр. 393; Могилевич А., Айрапетян М., указ. соч., стр. 193.

<sup>3</sup>АВР, ф. Политархив, գ. 1913, ձ. 3465, լ. 30.

կազմում էր մոտավորապես 50 մլն. լիրա<sup>1</sup>: Ի վիճակի չինելով մարել այդ հսկայական պարտքը՝ բուրքական իշխանությունները՝ որպես փոխհատուցում պարտատերերին տալիս են տարրեր կոնցեսիաներ, նրանց տրամադրության տակ դնում երկրի կարևոր եկամտային արդյուրները /մաքսատներ, աղից, ծխախոտից գանձվող հարկեր և այլն/: Նման պայմաններում 1881 թ. ֆինանսական վերահսկողության համար ստեղծվում է Օսմանյան Հանրային Պարտի Վարչությունը, որի խորհրդի մեջ էին մտնում Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Խոտանիայի և Ավստր-Հունգարիայի ներկայացուցիչները: Այսպիսով Թուրքիան աստիճանաբար ընկնում էր ֆինանսական կախվածության մեջ, որը փաստորեն նշանակում էր երկրի լիակատար կախվածություն պարտատեր պետություններից: «Ուփիշն փոխառութիւն ընդուները,- այդ մասին գրում էր «Հնչակ» թերթը,- իրենց անկախութիւնը գրափորձ կըլլան»<sup>2</sup>: Փաստորեն տերությունների ձեռքում կար Թուրքիայի վրա ազդելու հզոր լծակ և նրանք կարող էին նոր փոխառությունների կնքումը պայմանավորել հայկական բարենորոգումների իրականացումով: Թուրքական կառավարությունը, ումենալով դրամի մեծ պահանջ, հարկադրված կդադարեր իր ընդիմությունն այդ խնդրում: «Եթե տերությունները մերժեին բոլոր ֆինանսական աջակցությունները՝ պայմանով, որ բարենորոգումների հարցը բնական լուծման հանգեր,- նշում էր Պ. Նուրը, որ չի կարող գլուխ պահել առանց փոխառության, չի հապաղի համաձայնել բարենորոգումների հետ»<sup>3</sup>: Հենց այդ ոգով էլ Պ. Նուրարը սկսում է դիմումներ կատարել տերությունների դեկանար շրջաններին: Մակայն նա գիտակցում էր, որ վերջիններիս համոզելը՝ դիմել այլ քայլին, այդքան էլ հեշտ չէր լինի, քանի որ դա կարող էր համեզնել Թուրքիայի սնանկացմանը: Ուստի անհրաժեշտ էր փոխառության մերժումը կապել տերությունների շա-

<sup>1</sup> Новицев А., Очерки экономики Турции до мировой войны, Москва-Ленинград, 1937, стр. 203.

<sup>2</sup> «Հնչակ», Փարիզ, 1914, №1:

<sup>3</sup> Բարգեն վարդապետ, նշվ. աշխ., էջ 29:

հերի հետ: Այդ նկատառումներով էլ Պ. Նուբարն ընդգծում էր, որ տրիած փոխառությունները, ներդրված գումարները չեն կարող երաշ-խավորված ծառայել իրենց նպատակներին, քանի ուր Օսմանյան կայսրությունում տիրում են անիշխանություն, անբարենպաստ վիճակ և գոյություն ունի երկիր քաժանան իրական վտանգ: «Առանց նախա-պես հայկական բարենրոգումների իրականացման, - նշում էր Պ. Նու-րարը, - կատարված որևէ վիխառություն չի կարող օգտակարապես ծառայել Թուրքիայի տնտեսական հարատությունների շահագործմա-նը, ոչ էլ նրա ֆինանսական կացության բարեկավմանը»<sup>1</sup>: Այդ մասին իր մտահոգությունն էր հայտնում նաև ֆրանսիացի հեղինակ Լյուտո-վիկ ող Քոնքանոսը: «Միթե Թուրքիային փող կտան, բույլ տալով, որ նրա ասիական վիճակը ներում անիշխանություն տիրի», - գրում էր նա<sup>2</sup>: Պ. Նուբարը միաժամանակ շեշտում էր, որ ֆինանսական ճնշումը չպետք է ունենա թշնամական և սպառնալիքի բնույթ ու պետք է իրա-կանացվի առանց լարելու տերությունների բարեկամական հարաբ-րությունները Թուրքիայի հետ:

Սկզբնական շրջանում Պ. Նուբարի ջանքերն ուղղված էին այդ խնդրում առաջին հերթին ձեռք բերելու ֆրանսիական կառավարության համաձայնությունն ու աջակցությունը: Եվ դա պատահական չէ: Առաջին հերթին հաշվի էր առնվել այն հանգամանքը, որ Ֆրանսիան Թուրքիայի ամենամեծ պարտապանն էր: Օսմանյան վիխառությունների մեջ այդ երկրի մասնակցության բաժինը կազմում էր 60-65 %<sup>3</sup>: Սրա հետ մեկտեղ այդ պահին ֆրանսիական և բուրքական կառավա-րությունների միջև բանակցություններ էին ընթանում նոր վիխառության կնքման վերաբերյալ, որի դիմաց Ֆրանսիային տրվելու էին Արևմտյան Հայաստանում և Սիրիայում երկարությմեր կառուցելու կոնցեսիաներ: Այդ հանգամանքներն օգտագործելով էլ Պ. Նուբարը

ձգուում էր համոզել ֆրանսիական կառավարությանը, որպեսզի փո-խառության կնքման պայմաններից մեկը լիներ Թուրքիայի կողմից հայկական բարենրոգումների իրականացման պարտավորությունը: «Չատ անտրանարանական կլինի,- ասում էր նա, - երկրում, ուր կա-տարյալ բացակայում է անդրբությունը, ահազին գումարներ վտանգի տակ դնելով՝ երկարությմեր կառուցել»<sup>4</sup>:

Չնայած ֆրանսիական դեկավար շրջանների մոտ ձևնարկած ջանքերին և թերած պատճառարանություններին՝ Պ. Նուբարին չի հա-ջողված ստանալ վերջիններիս համաձայնությունն ու հավաստիա-ցումները: Նրան հասկացնել են տալիս, որ վիխառության տրամադրումը կնքվելիք բուրք-ֆրանսիական համաձայնագրի /ստորագրեց 1914 թ. մարտի 29-ին/ իմնական պայմաններից մեկն է դրա մերժումը Ֆրանսիային կարող է դնել դժվարին կացության մեջ: Ինչ վերաբերում է բարենրոգումների իրականացումը վիխառությամբ պայմանագրե-լու խնդրին, ապա Պ. Նուբարի հետ հանդիպման ժամանակ Ֆրան-սիայի արտգործնախարար Պիշոնը նշում է, որ դա հնարավոր չէ: «Ներկա պարագաներուն մեջ այդ միջոցին դիմելը, - շեշտում էր Պիշո-նը, - շատ փափուկ է, վասն զի Ֆրանսիան արդեն Թուրքիային շատ ուրիշ կարեւոր առանձնաշնորհումներ ստացած է»<sup>5</sup>: Ֆրանսիական կառավարության ցուցաբերած գգուչավոր մոտեցումը պայմանագր-ված էր նաև այն մուավախությամբ, որ ֆինանսական բոյկոտը կսովո-պի բուրքերին իրենց անհրաժեշտ գումարը ստանալ մեկ այլ պետությունից՝ գլխավորապես Գերմանիայից: Թուրքիային վիխառություն տրամադրելու խնդրում իրենց պատրաստականությունն էին հայտնել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները<sup>6</sup>: Այդ մասին Խզվլսկու հետ զրոյցի ժամանակ Պիշոնը նկատել էր, որ ֆինանսական ճնշումը չի կարող արդյունք ունենալ, քանզի Թուրքիան, օգտվելով տերություննե-րի միջև համերաշխության բացակայությունից, կկարողանա վող հայ-

<sup>1</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1914, N 15:

<sup>2</sup> Констансон Л., Реформы в Азиатской Турции. Армянский вопрос, Москва, 1914, стр. 5.

<sup>3</sup> Քօնքանոսն Լ. տր, նշվ. աշխ., էջ 4:

<sup>1</sup> ADNA, Liassc 1/1, p. 82.

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 4; հմտ. «Հորիզոն», Թիֆլիս, 1913, N 249:

<sup>3</sup> Տես, Ակոպյան Ս., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967, стр. 135.

թայրեկ<sup>1</sup>: Նման պայմաններում Պ. Նուրարը փորձում է ջանքեր գործադրել Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու խնդրում ապահովելու բոլոր տերությունների համաձայնությունը: 1913 թ. նոյեմբերի կեսերին մեկնելով Բելզին նա հանդիպում և այդ մասին գործում է Ա. Ֆիմմերմանի հետ: Վերջինս խոստանում է իր կառավարության աջակցությունը, պայմանով, որ մյուս տերությունները ևս տան իրենց հավանությունը<sup>2</sup>: Տեղեկանալով, որ Թուրքիայի ֆինանսների նախարար Զավլիսը Բելզինում է, Պ. Նուրարը խնդրում է, որպեսզի վերջինս հետ հանդիպման ընթացքում Ա. Ֆիմմերմանն անդրադառնա նաև քարենողումների խմբին՝ մատնացույց անելով այն բոլոր վտանգները, որոնց կարող է ներարկվել բուրքական պետությունը դրանց իրականացմանը հակառակելու դեպքում: «Անվիճելի է, - Յ. Լեփսիտուխին հղած նամակում այդ մասին գրում էր Պ. Նուրարը, - որ Գերմանիայի կողմից արված նման նախազգուշացումը շատ ավելի մեծ կշիռ կունենա»<sup>3</sup>: Բելին կատարած այցի ընթացքում Պ. Նուրարը հանդիպում է նաև տեղի ոռական դեսպան Սվերբեկին և նրան ներկայացնում իր պատկերացումները բուրքական փոխառությունը քարենողումների իրականացումով պայմանավորելու վերաբերյալ: Ս. Սազոնովին հղած նամակում Սվերբեկը նշում էր, որ Պ. Նուրարի այդ առաջարկն արժանի է ուշադրության<sup>4</sup>:

Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու հնարավության խնդիրը Պ. Նուրարը բննարկել էր նաև Ս. Սազոնովի և Վ. Կոկովչի հետ Փարիզում ունեցած հանդիպումների ժամանակ: Վերջիններս համակրանքով էին վերաբերվել և արդյունավետ էին համարել այդ միջոցը: Վ. Կոկովչը խոստացել էր, որ իր կառավարությունը ջանքեր կգործադրի բոլոր տերությունների միջև այդ խնդրի շուրջ համաձայնություն գոյացնելու համար<sup>5</sup>: Տերությունների կողմից Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու նկատմամբ շոշափվել

<sup>1</sup> Материалы по истории франко-русских отношений за 1910-1914 гг., стр. 402.

<sup>2</sup> АВПР, ф. Политархив, г. 1913, д. 3465, л. 31; ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 47, թ. 23:

<sup>3</sup> ADNA, Liasses 1/1, p. 183.

<sup>4</sup> АВПР, ф. Политархив, г. 1913, д. 3465, л. 31.

<sup>5</sup> ADNA, Liasses 1/1, p. 127, 148.

էր նաև անգիտական իշխանությունների վերաբերմունքը, որը, սակայն, այդքան էլ հոսանքող չէ: Արտգործնախարարությունում հասկացնել էին տվել, որ անգիտական կառավարության կողմից այդ խնդրում որևէ աջակցություն ակնկալելն անհմատ է և ավելացնել էին, որ Թուրքիային ֆինանսական օգնության մերժման հնարավորությունը գտնվում է գլխավորապես Ֆրանսիայի ձեռքում<sup>1</sup>:

Թուրքական փոխառությունը քարենողումների իրականացմամբ պայմանավորելու վերաբերյալ իր կատարած դիմումներն եւ ավելի արդյունավետ դարձմելու համար, Պ. Նուրարը կարևորում էր, որպեսզի իրենց կառավարությունների մոտ նման քարողազություն ծավալեն նաև Եվրոպացի հայասիրական կոմիտեները: Այդ իմաստով գործողությունների միասնական պլան ծավելու համար որոշվում է կայացվում գումարել հայասիրական կոնֆերանս, որի նախաձեռնությունն իրենց վրա են վերցնում Ֆրանսիական Ասիայի կոմիտեի /նախագահ Էմիլ Սենար/ և դրա հայկական քաժանմունքի /նախագահ գնդապետ Դ'Լակրուա/ ներկայացուցիչները<sup>2</sup>: Կոնֆերանս իրավիրելուն ուղղված որոշակի կազմակերպչական աշխատանք էր կատարում նաև Պ. Նուրարը:

Եվրոպական բոլոր հայասիրական կոմիտեները պատրաստականություն են հայտնում պատգամավորներ ուղարկել՝ կոնֆերանսին մասնակցելու համար: Միակ երկիրը, որտեղ դեռևս չը ստեղծվել նման կոմիտե, Ռուսաստան էր և հետևաբար ուս պատգամավոր չը կարող ուղարկել, ինչպես դա եղավ 1913 թ. ապրիլի 25-ի Լոնդոնի հայսահիրական կոնֆերանսում: Այդ իրողությունը շատ էր մտահոգում Պ. Նուրարին: «Կոնֆերանսում ուս ներկայացուցիչ քացակայությունը, Իզգրլակու հետ հանդիպման ժամանակ նշում էր նա, - շատ ծանր տպավորություն կարող է բողնել հայերի վրա և երկյուղ ներշնչել, քե-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 219.

<sup>2</sup> Ֆրանսիական Ասիայի կոմիտեն ստեղծվել էր XIX դ. վերջերին Փարիզում Ֆրանսիայի ռազմական նախարար Ետյենի նախաձեռնությամբ և նպատակ ուներ ֆրանսիացիներին ժամորացնել Ասիայում տիրող կացությանը:

Ռուսաստանը նրանց նկատմամբ հետաքրքրություն չի ցուցաբերում»<sup>1</sup>: Այդ նկատառումով Պ. Նուբարն ամեն կերպ ջանում էր իրավիրվելիք կոնֆերանսում անպայմանորեն ապահովել ոռա պատգամավորի ներկայությունը, նամանավանդ, որ նրա նախորդ նման փորձերն ավարտվել էին անարդյունք: Այդ նպատակով նա նամակ է հղում Ռուսաստանի Պետական Դումայի հայազգի պատգամավոր Մ. Պապաջանյանին, ինչպես նաև հանդիպում Խզվուսկու հետ: Զանքերն իգոր չեն անցնում: Խզվուսկին, համոզվելով գումարվելիք կոնֆերանսի «լրջության և շափակության» մեջ, մատնանշում է ռուսական «Նովյե Վրեմյա» թերթի Փարիզի բորբոքիչին<sup>2</sup>, իսկ Մ. Պապաջանյանը հետագործ է, որ կոնֆերանսին մասնակցելու իր համաձայնությունն է հայտնել Պետական Դումայի անդամ, կադետական կուսակցության առաջնորդ Պ. Միլյուկովը<sup>3</sup>: Վերջինս հետազայտ իր հուշերում գրում էր, որ կոնֆերանսին մասնակցելու համար նա ուներ սկզբունքային պատճառեր, քանզի «կովկասյան ժողովուրդներից միայն հայերն էին, որ, չնայած ռուսական նախորդ վարչակարգի կողմից իրենց ազգային գիտակությանը հասցված դաժան վիրավորանքին, առավել հավատարիմ մնացին Ռուսաստանին»<sup>4</sup>:

Փարիզի միջազգային կոնֆերանսը տեղի է ունենում 1913 թ. նոյեմբերի 17-ին: Այնտեղ ներկա էին եվրոպացի հայասեր գործիչներ՝ Ա. Վիլյամսը, Հ. Բարսոսոնը, Օ'Կոնորը /Անգլիա/, Է. Սենառը, դ'Լակրուան, Ռ. դ'Էլն, Լ. դը Քոնքանսոնը, Ռ. Պինոնը, Վ. Բերարը /Ֆրանսիա/, Յ. Լեփսիուսը /Գերմանիա/, Հերմանը, Պրունկովը /Ավստրո-Հունգարիա/, դի Կարափան, /Իտալիա/, Լ. Ֆավրը, Կալպարենը /Շվեյցարիա/, Պ. Միլյուկովը /Ռուսաստան/ և Ազգային Պատվիրակության նախագահ Պ. Նուբարը, որը Պ. Միլյուկովի բնորոշմամբ այդ կոնֆե-

րանսի հոգին էր<sup>1</sup>: Բացման խորով հանդես գալուց հետո կոնֆերանսի նախագահ դ'Լակրուան ձայն է տալիս Պ. Նուբարին: Վերջինս նախ համառոտ ներկայացնում է Հայկական հարցի պատմությունը և քարենորդումների խնդրի շուրջ ծավալված վերջին իրադարձությունները: Այնուհետև անդրադառնալով քուքական կառավարության վարած քաղաքականության ու նրա համար դիմադրությանը՝ նա դրական արդյունքի հասնելու համար կարևոր է տերությունների կողմից Թուքրիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու անհրաժեշտությունը, որի էությունն էր փոխառության կնքումն ու մաքսատուրքերի ավելացումը պայմանավորել բարենորդումների իրականացմամբ: Ելույրի վերջում Պ. Նուբարը ներկաներին կոչ է անում այլ իմաստով դիմումներ կատարել իրենց կառավարությունների մոտ<sup>2</sup>: Իրենց ելույրներում մյուս պատգամավորները, անդրադառնալով հայկական քարենորդումների իրականացման անհրաժեշտությանը, ընդգծում են ֆինանսական ճնշման կարևորությունը: «Պատգամավորների միջև մտքերի փոխանակումից պարզվեց, - գրում էր կոնֆերանսին ներկա «Նովյե Վրեմյա» թերթի Փարիզի բորբոքիչը, - որ նրանց միջև ոչ միայն տարածայնություն գոյություն չունի, այլև Պ. Նուբարի ներկայացրած միջոցը հանդիսանում էր միակ իրականն ու անհետաձգելին»<sup>3</sup>: Այդ ոգով էլ կոնֆերանսի մասնակիցները միաձայն ընդունում են քանաձև, որը պետք է ներկայացվեր տերությունների կառավարություններին: «Չնայած Պ. Նուբարի վերին աստիճան զգուշ և համեստ գործելակերպին, - հետազայտ նշում էր Պ. Միլյուկովը, կոնֆերանսն ընդունեց Հայկական հարցի վերաբերյալ բավականին խիստ քանաձև»<sup>4</sup>:

Հայասիրական կոնֆերանսը լայն արձագանքներ ունեցավ տարբեր երկրներում և հատկապես Ֆրանսիայում, ուր տեղի մատուցվ, անդ-

<sup>1</sup> Բարգեն վարդապետ, նշվ. աշխ., էջ 8:

<sup>2</sup> Ամբողջությամբ Պ. Նուբարի ելույրը տես, Բարգեն վարդապետ, նշվ. աշխ., էջ 18-31:

<sup>3</sup> «Новое время», С.-Петербург, 1913, №13549; տես նաև, Աճառյան Հ., Տաճկահայոց հարցի պատմությունը /Ակգրից մինչև 1915 թ./, Նոր-Նախիջևան, 1915, էջ 75:

<sup>4</sup> «Աշակ», Թիֆլիս, 1913, N 282:

<sup>1</sup> АВПР, ф. Политархив, г. 1913, д. 3465, л. 27.

<sup>2</sup> Նոյեմբերում:

<sup>3</sup> ADNA, Liasse 1/1, p. 8.

<sup>4</sup> Милюков П., Воспоминания, т. 2, Москва, 1990, стр. 120.

բաղաւնալով այդ հավաքույթին, տպագրեց դրա որոշման բանաձևը: «Ֆրանսիական մի շարք քերթեր,- կարողիկոսին հղած նամակում գրում էր Պ. Նուրարը,- մեր կողմը բռնեցին և հիշատակության արժանի հոդվածներ գրեցին»<sup>1</sup>:

Կոնֆերանսի հաջորդ օրը՝ նոյեմբերի 18-ին Պ. Նուրարը Փարիզի հյուրանոցներից մեկում բոլոր պատգամավորներին հրավիրում է թեյսունդանի: «Այդ մտերիմ հանդիպումը,- գրում էր «Յուարեր» թերթը,- ժառայել է ավելի խորապես ամրապնդելու հայկական դատի առթիվ՝ զանազան եվրոպացի բարեկամների հաստատված կապերը»<sup>2</sup>:

Փարիզի միջազգային կոնֆերանսը կարևոր նշանակություն ունեցավ: Առաջին հերթին այն ավելի համախմբեց Եվրոպայի հայասիրական ուժերին և նպաստեց համաձայնեցված և միասնական գործունեության ծավալման ինչպես միմյանց, այնպես էլ Ազգային Պատվիրակության միջև: Խոկ Եվրոպական երկրներում ծավալված այդ հայանպատ շարժումն էլ իր հերթին որոշակիորեն հեջտացրեց Պ. Նուրարի առաքելությունը:

Այդ կոնֆերանսը, ի տարրերություն Լոնդոնում տեղի ունեցածի, ավելի ներկայացուցչական էր, քանի որ դրան մասնակցեցին պատգամավորներ Եվրոպական ավելի շատ երկրներից, այդ թվում նաև Ռուսաստանից: Պետք է նշել, որ ինչ-որ տեղ նաև այդ կոնֆերանսի շնորհիվ էր, որ արդեն 1913 թ. դեկտեմբերի վերջերին Պ. Միլուկովի նախաձեռնությամբ ստեղծվում է Մոսկվայի հայասերների կոմիտեն, որի անդամներից էին Պ. Դոլգորուկովը, Ս. Կոտյարովսկին և ուրիշները<sup>3</sup>:

Չնայած Պ. Նուրարի ձեռնարկած եռանդուն ջանքերին, տերություններն այդպես էլ շիմեցին Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում գործադրելու արդյունավետ միջոցին: Նման ճնշման հնարավորության մասին շատ անշան կերպով ակնարկվեց Թուրքիայի ֆինանսների

նախարար Զավիդին, նրա՝ Փարիզ և Բելյին կատարած այցելությունների ժամանակ, սակայն գործնականում ոչ մի քայլ չեղանակվեց: Միայն Ռուսաստանն էր, որը, իր ձեռքում չունենալով Թուրքիայի վրա այդ ինաստով ազդելու հնարավորություն, փորձեց որոշակի ջանքեր գործադրել, որպեսզի ֆրանսիական կառավարությունը բոլորական փոխառության կերպումը պայմանագրի հայկական բարենորոգումների և հատկապես Կ. Պոլսում հաստատված գերմանական ռազմական առաքելության հետ կապված հարցերի լուծմամբ: 1913 թ. նոյեմբերի 8-ին կնքված բոլոր գերմանական համաձայնագրով Թուրքիա էր ուղարկվել ռազմական առաքելություն Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Սովորաբ 1913 թ. դեկտեմբերի 4-ի իրամանով վերջինս նշանակվել էր Կ. Պոլսում տեղակայված բոլորական ռազմակային կորպուսի իրամանատար: Դեպքերի նման զարգացումն առաջացրել էր Ռուսաստանի խիստ դժգոհությունն ու ծայր աստիճան սրել ուսուցել գերմանական հարաբերությունները: Բանն այն էր, որ այդ նշանակումով սկսվել նեղուցները փաստորեն անցնելու էին Գերմանիայի անմիջական վերահսկողությանը, որով ծանր հարված կհասցըվեր Ռուսաստանի շահերին: Դրա հետ մեկտեղ Թուրքիան կը նկաներ Գերմանիայի ռազմական և տնտեսական լիակատար կախվածության մեջ, որից Ռուսաստանը ևս ցանկանում էր խուսափել: «Գեներալ Լիման ֆոն Սանդերսի պարտականությունների մեջ էր նտնում Օսմանյան կայսրությունը գերմանական տիրապետության ամուր հիմքերի հիմնումը», - իր հուշերում գրում էր Ս. Սագոնովը<sup>4</sup>:

Գերմանական ռազմական առաքելության հետևանքով ստեղծված միջազգային լարված իրավիճակը չէր կարող բացասարար չանդրադարձնալ նաև հայկական բարենորոգումների խնդրի լուծման վրա, որը ոչ միայն կարող էր զգացվել, այլ երկուուր կար, որ բոլորական իշխանությունները, օգտվելով տերությունների միջև ծագած հակառակություններից և երկպառակությունից, կուժեղացնեին իրենց դիմադրությունը՝ դրանց իրագործումը վերջնականացնելու խափանելու համար: Այդ կապակցությամբ իր մտահոգությունն արտահայտելով՝ կարողիկոսին հղած նամակում Պ. Նուրարը միաժամանակ հույս էր հայտնում, որ

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 24:

<sup>2</sup>«Յուարեր», Կահիրե, 1913, Ն 177:

<sup>3</sup> Արմանական գույքը Հայոց ազգային գործության մասին հայտակերպության մասին շատ անշան կերպով ակնարկվեց Թուրքիայի ֆինանսների գործադրելու արդյունավետ միջոցին: Նման ճնշման հնարավորության մասին շատ անշան կերպով ակնարկվեց Թուրքիայի ֆինանսների գործադրելու արդյունավետ միջոցին: Նման ճնշման հնարավորության մասին շատ անշան կերպով ակնարկվեց Թուրքիայի ֆինանսների գործադրելու արդյունավետ միջոցին: Նման ճնշման հնարավորության մասին շատ անշան կերպով ակնարկվեց Թուրքիայի ֆինանսների գործադրելու արդյունավետ միջոցին:

<sup>4</sup> Արմանական գույքը Հայոց ազգային գործության մասին հայտակերպության մասին շատ անշան կերպով ակնարկվեց Թուրքիայի ֆինանսների գործադրելու արդյունավետ միջոցին:

<sup>1</sup> Սազոնով Ս., սկզբ. ուղարկում, թ. 1, գ. 150.

Ուսաստանը կպահանջի, որպեսզի գերմանական կառավարությունը ստացած այդ առանձնաշնորհման դիմաց, զիջումների գնա քարենութումների խնդրում<sup>1</sup>: Պետք է նշել, որ գերմանական կողմը պատրաստ էր նման զիջումների: Այսպես, Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենիայը Բ. Դանը խորհուրդ էր տալիս քարենութումների հարցում շուտափույթ համաձայնության հասնել ոռաների հետ, նշերվ, որ դա կհարի ուազմական առաքելության պատճառով առաջացած տարածայնության սրուտմը<sup>2</sup>: Ուսաստանի դժողովությունը մեղմելուն էր ուղղված նաև այն, որ Վանգենիայը դեկտեմբերի 12-ին ոռա-գերմանական համաձայնության կնքումից հետո առաջին անգամ Մ. Գիրսի հետ միասին այցելում է մեծ վեգիրին՝ պաշտպանելու համար համատեղ ընդունված ծրագիրը: Սակայն տվյալ դեպքում այդ ամենը չի կարող քավարարել ուսական կառավարությանը, որի համար ավելի կենսական նշանակություն ուներ նեղուցների անվտանգության հարցը: «Նեղուցների հանդեպ սպառնալիքի առաջացումը, գրում էր Ս. Սաղոնվը, - Ուսաստանին կատիվեր հրաժարվել իր խաղաղախրական քաղաքականությունից»<sup>3</sup>: Ուսաստանի նման դիրքը չի կարող անտեսվել Բենլինում: Շոտով, վիճելի հարցին երկուառեք ընդունելի լուծում տալու համար, կողմերի միջև սկսվում են բանակցություններ, որոնց արդյունքում միջադեպն ինչ-որ չափ հարթվում է՝ Կ. Պոլսի առաջին բանակային կորպուսի հրամանարտարությունը հանձնվում է բոլոր գեներալին, իսկ Լիման ֆոն Սանդերսին շնորհվում է բոլորական բանակի տեսուչի կոչում:

1913 թ. դեկտեմբերի կեսերից հայկական քարենութումների շուրջ Մ. Գիրսի և մեծ վեգիրի միջև տարվող բանակցությունները մտնում են վերջին փուլ: Երկուառեք հանդիպումների ընթացքում, որոնք տեղի էին ունենում զրեք ամեն օր, Մ. Գիրսը մեծ ջանքեր էր գործադրում ոռա-գերմանական նախագիծն ընդունել տալու համար: Դեկտեմբերի 12-ին բոլորական կառավարությունը, հրաժարվելով

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ. 62:

<sup>2</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, стр. 147; Կարապետյան Ն., Հայկական քարենութումների խնդիրը 1912-1914 թթ., Հայ ժողովի պատմություն, Խո. 6, Երևան, 1981, էջ 533:

<sup>3</sup>Сазонов С., указ. соч., стр.150.

եվրոպական խորհրդականների վերաբերյալ իր առաջարկությունից, նորից վերադարձել էր ընդհանուր քննիչների նշանակման նախնական տարրերակին, ըստ որի վերջիններս պետք է առաջադրվեին տերությունների, իսկ հաստատվեին սովորակի կողմից: Այդ կետում ոռաները գնում են որոշակի զիջումների և համաձայնում են, որպեսզի վերատեսունների պաշտոններում թեկնածուներ առաջարկելու համար մեծ վեգիրը տերություններին դիմի ոչ պաշտոնապես և բանավոր կերպով: Բացի այդ, Թուրքիայի ինքնասիրությունն ու արժանապատվությունը չիրավորելու նկատառումով, նախագծից հանվեց քարենութումների գործադրուման նկատմամբ տերությունների վերահսկողության վերաբերյալ կետը, ենթադրելով, որ այն կիրականացվի ընդհանուր քննիչների կողմից: «Քանի որ հակակշիռ քառու անհանու եղավ օսմանյան կառավարությանը, - նշում էր Պ. Նուբարը, - դրա փոխարեն ընդունվեց քննչության գաղափարը»<sup>1</sup>: Ընդհանուր քննիչների նշանակման խնդրում կատարած վերոհիշյալ զիջումների դիմաց Մ. Գիրսը ջանում էր վերջիններիս շնորհել լայն լազորություններով, որոնց մեջ ներառնվեն քարենութումների գլխավոր սկզբունքները /պաշտոնյանների նշանակում և արձակում, հողային վեճերի լուծում և այլն/: «Ուսաները, գրում էր Վ. Փափազյանը, - որոնց համար քարենութումներու առանցքը կը կազմեր ընդհանուր քննիչներուն արուելիք լայն իրավունքները, համոզված էին, թէ բոլոր միա կետերը, որքան էլ հակառակ լինեին թիվքերը, աստիճանաբար և աննկատելի պիտի կրնային կիրառուի հայերու քաղաքանքին համաձայն, եթէ միայն քննիչները անկաշկանդ և միակ վերին իշխանությունը դատան երկրին»<sup>2</sup>:

Մ. Գիրսի և Սայիդ Հայիմի միջև երկար բանակցությունների առարկա է դառնում նաև հայկական վիլայեթների ընդհանուր ժողովների կազմի հարցը, որում բոլորերը ցույց տվեցին ամենահամար դիմադրությունը: Բ. Դուռը կտրականապես մերժում է դրանցում, թեկուզ և ժամանակափորապես, քրիստոնյաների և մահմեդականների հավասարության վերաբերյալ ոռաների առաջարկը: Տեսնելով բոլորերի

<sup>1</sup>«Թիգանդիոն», Կ. Պոլիս, 1913, N 5307:

<sup>2</sup>Փափազյան Վ., Խմ յուշերը, Խո. Բ, էջ 256:

ընդդիմությունը՝ Մ. Գիրսը հավասարության սկզբունքն առաջարկում է կիրառել Վանի, Բիթլիսի և Էրզրումի ընդհանուր ժողովներում: Իր հերթին բոլորքական կառավարությունը համաձայնում է այն ընդունել միայն Վանում և Բիթլիսում, պատճառաբանելով, որ Էրզրումի վիլայետում «քորք ժողովրդի ազգայնական գիտակցությունն ավելի զարգացած է, իսկ մահմեղական հոգևորականության ազդեցությունը՝ առավել զգալի»<sup>1</sup>:

Հետևելով բանակցությունների ընթացքին՝ Պ. Նուրարը եկել էր այն եղանակացության, որ անհրաժեշտ է գոհանալ արդեն ծեռ բերված, թեկուզ և չնշին, արդյունքներով: Նա գտնում էր, որ հետագա պնդումները չեն համապատասխանում արևմտահայության շահերին, քանի նոտավախություն ուներ, որ դա կարող էր բացասական հետևանքներ ունենալ և վտանգել Բ. Դուան հավանությանն արժանացած մյուս կետերը: «Մերժելով այդ ծրագիրը, - «Մշակ» թերքի Փարիզի քորակցի հետ հանդիպման ժամանակ նշում էր նա, - մենք կարող ենք ամեն ինչ վտանգել, որովհետև դժբախտաբար օսմանյան կառավարության հեռատեսությունից որևէ բան սպասել չենք կարող»<sup>2</sup>: Պ. Նուրարը համոզված էր, որ բոլորքերից նոր զիջումներ ակնկալելն անիմաստ է, իսկ արդեն արվածները՝ ստեղծված բարենպաստ պայմանների արդյունք են, որոնք, սակայն, կարող են այլև չըրկնվել: Բարենպաստ պայմանների տակ նա նկատի ուներ բարենորդումների խնդրի լուծման շուրջ տերությունների միջև հաստատված համաձայնությունն ու Թուրքիայի վրա ֆինանսական ճնշում զործադրելու հնարավորությունը, որը, ըստ Պ. Նուրարի, «յավիտենական չի կրնար ի գործ դրոփի և ուշ կամ կանուխ վիխառությունը վերջապէս պիտի արտոնուի»<sup>3</sup>: Այդ նկատառումներով էլ նա գտնում էր, որ պետք է ընդունել Բ. Դուան հավանությանն արժանացած, թեական և որոշ չափով անկատար ծրագիրը, որը հետագայում կարելի էր կատարելազործել: Պետք

է նշել, որ Պ. Նուրարի բաղձանքը՝ բավարարվել արդեն ծեռվածով, բացի վերոհիշյալ փաստարկներից, ինչ-որ տեղ պայմանավորված էր նաև սուբյեկտիվ գործոնով: Խոսքը վերաբերում է նրա ցանկությանը՝ ավարտել իրեն վատահաված առաքելությունն ու որքան հնարավոր է շուտ վերադառնալ Եգիպտոս՝ կարգավորելու համար իր բացակայության ընթացքում կուտակված անձնական գործերը հառաջին հերթին դա վերաբերում էր իր նախագահած ՀԲԸ-ը: «Պաշտոնս լրացած ըլլալով, կարողիկուսին հղած նամակում գրում էր Պ. Նուրարը, - պիտի կրնամ այլև Եգիպտոս վերադառնալ, որը կը կանչին իմ անձնական գործերս, որոնք շատ տուժեցին իմ երկար բացակայութիւնը և գորոնք չեմ կրնար աւելի երկարորեն ճգել երեսի վրա»<sup>4</sup>: Սակայն սրա հետ մեկտեղ, կիսատ և անավարտ բողնուն իր պաշտոնը նա չի պատրաստվում: Այսպէս, 1913 թ. դեկտեմբերի 23-ին լրագրողներից մեկի հարցին, կապված նրա՝ Եգիպտոս հնարավոր վերադարձին, Պ. Նուրարը պատասխանել էր. «Հարկավ ես կուգենաի դառնալ Եգիպտոս, որ շատ գործեր ունեմ, բայց չեմ կարող: Անհրաժեշտ է, որ Եկուպա մնամ պաշտոնիս այս ճգնաժամային վայրկանին»<sup>5</sup>:

Իր ունեցած դատողությունների շուրջ Պ. Նուրարը 1914 թ. հունվարի 12-ին զրուցել էր նաև Մ. Գիրսի հետ, որն արձակուրդով գտնվում էր Փարիզում գործերի տնօրինությունը Կ. Պոլսում քողներով իր հավատարմատար Կ. Գովկեիչին: Հանդիպման ընթացքում ուսական դեսպանը, Պ. Նուրարին ներկայացնելով բարենորդումների շուրջ կատարված բանակցությունների ընթացքն ու իրերի վիճակը՝ մինչև իր մեկնումը, համաձայնել էր, որ պետք է գոհանալ ծեռ բերվածով<sup>6</sup>:

Տեղեկանալով, որ արևմտահայ դեկանար շոջանները ցանկանում են շարունակել պնդել, որպեսզի հավասարության սկզբունքն ընդունվի նաև Էրզրումի վիլայեթի ընդհանուր ժողովի համար, Պ. Նուրարը, դիմելով Պատրիարքարանին և ներկայացնելով իր վերոհիշյալ փաս-

<sup>1</sup> Реформы в Армении, стр. 138.

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1914, N 19:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 2; ADNA, Liasse ½, թ. 305.

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 3:

<sup>5</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1914, N 15:

<sup>6</sup> АВПР, գ. Политархив, թ. 1914, ձ. 3472. լ. 40; ADNA, Liasse ½, թ. 303-304.

տարկները, կոչ էր անում բավարարվել թ. Դոան հավանության արժանացած կետերով<sup>1</sup>: Այդ իմաստով Պ. Նուրարը, Ե. Աղարոնին հղած նամակում, մի պահ նույնիսկ ափսոսանք էր հայտնում, որ չք ընդունել բարենորդումների խնդրի քննարկման համար Կ. Պոլիս այցելելու բոլքական կառավարության կողմից արված առաջարկը, նշելով, որ իրեն կհաջողվեր ավելի արագ հասնել համաձայնության<sup>2</sup>:

Հայկական բարենորդումների խնդրի շորջ վերջնական համաձայնության հաստատման ծզճումն անհանգստություն էր առաջ բերել նաև Կ. Պոլիս ոռասական դեսպանատանը: Բանակցությունների ընթացքում հանդիպելով բոլքերի համար դիմադրության ու զորկ լինելով մյուս տերությունների աջակցությունից՝ այստեղ նույնպես եկել էին այն եզրակացության, որ նոր զիջումներ ձեռք բերելը զնալով ավելի է դժվարանում: «Ես անձամբ համոզված եմ, - Ս. Սաղոնովին հղած նամակում գրում էր Ս. Գիրսը, - որ ներկայումս մենք ավելի մեծ արդյունքի հասնել չենք կարող և պետք է բավարարվենք բարենորդումների միայն լուրջ սկզբունքով, որը, անշոշտ, կրարգավաճի ապագայում, շնորհիվ ընդհանուր քննիչների գործունեության»<sup>3</sup>: Այդ նկատառումներով էլ ոռասական դիվանագիտությունը որոշակի զիջումների է զնում նաև հայկական վիլայեթների ընդհանուր ժողովների կազմության խնդրում: «Հաշվի առնելով ընդհանուր կացությունը, - այդ մասին նշում էր Պ. Նուրարը, - ինչպես նաև ուրիշ հանգամանքներ, որոնք կարող էին մեկ օրեն մյուսը բաղարական անակնկալ դեպքերի առջև դնել մեզ և գուցե վտանգել ամրող գործն իսկ, հարմար դատվեց չպնդել այս կետի վրա»<sup>4</sup>:

Ոռասական կառավարության կողմից արված զիջումների շնորհիվ իրական հնարավորություն ստեղծվեց բարենորդումների խնդրում վերջնական համաձայնության հասնելու համար: Ե. Աղարոնին գրած

նամակում Պ. Նուրարը հույս էր հայտնում, որ բանակցությունները մոտենում են իրենց ավարտին, սակայն գտնում էր, որ չպետք է ժամանակից շուտ կանխատեսումներ անել, նշելով, որ «քանի դեռ համաձայնությունը չի կնքվել, բոլքերից ամեն ինչ կարելի է սպասել»<sup>1</sup>:

Ե վերջո երկարատև բանակցություններից հետո, Թուրքիայում ուսական գործերի հավատարմատար Կ. Գուլկիչը և մեծ վեգիր Սայիդ Հալիմը 1914 թ. հունվարի 26-ին ստորագրում են համաձայնագիր հայկական բարենորդումների վերաբերյալ: Ըստ դրա Արևելյան Անատոլիան բաժանվելու էր երկու սեկտորների. առաջինի մեջ մտնելու էին Էրզրումի, Տրավելիսի, Սեբաստիայի, իսկ երկրորդի՝ Վանի, Բիրլիսի, Խարբերդի և Դիարբերիի վիլայեթները: Յուրաքանչյուր սեկտորի զուիս նշանակվելու էր օստարերկրացի ընդհանուր քննիչ, որի իրավասությունների մեջ էին մտնելու վերահսկողությունը վարչության, ոստիկանության, արդարադատության և ժանդարմերիայի վրա: Ընդհանուր քննիչներն իրավունք էին ունենալու պաշտոնանի անել բոլոր պաշտոնյաներին: Ստորին պաշտոնյաներին իրենք կարող էին նշանակել, իսկ բարձր պաշտոնյաների նշանակման համար պետք էր առաջարկություն արվել կառավարությանը:

Ընդհանուր քննիչների իրավունքներին և պարտականություններին վերաբերող ավելի մանրամասն իրահանգներ տրվելու էին նրանց նշանակումից հետո և նրանց օժանդակությամբ: Եթե 10 տարվա ընթացքում այնպես ստացվեր, որ ընդհանուր քննիչի պաշտոնը թափուր մնար, թ. Դուռը նրանց ընտրության հարցում պետք է դիմեր տերությունների աջակցությանը: Հողային վեճերը պետք է լուծվեին ընդհանուր քննիչների անմիջական վերահսկողությամբ: Յուրաքանչյուր սեկտորում օրենքները, իրովատակները և կառավարական հաղորդագրությունները պետք է իրապարակվեին տեղական լեզուներով: Խաղաղ ժամանակ յուրաքանչյուր օսմանահպատակ իր զինվորական պարտականությունը պետք է կատարել այն շրջանում, որը նա ապրում էր:

<sup>1</sup> АВПР, ф. Политархив, г. 1914, д. 3472. л. 40.

<sup>2</sup> ADNA, Liassc ½, p. 319.

<sup>3</sup> Реформы в Армении, стр. 129.

<sup>4</sup> «Эпидар», Կահիրե, 1914, N 210:

<sup>1</sup> ADNA, Liassc ½, p. 445.

Համիլին գորազները պետք է վերափոխվեին պահեստի հեծելազորի: Երկու սեկտորներում գոյություն ունեցող զանազան կրոնների, ազգությունների և լեզուների իրական հարաբերությունը պետք է որոշվեր վերջնական մարդահամարի միջոցով, որը կատարվելու էր ընդհանուր քննիչների հսկողությամբ: Վանի և Բիրլիսի վիլայեթներում ընդհանուր ժողովների անդամներն ընտրվելու էին հավասար թվով քրիստոնյաներից և մահմեղականներից: Հավասարության նույն սկզբունքը կիրառվելու էր նաև Էրզրումում վիլայեթում, եթե այնտեղ մեկ տարվա ընթացքում մարդահամարը չափարտվեր, իսկ Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբերդի վիլայեթներում ընդհանուր ժողովների անդամները պետք է ընտրվեին համեմատական սկզբունքով: Վարչական խորհրդի անդամները ընտրվելու էին հավասար թվով քրիստոնյաներից և մահմեղականներից: Այդ սկզբունքը կիրառվելու էր նաև ոստիկանության և ժանդարմերիայի մարմիններում, ինչպես նաև մնացած պաշտոնների բաշխման հարցում: Բ. Գուրը՝ ընդհանուր քննիչների նշանակման հետ մեկտեղ վերօհիշյալ հուշագրով դիմելու էր տերություններին<sup>1</sup>:

Համեմատելով Ա. Մանդելշտամի կազմած բարենորոգումների նախագծի հետ, որով արևմտահայությանը փաստորեն շնորհվում էր ինքնավարության լայն իրավունքներ, հունվարի 26-ի ուս-քուրքական համաձայնագիրն անշուշտ մեկ քայլ հետ էր և ուներ մի շարք թերություններ: Բայց լայնպես, այն իրականացվելու դեպքում կարող էր վերացնել արևմտահայերի անտանելի ծանր կացությունն ու ապահովել նրանց խաղաղ բարգավաճումը: Այդ իսկ պատճառով այն խանճավառությամբ ընդունվեց վերջիններիս կողմից և մեծ հույսեր ներշնչեց նրանց: Հայ դեկավար շրջանները, տեսնելով հանդերձ համաձայնագրում առկա թերությունները, միաժամանակ գիտակցում էին, որ այն կարևոր քայլ էր բարենորոգումների իրականացման և հետագայում դրանք կատարելագործման ուղղությամբ: «Միջազգային այս նոր

պարտաւորությունը, - Զավեն պատրիարքին հղած 1914 թ. մարտի 3-ի նամակում գրում էր Գևորգ Ե կարողիկոսը, - պետք է ծառայէ իրեւ հիմք ապազայ մեր ազգային զօրեղացման և իրաւանց ընդլայման»<sup>2</sup>:

Ուս-քուրքական համաձայնագրի և դրա արդյունավետության հանդեպ տերությունների վերաբերմունքը միանշանակ չի: Միակ տերությունը, որի ջանքերին էլ արևմտահայությունը պարտական էր իր խնդրի նման համգույցալում համար, Ռուսաստանն էր, որը կարևորում էր համաձայնագրի նշանակությունն ինչպես հայության օգտի, այնպես էլ իր շահերի տեսանկյունից: Կ. Գովկինը Ս. Սագոնովին հղած 1914 թ. հունվարի 27-ի նամակում, ընդգծելով կնքված վավերագրի հսկայական նշանակությունը, գրում էր, որ այս «անկասկած նշանավորում է հայ ժողովրդի պատմության նոր, ավելի բախտավոր դարաշրջանի սկիզբը»<sup>3</sup>: Վերոհիշյալ նամակում Կ. Գովկինը նաև նշում էր, որ «ոս-քուրքական համաձայնագրով պաշտոնապես ընդգծվեց Ռուսաստանի դեկավար դերը Հայկական հարցում, որն ամենարերար կերպով կանդրադառնա նրա միջազգային հեղինակության վրա»<sup>4</sup>: Նույն ոգով էր արտահայտվում նաև Ա. Մանդելշտամը՝ հունվարի 26-ի վավերագիրը համարելով Կ. Պոլսում գերմանական ուժեղ ազդեցության դարաշրջանում ուսական դիվանագիտության խոշոր հարցանակը<sup>5</sup>: Ի տարբերություն Ռուսաստանի՝ մյուս տերությունների դեկավար շրջաններն այլ կերպ էին զնահատում ստորագրված համաձայնագիրը: Այսպես, Գերմանիայի կանցյեր Բետման-Հոլվեգին հղած նամակում Վանգենհայը, ծեռք բերված արդյունքը համարելով Թուրքիայի դիվանագիտական հաղթանակ, ավելացնում էր, որ այն պարունակում է սուսկ ցանկություններ և ոչինչ չպարտադրող խոստումներ<sup>6</sup>: Իսկ Անգլիայի արտգործնախարարության մշտական քարտուղար Ա. Խակ Անգլիայի արտգործնախարարության մշտական քարտուղար

<sup>1</sup> Ա.Մաշտոցի անվ. Մատենադարան, Գյուտ նպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, թոր. 3, վավ. 125:

<sup>2</sup> Реформы в Армении, стр. 173.

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>4</sup> Мандельштам А., Младотурецкая держава, Москва, 1915, стр. 51.

<sup>5</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, стр. 149-150.

Նիբոլսնի կարծիքով հունվարի 26-ի համաձայնագիրը պարզապես պատկանում է մինչ այդ մշակված այն հիանալի ծրագրերի շարքին, որոնցից ոչ մեկն էլ արդյունք չի ունեցել<sup>1</sup>: Ինչ վերաբերում էր թուրքական իշխանությունների վերաբերմունքին, ապա այն ցայտում կերպով իր հուշերում արտահայտել էր երիտրութքական պարագլուխներից Զեմալ փաշան: «Բարենորոգումների վերաբերյալ համաձայնագիրը, գրում էր նա, - մեզ համար չլիներ ոչ մի էական նշանակություն»<sup>2</sup>: Դա վկայում էր այն մասին, որ թուրքական կառավարությունը հենց սկզբից վճռել էր ամեն զնով խափանել բարենորոգումների իրազործումը:

Ուսա-թուրքական համաձայնագրի կնքման լուրը մեծ ուրախությամբ է ընդունվում Պ. Նուրարի կողմից: Այդ կապակցությամբ նա 1914 թ. հունվարի 29-ին շնորհավորական հեռագրեր է հղում Կ. Պոլսի Չափեն պատրիարքին և Ամենայն Հայոց Գևորգ Ե կարողիկոսին: «Մեր Ասիական Թուրքիայի եղայրները, - գրում էր նա կարողիկոսին, - այսուհետև հնարավորութիւն կունենան ապրելու արդարադատ և ապահով վարչութեան ներքոյ»<sup>3</sup>: Կարողիկոսին շնորհավորական հեռագրեր են հղում նաև Ազգային Պատվիրակության անդամներ Հ. Մոստիշյանն ու Գ. Ուրուցյանը՝ բարձր զնահատելով Հայկական հարցի լուծմանն ուղղված վերջինիս ջանքերը: Իր հերթին Գևորգ Ե կարողիկոսը 1914 թ. փետրվարի 20-ին օրինության և շնարհակալության կոնդակ է հղում Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուրարին: Բարձր զնահատելով վերջինիս «հեռատես աշխատանքն ու զգուշափոր դիվանագիտական հարաբերությունները», Վեհափառ Հայրապետը մասնավորապես գրում էր: «Արդարք Դուք ազգօգուտ և մարդասէր զործունութեամբ Զերով անմահացուցիք զղուատելի անուն Զեր և բռից զիշատակ բարի և անեղծանելի յազգային պատմութեան մերում և

հաւատամբ, զի որպէս այսօր յամենայն կողմանց հոգևոր զասակումը մեր յայտնեն զգերն համակրան և զերախտագիտական զգացմուն իրեանց առ Զեր, նոյնպէս և ապագայ սերունդը հայոց միշտ և յաւտ օրինութեամբ և երախտագիտութեամբ յիշեցեն զբարի և զազգային գործ Զեր»<sup>4</sup>: 1914 թ. նայիս 30-ին կարողիկոսական կոնդակի պատճեններն ուղարկելով Ազգային Պատվիրակության իր գործընկերներին՝ Պ. Նուրարը գրում էր: «Ես հիշողության մեջ պահում եմ ինձ վստահաված առաքելության կատարման ընթացքում Զեր հետ ունեցած զերմ և հաճնի հարաբերությունների մասին լավագույն հիշողությանները»<sup>5</sup>: 1914 թ. հունվարի 27-ին Պ. Նուրարն այցելում է Իզվոլսկուն և ամրող հայ ժողովրդի անունից անսահման շնորհակալություն հայունում ուսական կառավարությանը<sup>6</sup>: Նա այցելում է նաև Ֆրանսիայում թուրքական դեսպանատուն, ինչպես նաև նամակ հղում մեծ վեզիր Սայիդ Հայֆմին, իր երախտագիտությունը հայունելով վերջինիս «Արևելյան Անատոլիայի վիլայեթների խաղաղեցւուն ապահովելու և վտանգալից դրությունը վերջ դնելու» համար<sup>7</sup>: Հայկական բարենորոգումների համաձայնագրի ստորագրման կապակցությամբ Պ. Նուրարը շնորհավորական և շնորհակալական հեռագրեր է հղում նաև Ուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդին, Ս. Սագոնվին, Ս. Գիրսին, Ա. Ֆիմներմանին, Յ. Լեփսիուսին, Բրիտանո-Հայկական կոմիտեի նախագահ Ա. Վիլյամսին, Ֆրանսիական Ասիայի կոմիտեի նախագահ Է. Սենարին, նույն կոմիտեի հայկական բաժանմունքի փոխնախագահ Ռ. Ռ. Քէին և որիշներին<sup>8</sup>:

Պ. Նուրարի վերաբերմունքը 1914 թ. ուսա-թուրքական համաձայնագրի նկատմամբ ընդիմանուր առմամբ դրական էր: Նա գտնում էր, որ դրա իրազործումով հնարավոր կլինի վերջ տալ Արևմտյան Հայաստանում տիրող անիշխանական դրությանը, ապահովել խաղաղությունն

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 62, թ. 1:

<sup>2</sup> ADNA, Liassie ½, թ. 72-74.

<sup>3</sup> ԱՎՊՐ, ֆ. Պոլիտարխ, թ. 1914, ձ. 3472, լ. 98.

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 58, թ. 41:

<sup>1</sup> Ասքարյան Ա., Դիվանագիտական պայքարը հայկական հարցի շորջ և Անգլիայի բարպարականությունը /1913 թ. Երկրորդ կես/, «Պատմա-բանափրական հանդես», Երևան, 2000, Ն 2, էջ 53:

<sup>2</sup> Ջեմալ Պաշա, Զանիք 1913-1919 թ., Տիֆլիս, 1923, ստ. 233.

<sup>3</sup> «Արարատ», Եջմանական, 1914, Ն2; Լեռ, Թուրքահայ հեղափոխութեան գաղափարանութիւնը, հուն. Բ. Փարիզ, 1935, էջ 262:

ու արդարությունը: Միաժամանակ նա ևս ընդունում էր, որ համաձայնագիրը զուրկ չէ մի շարք թերություններից ու անկատարություններից: «Այդ վավերագիրը, զուսմ էր նա, - բնականարար հեռու էր համապատասխանելու հայերի ծգություններին: Այն բարենորոգումների ուսական նախագծի աղճատված տարրերակն էր»<sup>1</sup>: Պ. Նուրարը չէր բացնում իր ափսոսանքը, որ մի շարք էական կետեր /մեկ նահանգի ստեղծման, բոլոր վիլայեթների ընդհանուր ժողովներում քրիստոնյաների և մահմեդականների հավասարության ապահովման վերաբերյալ/ տեղ չեն գտել համաձայնագրում: Նա դժողո մնաց նաև այն կետից, որ Բ. Դուռը բարենորոգումների վերաբերյալ հուշագրով պետք է դիմեր տերություններին ընդհանուր քննիչների նշանակումից հետո միայն<sup>2</sup>: Պ. Նուրարը նշում էր, որ այդ բոլոր կետերում արված զիջումների հիմնական նպատակն էր չվիրավորել քորրական պետության ինքնասիրությունը: «Ընդունված ծրագիրը, - ասում էր նա, - ոչ ձևով, ոչ էլ էությամբ չի պարունակում բան մը, որ Բ. Դուռն ոյուրագգացությանը դիպչի»<sup>3</sup>: Այդ հայտարարությամբ նա հասկացնել էր տալիս, որ քորրական կառավարությունը ոչ մի հիմք չունի խոսափելու բարենորոգումների իրագործումից: Պ. Նուրարը լավատեսությամբ էր լցված ինչ-պես բարենորոգումների, այնպես էլ արևմտահայության ապագայի համեմատ: Անգլիական «Մանչեստր Գարդիան» թերթի Փարիզի բորբակի հետ ունեցած գլուխի ժամանակ նա ընդգծել էր, որ երեք Բ. Դուռն անկեղծորեն և օրինապահորեն իրականացնի բարենորոգումները, Հայկական հարցը՝ որպես այդպիսին, կդադարի զոյություն ունենալուց<sup>4</sup>: Բարենորոգումների իրականացման վերաբերյալ իր համոզվածությունը նա բացատրում էր երաշխիքի առկայությամբ: Ըստ նա դա Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման Եվրոպայի և հենց իրենց՝ քորրական իշխանությունների շահն էր, որը հնարավոր էր միայն երկուուր բարեփոխումների իրականացումով: «Եթեկա պարագային անժխտելի է, - ասում էր նա, - որ

լաւագոյն բան մը կայ, այն է շահը զոր փոխադարձ կողմերն ունեն իրենց յանձնառություններն յարգելուն մէջ»<sup>1</sup>: Սակայն պետք է նշել, որ Պ. Նուրարի այն համոզմունքը, թե բուրքական կառավարությունը բարենորոգումների անհրաժեշտությունը և դրանցում իր շահը գիտակցելով էր կնքել հունվարի 26-ի համաձայնագիրը, սխալ էր: Նա միամտութեն կարծում էր, որ Բ. Դուռն անշեղորեն կիրագործի իր ստանձնած պարտավորությունները և գտնում, որ դրա ապացույցն էր նաև նախարարի պաշտոն ստանձնելու վերաբերյալ մեծ վեզիր Սայիդ Հալիմի կողմից իրեն արված առաջարկը<sup>2</sup>:

Անդրադառնալով այն հարցին, թե հայությունն ինչին պետք է պարտական լիներ նման արցյունքի հասնելու համար, Պ. Նուրարը մատնանշում էր երեք հիմնական պարագաներ: Առաջին հերթին նա նկատի ուներ Բալկանյան պատերազմի հետևանքով ստեղծված բարենպատ իրադրությունը, որի շնորհիվ հնարավոր դարձավ Հայկական հարցի վերաբացումն և, որ ամենակարևորն էր, բոլոր տերությունների շահագրգովածությունն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման մեջ, որը կարող էր վտանգվել առանց հայկական բարենորոգումների իրականացման: «Ասիկա եղաւ մին այն զիսաւոր փաստերէն, - կարողիկոսին հղած 1914 թ. մայիսի 1-ի նամակում գրում էր Պ. Նուրարը, - զոր վեր հանեցի Դահլիճներուն մօս՝ հայցելու համար իրենց միջամտութիւնը, և այդ շարժադրին է որ որոշեց իրենց դուրս գալու այն անտարերութենէն զոր իրենց քաղաքականութիւնը ցոյց տուած էր մեր բարենորոգումներու նկատմամբ Պերլինի Դաշնագրէն ի վեր»<sup>3</sup>: Երկրորդ նպաստավոր պարագան, ըստ Պ. Նուրարի, դա արևմտահայերի պահանջների շափակությունն ու օրինականությունն էր: «Բարենորոգումներ ուզեցինք, ուրիշ ոչինչ, որոնք էլ հիմնված էին մեր ծեռ բերված իրավունքների վրա», - ասում էր նա<sup>4</sup>: Եվ վերջապես երրորդը՝ դա հայության

<sup>1</sup> «Կոչնակ», Նիւ Եռոք, 1914, N 17:

<sup>2</sup> Տես, ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 40; Nubar B., Ibid., p. 12.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 36:

<sup>4</sup> «Արմենիա», Մարտի, 1914, N 34:

<sup>1</sup> Nubar B., Ibid, p. 10.

<sup>2</sup> ԱՅՊՐ, ֆ. Պոլիտարխի, թ. 1914, ձ. 3465, լ. 106; ADNA, Liasses ½, p.291.

<sup>3</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1914, N 68:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 57, թ. 21:

միաբանությունն էր, որոնք համախմբելով իրենց բոլոր ջանքերը պայքարեցին բարենորդումների համար: Պետք է նշել, որ այդ համախմբվածությունը, որը բացառիկ երևոյթ էր հայ իրականության մեջ, իրք նպաստեց խնդրի լուծմանը: «Ոչ մեկ Հայ,- ասում էր Պ. Նուրարը,- կը շեղուեր ազգովին որդեգրած ուղեգծէն՝ անկեղծօրէն համերաշներով գործին յաջողութեանն համար»<sup>1</sup>: Այդ ամենի հետ մեկտեղ ակնհայտ էր, որ բարենորդումների խնդրի նման հանգուցալուծումը հնարավոր դարձավ շնորհիվ ոուսական դիվանագիտության՝ այդ ուղղությամբ գործադրած ջանքերի և վարած հետևողական քաղաքականության: Միանգամայն պարզ էր, որ Ռուսաստանի նման շահագրգությունը պայմանավորված էր ոչ այնքան արևմտահայության կացության բարելավմամբ, որքան իր պետական շահերով, որոնք համապատասխանում էին հայ ժողովրդի ճգույններին: Ռուսաստանի ունեցած դերը չէր կարող անտեսվել Պ. Նուրարի կողմից, որն իր ստանձնած պաշտոնի բերումով քաջատեղյակ էր Հայկական հարցում տերությունների ունեցած դիրքորոշումներին և կատարած ձեռնարկներին: Հայ ժողովրդի անունից մամուլում երախտագիտություն հայտնելով ոուսական կառավարությանը՝ նա նշում էր, որ ստացված արդյունքը հնարավոր եղավ շնորհիվ Ռուսաստանի «մեծահոգի օգնության», ինչպես նաև արտգործնախարար Ս. Սագոմովի և դեսպան Մ. Գիրսի «քաղաքագիտական հմտության և եռանդի»<sup>2</sup>: Հետագայում էլ անդրադանալով Հայկական հարցի շուրջ ծավալվող վերջին իրադարձություններին, Պ. Նուրարը մշտապես ընդգծում էր այդ իրողությունը: Այսպես, Մ. Պապաջանյանին հղած 1915 թ. ապրիլի 19-ի նամակում նա գրում էր. «Առանց ոուսական կառավարության նախաձեռնության և անխոնջ ջանքերի մենք՝ Գերմանիայի ընդդիմության և խարդավանքների պատճառով, ոչինչ չինք ձեռք բերի»<sup>3</sup>:

<sup>1</sup> «Կոշմակ», Նիւ Եռը, 1914, N 17:

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1914, N 59:

<sup>3</sup> Boghos Nubar's Papers ..., p. 12.

Այդ ամենի հետ մեկտեղ անուրանալի էր, որ բարենորդումների խնդրի լուծման մեջ, անկասկած, իր ուրույն տեղն ու դերն ուներ նաև Պողոս Նուրարը, ինչի մասին, սակայն, նա համեստորեն լուս էր: Անգնահատելի էր այն եռանդուն գործունեությունը, որ նա՝ որպես Ազգային Պատվիրակության նախագահ դիվանագիտական մեծ տաղանդով և հմտությամբ ծավալեց եվրոպական երկրներուն: Պ. Նուրարը ջանք չինայեց ցույց տալու արևմտահայության պահանջների օրինականությունն ու չափավորությունը, տերությունների դեկավար շրջաններին բարենորդումների իրականացմամբ շահագրգուելու, ինչպես նաև եվրոպական հասարակական կարծիքը Հայկական հարցին ի նպաստ դարձնելու համար: «Ես ամրող ժամանակս նվիրած էի հանրային կարծիքը ճշտորեն լուսավորել՝ մեր պահանջների օրինավորությունը հաստատելու համար», - ասում էր նա<sup>4</sup>: Պ. Նուրարի այդ անձնության աշխատանքը չէր կարող չնպաստել իր հետապնդած խնդրի դրական լուծմանը: Ծավալած գործունեությամբ նա ամրողովին արդարացրեց իր վրա դրված հույսերը և մեկ անգամ ևս ապացուեց, որ ամենահարմար անձ նավորությունն էր նման բարդ և պատասխանատու առարկելությունը ստանձնելու և գլուխ բերելու համար: «Ակներեւ է,- գրում էր «Կոշմակ» բերքը, - միջազգային քաղաքականութեան յարածուի ջրերուն վրայ Հայկական խնդրոյն ստացած վերջին հոլովութին մեջ Պողոս փաշա Նուրար բուն մարդն էր որուն կարելի էր վստահել դեկավարությունը ազգային նաւուն, եւ առաջին անգամն է որ դատը յանուն Հայութեան ջատագովելու պաշտօնը յանձնուեցաւ ամենն կարող ձեռքբերու»<sup>5</sup>: Հայկական բարենորդումների իրականացմանն ի նպաստ տերությունների դեկավար շրջանների վերաբերմունքը շահելուն ուղղված Պ. Նուրարի կատարած աշխատանքը բարձր է գնահատվել: «Պ. Նուրարի անհատական բարձր կարողությունների ու անխոնջ ջանքերի շնորհիվ էր, որ կարելի եղավ Պատվիրակությանը գլուխ հանել Ձերդ Վեհափառության իրահանգները», - կարողիկոսին հղած նամակում գրում էր Հ. Մոստիչյանը<sup>6</sup>: «Բարենորդումների

<sup>1</sup> «Հորիդոն», Թիֆլիս, 1914, N 68:

<sup>2</sup> «Կոշմակ», Նիւ Եռը, 1914, N 10:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 63, թ. 1:

խնդրի շուրջ եղած բանակցությունների այս հաջող վերջավորությունում,- գրում էր «Ազգ» թերթը,- պատվի մեծ բաժին էլ պատկանում է Պ. Նուրարին»<sup>1</sup>:

Իր գործունեության արդյունքներից գոհ էր նաև Պ. Նուրարը: ՀԲԸ մասնաժողովին հղած նամակում նա գրում էր. «Հայկական բարենորդումների իրագործումը ձեռք բերելու պաշտոնով՝ ջանք չխնայեցի արդարացնելու համար վրաս դրված վատահությունը և ուրախ եմ, որ մեր հայրենիքի տարարախտ ժողովրդի գոյության պայմանների բարեկալման համար կարողացա միջոցներիս ներած չափով աշխատել այդ առքիվ»<sup>2</sup>.

1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրի կնքումով Հայ Ազգային Պատվիրակությունը՝ հասնելով իր հետապնդած նպատակին, փասորնեն, դադարեցնում է իր գործունեությունը /1915 թ. այն նորից կյանքի կոչքեց/։ Կազմված լինելով 1913 թ. հունվարի 4-ին՝ այն մոտ մեկ տարի կարողիկոսի անունից գործեց Եվրոպայում՝ պաշտպանելով արևմտահայերի արդարացի պահանջները։ Թեև առաքելության ամրության ընկած էր Պ. Նուրարի վրա, այնուամենայնիվ, նրան աջակցեցին և գործի հաջողությանը որոշակիորեն նպաստեցին նաև իր դեկավարած պատվիրակության անդամները։ Ստեղծված պայմաններում, երբ բարենորդումների խնդիրը գտել էր իր լուծումը, անհրաժեշտություն զգացվեց վերջին անգամ հրավիրել պատզամավորական ժողով՝ պաշտոնապես արձանագրելու Ազգային Պատվիրակության առաքելության արդյունքները։ Թվով հինգերորդ ժողովը, ինչպես և նախորդները, տեղի է ունենում Պ. Նուրարի բնակարանում 1914 թ. փետրվարի 11-ին՝ Պ. Նուրարի, Հ. Մոստիչյանի, Գ. Ռիբոջյանի մասնակցությամբ։ Իր ելույրում Պ. Նուրարը համառոտ անդրադառնում է նախորդ նիստից հետո /1913 թ. մարտի 30/ տեղի ունեցած դեպքերին, պատվիրակության գործունեությանը, Լոնդոն և Բելլին կատարած այցերի ընթացքում իր ունեցած հանդիպումներին ու դրանց արդյունքներին։ Ներկաները բարձր են գնահատում Պ. Նուրարի՝ Հայկական հար-

ցի լուծմանն ուղղված ջանքերը, իսկ Վերջինս էլ շնորհակալություն է հայտնում իրեն ցուցաբերած աջակցության համար<sup>1</sup>:

Ստանձնած առաքելությունը հաջողությամբ կատարելու համար Պ. Նուրարը ստիպված էր հարթահարել իր դեմ հարուցված խոչընդոտները։ Տերությունների դեկավար շրջանների մոտ նրա ծավալած գործունեությունն առաջ էր թերել թուրքական իշխանությունների կատաղի դժգոհությունը։ Արևմտյան Հայաստանում եվրոպական վերահսկողությամբ բարենորդումների իրագործման մեջ չփորձելով տեսնել իրենց պետության շահը՝ վերջիններս բոլոր ջանքերը գործադրեցին Պ. Նուրարի ձեռնարկները խափանելու համար։ Սակայն Բ. Դուռը Պ. Նուրարի վրա չուներ ոչ մի ազդեցություն՝ արգելելով նրա դիմումները։ «Այս խելացի կարգադրութեան շնորհին,- գրում էր «Կոչնակ» թերթը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ազգային Պատվիրակությունը կազմվել էր ոչ թե Կ. Պոլսի Պատրիարքարանի, այլ Ամենայն Հայոց կարողիկոսի կողմից,- հայոց դիաճագիտական գործունեութիւնը ազատ մնաց թուրք կառաւարութեան ճարպիկութիւններում ազդեցութենէն»<sup>2</sup>։ Միակ բանը, որ Բ. Դուռը կարող էր անել, դա համոզել Պ. Նուրարին ուղղակի բանակցությունների մեջ մտնել իր հետ։ Դրանով ցոյց կտրվեր, որ բարենորդումների հարցը լուծվելու է հայերի ու թուրքերի համաձայնությամբ, որով և անհմատ կրամնար տերությունների միջամտությունը։ Պ. Նուրարի առաքելության հենց սկզբում Թուրքիայի մեծ վեզիր Քյամիլ Փաշան, արտգործնախարար Գ. Նորատունյանի միջնորդությամբ, փորձ է կատարում նրան հրավիրել Կ. Պոլսի՝ խորհրդակցելու բարենորդումների վերաբերյալ։ Կահիրեկի «Յուսարեր» թերթն իրավացիորեն այդ առաջարկը որակեց որպես «սիրալիր հրավեր հայկական դատի հուղարկավորությանը»<sup>3</sup>։ Պ. Նուրարը, քաջ գիտակցելով դրա բացասական հետևանքները, հրաժարվում է մեկնելուց։ «Եթե ըստունիմ այդ հրավերը,- Վ. Մալեզյա-

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 20:

<sup>2</sup>«Կոչնակ», Նիւ Եորթ, 1914, Ն 2:

<sup>3</sup>«Յուսարեր», Կահիրե, 1913, Ն 166:

<sup>1</sup>«Ազգ», Բոստոն, 1914, Ն 37:

<sup>2</sup>«Մուտիթն», Կահիրե, 1914, Ն 28:

նիս հուն 1912 թ. դեկտեմբերի 21-ի նամակում գրում էր նա,- ազգային իշխանութեանց եւ հայրենակիցներուս կողմէ ինձի հանդեպ ցոյց տրուած վստահութեան արդինքը եղող կացութիւնը պիտի տկարանայ ամուլ վիճարանութիւններով<sup>1</sup>: Պ. Նուրարին Կ. Պոլիս իրավիրելու առաջարկներով թորքական կառավարությունը, թեև անարդյունք, դիմումներ էր անում նաև արևմտահայ դեկավար շրջաններին<sup>2</sup>:

Թուրքական իշխանությունների՝ եվրոպական վերահսկողությամբ բարենորդումների իրագործման դեմ պայքարն իր արտացոլումն էր գուել նաև մամուլում, որտեղ փորձ էր արվում հայերին ներկայացնել որպես բուրք ազգի թշնամիներ, իսկ նրանց դիմումները տերություններին որակել որպես դավաճանություն: Մամուլի նման հարձակումներից զերծ չմնաց նաև Պ. Նուրարը, որը, փաստորեն, հանդիսանում էր այդ դիմումների կրողը: Թուրքական թերթերում պարբերաբար տպագրվում էին հորդվածներ, որտեղ քննադատության էր ենթարկվում նրա ծավալած գործունեությունը, միտումնավոր կեղծվում պաշտոնի եռթյունը, սխալ մեկնաբանվում կատարած դիմումները: Նախ ջանքեր գործադրվեցին կասկածի տակ առնելու Պ. Նուրարի՝ արևմտահայերի համար բարենորդումներ պահանջելու առաքելության օրինականությունը: Անգլիական «Ժայմս» թերթի 1913 թ. մայիսի 12-ի համարում Կ. Պոլիսից առաջացած մի հաղորդագրության մեջ նշվում էր, թե իրը Պ. Նուրարը ոչ թե թուրքահայերի, այլ Օսմանյան կայսրությունից դուրս ապրող հայերի ներկայացուցիչն է<sup>3</sup>: Այդ ուղղությամբ ավելի ակնհայտ կեղծիքով թուրքական «Ազմ» թերթը գրում էր. «Պ. Նուրարի նախագահությամբ կազմված հանձնաժողովը կարողիկուին դիմելով հայոց անունով պաշտոնական հանգամանք ստանալու արտոնություն է խնդիրը: Կարողիկուն իրեն հատուկ զգուշությամբ և վերապահութ-

յամբ այդ արտոնությունը չի տվել»<sup>4</sup>: Փորձ կատարվեց նաև մամուլի էջերից Պ. Նուրարին մեղադրել շատ ծանր, քայլ միաժամանակ բոլորովին անհիմն հանցանքի մեջ, իբր նա խառնվել է թուրքիայի ներքին գործերին: Նման մեղադրանք ներկայացնելու համար ասիրը Փարիզում Պ. Նուրարի ունեցած հանդիպումն էր իթթիլաֆական կուսակցության առաջնորդներից մեկի՝ Շերիֆ փաշայի հետ, որը, 1913 թ. հունվարյան հեղաշրջումից հետո, երբ թուրքիայում իշխանությունը նորից անցել էր իթթիլաֆականներին, ապաստան էր գտել Ֆրանսիայում: Հանդիպման ժամանակ Պ. Նուրարը Շերիֆին ծանոթացրել էր արևմտահայերի պահանջներին, որն էլ, արդարացի գտնելով որպանը, ի պաշտպանություն հայկական բարենորդումների հանդես էր եկել մի շարք հոդվածներով<sup>2</sup>: Հենց այդ նկատառումով էլ թուրքական «Ժամանակը Եֆքյար» թերթն իր 1913 թ. հունիսի 18-ի համարում, ակնհայտութեն կեղծելով փաստերը, գրում էր. «Շերիֆ փաշան, Պ. Նուրարի հետ գործակցելով, հայկական հանձնաժողովին /Ազգային Պատվիրակության-Հ.Բ./ օժանդակած և նրա ծրագիրն ընդունած է: Այդ հանձնաժողովի բաղանքի ու դիտավորությունների որ աստիճան վճասակար ու խոռվարար լինելը կարելի է ընթանել նրա Շերիֆի հետ գործակցելուց, ծանոթ լինելով, որ Շերիֆի բոլոր ձեռնարկները հայրենիքը կործանելու, բնաշինչ անելու նպատակ ունեն»<sup>3</sup>: Այդ պնդումը ոչ մի քննադատության չէր դիմանում: Անհիմն էր այն դատողությունը, թե եթե Շերիֆ փաշան արդարացի էր գուել Պ. Նուրարի հետապնդած խնդիրը, ապա վերջինս էլ իր հերթին պետք է կիսեր Շերիֆի հայացքները և միանար թուրքիայի իշխանությունների դեմ նրա մղած պայքարին: Ավելին, պետք է ասել, որ Շերիֆ փաշան ընդունել էր միայն բարենորդումների անհրաժեշտությունը, սակայն միանգամայն դեմ էր եվրոպական վերահսկողությանը: Դա պարզորեն երևաց իթթիլաֆականների՝ թուրքիայում իշխանության գլուխ գտնվելու ընթացքում /1912 թ. հուլիսի

<sup>1</sup> Սալեզիան Վ., Շամբոս վրայ /Յոշարատ/, էջ 307:

<sup>2</sup> Տես, Ռեֆորմ և Արմենիա, ստր. 80; Կիրակոսյան Զ., Երիտրուրբեր պատմության դատաստանի առաջ /19 դ. 90-ական թթ. – 1914 թ./, գիրք առաջին, էջ 323: Օսման Ե., նշվ. աշխ., էջ 74:

<sup>3</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, Ն 1448:

<sup>4</sup> Տես, ՀՀ ԳԱԱԹ, Հ. Առաքելյանի ֆ., գ. 2094, թ. 4:

<sup>5</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, Ն 1481:

9 -1913 թ. հունվարի 10/։ Խսկ Շերիֆի հոդվածները ուղղված էին ոչ թե արևմտահայության կացության բարելավմանը, այլ նրանց համակրանքը շահելուն և ավելորդ անգամ բուրքական իշխանություններին քննադատելուն։

Իր դեմ ուղղված մեղադրանքը միանգամից հերքվում է Պ. Նորարի կողմից։ «Մեր հետապնդած նպատակը հույժ բացահայտ է,- զրում էր նա,- իմ գրածները մեջուել են և ծածկելիք բան չունենալով հայտնի են։ Ես միշտ հեռու մնացած եմ Թուրքիայի ներքին բաղարականության խնդիրներից»<sup>1</sup>։ Այդ մասին Հ. Առաքելյանին հղած նամակում Պ. Նորարը զրում էր, որ իր պատասխանն առնվազն բոյլ կտա «ուղղամիտ անձանց ճանաչել ճշմարտությունն ու շխափառական նամականքներին»<sup>2</sup>։ Ներկայացված մեղադրանքը, որի հիմնական նպատակն էր վարկարենել Պ. Նորարին ցույց տալով, որ նա խառնվել է Թուրքիայի ներքին գործերին, կուսակցական պայքարին և նպատակ ունի «կործանելու և բնաջինջ անելու» երկիրը, կարող էր մեծ հարցականի տակ դնել նրա առարելությունն ու Հայկական հարցի նպաստավոր լուծումը։ Կարողիկոսին հղած 1913 թ. հուլիսի 7-ի նամակում Պ. Նորարն ընդգծում էր. «Այդ գրապարտություններն ուզում են որպես բաղարական գենք օգտագործել իմ գործունեությունը խարարելու համար»<sup>3</sup>։ Եվ իրոք, այդ կենդ հայտարարությունը որոշակի կասկածներ առաջ բերեց տերությունների և հատկապես Ռուսաստանի դեկավար շրջաններում։ Քանի որ Պ. Նորարը՝ ի շահ Հայկական հարցի լուծման, պատրաստականություն էր հայտնել իր գործունեության ընթացքում հետևել ուսասական կառավարության հրահանգներին, ուստի Թուրքիայի նկատմամբ իր այդ քայլերը ևս կարող էին ընկալվել որպես Ռուսաստանի կողմից հրահրված։ Այդ խսկ պատճառով Կովկասի փոխարքա Վարոնցով-Դաշկովը կարողիկոսին հղած նամակում շեշտում էր, որ «հայ ժողովրդի ներկայացուցիչների նման արարքները կարող են հնա-

րավորություն տալ բուրքական իշխանություններին ծանր մեղադրանքներ առաջադրել հայերի դեմ և խիստ դժվարեցնել Կայսերական կառավարության խնդիրը՝ նրանց համար ցանկալի բարենորոգումների անցկացման գործում»<sup>4</sup>։

Օտար միջամտությունից խուսափելու համար բուրքական կառավարությունը փորձեր ձեռնարկեց անմիջապես Պ. Նորարի հետ համաձայնության զալու ուղղությամբ։ Այդ նկատառումով վերջինիս հետ Փարիզում հանդիպումներ են ունենում Թուրքիայի ֆինանսների նախարար Զավիդը, Ֆրանսիայում Թուրքիայի նախկին դեսպան Մոնիք փաշան, խսկ Լոնդոնում՝ Անգլիայում բուրքական դեսպան Թևիթիկ փաշան և Լոնդոնի կոնֆերանսում Թուրքիայի ներկայացուցիչ Հագու փաշան։ Նման հանդիպումների նպատակն էր հավաստիացնել Պ. Նորարին, որ կառավարությունն արևմտահայերի կացությունը բարելավելու համար մտադիր է իրականացնել բարենորոգումներ և համոզել հրաժարվել տերություններին ուղղված դիմումներից։ Թեև այդ ձեռնարկները ոչ մի արդյունք չունեցան, այնուամենայնիվ բուրքական «Ժեռն Թուրք» թերթը, հիմնվելով «զավատեղյակ» աղբյուրների վրա, զրում էր, թե Պ. Նորարը, համոզված լինելով, որ բուրքերը պետք է բարեկարգեն Անատոլիան, որոշել է հրաժարվել Ազգային Պատվիրակությունից<sup>5</sup>։ 1913 թ. Վերջերին, երբ բարենորոգումների խնդրի շուրջ ծավալված բանակցությունները մոտենում էին ավարտին, թ. Դուռը ձեռնարկում է Պ. Նորարի գործունեության խափանման վերջին փորձը։ Դեկտեմբերի 3-ին մեծ վեճիր Սայիդ Հայմը Ֆրանսիայում բուրքական դեսպան Ռիֆար փաշայի միջոցով՝ բարենորոգումների վերաբերյալ բանակցելու համար նրան կրկին Կ. Պոլսի հրավիրելու փորձ է ձեռնարկում։ Պ. Նորարը մերժում է այդ առաջարկը, պատճառարանելով, որ իր գործունեության շրջանակը սահմանափակված է Եվրոպայով, մինչդեռ Կ. Պոլսում կառավարության հետ բանակցություններ վարելու իրավասությունը պատկանում է Ազգային Պատրիարքարանին<sup>6</sup>։ «Զիս հրամակելու նպատակը՝ կարողիկոսին հղած 1913 թ. դեկ-

<sup>1</sup> «Քիւզանցիոն», Կ. Պոլս, 1913, N 5087.

<sup>2</sup> ՀՀ ԳԱԱ. Հ. Առաքելյանի ֆ., գ. 2094, թ. 4.

<sup>3</sup> ՀԱԱ, թ. 57, գ. 5, գ. 43, թ. 4.

<sup>4</sup> ՀՀ ԳԱԱ Պատճեռության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆ. 1, գ. 1, գ. 206, թ. 9:

<sup>5</sup> «Ազգ», Բուստու, 1913, N 49:

<sup>6</sup> ADNA, Liasse ½, թ. 510.

տեմբերի 6-ի նամակում գրում էր նա,- ժամանակ շահելով և իբր թէ քարենորդումներ գործադրելով, պետութիւնները կատարուած իրողութեան մը առջև դնելու է»<sup>1</sup>: Թուրքական կառավարության մտադրությունը պարզ էր նաև Պատրիարքարանում և Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը: Դեսպան Մ. Գիրսը Ֆրանսիայում իր պաշտոնակից Խզվոլսկուն գրում էր. «Ես գտնում եմ, որ նրա /Պ. Նուրարի-Հ. Բ./ գալն իսկապես առիթ կտա ժամանակի ավելորդ ծգձգմանը՝ իր հետ անմիջական բացարությունների պատրվակով»<sup>2</sup>:

Եվրոպայում իր ծավալած գործունեության հետևանքով Պ. Նուրարը բուրքերի կողմից ենթարկվել էր նաև ահարեկման: Նա ստացել էր սպառնական նամակներ, իսկ երիտրուրքերի փարիզյան գործակալ Բուրխանէդինը նրան բունավորելու փորձ էր նույնիսկ ձեռնարկել<sup>3</sup>:

Թուրքական իշխանությունների հարուցած արգելքներն ու խոչընդոտները որևէ կերպ չազդեցին Պ. Նուրարի գործունեության վրա և նա հաջողությամբ ավարտեց իր առաքելությունը: Սակայն նա «շշոռացվեց» երիտրուրքերի կողմից. 1915 թ. օգոստոսին Կ. Պոլսի գինվորական դատարանը մի շարք մտացածին մեղադրանքներ մերկայացրեց Պ. Նուրարին, որը, իբր, «օգտվելով Թուրքիայի՝ Բալկանյան պատերազմների հետևանքով առաջացած բոլորունից, որպես ամբողջ հայ ազգի պատվիրակ, գլխավորել է հայկական կոմիտեն և Եոյակ Համաձայնության տերությունների մայրաքաղաքներում օսմանյան կառավարության դեմ քայլեր է ձեռնարկել արտասահմանյան վերահսկողության ներք անկախ Հայաստան ստեղծելու նպատակով», և վճռեց, որ դատարան չներկայանալու դեպքում, նա կդատապարտվի հեռակա կարգով, կարկի իր ունեցվածքից, քաղաքացիական իրավունքներից, գինվորական կոչումներից և պարզեներից<sup>4</sup>: Այդ կեղծ մեղադրանը, կարծես, փոխհատուցումն էր այն անհաջողությունների, որ բուրքա-

կան իշխանությունները կրել էին՝ փորձելով խափանել Պ. Նուրարի առաքելությունը:

Հայկական բարենորդումների իրականացման շուրջ համաձայնության հաստատվելուց հետո Պ. Նուրարը գտնում է, որ իր ներկայությունը Եվրոպայում այլևս անհմաստ է և որոշում է վերադառնալ Եգիպտոս: Դա առաջին հերթին պայմանավորված էր իր ստանձնած առաքելությունը վերջանալու և հետապնդած նպատակին հասնելու հետ:

«Հայկական հարցը, գրում էր «Մշակ» թերթը, գտնվում է իր լուծման մի այնպիսի փուլի մեջ, որ Պ. Նուրարի ներկայությունը Փարիզում այլևս անհրաժեշտ չի»<sup>5</sup>: Պետք է նշել, որ Եգիպտոս վերադառնալու ցանկություն Պ. Նուրարի մոտ բազմից առաջացել է, զակայն միշտ հետաձգվել է, քանի որ նա գիտակցում էր իր ստանձնած պաշտոնի կարենությունն ու Եվրոպական երկրներում Հայկական հարցի լուծմանը հասնելու ջանքերի գործադրման անհրաժեշտությունը: Սակայն այժմ, հետապնդվող խնդրում որոշակի արդյունքի հասնելուց հետո, Ազգային Պատվիրակության առաքելությունը, փաստորեն, ավարտվել էր: «Ամեն դեպքում իմ դերն արդեն ավարտված է, Ե. Արարունին հղած նամակում գրում էր Պ. Նուրարը: Այն, ինչի համար ես աշխատում էի Եվրոպայում իրականացավ, ինչ ես ձգտում էի ստանալ տերություններից՝ ստացա»<sup>6</sup>: Բայց դրա հետ մեկտեղ ակնհայտ էր, որ չնայած ձեռք բերված համաձայնությանը, դեռևս մեծ ջանքեր էին հարկավոր այն կյանքի կոչելու համար: Ուստի անհրաժեշտ էր նաև Պ. Նուրարի գործոն աջակցությունը: Գ. Զոհրապին հղած 1914 թ. փետրվարի 9-ի նամակում Ա. Չոպանյանը համոզված էր, որ Պ. Նուրարի պաշտոնն ամենին էլ վերջացած չէ, և նա «պիտի երբայ ու նորէն գայ հոս, ուր դեռ շատ բան կայ ընելու»<sup>7</sup>:

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 47, թ. 61:

<sup>2</sup>ԱԲՊՐ, ֆ. Պոլիտարխի, թ. 1913, լ. 3465, լ. 60.

<sup>3</sup>«Հորիզոն», Թիֆլիս, 1914, Ն 11:

<sup>4</sup>Օհանջանյան Ա., նշվ. աշխ., էջ 194; Լեփսիոս Հ., Հայաստանի ջարդելը, Կ. Թիֆլիս, 1919, էջ 240:

<sup>5</sup>«Մշակ», Թիֆլիս, 1914, Ն 19:

<sup>6</sup>ADNA, Liasse ½, թ. 318.

<sup>7</sup>ՀՀ ԳԱԹ, Գ. Զոհրապի ֆ., գ. 67, թ. 22:

1914 թ. փետրվարի 18-ին ի պատիվ Պ. Նուրարի Փարիզի հայ գաղութը «Աստորիա» հյուրանոցի պանորկում ճաշկերույթ է կազմակերպում: Ներկաները բարձր են գնահատում նրա՝ որպես Ազգային Պատվիրակության նախագահի, տերությունների դեկավար շրջանների մոտ արևմտահայերի պահանջներին ի նպաստ ծավալած գործունեությունն ու քափած ջանքերը: Իր շնորհակալական ելույթում Պ. Նուրարն անդրադառնում է բարենորոգումների խնդրի շուրջ ծավալված իրադարձություններին, ստացված արդյունքին հասնելուն նպաստած պարագաներին, ինչպես նաև ներկայացնում է կնքված ուսու-քուրքական համաձայնագրի հիմնական կետերը<sup>1</sup>:

Հայկական բարենորոգումների իրականացման վերաբերյալ պայմանագրի ստորագրումը մեծ ոգևորություն էր առաջ բերել նաև եզիապտահայության շրջաններում: Վերջիններիս խանդավառությունը պայմանագրոված էր նաև այն հանգամանքով, որ նման արդյունքի ձեռք բերման գործում իր ուրույն տեղն ուներ նաև իրենց հայրենակիցը՝ Ազգային Պատվիրակության նախագահ Պ. Նուրարը: Հենց այդ նկատառումով էլ եզիապտահայ օադութը, տեղեկանալով վերջինիս Եզիապտու վերադառնալու մասին, սկսեց պատրաստություններ տեսնել նրան վայելուն դիմավորություն կազմակերպելու համար: Սակայն Պ. Նուրարը խնդրեց իր վերադարձի կապակցությամբ ոչ մի իրապարակային ցույց չկազմակերպել, գտնելով, որ դա կարող է «անախործ տպավորություն գործել և մինչև իսկ վճարել իր հետապնդած դատին»<sup>2</sup>: Պետք է նշել, որ եզիապտահայությունն ըմբռնումով մոտեցավ և ենթարկվեց այդ խնդրանքին: «Մեր լուս հարգանքը, - գրում էր Կահիրեի «Յուսաքեր» թերթը, - ավելի պերճախոս, ավելի խորում և ավելի վեհաշուր կերպով կարտահայտի մեր երախտագիտությունը, քան ծափերն ու «կեցցեննոր»: Եզիապտահայության սիրտն է, որ Պ. Նուրարին պետք է դիմավորի»<sup>3</sup>: 1914 թ. մարտի 3-ին Պ. Նուրարը Փարիզից ժամանում է Կահիրե:

Նրա գալստյան լուրը մեծ ցնծությամբ է ընդունվում եզիապտահայության կողմից: Շուտով Պ. Նուրարի հասցեին ստացվում են շնարհակալական բազում հեռագրեր, հանձնվում են հուշանվերներ, նրան այցելում և ողջույնի ուղերձ են հղում տեղի օադութի ներկայացուցիչներից կազմված մի պատգամավորություն: Այդ ամենով եզիապտահայությունը փորձում էր իր երախտագիտությունը հայտնել Պ. Նուրարին՝ Հայկական հարցի լուծմանն ի նպաստ նրա կատարած անխոնց աշխատանքի համար:

Այսպիսով, փաստորեն, ավարտվում է Պողոս Նուրարի գործունեության երրորդ շրջանը /1913 թ. հուլիս-1914 թ. հունվար/: Այդ ընթացքում նրա ջանքերը իմանականում ուղղվեցին հայկական բարենորոգումների խնդրում Գերմանիայի ընդդիմության մեղմացմանը, տերությունների միջև հայկական խնդրում համերաշխ գործունեությունն ապահովելուն, ինչպես նաև Բ. Դուան վրա ազդեցության միջոցների որոնմանը /ֆինանսական ճնշում/, որոնք կիարկադրեին վերջինիս բարարել արևմտահայերի արդարացի պահանջները:

1914 թ. հունվարի 26-ի ուսու-քուրքական համաձայնագրի կնքումով Հայկական հարցի լուծման շորջ ծավալվող իրադարձությունները թալակիտնեցին զարգացման նոր փուլ, երբ բոլոր ջանքերը կննտրոնացվեցին հայկական վիլայեթների ընդիհանուր քննիչների նշանակմանն ու բարենորոգումների նախագծի կյանքի կոչմանը: Այդ ուղղությամբ տարվող աշխատանքներից անմասն շննաց և ակտիվորեն մասնակցեց նաև Պողոս Նուրարը:

<sup>1</sup> Տես, «Արմենիա», Մարտել, 1914, N 33-34; «Հորիզոն», Թիֆլիս, 1914, N 43:

<sup>2</sup> «Ազգ», Բուստմ, 1914, N 38:

<sup>3</sup> «Յուսաքեր», Կահիրե, 1914, N 199:

**2) Պողոս Նուրարի դերը հայկական վիլայեթների բնդիանուր  
քննիչների ընտրության  
և մրանց իրավասուրյունների պաշտպանության գործում**

Չնայած 1914 թ. հունվարի 26-ի ռուս-բուրբական համաձայնագրի ձեռք բերմանը, ակնհայտ էր, որ դեռևս վաղ է խոսել հայկական քարենորդումների իրականացման մասին: Համաձայնագրով նախատեսված միջոցառումները կյանքի կոչելու համար դեռևս մեծ աշխատանք էր հարկավոր կատարել: Այդ իմաստով առաջին հերքին պետք է լուծվեր հայկական վիլայեթներից կազմված երկու սեկտորների ընդհանուր քննիչների ընտրության հարցը: Ըստ ձեռք բերված բանագրությունները բուրբական կառավարության հաստատմանը պետք է ներկայացվեին մեծ տերությունների կողմից: Մեկ քան պարզ էր, որ բեկնածուները պետք է ընտրվեին եվրոպական փոքր և չեղող պետություններից /Հռոմեական պատրիարքություն, Վանիա, Բելգիա, Նորվեգիա, Շվեյցարիա/՝, քանի որ ոչ մի մեծ տերություն բույլ չէր տա, որպեսզի այդ պաշտոնը գրադեցվի որևէ այլ տերության հպատակի կողմից:

Ընդհանուր քննիչների ընտրության հարցով բնականարար ամենից շատ շահագրգության էին հայությունն ու նրա դեկանար շրջանները: Նրանք, քաջ գիտակցելով, որ քարենորդումների արդյունավետ իրականացումը մեծապես պետք է կախված լինի ընդհանուր քննիչների գործունեությունից, կարևորում էին, որպեսզի այդ պաշտոնի համար ընտրվեին կարող և ձեռնիսա մարդիկ:

Ռուս-բուրբական համաձայնության հաստատումից անմիջապես հետո տերությունների կառավարող շրջանները սկսեցին միջոցներ ձեռք առնել հայկական վիլայեթներում ընդհանուր քննիչների պաշտոնի համար հարմար բեկնածուներ գտնելու և Բ. Գուանը ներկայացնելու ուղղությամբ: Ի տարբերություն քարենորդումների հարցի քննարկմանը, այդ խնդրում տերությունների միջև լորջ հակասություններ գրեթե

շառաջացան: Անիրաժեշտ անձնավորությունների որոնման գործում հատկապես ակտիվ ջանքեր էր գործադրում ռուսական կառավարությունը:

Դեռևս 1913 թ. դեկտեմբերի 14-ին Ս. Սագոնովը, կանխորշելով Թուրքիայի հետ համաձայնության հաստատման հնարավորությունը, Բելգիայում, Հոլանդիայում և Դանիայում ռուսական դեսպանորդներին հղած նամակներում նշում էր, որ Ռուսաստանն անմիջականորեն շահագրգությած է լավագույն ընդիանուր քննիչների ընտրության մեջ և խնդրում էր գտնել համապատասխան անձանց<sup>1</sup>: Սրա հետ մեկտեղ ռուսական կառավարությունը, հաշվի առնելով ընդհանուր քննիչների ընտրության հարցում հայության ունեցած մտահոգությունը, կարևորում էր նաև նրանց մասնակցությունը հարմար բեկնածուների որոնման աշխատանքներին: Այդ իմաստով՝ շնորհիվ եվրոպական երկրներում ունեցած լայն կապերի ու ծանոթությունների, լավագույն ծառայություն կարող էր մատուցել Ազգային Պատվիրակության նախազան Պողոս Նուրարը: Եվ պատահական չէ, որ 1913 թ. դեկտեմբերի 18-ին Ս. Սագոնովը Ֆրանսիայում ռուսական դեսպան Իզվուլսկուն հղած նամակում խնդրում էր իմանալ, թե Պ. Նուրարն աշքի առջև ունի արդյոք ընդհանուր քննիչների պաշտոնի համար հարմար բեկնածուներ<sup>2</sup>: Պետք է նշել, որ Պ. Նուրարի օժանդակությանը դիմելու համար Ս. Սագոնովին իր կողմից խնդրել էր նաև Հակոբ Զավրիկը<sup>3</sup>:

Ռուսական կառավարության՝ Պ. Նուրարի աջակցությանը դիմելը պայմանավորված էր նրա՝ քարենորդումների հարցի շորջ ծավալով իրադարձություններում ունեցած անմիջական մասնակցությամբ, դրանց քաջատեղյակությամբ, ինչպես նաև խնդրի լուծման մեջ Ռուսաստանի դերի հանդեպ ունեցած վերաբերմունքով: Հետագայում հայ գործիչներից մեկի հետ հանդիպման ժամանակ Ս. Սագոնովը նշել էր, որ Պ. Նուրարին նման հանձնարարական տալն արտացոլում էր Ռուսական կառավարության գործում:

<sup>1</sup> АВПР, ф. Политархив, г. 1913, д. 3465, л. 86.

<sup>2</sup> Реформы в Армении, стр. 128.

<sup>3</sup>Տես, ADNA, Liassc ½, p. 326.

սաստանի և հայերի շահերի համբկնումը և վերջիններիս նկատմամբ ունեցած վստահությունը<sup>1</sup>: Իր հերթին Պ. Նուրարը, զգացված Ս. Սագոնովի առաջարկից, նշում էր, որ այն արվել էր ի նշան իր անձի նկատմամբ ունեցած վստահության և ոռոսական կառավարության քարենորդումների իրականացումն ապահովելու անաշառության<sup>2</sup>: Միայն ոռոսական կառավարությունը չէր արժեքավորում այն օժանդակությունը, որ կարող էր ցույց տալ Պ. Նուրարը տվյալ խնդրում: Ազգային Պատրիարքարանն ու հայ դեկավար շրջանները ևս կարևորում էին Պ. Նուրարի մասնակցությունն անհրաժեշտ թեկնածուների որոնման աշխատանքներին և ամրողովին վստահում նրա ընտրությանը: «Ընդհանուր քննիչները, - գրում էր Վ. Փափազյանը, - պետք է հիմնովին ծանոթ լինեին Ազգային Պատվիրակությանը՝ իմա՝ Պ. Նուրարին-Հ. Բ./, որը լիիվ տեղեկություններ պետք է ունենար նրանց վարչական կարողության, պարկելաւության, հայերի հանդեպ ունեցած տրամադրությունների և զգացումների մասին»<sup>3</sup>:

Ս. Սագոնովի վերոհիշյալ նամակը, փաստորեն, հարկադրում էր Պ. Նուրարին անմիջականորեն ներզրավել ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնման գործընթացին: Պ. Նուրարը ընականարար չէր կարող անտարերություն ցուցաբերել առաջին հերթին իր պաշտոնի թերումով, քանի որ այդ աշխատանքը սերտորեն կապված էր մի խնդիր հետ, որի պաշտպանությամբ նա հանդես էր եկել տերությունների դեկավար շրջանների մոտ: Քաջի այդ, Պ. Նուրարին չէր կարող չմտահոգել այն հարցը, թե ովքեր կընտրվեն հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների պաշտոնում: Նա ևս խիստ կարևորում էր վերջիններին դերը քարենորդումների իրականացման խնդրում: «Քննիչները, - ասում էր նա, - քարենորդումների շնորհին անկիմարար պիտի դառնան և մանաւանդ նրանց արժեքն կախում պի-

տի ունենայ քարենորդումների յաջողութիւնը»<sup>4</sup>: Այդ նկատառումներով էլ Պ. Նուրարը, ընդունելով արված առաջարկը, իր ջանքերն ուղղում է հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնմանը: Այսպիսով, փաստորեն, սկզբում է նրա գործունեության չորրորդ շրջանը:

Պ. Նուրարը գիտակցում էր, որ պահանջվող թեկնածուներ գտնելը ոյուրին գործ չէր: «Տարօրինակ կրնայ երևալ, - Գ. Զոհրապին իղած նամակում այդ մասին գրում էր Ա. Չոպանյանը, - բայց դա այդպես է»<sup>5</sup>: Այդ հանգամանքը պայմանավորված էր ընդհանուր քննիչների ստանձնելիք պաշտոնի բարդ և պատասխանատու բնույթով: Անհրաժեշտ էր ընտրել այնպիսի անձնավորությունների, որոնք ի վիճակի լինեին հաղթահարելու իրենց գործունեության հետ կապված բոլոր դժվարությունները և արդարացնելու արևմտահայության հույսերն ու սպասումները: Պ. Նուրարի պատկերացմանը հայկական վիլայեթների ընդհանուր քննիչները պետք է լինեին եռանդուն, գործունյա, հեղինակավոր, անկողմնակալ, անշահախնդիր, համբերատար՝ ունենալով կառավարելու, հրամայելու և տիրելու հմտություն<sup>6</sup>: Այդ հատկանիշների հետ մեկտեղ պակաս կարևորություն չուներ նաև ապագա ընդհանուր քննիչների ազգության հարցը: Այդ խնդրում Պ. Նուրարը որոշ նկատառումներով ավելի մեծ հուսեր էր կապում թելզիացիների հետ, որոնք, ըստ նրա, «շնորհիվ աֆրիկյան գաղութներում ծեռք թերած արժեքավոր փորձի՝ ունակ են ավելի հաջողությամբ կենսագործել ծրագրված քարենորդումները»<sup>7</sup>: Սրա հետ մեկտեղ Պ. Նուրարը գտնում էր, որ թելզիական կառավարող շրջաններում ունեցած ազգակցական կապերի շնորհիվ /նրա դուստր Եվան ամուսնացած էր Թելզիայի կառավարության նախազահ դ'Արչոսի հետ/, իրեն ավելի հեշտ կլինի գտնել անհրաժեշտ թեկնածուներ և որոշակի ազդեցություն ունենալ

<sup>1</sup> «Արմենիա», Մարտի, 1914, N 33:

<sup>2</sup> ՀՀ ԳԱԾ, Գ. Զոհրապին Փ., գ. 67, թ. 31:

<sup>3</sup> ADNA, Liassc ½, թ. 319, «Հորիզոն», Թիվիս, 1914, N 43:

<sup>4</sup> ԱԲԴՐ, Փ. Պոլիտարխիվ, թ. 1913, ձ. 3465, լ. 106.

<sup>5</sup> ՀԱԱ, թ. 57, գ. 5, զ. 53, թ. 11:

<sup>6</sup> ADNA, Liassc ½, թ. 188.

<sup>7</sup> Փափազյան Վ. Խմ յուշերը, հու. Բ, էջ 264:

նրանց վրա: Այդ նկատառումներով էր, որ դեռևս 1913 թ. նոյեմբերի վերջերին նա թելգիացի համարավոր թեկնածուների մասին խորհրդակցել էր Բելգիայի թագավոր Ալբերտի հետ, որը խոստացել էր իր աջակցությունը<sup>1</sup>:

Ընդհանուր քննիչների ազգության խնդրի շուրջ որոշակի տարակարծություններ կային Պ. Նուրարի և Ազգային Պատրիարքարանի միջև, որը, ընդհակառակը, դեմ էր թելգիացիների, ինչպես նաև շվեյցարացիների նշանակմանը, գտնելով, որ նրանք, իրենց պետությունների՝ Թուրքիայում ունեցած տնտեսական, առևտրական, ֆինանսական շահերի պատճառով, կարող էին որոշակի զիջողություն ցուցաբերել հայկական բարենորդումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու խնդրում<sup>2</sup>: Այդ նկատառումներով էլ Ազգային Պատրիարքարանը դիմում է ոռուսական կառավարությանը՝ խնդրելով թեկնածուներ գտնել Հոլանդիայից կամ Սկանդինավյան երկրներից:

Տեղեկանալով Ա. Սաղոնվի ցանկության մասին՝ Պ. Նուրարն անմիջապես դիմում է գործնական քայլերի: Ակզրում նա իր ջանքերը հիմնականում կենտրոնացնում է Շվեյցարիայից և Բելգիայից թեկնածուներ որոնելու ուղղությամբ: Իրենց երկրից հարմար թեկնածուներ մատնանշելու խնդրանքով՝ Պ. Նուրարը նամակով դիմում է Շվեյցարիայի հայասիրական կոմիտեի անդամ Լեռպոլդ Ֆավորին, ինչպես նաև Փարիզում հանդիպում է շվեյցարացի գործիչներից մեկի՝ Գուստավ Ալորի հետ: Սակայն որևէ շոշափելի արդյունք ձեռք չի բերվում: Ավելի արգասավոր եղան՝ Պ. Նուրարի՝ Բելգիայում կատարած արագումները: 1913 թ. դեկտեմբերի վերջերին ժամանելով Բրյուսել՝ նա, երկրի դեկավար շրջանների և տեղի ոռուսական դեսպանորդ Կուղաչի օժանդակությամբ, ձեռնամուխ է լինում անհրաժեշտ անձնավորությունների որոնմանը: Ծուտով առաջադրվում են 10 թեկնածու: Հապճեպորեն կատարված թեկնածուների առաջադրումը համարելով «պաշտոնի համար

որս»<sup>1</sup>, Պ. Նուրարը 8 հոգու հանում է ցուցակից և թողնում միայն երկուսին՝ թելգիական Կոնգոյի նախկին փոխկառավարիչ Հենրիին և գեներալ Դեգիսին: Հ. Զավրիելին հղած 1914 թ. փետրվարի 22-ի նամակում Պ. Նուրարը վերջիններին քննորշում էր որպես արժեքավոր և ընդհանուր քննիչի պաշտոնի համար անհրաժեշտ հատկություններով օժնված անձնավորությունների<sup>2</sup>:

Վերադառնալով Բրյուսելից՝ Պ. Նուրարն ընդիմանուր քննիչների պաշտոնի համար այլ թեկնածուների որոնման նկատառումով որոշում է հարցում անել նաև Գանիա և Հոլանդիա: Նա նամակներով դիմում է դանիացի հայասեր գործիչ Ջորջ Բրանդեսին ու Հոլանդիայի Գլխավոր Շտատների /օրենսդիր օրգան/ ստորին պալատի նախկին նախագահ Ջյուլանտին՝ խնդրելով իրենց երկրներից մատնանշել հարմար անձնավորությունների: Սակայն վերջիններս չեն կարողանում օգտակար լինել Պ. Նուրարին:

Այսպիսով, ձեռնարկած այս նախնական ջանքերի շնորհիվ ընդհանուր քննիչների պաշտոնի համար Պ. Նուրարին հաջողվում է գտնել միայն երկու թելգիացի թեկնածուների: Սրա հիմնական պատճառն այդ կարևոր պաշտոնի համար արժանի թեկնածուներ գտնելու դժվարությունն էր: Այդ իրողությունը շատ էր մտահոգում Պ. Նուրարին: «Խայտ ցավալի կլիմի,- գրում էր նա,- որ երկար ժամանակ բարենորդումներ սպասելուց հետո, հայերը չկարողանան գտնել անհրաժեշտ մարդկանց՝ դրանք գործադրելու համար»<sup>3</sup>:

Ընդհանուր քննիչների պաշտոնի համար հարմար թեկնածուների որոնման խնդրում իր ունեցած որոշակի դժվարությունների մասին պատրիարքին հաղորդելուց հետո, Պ. Նուրարը վերջինիս կողմից 1914 թ. հունվարի 21-ին հանձնարարություն է ստանում անմիջապես մեկնել Հապա: «գտնելու համար նրանց, ովքեր իրենց պաշտոնական

<sup>1</sup> Westenenk L.C., Diary Concerning the Armenian Mission, "Armenian Review", Boston, 1986, vol. 39, N 1, p. 32.

<sup>2</sup> ADNA, Liassc ½, p. 194.

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>2</sup> Փալիազեան Վ., Խմ յուշերը, համ. Բ, էջ 270; ԱԲՓ, ֆ. Պոլիտարխի, գ. 1914, լ. 3472, լ. 56.

գիրքով ու փորձով կարող են հաջողորդյամբ իրազործել պատասխանատու խնդիրը<sup>1</sup>: Հոլանդիա մեկնումը և երկրի դեկավար շրջանների հետ վերոհիշյալ հարցի շուրջ հանդիպումը նախապատրաստելու համար Պ. Նուրարը հանդիպում է Ֆրանսիայում հոլանդական դեսպան Սթայերսին և նրա միջոցով ստանում արտօրծնախարար Լոուլենի մոտ ունկնդրություն ունենալու հնարավորություն<sup>2</sup>: 1914 թ. փետրվարի սկզբներին ժամանելով Հաագա-Պ. Նուրարը տեղի ուսական դեսպանորդ Սվեշինի հետ, որն իր կառավարությունից հրահանգ էր ստացել աջակցել վերջինիս, այցելում է Լոուլենին: Հանդիպման ընթացքում Պ. Նուրարը, նախարարին խնդրի եռթյան ու ընդհանուր քննիչների իրավասությունների հետ ծանորացնելով, հատկապես ընդգծում է այդ պաշտոնի համար կարող և ձեռնհաս անձնավորությունների ընտրության անհրաժեշտությունը: «Ես դժվարութիւն չունեցայ փոքր տերութիւններու կառավարութիւններին հասկցնելու մեջի ամենէն առաջնակարգ մարդիկ ցուցնելու կարևորութիւնը, որոնք կարող լինին այս կարևոր և միանգամայն փափուկ ձեռնարկը զլուս հանել», - հետագայում նշում էր Պ. Նուրարը<sup>3</sup>: Արդյունքում նախարար Լոուլենը, հայտնելով հայերին աջակցելու իր պատրաստակամության մասին, մատնանշում է երկու անձնավորությունների՝ հոլանդական Հնդկաստանի նախկին կառավարիչ վաճ Հեյցին և պատերազմական նախկին նախարար Կոլինին<sup>4</sup>: Սակայն վերջիններս իրենց ցանկության համաձայն հետագայում հանվեցին թեկնածուների ցուցակից և նրանց փոխարեն առաջարկեցին Արևելյան Հնդկաստանում Հոլանդիայի մշտական ներկայացուցի օգնական Լուիս Վեստենենկն ու Հոլանդիայի ուազմական նախարարության գլխավոր քարտուղար Դուրմանը:

<sup>1</sup> АВР, ф. Политархив, г. 1914, д. 3472, л. 75.

<sup>2</sup> Dussen van der W., Ibid., p. 26.

<sup>3</sup> «Արմենիա», Մարտի, 1914, N 34:

<sup>4</sup> АВР, ф. Политархив, г. 1914, д. 3473, л. 11; ADNA, Liassc ½, p. 195.

Վերադառնալով Հոլանդիայից՝ Պ. Նուրարն իզվուլսկու միջոցով Ս. Սազնովին է հղում երկու հուշագիր: Այսուեղ նա ներկայացնում էր ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնման ուղղությամբ իր կատարած ձեռնարկները, բեղիական և հոլանդական կառավարությունների հետ վարած բանակցություններն ու ձեռք բերած արդյունքները: Նշելով, որ Ըվեյցարիայից, Դանիայից և Նորվեգիայից հնարավոր չեր գտնել հարմար անձնավորությունների, Պ. Նուրարը եզրակացնում էր, որ ընտրությունը պետք է կատարվի հոլանդացիների և բեղիացիների միջև<sup>1</sup>: Այս հուշագրերը, փաստորեն, Պ. Նուրարի հաշվետվություններն էին ուսական կառավարության կողմից իրեն հասեազրված հանձնարարության կատարման վերաբերյալ: Հուշագրերի պատճենները Պ. Նուրարը հեց նաև ֆրանսիական և գերմանական կառավարություններին:

Այսպիսով, ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնմանն ուղղված իր ձեռնարկները համարելով ավարտված, 1914 թ. մարտի սկզբներին Պ. Նուրարը վերադառնում է Եգիպտոս: Դա առաջին հերթին պայմանավորված էր նրա համոզվածությամբ, որ այլևս հնարավոր չէ գտնել հարմար անձնավորությունների: «Յավոր, ես չեմ հավատում, որ նոր որոնումները կարող են լավ արդյունքներ տավ», - Յ. Լեփսիուսին հղած 1914 թ. փետրվարի 22-ի նամակում գրում էր նա<sup>2</sup>: Քիչ դեռ չուներ նաև Պ. Նուրարի՝ Եգիպտոս վերադառնալու շտապողականությունը՝ կարգավորելու իր բացակայության ընթացքում կուտակված անձնական գործերը:

Պ. Նուրարի՝ Եգիպտոս վերադառնալու լուրը գոհունակությամբ ընդունվեց արևմտահայ դեկավար շրջանների կողմից: «Պ. Նուրարի Եվրոպայից մեկնելը, դժբախտաբար, վաղաժամ էր, և նրա խիստ կարևոր աշխատության պետքը կզգայինք», - կարողիկոսին հղած նամակում գրում էր Կ. Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը<sup>3</sup>: Այդ

<sup>1</sup> ADNA, Liassc ½, p. 189- 190.

<sup>2</sup> Նոյն տեղում, p. 190.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 18, թ. 25:

իմաստով, հայ գործիչներից մեկի հետ հանդիպման ընթացքում, իր ափսոսանքն էր հայունում նաև Ռուսաստանի արտօրդնախարարության Մերձավոր Արևելքի քաժնի վարիչ իշխան Տրուբեցկոյը՝ գտնելով, որ Պ. Նուրարի հետագա աշխատանքն օտակար կլիներ<sup>1</sup>:

Հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնման ուղղությամբ՝ փոքր պետություններում իրենց դեսպանների միջոցով, ակտիվ ջանքեր էին գործադրում նաև մեծ տերությունները և հատկապես Ռուսաստանը: Պետք է նշել, որ ապագա ընդհանուր քննիչների ազգային պատկանելության հարցում նրանց միջև ևս միակարծություն չկար: Ռուսաստանը նախընտրում էր բեղզիացիներին, Ֆրանսիան՝ նորվեգիացիներին, Գերմանիան՝ շվեյցարացիներին և հոլանդացիներին, իսկ Անգլիան՝ հոլանդացիներին: Այդ խնդրում իր վերաբերմունքն էր արտահայտում նաև բորբական կառավարությունը և կտրականապես հանդես գալիս բեղզիացի ընդհանուր քննիչների նշանակման դեմ՝ պատճառարանելով, որ չի ցանկանում, որպեսզի Թուրքիայի մահմեդականները թեղիայի կողմից գաղութացված Կուսորդի նեզքերի հետ դրվեն միևնույն հարթության վրա<sup>2</sup>: Թուրքական կառավարության նման կեցվածքը պայմանափորված էր ամեն ինչում Ռուսաստանին անհաշտ ընդդիմություն ցույց տալու միտունով: Սրա հետ մեկտեղ, Բ.Դուռը ջանում էր այդ խնդրում հակառակներ նաև Պ. Նուրարին, որը նույնպես ընդհանուր քննիչների պաշտոնի համար նախընտրում էր բեղզիացիներին<sup>3</sup>:

1914 թ. հունվարի վերջերին Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ Հալիմը ցանկություն է հայունում, որպեսզի յուրաքանչյուր տերություն ընդհանուր քննիչների պաշտոնի համար իր կառավարությանը ներկայացնի երկուական թեկնածու<sup>4</sup>: Նման առաջարկության հիմնական նպատակն էր տերությունների միջև տարածայնություններ առաջացնելու

նրանց միջև համաձայնեցված գործողությունների հմարավորության խափանելը: Կոտակով բորբական կառավարության մոտայությունը՝ Ս. Սաղոնվը հայտարարում է, որ թեկնածուների անվանացուցակը նախ պետք է համաձայնեցվի բոլոր տերությունների կողմից և նոր ներկայացվի Բ. Դուռը: Սակայն չնայած դրան, բորբական առաջարկի պաշտպանությամբ անսպասելիորեն հանդես է գալիս ֆրանսիական կառավարությունը: Սրա հետ մեկտեղ, վերջինս հակառակն էր Ռուսաստանին նաև ընդհանուր քննիչների ազգության հետ կապված խնդրում՝ խստագույնս դեմ լինելով բեղզիացիներին ու հոլանդացիներին և պաշտպանելով նորվեգիացիների նշանակումը: «Ֆրանսիական ներկա կառավարությունը, Ս. Սաղոնվին հյած 1914 թ. վենդրվարի 27-ի նամակում գրում էր Իզվոլսկին, - ամրողովկին չի արդարացնում մեր սպասումները և որոշ հարցերում, ինչպես օրինակ հայկական ընդհանուր քննիչներին վերաբերող, որոնք անմիջականորեն չեն դիմում Ֆրանսիայի շահերին, քախնդրություն և համառություն է ցուցաբերում»<sup>1</sup>: Իր դաշնակցի նման կեցվածքը բնականարար չէր կարող չանհանգստացնել ուսական կառավարությանը, որի կատարած խիստ դեմարշից հետո միայն ֆրանսիական կողմը հարկադրված գիշում է: Պետք է նշել, որ Պ. Նուրարը ևս իր կողմից խնդրել էր Ֆրանսիայի արտօրդնախարար Դոմերգին չխոչընդոտել ընդհանուր քննիչների խնդրի հետ կապված Ռուսաստանի ձեռնարկներին<sup>2</sup>:

1914 թ. մարտի կեսերին Ռուսաստանի ջանքերով վերջապես կազմվում է հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների թեկնածուների անվանացուցակը, որի մեջ ներառնելով էին բեղզիացիներ Դեգիզն ու Հենրին, հոլանդացիներ Վեստենեններ ու Դուրմանը և նորվեգիացի Հոֆֆը Նորվեգիայի պատերազմական նախարարության գլխավոր քարտուղարը: Տերությունների կառավարությունների հավանությանն արժանանալուց հետո, Թուրքիայում ավատրիական դեսպան Պալլար գործադրությունների մեջ անվանացուցակը ներկայացնում է վիշինի 1914 թ. մարտի 24-ին այդ անվանացուցակը ներկայացնում է

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 53, թ. 13:

<sup>2</sup>Dussen van der W., Ibid., p. 26.

<sup>3</sup>İnhu, Westenenk L., Ibid., p. 33; Ohandjanian A., Dokumente Armenien in Österreichischen Archiven, Band I, 1912-1914, Wien, 1988, S. 672-673.

<sup>4</sup>Реформы в Армении, стр. 175-176.

<sup>1</sup> Материалы по истории франко-русских отношений за 1910-1914 гг., стр. 492.

<sup>2</sup>ADNA, Liasse ½, p. 195.

Բ. Դասնը, որի ընտրությունն էլ 1914 թ. ապրիլի 2-ին կանգ է առնում հոլանդացի Լուիս Վեստենենկի և նորվեգիացի Նիկլաւա Հոֆֆի վրա<sup>1</sup>:

Ընդհանուր քննիչների ընտրությունը, որը փաստորեն բարենորոգումների իրագործման սկիզբն էր, էլ ավելի աճրապնդեց արևմտահայության հավատքը՝ իր անտանելի կացության բարելավմանն ուղղված ձեռնարկների կատարմանը: Նման լավատեսությամբ լցված էր նաև Պ. Նուրարը: Նա միամտորեն գտնում էր, որ բուրքական կառավարության կողմից համեմատարար կարճ ժամանակահատվածում ընդհանուր քննիչների ընտրությունն ապացուցում էր, թե վերջինս որոշել է «ոչինչ ընել բարենորոգումներու գործադրութիւնը յետաձգելու համար»<sup>2</sup>: Սակայն դեպքերի հետագա զարգացումն ակնհայտորեն ցույց տվեց, թե որքան վաղաժամ և սին էին նման սպասումները:

Ընդհանուր քննիչների ընտրությունից հետո հայ դեկավար շրջանների համար առաջնային դարձավ վերջիններիս հետ հանդիպելու, իրենց ստանձնելիք պաշտոնի բնույթը ու էությունը պարզաբանելու, ինչպես նաև նրանց՝ դեպի հայերը տրամադրելու խնդիրը: Քորոյի հայացքները նորից ուղղվում են դեպի Պ. Նուրարը, որը ամենաձեռնիհասն էր նման աշխատանք կատարելու համար: Սակայն, դժբախտարար, վերջինս արդեն մեկնել էր Եվրոպայից և չէր կարող ստանձնել այդ առաքելությունը, որն էլ պատրիարքի հանձնարարությամբ վստահվում է Հ. Զավիրին: Նրան պետք է գործակցեր և աջակցեր Ազգային Պատվիրակության անդամ Հ. Մոստիշյանը: Պատրիարքի պատվիրակները լինելով Հաազայում և Փարիզում մի շարք հանդիպումներ են ունենում նորընտիր ընդհանուր քննիչներ Լ. Վեստենենկի և Ն. Հոփֆի հետ: Հանդիպումների ընթացքում պարզվում է, որ վերջիններս տեղեկություններ չունեին ոչ հայերի, ոչ էլ Հայկական հարցի պատմության վերաբերյալ, իսկ Հոփֆը նույնիսկ ծանոթ չէր 1914 թ. հունվարի 26-ի ոուս-բուրքական համաձայնագրի կետերին: Այդ պատճառով էլ հայ պատվիրակները մանրամասնորեն պարզաբանում են այդ հարցերը՝ անդրադառնալով նաև հայկական բարենորոգումների խնդրի շուրջ

ծավալված վերջին իրադարձություններին, դրանցում Ուսաստանի և Գերմանիայի խաղացած դերին<sup>1</sup>:

1914 թ. ապրիլի վերջերին Լ. Վեստենենկն ու Ն. Հոփֆը ժամանում են Կ. Պոլիս՝ ստորագրելու իրենց իրավասությունների վերաբերյալ իրահանգները: Այդ խնդրի շուրջ ընդհանուր քննիչների հետ բանակցությունները վարում է բուրքական կառավարության իրավագետնորդական, ազգությամբ լին և մոլի հայատյաց Օստրորոգը, որը, արևմտահայության բնորոշմանը, իր էությամբ «ավելի շատ բուրք էր, քան ինը իրենք՝ բուրքերը»<sup>2</sup>: Իրավասությունների քննարկման ընթացքում նորից ակնհայտորեն դրսուրվում է բուրքական ավանդական բաղաքականությունը՝ ամեն գնով ծգձգել և խոշնդոտել բարենորոգումների իրականացումը: Թուրքական իշխանություններին հաջողվում է ընդհանուր քննիչներին զցել իրենց ազդեցության տակ, մեկուսացնել տերությունների դեսպանների աջակցությունից և, օգտվելով խնդրի վերաբերյալ նրանց գործք անտեղյակությունից, պարտադրել 1914 թ. մայիսի 10-ին ստորագրել իրենց խմբագրած իրահանգները, որոնք հակասում էին ոուս-բուրքական համաձայնագրի մի շարք կետերին: Նախ բուրքական կառավարության իրավունք վերապահվեց պաշտոնանկ անել ընդհանուր քննիչներին՝ որպես հատուցում նրանց նախօրոք վճարելով 6 ամսվա աշխատավարձի շափ գումար: Ըստ 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրի ընդհանուր քննիչը կարող էր պաշտոնից հեռացնել հայկական վիլայեթների բոլոր պաշտոնյաներին, բացառությամբ բարձրաստիճանների /վալիներ, կրոնական առաջնորդներ/, որոնց համար անհրաժեշտ էր կառավարության համաձայնությունը: Մինչդեռ նոր իրահանգների 10-րդ հոդվածով բարձրաստիճան պաշտոնյաների ցուցակը զգալիորեն ընդարձակվում է ի հաշիվ մյութեսերիքների, կայմակամների, կալվածային վարչության, ոստիկանության, հանրային աշխատանքների, առողջապահության, բուրքակցության վերատեսուչների, քարգմանների, դպրոցների ուսուցիչների և այլ ստորադաս պաշտոնյաների<sup>3</sup>: Փաստորեն բուրքական կա-

<sup>1</sup> Westenenk L., Ibid., p. 37; ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 55, թ. 4-8:

<sup>2</sup> Westenenk L., Ibid., p. 47.

<sup>3</sup> Shu, Էջո, Հայոց հարցի վաերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 349; Nubar B., Ibid., p. 13.

ուսկարությանը հաջողվում է զգալիորեն սահմանափակել ընդհանուր քննիչների իրավունքները, որը, անշուշտ, բացասաբառ կանդրադառնար նրանց գործունեության վրա: «Տերությունների կողմից առաջարկված անձնափորությունները, - Ռուսաստանի արտգործնախարարության ուղղած հաշվետվության մեջ գրում էր Հ. Զավրիկը, - որոնք համարվում էին բարենորոգումների իրականացման միակ լուրջ երաշխիքը, իրահանգները ստորագրելով վերածվեցին կենտրոնական կառավարության կամքից մեծապես կախվածության մեջ գտնվող սովորական բուրքական պաշտոնյանների»<sup>1</sup>: Դեպքերի նման զարգացման պատճառներից էր նաև տերությունների, այդ թվում նաև Ռուսաստանի, բռնած պասիվ դիրքը, որոնք, հանդես չեկան ընդհանուր քննիչների իրավունքների պաշտպանությամբ: Նրանց դեսպանները գրեթե շմիջամտեցին տրվելիք իրահանգների շուրջ վարվող բանակցություններին: «Եվրոպայի լուրջունն ու ուսների բվացող հանգատությունը քաջալերու էր բուրքերին», - գրում էր Վ. Փափազյանը<sup>2</sup>: Այս իմաստով հատկապես վիրավորական էր Ռուսաստանի կառավարության կեցվածքը, որը չնայած բարենորոգումների խնդրի շուրջ բուրքերի հետ բանակցությունների ընթացքում մի շարք կարևոր կետերում զիջումներ անելով ավելի կարևոր էր համարել ընդհանուր քննիչներին տրվելիք լայն լիազորությունները, դրանց համար պայքարում հետևողական չգտնվեց:

Ստեղծված կացությունը, բնականաբար, չէր կարող շմտահոգել արևմտահայ դեկավար շրջաններին, որոնք գիտակցելով, որ բուրքական կառավարության ծեռնարկներն ուղղված են բարենորոգումների իրականացման տապալմանը, իրենց բոլորն են հայտնում տերությունների դեսպաններին: Ընդհանուր քննիչների հետ ստորագրված իրահանգների կետերի դեմ խիստ դժգոհություն է հայտնում նաև Պ. Նուրարը, որը չէր կարող անտարբերություն ցուցաբերել այդ խնդրում: «Հաշվի առնելով Նուրար փաշայի դիրքորոշումը, - իր հուշերում գրում էր Լ. Վեստենենկը, - շպետք է մոռանալ, որ նա, համտեսելով

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 503, գ. 1, զ. 58, թ. 4:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 28, թ. 70:

«հաղթանակի» /բարենորոգումներ խնդրում -Հ. Բ./ իրճվանքն ու փառքը, չէր կարող հանդուրժել, որպեսզի այն ամբողջովին չհամապատասխաներ այն արդյունքներին, որ ձեռք էին բերվել արևմտահայության համար»<sup>1</sup>: Ուստի Պ. Նուրարը որոշում է անմիջապես միջոցներ ձեռնարկել տերությունների ուշադրությունը բուրքական իշխանությունների գործած անօրինականությունների վրա իրավիրելու և դրանց դեմն առնելու նպատակով: 1914 թ. հունիսին նա ուսական կառավարության է հղում մի հուշագիր, որը բննության առնելով Բ. Դուան կողմից խմբագրած ընդիհանուր քննիչների իրավասությունների իրահանգներն ու մատնանշելով այն հոդվածները, որոնք «կը խեղաքութիս 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրոյն ոգին և իմաստը», կոչ էր անում չեղյալ հայտարարել դրանք<sup>2</sup>: Գերմանիայի արտգործնախարար Ա. Ֆիմմերմանին հղած նման հուշագրում Պ. Նուրարն ընդգծում էր, որ բուրքական կառավարությունը ոչ մի իրավական իմքը չունի միջազգային համաձայնագրի խափանման համար<sup>3</sup>:

Սակայն շրավարարվելով միայն հուշագրեր ներկայացնելով՝ Պ. Նուրարը որոշում է նորից վերադառնայ Եվրոպա, անձամբ տեսակցել տերությունների դեկավար շրջանների հետ և հասնել խնդրի դրական լուծմանը: Բացի այդ Պ. Նուրարը մտադրվել էր հանդիպել նաև իրենց անձնական գործերը կարգավորելու համար Կ. Պոլսից Եվրոպա վերադարձած ընդիհանուր քննիչների հետ: «Կիֆափագեմ իրենց ուշադրությունը իրավիրել ամենէն ստիպողական միջոցներուն վրայ, - կարողիկութին հղած 1914 թ. հունիսի 9-ի նամակում գրում էր նա, - որպեսզի բարենորոգումներու գործադրութիւնը կարենայ տեղի ունենալ նպատակոյն պայմաններուն մեջ՝ խոյս տալով այն դժվարութեններէն, զոր Օսմանեան պաշտոնատարները պիտի չի վարանին յարուցանելու»<sup>4</sup>:

<sup>1</sup> Westcenk L., Ibid., p. 62.

<sup>2</sup>ՀՀ Մ.Մաշտոցի ամփ. Սահմանադրամն, Գյուտ նպիկուպս Տեր-Ղազարյանի արխիվ, թիր., 3, վավ., 125; ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 64:

<sup>3</sup> Dadrian V., The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence-Oxford, 1995, p. 213.

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 46:

Շուտով ստացվում է նաև կարողիկոսական թիվ 864 կոնդակը, որով Պ. Նուրարը նորից նշանակվում էր վերջինիս ներկայացուցիչը Եվրոպական պետությունների մոտ՝ «վասն յաջող իրազործման բարենորդությանց Հայաստանի»<sup>1</sup>: Այսպիսով, փաստորեն, Պ. Նուրարը վերստանանում է իր առաքելությունը, որը դեռ մի քանի ամիս առաջ համարում էր ավարտված: Պետք է նշել, որ մինչ այդ իր առաքելությունը շարում ակելու խնդրանքներով Պ. Նուրարին դիմել էին Կ. Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսն ու Հ. Զավերիկը<sup>2</sup>: Նոյն օգոստի էր գրված նաև կարողիկոսին ուղղված Հ. Մոստիչյանի 1914 թ. փետրվարի 27-ի նամակը, որը վերջինս առաջարկում էր Պ. Նուրարին հանձնել մնայում պաշտոն՝ «փոստացված բարենորդությունների բարվոր գործադրությունն անձնապես հսկելու համար»<sup>3</sup>:

1914 թ. հունիսի սկզբներին ժամանելով Փարիզ՝ Պ. Նուրարը վերսկսում է Եվրոպական դեկանար շրջանների մոտ Հայկական հարցի պաշտպանության ուղղված իր գործունեությունը: Նա առաջին հերթին ձգուում էր հասնել ընդհանուր քննիչների հետ կերպած անօրինական պայմանագրերը չեղալ հայտարարելուն: Այդ խնդրի շորջ Պ. Նուրարը նախ հանդիպում է ունենում Ֆրանսիայի արտգործնախարար Դ-ումերգի հետ, որը, արդարացի համարելով արևմտահայության մտահոգությունները, խոստանում է իր աջակցությունն ու համապատասխան հրահանգներ հղում Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանին: Այնուհետև Պ. Նուրարը մեկնում է Հայաստան և հանդիպում նորընտիր ընդհանուր քննիչներից՝ Լ. Վեստենենկի հետ: Պ. Նուրարը կարևորում էր այդ հանդիպումը, քանի որ նրան հնարավորություն էր ընձեռնվում մոտիկից ծանորանալ այն անձնավորություններից մեկի հետ, որին պետք է վստահվեր հայկական վիլայեթներում բարենորդությունների իրականացման դեկանարումն ու վերահսկողությունը: Այդ նկատառությունը էլ Պ. Նուրարը, օգտվելով առիթից, Լ. Վեստենենկի հետ գրուցում է ստանձնվելով պաշտոնի բնույթի, ձեռք առնվելիր միջոցա-

ությունների, ինչպես նաև այն դժվարությունների ու խոչընդոտմների մասին, այդ թվում նաև բուրքական իշխանությունների կողմից հնարավոր հարուցվելիք, որոնց կարող էին հանդիպել ընդհանուր քննիչներն իրենց գործունեության ընթացքում: Սրա հետ մեկտեղ, բնականարար, չեր կարող խոսք չգնալ բուրքական կառավարության կողմից պարտադրված հրահանգների մասին, որի վերաբերյալ Պ. Նուրարն ապահովեցնում է իր գրուցակցին, որ բոլոր ջանքերը կգործադրի ուս-բուրքական համաձայնագրի ոգուն համապատասխան դրանք փոփոխելու համար<sup>4</sup>: Պ. Նուրարը հասկանում էր, որ այդ խնդրում հաջողության համար անհրաժեշտ է ձեռք բերել գերմանական և ուսական կառավարությունների աջակցությունը, որոնք կարող էին ճնշում գործադրել թ. Գոան վրա: Այդ նկատառություններով էլ նա Հայագայից անմիջապես մեկնում է Բեռլին և հանդիպում Ա. Ցիմմերմանի հետ: Զրոյցի ժամանակ Պ. Նուրարն իր անհանգստությունն է հայտնում բուրքական կառավարության կողմից ընդհանուր քննիչների իրավասությունների սահմանափակման կապակցությամբ: Ա. Ցիմմերմանը խոստանում է, որ գերմանական կառավարությունը միջոցներ կձեռնարկի ընդգծելու համար ընդհանուր քննիչների դիրքի միջազգային բնույթն ու քույլ չի տա, որպեսզի նրանք վերածվեն սովորական բուրքական պաշտոնյաների<sup>5</sup>: Բեռլինում անհրաժեշտ հավաստիացումները ձեռք բերելուց հետո, Պ. Նուրարը 1914 թ. հունիսի 12-ին ժամանում է Պետերբուրգ: Սա, Եվրոպական երկրներում կարողիկոսի պատվիրակի առաքելության ստանձնումից ի վեր, Պ. Նուրարի առաջին այցն էր Ռուսաստան: Պ. Նուրարին ընդունում են արտգործնախարարության մերձավորարելյան բաժնի վարիչ իշխան Տրուբեցյոնը ու արտգործնախարար Ա. Սաղոնվը: Նրանք հայտարարում են, որ ուսական կառավարությունը չի ճանաչում ընդհանուր քննիչների հետ կերպած պայմանագրերի այն կետերը, որոնք հակասում են 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրին և ամեն ինչ կամեն դրանք չեղալ հայտարարելու համար: Այդ իմաստով համապատասխան հրահանգներ են տրվում Ս. Գիրսին: Սրա հետ մեկտեղ Պ. Նուրարին հավաստիացնում են, որ այսուհետև Ռու-

<sup>1</sup> Նոյն տեղում, թ. 59:

<sup>2</sup> Stas, ADNA, Liassel 1/2, թ. 94.

<sup>3</sup> ՀԱԱ, թ. 57, գ. 5, զ. 63, թ. 1:

<sup>4</sup> ՀԱԱ, թ. 57, գ. 5, զ. 58, թ. 61; Westenek L., Ibid., թ. 61.

<sup>5</sup> Westenek L., Ibid., թ. 63.

սաստամը մշտապես հանդես կցա արևմտահայության իրավունքների պաշտպանությամբ: Այսպես, Ս. Սազոնովն ընդգծում է, որ ի տարբերություն իշխան Լոռանովի ժամանակների /XIX դ. 90-ական թթ. -Հ. Բ./ հայերի հանդես ոռուական կառավարության քաղաքականությունն արմատապես փոխվել է<sup>1</sup>: Ոռուական կառավարության հետ վարած բանակցությունների արդյունքները բավականին հուսադրող են թվում Պ. Նուրարին: Կարողիկոսին հղած 1914 թ. հունիսի 15-ի նամակում նա գրում էր. «Պետերբուրգում ամենաբարյացակամ ապահովություններ ստացա, որ ոռուական կառավարությունն երբեք չպիտի զլանա իր բարձր պաշտպանությունը ցույց տալ հայերին և վճռականորեն պիտի պահանջի մեր բարենորոգումների գործադրությունը՝ ամենակատարյալ կերպով»<sup>2</sup>:

Պետերբուրգում Պ. Նուրարը ջերմ ընդունելության է արժանանում տեղի հայ գաղութի կողմից: «Մեր գաղութը,- Պ. Նուրարին հղած 1914 թ. հունիսի 22-ի նամակում գրում էր Հ. Զավթիկը,- շատ ուրախացավ Ձեր այցով, քանզի այն համընկավ հոգեբանական պահի հետ և ունեցավ լուրջ և գործնական հետևանքներ»<sup>3</sup>: Պ. Նուրարի պատուին կազմակերպվում են ճաշկերությներ, որոնց քացի գաղութի ներկայացուցիչներից /Մ. Պապաջանյան, Գ. Տիգրանյան, Ն. Աղոնց, Սարուխան, Ալ. Պապովյան/՝ մասնակցում էին նաև ոռու հասարակական քաղաքական գործիչներ /Պ. Միլյուկով, Մ. Կովալյովի/: Ներկաները բարձր են գնահատում Պ. Նուրարի արժանիքներն ու Հայկական հարցին ի նպաստ նրա ծավալած գործունեությունը<sup>4</sup>:

Քերիմում և Պետերբուրգում ստացած երաշխիքների մասին Պ. Նուրարն շտապում է տեղեկացնել Լ. Վեստենենկին: Նրա համար շատ կարևոր էր, որպեսզի ընդհանուր քննիչները չհուսահատվեին և համոզված լինեին, որ իրենց գործունեության ընթացքում մշտապես կվայելեն տերությունների աջակցությունը:

Պետերբուրգում Պ. Նուրարի վարած բանակցությունները ճակատագրության եղան նրա՝ որպես կարողիկոսի պատվիրակի, վերջին ճենարկը, որն ուղղված էր տերությունների ղեկավար շրջանների մոտ պաշտպանելու արևմտահայերի բարենորոգչական պահանջները: Դեպքերի հետագա զարգացումները, դժբախտաբար, վերջնականապես խափանեցին այդ ուղղությամբ ձեռք բերված թեկուզ և չնշին հաջողությունները:

Ճայած Պ. Նուրարին տրված խոստումներին և հավաստիացումներին, տերությունները գործնականում գրեթե ոչ մի քայլ չեն ձեռնարկում ընդհանուր քննիչների իրավունքների պաշտպանության համար: Եվրոպայի նման անտարբեր վերաբերմունքը նպաստում էր բարենորոգումների իրականացման խափանման ուղղված թուրքական կառավարության հետևողական ջանքերին: Այդ իմաստով ակտիվ աշխատանք էր տարվում հայկական վիլայեթներում: Այսպես, բոլոր քափուր պաշտոններում, ոստիկանությունում ու ժանդարմերիայում նշանակվում էին մահմեդականներ, դատարանների կողմից հողային վեճերը լուծվում էին ի վնաս հայերի, ավելանում էր նուհաջիրների հոսքը, տեղերում ծավալվում էր հակահայկական բարոգչություն<sup>5</sup>: Մրա հետ մեկտեղ զանազան պատրվակներով գօճգվում էին Կ. Պոլիս ժամանած ընդհանուր քննիչների օգնականների նշանակման և նրանց՝ իրենց պաշտոնատեղիները մեկնելու հետ կապված հարցերի լուծումը: Ի վերջու 1914 թ. հուլիսի կեսերին առաջին սեկտորի /Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբերիի վիլայեթներ/ ընդհանուր քննիչ նշանակված Ն. Հոֆֆի մեկնում է Վան: Իր պաշտոնատեղին էր պատրաստվում մեկնել նաև երկրորդ սեկտորի /Էրզրումի, Տրավերնի, Սերաստիայի վիլայեթներ/ ընդհանուր քննիչ՝ Լ. Վեստենենկը: Սակայն հայկական բարենորոգումներին այս անգամ էլ վիճակված չէր իրականություն դառնալու: Թուրքական կառավարությունը, պատճառ բռնելով 1914 թ. օգոս-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 62:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 58, թ. 62:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 28, թ. 146:

<sup>4</sup> Տես, «Մշակ», Թիֆլիս, 1914, Ն 135:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 503, գ. 1, զ. 58, թ. 8-9; ֆ. 57, գ. 5, զ. 28, թ. 100-105; Սարտիրոսյան Մ., Հայկական բարենորոգումների իրազորման ճախողումը Օսմանյան կայությունում 1914 թ., «Բանքեր Հայաստանի արխիվների», Երևան, 1989, Ն 3, էջ 177-178:

տոսի 1-ին սկսված առաջին համաշխարհային պատերազմը, չեղյալ է հայտարարում դրանց գործադրությունը: Այսպիսով, հունվարի 26-ի ուսու-քուրքական համաձայնագիրը, ինչպես և Հայկական հարցին վերաբերող նախորդ վավերագրերը, մնում է բոլի վրա: Իրենց հերքին երիտրուրքերն ել, օգտվելով պատերազմի ընձեռած հարմար առիթից, դիմում են Հայկական հարցի լուծման իրենց փորձված մերողին և իրականացնում արևմտահայության ցեղասպանությունը: «Աննախատեսելի չեր,- իր հուշերում գրում էր Զավեն պատրիարքը,- որ իբրիհատը միայն բարենորդմանց առկախումով պիտի չգոհանար, այլ պիտի ուզեր այլապէս ալ վրէժ լուծել հայերէն»<sup>1</sup>:

Առաջին աշխարհամարտի բռնկումով, փաստորեն, ավարտվում է Եվրոպայում Հայկական հարցի պաշտպանության ուղղությամբ Պողոս Նորար Փաշայի գործունեության առաջին փուլը: Այն տևեց մոտ 2 տարի, որի ընթացքում նա «մեծ ձեռնահատությամբ, զոհողություններով և կամքի ու մորի հազվագյուտ ծիրքերով վարեց իրեն հաճճնված այնքան բարդ ու փափուկ պաշտոնը»<sup>2</sup>: Պատմական այդ համեմատարար կարծ ժամանակահատվածում Պ. Նորարը եռանդուն ջանքեր գործադրեց Արևմտյան Հայաստանում բարենորդումների իրագործման խնդրում մեծ տերությունների աջակցությունն ու օժանդակությունը շահելու ուղղությամբ: Հաջողության հասնելու համար նա Եվրոպական դեկանար շրջանների հետ ունեցած հանդիպումների, նրանց հետաքաղաքական դիմումների, հուշագրերի, տպագրած հոդվածների հիմքում դրեց շահագրգելու քաղաքականությունը, բարենորդումների իրագործումը մերտորեն կապելով և բիսեցնելով տերությունների քաղաքական, տնտեսական շահերից ու հետաքրքրություններից՝ մատնանշելով այն վտանգները, որոնք կառաջանային հայերի արդարացի և համեստ պահանջները շրաբնակություն դեպքում: «Պ. Նորարի աշխատանքի եռթյունը,- գրում էր Վ. Մալեզյանը,- կայանում էր փոխադարձ շահեր փնտրելու և ցույց տալու, փոխնիփոխ համոզելու և հաղթանակելու

մեջ»<sup>1</sup>: Եվ այդ ջանքերն ապարդյուն չանցան և որոշակիորեն նպաստեցին տերությունների և հատկապես Գերմանիայի դեկանար շրջանների տրամադրությունների և վերաբերմունքի մասնակի փոփոխմանը հօգուտ բարենորդումների իրագործման: Ավելի մեծ արդյունք ակնկալելու անհնաստ էր: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ Պողոս Նորարը և ընդհանրապես XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ դիվանագնումները, անկախ պետականության բացակայության պայմաններում, գնացները, անկախ պետականության բացակայության պայմաններում, գորկ էին անհրաժեշտ հովանավորությունից և աջակցությունից: Դրանով էր բացատրվում նաև նրանց անհաջողությունները, թերացումներն ու սխալները:

Շնայած բարենորդումների իրականացման փորձի ձախողմանը, պայքարն արևմտահայերի արդարացի պահանջների համար ամեննիմ էլ չղաղաքեց: Պատերազմի հետևանքով տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները նոր հնարավորություններ են ստեղծում Հայկական հարցի լուծման համար: Ստեղծված պայմաններում նորից առաջնային է դառնում դաշնակից պետությունների մոտ /Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա/ հայանաստ գործունեության ծավալման անհրաժեշտությունը: Խսկ ով կարող էր հաջողությամբ գլուխ բերել այդ առաքելությունը, եթե ոչ տվյալ ասպարեզում մեծ փորձ ճեռք բերած, Հայկական հարցին քաջատեղյակ, եվրոպական դեկանար շրջանների կապեր ու ծանորություններ ունեցող և հեղինակություն վայրում լայն կազմություն ունեցող պատմահական շերտ, որ Ամենայն Հայոց Պողոս Նորար Փաշան: Ուստի պատմահական չէ, որ Ամենայն Հայոց Գևորգ Ե կարողիկոսի խնդրանքով, նա 1915թ. ապրիլին, նորից ստանձնելով Հայ Ազգային Պատվիրակության դեկանարությունը /որի կազմը հետագայում փոփոխվեց/, նոր քափով ու եռանդով շարունակում է եվրոպական երկրներում արևմտահայության պահանջների պաշտպանի իր նվիրական առաքելությունը:

<sup>1</sup> Զաւեն Արքեպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 49:

<sup>2</sup> «Ազգ», Բուստոն, 1914, N 37:

Խնդրու առարկա թեմայի վերաբերյալ հայերեն, ուսւերեն և օտար լեզուներով աղբյուրների և գրականության համակողմանի ուսումնամիջությունը բույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների՝

1) 1908 թ. Օսմանյան կայսրությունում արդուլ-համլոյան բռնակալության տապալումով և երիտրուրքերի իշխանության գլուխ անցնելով արևմտահայերի նկատմամբ իրականացվող հալածանքներն ու բռնությունները ոչ միայն չղաղարեցին, այլ ավելի մեծ չափերի հասան: Դա ստիպեց վերջիններիս ուղիներ որոնել իրենց կացությունը բարեկալելու համար: Օգտվելով 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի կրած պարտությամբ ստեղծված նպաստավոր պայմաններից՝ հայ դեկավար շրջանները որոշեցին տերություններին հիշեցնել դեռևս Շեովլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված և այդպես էլ չիրականացված համձնառությունների մասին և նորից միջազգային դիվանագիտության սեղանի վրա դնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման հարցը: Թեև արևմտահայոց խնդրի բարեհաջող լուծման հույսերը մեծամասամբ կապվում էին Ռուսաստանի հետ, այնուամենայնիվ ակնհայտ էր, որ ստեղծված աշխարհա-քաղաքական պայմաններում մյուս տերությունները, որոնք հսկայական շահեր ունեին Օսմանյան կայսրությունում, չեն կարող անտարբեր գտնվել նրա արևելյան տիրույթներում կատարվող իրադարձությունների հանդեպ: Ուստի կարելրվում էին արևմտահայերի կացությունը բարեկալելու խնդրանքներով դիմումները բոլոր մեծ տերություններին: Այդ նկատառումով էլ Ամենայն Հայոց Գլորգ Ե կարողիկոսը, նախօրոք ստանալով ուսական կառավարության հավանությունը, Լոնդոնում առաջիկայում գումարվելիք խաղաղության կոնֆերանսում արևմտահայության պահանջները ներկայացնելու և պաշտպանելու առարելությունը 1912 թ. նոյեմբերի 10-ի իր կոնդակով հանձնում է եզրակացակայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ

Պողոս Նուբար Փաշային: Պ. Նուբարի ընտրությունը լավագույնն էր, քանի որ նա օժտված էր այն բոլոր հատկություններով, որոնք անհրաժեշտ էին վատահիված պաշտոնը գլուխ բերելու և ամենահարմար անձնավորությունն էր նման առաքելությունը ստանձնելու համար: Որպես իրեն աջակից Պ. Նուբարն ընտրեց մի քանի ձեռնիսա անձնավորությունների, որով և կազմավորեց Հայ Ազգային Պատվիրակությունը: Սակայն չնայած պատվիրակության գոյությանը, այնուամենայնիվ ստանձնված առաքելության կատարման ամբողջ ծանրությունն ընկալ դրա նախազահի ուսերին:

2) Պողոս Նուբարը հստակորեն պատկերացնում էր, թե ինչ միջոցների է անհրաժեշտ դիմել հետապնդվող խնդրի լուծմանը նպաստելու համար և ուներ այդ խմասով ծավալվելիք գործողությունների որոշակի ծրագիր: Նա համոզված էր, որ ստեղծված պայմաններում միայն եվրոպական վերահսկողությամբ բարենորոգումների իրականացման պահանջներն էին, որոնց բավարարմանը հնարավոր էր հետամուտ լինել: Իսկ այդ խնդրում տերությունների աջակցությանը հասնելու համար Պ. Նուբարը վորձեց նրանց շահագրգուել, ոչ թե առաջ բերել մարդասիրությունն ու կարեկցանքը: Նա ջանք չխնայեց ցույց տալու և հիմնավորելու, որ միայն հայկական բարենորոգումների իրականացմանը հնարավոր կլինի պահպանել Օսմանյան կայսրության և հատկապես նրա արևելյան տիրույթների տարածքային անձեռնմխելությունը, հանգանանք, որում տվյալ պահին շահագրգորված էին բոլոր մեծ տերությունները: Հետապնդվող խնդրի դրական լուծման համար Պ. Նուբարը կարելոր էր համարում, որ հայկական վիայեթների բարեկարգման մեջ թուրքական իշխանությունները տեսնեն իրենց շահը և այդ միջոցին ոչ թե արտաքին ճնշման տակ, այլ՝ գիտակցելով դրա անհրաժեշտությունը: Հաշվի առնելով Թուրքիայի դեմ զինված պայքարի կազմակերպման համար ստեղծված անքարենպաստ պայմանները՝ Պ. Նուբարը Հայկական հարցի լուծման նման եղանակին դիմելով տվյալ պահին համարում էր վճառակար, համոզված լինելով, որ

այն ոչ միայն հաջողություն չի ունենա, այլև արևմտահայությանը կզգի ծանր և փունգավոր կացության մեջ:

3) Տեղեկանալով ուսական կառավարության դիրքորոշմանը, ըստ որի աննպատակահարմար էր համարվում բաղկանյան ճգնաժամի պայմաններում Հայկական հարցի արձարծումը՝ Պ. Նուրարը հրաժարվեց արևմտահայության բարենորոգչական պահանջները խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու մտադրությունից: Նա համակերպվեց այդ, թեկուզ և ոչ հուսադրող հրահանգին՝ գիտակցելով Հայկական հարցի դրական լուծման խնդրում Ռուսաստանի ունեցած կարևոր դերն ու այդ պատճառով նրա կարգադրություններին հետևելու անհրաժեշտությունը: Ստեղծված պայմաններում Պ. Նուրարն իր ջանքերը նպատակառդիեց տերությունների կառավարություններին և հասարակական շրջաններին արևմտահայոց խնդրի լուծմամբ շահագրգություն: Ֆրանսիական և անգլիական իշխանավորների հետ ունեցած հանդիպումներով, Եվրոպական ազդեցիկ թերթերում տպագրած հոդվածներով և կարդացած բանախոսություններով նա մեծապես նպաստեց բարենորոգումների հարցի նկատմամբ համակրական վերաբերմունքի ստեղծմանը, այն արքուն պահելուն և մոտակա քննարկման համար հող նախապատրաստելուն:

4) Հայկական հարցի լուծման նախաձեռնությունն իրեն վերապահելու համար ուսական կառավարությունը, հայերի պահանջների հիման վրա կազմելով բարենորոգումների ծրագիր, այն ներկայացրեց մյուս տերությունների քննարկմանը: Սակայն Գերմանիայի և նրա դաշնակիցների համառ դիմադրության պատճառով դրա ընդունումը ծախողվեց: Այդ իրողությանը հարկադրեց Պ. Նուրարին իր ջանքերը կենտրոնացնել հայկական բարենորոգումների իրականացման խնդրում գերմանական իշխանությունների համակրանքը շահելուն: Այդ նկատառումով նա Գերմանիայի արտգործնախարարի տեղակալ Ա. Ցիմմերմանի հետ ունեցած հանդիպման ժամանակ նոյնիսկ վերապահ դիրք գրավեց Ռուսաստանի հանդեպ՝ փորձելով փարատել

արևմտահայերի ուսական գգացմունքներ ունենալու և ուսական նվաճողական ծգուումներին ծառայելու վերաբերյալ գերմանական դեկանական կասկածները: Մրա հետ մեկտեղ Պ. Նուրարը հիմնավորեց բարենորոգումների պահանջների օրինականությունն ու մատնանշեց այն բարդությունները, որոնք կարող են առաջանալ դրանց մերժման դեպքում: Պ. Նուրարի ծեռնարկմերը որոշակիորեն նպաստեցին գերմանական դեկանակար շրջանների ընդդիմության բուլացմանն ու ուսական կողմի հետ բարենորոգումների վերաբերյալ նոր, փոխսպառումային ծրագրի շուրջ համաձայնության հաստատմանը:

5) Տեսնելով 1913 թ. հոկտեմբեր – 1914 թ. հունվար ամիսներին ուս-քուրքական բանակցությունների ընթացքում հայկական բարենորոգումների իրականացման դեմ Բ. Դուն ցուցաբերած համառ կեցվածքը՝ Պ. Նուրարը եկավ այն համոզման, որ դրական արդյունքի ակնկալման համար անհրաժեշտ էր ճնշում գործադրել Վերջինիս վրա: Այդ իմաստով նա արդյունավետ էր համարում տերությունների կողմից Թուրքիային տրվելիք փոխառությունների պայմանավորումը բարենորոգումների իրականացմամբ: Այդ խնդրում բոլոր տերությունների դեկանակար շրջանների համաձայնությունն ապահովելուն էլ, թենի անարդյունք, ուղղվեցին Պ. Նուրարի բոլոր ջանքերը: Նա փորձեց ցույց տալ որ Արևմտյան Հայաստանում տիրող անիշխանության պայմաններում, որը սպառնալիք է Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը, հնարավոր չէ ապահովել Թուրքիայում ներդրած գումարների և տրամադրված փոխառությունների անվտանգությունը:

Հայկական հարցի շուրջ ծավալված դիմանագիտական պայքարն ի վերջո ավարտվեց 1914 թ. հունվարի 26-ին հայկական բարենորոգումների իրականացման վերաբերյալ ուս-քուրքական համաձայնագրի ստորագրումով: Արևմտահայոց խնդրի այդ հանգուցալուծման մեջ իր ուրույն տեղն ու դերն ուներ նաև Պողոս Նուրարը՝ շնորհիվ այն եռանդուն գործունեության, որ նա դիմանագիտական մեծ հմտությամբ

ծավալեց Եվրոպական Երկրներում: Չթարքցնելով հանդերձ իր ափստանքը, որ արված զիջումների պատճառով համաձայնագրում տեղ չեն գտել մի շարք էական կետեր՝ նա լավատեսությամբ էր լցված արևմտահայության ապագայի հանդեպ և միամտորնն կարծում էր, որ բուրքական կառավարությունն անշեղորեն կյանքի կկոչի նախատեսվող միջոցառումները:

6) Բարենորոգումների իրականացման վերաբերյալ համաձայնության հաստատումից հետո առաջնային դարձավ հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների ընտրության հարցը: Առուսական կառավարության առաջարկությամբ այդ գործընթացին ակտիվորեն մասնակցեց նաև Հայ Ազգային Պատվիրակության նախագահ Պ. Նուրաբը: Ընորիկվ Եվրոպական հասարակական-քաղաքական շրջաններում ունեցած լայն կապերի և ծանորությունների՝ նրան հաջողվեց գտնել թեզիացի երկու ծեռնիսա անձնավորությունների, որոնք ընդգրկվեցին տերությունների կողմից կազմված ընդհանուր քննիչների պաշտոնի թեկնածուների ցուցակում: Ընտրությունն ի վերջո կանգ առավ հոլանդացի L. Վեստեննենկի և նորվեգիացի Ն. Հոֆֆի վրա, որոնց բուրքական կառավարությունը զցեց իր ազդեցության տակ և զգայի շափով սահմանափակեց նրանց իրավասությունները:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Եվրոպական դիվանագիտության մոտ ծավալած գործունեության ընթացքում Պողոս Նուրար Փաշան ցուցաբերեց դիվանագիտական տաղանդ, ստանձնած առաքելության հաջողության համար ներդրեց ունեցած հնարավորություններն ու կարողությունները՝ նպաստելու արևմտահայության բարենորոգչական պահանջների բավարարմանը և ամբողջովին արդարացրեց իր վրա դրված բոլոր հույսերն ու սպասումները: Սակայն ստեղծված աշխարհաքաղաքական կացությունը, մեծ տերությունների միջև գոյություն ունեցող սուր հակասությունները, արևմտահայերի ողբախ կացության նկատմամբ դրսերած անտարբերությունն ու բուրքական իշխանությունների որդեգրած քաղաքական

նորյունը վերջնականացեն խափանեցին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ գործադրելու խնդրի լուծումը: Օգտվելով առաջին աշխարհամարտի բռնկումից՝ Երիտրուրքերը ոչ միայն չեղյալ հայտարարեցին վերոհիշյալ համաձայնագիրը, այլև իրականացրեցին արևմտահայության ցեղասպանությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I. Ակզենտայի սկզբանական գրականություններ

Ա) Արխիվային նյութեր

1. Հայաստանի Ազգային Արխիվ /ՀԱՍ/

1. ֆ. 57, գ. 5, գգ. 15, 18, 19, 20, 23, 26, 28, 30, 31, 33, 34, 35, 43, 46, 47, 53, 57, 58, 62, 63:
2. ֆ. 113, գ. 3, գ. 1172:
3. ֆ. 430, գ. 1, գ. 26:
4. ֆ. 503, գ. 1, գգ. 53, 55, 58:

2. Հայաստանի Հանրապետության Ե. Զարենցի անվան Գրականության և Արվեստի Թանգարան /ՀՀ ԳԱՖ/

1. Արշակ Չոպանյանի Փ., գգ. 690/IV, 2451/ I, 2453/ I, 4758, 4762, 4763, 6557, 7456, 7458:
2. Գրիգոր Զոհրապի Փ., գգ. 67, 91:
3. Համբարձում Առաքելյանի Փ., գգ. 206, 458/ II, 1022, 2094, 2095:
4. Վահան Մանուկյանի Փ., գգ. 48, 52, 123ա, 430/6, 452ա, 452բ, 531ժգ, 714, 738, 742:
3. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան
  1. Գյուտ Եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, թղթ. 3, վագ. 99, 104, 105, 109, 125:
  2. Կաքողիկոսական դիվան, թղթ. 238, վագ. 64, 168:
4. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Պատմության ինստիտուտ /ՀՀ ԳԱԱ ՊԻ/
  1. Լեոյի անձնական արխիվ, ֆ. 1, գ. 1, գգ. 206, 211:

5. Արխիվ Վնешней Политики России /АВПР/
1. ф. Политархив, ձձ. 3459, 3460, 3462, 3465, 3472, 3473, 3484.
6. Bibliotheque d'Armenologie Nubar de l'UGAB, Paris, Archives de la Delegation Nationale Armenienne 1913-1923 /ADNA/
  1. Liasse 1/1 – Correspondance juin – novembre 1913.
  2. Liasse 1/2 – Correspondance novembre 1913 – février 1914.
7. Dr. Johannes – Lepsius – Archiv an der Martin – Luther Universität Halle – Wittenberg /LAH/
  1. 1719.
  2. 1726.
- Բ) Տպագիր սկզբանական նյութեր
- ա) հայերեն
  1. Լազեան Գ., Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիքը, 1942:
  2. Լեօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915:
  3. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923/, Զ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972:
  4. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Ներսիսյանի խմբ., Երևան, 1991:
- բ) ռուսերեն
5. Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/. Материалы политического архива Министерства

Иностранных Дел Кайзеровской Германии, под ред. В. Микаеляна, Ереван, 1995.

6. Будущее устройство Армении по официальным документам Оранжевой книги, трактующей Реформы в Армении, Петроград, 1915.

7. Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. Сборник документов и материалов в 2-х томах, под ред. С.Степаняна, том 1, Ереван, 1991.

8. Материалы по истории франко-русских отношений за 1910-1914 гг., Сборник секретных дипломатических документов бывшего Императорского Российского Министерства Иностранных Дел, Москва, 1922.

9. Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 года – 10 мая 1914 года, Петроград, 1915.

10. Сборник договоров России с другими государствами /1856-1917/, под ред. Е.Адамова, Москва, 1952.

#### գ) այլ լեզուներով

11. Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, ed. by V.Ghazarian, Waltham, 1996.

12. Ohandjanian A., K.u.K. Dokumente Armenien in Österreichischen Archiven, Band I, 1912-1914, Wien, 1988.

#### II. Աշխատություններ

##### ա) հայերեն

1. Ալպյանյան Ա., Մինաս Չերազ. Իր կյանքը և գործը, Կահիրե, 1927:

2. Ալպյանյան Ա., Պատմություն Մալարիո հայոց, Բեյրութ, 1961:

3. Ալպյանյան Ա., Արարական Միացեալ Համբապետութեան Եղիպատուի նահանգը և հայերը /սկզբէն մինչեւ մեր օրերը/, Գահիրե, 1960:

4. Աղարօն Ե., Կեանքիս յիշատակները, Ժընէվ, 1931:

5. Աղայան Ծ., Հայ ժողովոյի ազատազրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:

6. Աճառյան Հ., Տաճկահայոց հարցի պատմությունը /սկզբից մինչև 1915 թ./, Նոր-Նախիջևան, 1915:

7. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, Խն. 3 /1901-1918/, Վենետիկ, 1926:

8. Առուն, Քարենորդումներու հարցը, Կ. Պոլիս, 1914:

9. Արգումանյան Մ., Հայաստանը 1914-1917, Երևան, 1969:

10. Քարգեն Վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուրար փաշան, Վաղարշապատ, 1914:

11. Քիւրաս Ս., Արեւելյան խնդիր և Հայկական հարց, Կ. Պոլիս, 1919:

12. Գարու Ա., Ապրված օրեր, Բոստոն, 1948:

13. Գարտաշեան Ա., Նիւրեր Եղիպատուի հայոց պատմութեան համար, Խն. Ա, Գահիրե, 1943:

14. Գարտաշեան Ա., Նիւրեր Եղիպատուի հայոց պատմութեան համար, Խն. Գ, Պատմութիւն Եղիպատահայ քարերաններու և կրթական հաստատութիւններու, Վենետիկ-Ս.Ղազար, 1987:

15. Գեղամեանց Ե., Հայերի ազատազրական շարժումները XX դարում /Հայկական հարցի եօթերորդ շրջանը/, Քարու, 1916:

16. Զաւեն Արքավիսկոպոս, Պատրիարքական յուշերս. Վաւերագրեր և վկայութիւններ, Գահիրե, 1947:

17. Զարդարեան Վ., Յիշատակարան /1512-1933/, Խն. Գ, Գահիրե, 1934:

18. Զերտուշտ, Նուապար փաշան իշխան Նուապարեան. Ծագումն և կենսագրութիւն, ա.տ., 1920:

19. Զօհրապ Գ., Հայկական հարցը փաստաբուղերու լրյուն տակ, Պէյրութ, 1973:
20. Թէրզիպաշեան Ա., Նուպար, Փարիզ, 1939:
21. Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն /1805-1952/, Երևան, 1978:
22. Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս /քննական տեսութիւն/, Պէյրութ, 1964:
23. Լեռ, Անցյալից /հուշեր, բրեր, դատումներ/, Թիֆլիս, 1925:
24. Լեռ, Թուրքահայ հեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Խո. Բ, Փարիզ, 1935:
25. Լեփսիուս Հ., Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919:
26. Խաչատրյան Ա., Բարենորոգումները Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ. և Գերմանիայի քաղաքականությունը Թուրքիայում 20-րդ դարի սկզբին /թեկնածուական ատենախոսություն/, Երևան, 2000:
27. Խաչատրյան Հ., Պետրոսյան Տ., Հայկազունք Հայ զորավարներ, ուազմական, պետական գործիչներ, դիվանագետներ/, Երևան, 2002:
28. Կարապետյան Ն., Հայկական քարենորոգումների խնդիրը 1912-1914 թթ., Հայ ժողովրդի պատմություն, Խո. 6, Երևան, 1981:
29. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը /XIX-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ./, Երևան, 1999:
30. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1965:
31. Կիրակոսյան Ջ., Երիտրուբերը պատմության դատաստանի առաջ /19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ./, գիրք առաջին, Երևան, 1982:
32. Համբարյան Ա., Երիտրուբերի ազգային և հողային քաղաքանությունը Արևմտյան Հայաստանում /1908-1914/, Երևան, 1979:

33. Հուշամատյան Պողոս Նուպար փաշայի, Լու Անջելս, 1986:
34. Ղամբարյան Ա., Հայկական հարցը 1912-1914 թթ. և Սեծ Բրիտանիան /թեկնածուական ատենախոսություն/, Երևան, 2000:
35. Մալեզեան Վ., Ծամրու վրայ /Յուշարադ/, Բարիզ, 1950:
36. Մալեզեան Վ., Ծամրու ծայրը, Խո. Ա, Փարիզ, 1954:
37. Մալեզեան Վ., Ծամրու ծայրը, Խո. Բ, Փարիզ, 1955:
38. Մելրոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, 1999:
39. Նուպար և Նուպարաշեն, Փարիզ, 1929:
40. Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության /1906-1913/, Գահիրէ, 1913:
41. Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Խո. Գ, /1908-1922/, Պէյրութ, 1975:
42. Չօպանեան Ա., Հայաստանը բուրք լուծին տակ, Պուստոն, 1918:
43. Պաստրմաճեան Հ., Հայոց պատմութիւն, Խո. Բ, Անդիլիս, 1958:
44. Պողոսեան Ա., Պողոս Նուրբար Փաշա. Ազգային գործիչը, Երևան, 2004:
45. Սապահ-Գյուլյան Ա., Պատասխանառուները, Բէյրութ, 1974:
46. Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Երևան, 1964:
47. Սարուխան, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում /1860-1910/, Խո. Ա, Թիֆլիս, 1912:
48. Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:
49. Սերոբեան Ա., Գիտումներ և դատումներ /հջեր օրագրէս/, Պէյրութ, 1932:

50. Սերոբեան Մ., Մեր պայքարը իայ ազատազրութեան ուղիով. Վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրէ, 1948:
51. Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937:
52. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիր Ա., Երևան, 1996:
53. Սիմոնյան Հ., Թուրք ազգային բորժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:
54. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
55. Մրենց Ս., Օրմանեան հանրային խոհին և դատաստանին առջև, Կ. Պոլիս, 1913:
56. Վահան Մալէզեանի կեանքն ու գործը. Յուշամատեան իր ուրսունամեակին առքի /1871-1951/, Փարիզ, 1951:
57. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
58. Փափազեան Վ., Խմ յուշերը, Խո. Բ., Պէյրուր, 1952:
59. Քօնքանան Լ. տը, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913:
60. Օհանջանյան Ա., 1915 թվական. Անիերքելի վկայություններ /Ավատրիական զավերագրերը հայոց ցեղասպանության մասին/, Երևան, 1997:
61. Օսեան Ե., Պօղոս Փաշա Նուպար Ակնազրական նօրեր/, Կ. Պոլիս, 1913:
62. Օսյան Ե., Երկերի ժողովածու, Խո. 4, Երևան, 1962:
63. Օրմանեան Մ., Խոհը և խոր, Երևան, 1929:
- բ) ուսերեն
64. Ավետյան Ա., Գերմանский империализм на Ближнем Востоке, Москва, 1966.
65. Акопян С., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967.
66. Джемаль Паша, Записки 1913-1919, Тифлис, 1923.
67. Коджоян Р., Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны /кандидатская диссертация/, Ереван, 1990.
68. Контансон Л. де, Реформы в Азиатской Турции. Армянский вопрос, Москва, 1914.
69. Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX - начале XX веков, Ереван, 1988.
70. Лазарев М., Курдский вопрос /1891-1917/, Москва, 1972.
71. Манделыштам А., Младотурецкая держава, Москва, 1915.
72. Мартиросян М., Армянский вопрос и русская дипломатия в 1912-1914 гг. /кандидатская диссертация/, Ереван, 1990.
73. Милюков П., Воспоминания, том 2, /1859-1917/, Москва, 1990.
74. Могилевич А., Айрапетян М., На путях к мировой войне 1914-1918 гг., Ленинград, 1940.
75. Новичев А., Очерки экономики Турции до первой мировой войны, Москва-Ленинград, 1937.
76. Сазонов С., Воспоминания, Москва, 1991.
77. Степанян С., Армения в политике империалистической Германии /конец XIX – начало XX века/, Ереван, 1975.

գ) այլ լեզուներով

78. Buxton H., N., Travel and Politics in Armenia, London, 1914.
79. Dadrian V., The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Oxford, 1995.
80. Hovannisian R., Armenia on the Road to Independence, Los Angeles, 1974.
81. Karal E., Armenian Question /1878-1923/, Ankara, 1975.
82. Koças S., Tarihte Ermeniler ve Türk Ermeni İlişkiler, İstanbul, 1990.
83. Nassibian A., Britain and the Armenian Question 1915-1923, New-York, 1984.
84. Nubar B., Note sur la Question Armenienne, Paris, 1916.
85. Uras E., The Armenians in History and the Armenian Question, İstanbul, 1988.

**III. Պարբերական մասով**

**Ա) Թերթեր**

ա) հայերեն

1. Ազատամարտ, Կ.Պոլիս, 1913:
2. Ազգ, Թուսոնն, 1913-1914:
3. Արմենիա, Մարտել, 1914:
4. Ասպարեզ, Ֆրեզն, 1913:
5. Բիզանտիոն, Կ.Պոլիս, 1913:
6. Դրշակ, Ժնև, 1914:
7. Ժամանակ, Կ.Պոլիս, 1912-1913:
8. Կոչնակ, Նիւ Եռք, 1913-1914:
9. Հայրենիք, Թուսոնն, 1913:
10. Հնչակ, Փարիզ, 1914:
11. Հորիզոն, Թիֆլիս, 1912-1914:
12. Մշակ, Թիֆլիս, 1912-1914:

13. Յուսարեր, Կահիրե, 1913-1914:

14. Նոր Հայաստան, Կ.Պոլիս, 1918, 1919:

բ) ռուսերեն

15. Новое время, С.-Петербург, 1913.

**Բ) Ամսագլեր**

ա) հայերեն

1. Անահիտ, Փարիզ, 1930:
2. Արարատ, Էջմիածին, 1914:
3. Բանքեր Հայաստանի արխիվների, Երևան, 1983, 1989:
4. Եղիստահայ տարեցոյցը, Կահիրե, 1914:
5. Էջմիածին, Էջմիածին, 1965:
6. Հայրենիք, Թուսոնն, 1927, 1932:
7. Միուրին, Կահիրե, 1914:
8. Պատմա - բանափրական հանդես, Երևան, 1992, 2000:
9. Վեմ, Փարիզ, 1933, 1934:

բ) անգլերեն

10. The American Historical Review, New-York, 1948.
11. Armenian Review, Boston, 1986.

**IV. Հոդվածներ**

ա) հայերեն

1. Խատիսյան Ա., Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք», ամսագիր, 1932, N 11:
2. Հակոբյան Ա., Նախափորձ Նուպարյան տոհմազրության, «Բանքեր Հայաստանի արխիվների», 1983, N 2:

3. Ղամբարյան Ա., Դիվանագիտական պայքարը Հայկական հարցի շուրջ և Անգլիայի քաղաքականությունը /1913 թ. երկրորդ կես/, «Պատմա-քանախրական հանդես», 2000, N 2:
4. Մարտիրոսյան Մ., Հայկական քարենորդումների իրազործման ծախողումը Օսմանյան կայսրությունում 1914 թ., «Բանքեր Հայաստանի արխիվների», 1989, N 3:
5. Միքայելյան Ն., Արխիվային նոր նյութեր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի վիճակի մասին /1912-1913 թթ./, «Էջմիածին», 1965, NN Բ-Գ-Դ, Ե-Զ-Է:
6. Ներսիսյան Մ., Հայկական հարցի արձարծումը 1912 թ., «Պատմա-քանախրական հանդես», 1992, N 1:
7. Սիրունի Յ., Գիծեր Երրուանդ Օտեանի կեանքեն, «Հայրենիք», ամսագիր, 1927, N 8:
8. Վարանյան Մ., Վիկտոր Բերար, «Հայրենիք», ամսագիր, 1932, N 5:
9. Փափազյան Վ., Հայկական քարենորդումները /1912-1914/, «Այն», 1933, N 1-2; 1934, N 1-2:
- բ) ուսւելեն
10. Гольц Г., Корхмазян Р., Доктор Иоганнес Лепсиус. Страницы жизни /По материалам архива И. Лепсиуса/, “Страны и народы Ближнего и Среднего Востока”, т. XII, Турция, Ереван, 1985.
11. Истягин Л., Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу /1912-1914 гг./, Из истории агрессивной внешней политики германского империализма /Сборник статей/, Москва, 1959.

- գ) այլ լեզուներով
12. Davison R., The Armenian Crisis 1912-1914, “The American Historical Review”, 1948, vol. LIII, N 3.
13. Dussen W. van der, The Question of Armenian Reforms in 1913-1914, “Armenian Review”, 1986, vol. 39, N 1.
14. Goltz H., Die “Armenischen Reformen” im Osmanischen Reich, Johannes Lepsius und die Gründung der Deutch-Armenischen Gesellschaft, “75 Jahre Deutch-Armenischen Gesellschaft Festschrift”, Maintz, 1989.
15. Westenenk L., Diary Concerning the Armenian Mission, “Armenian Review”, 1986, vol. 39, N 1.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸԵՎ	
ՊՈՂՈՍ ՆՈՒԹԱՐ ՓԱՇԱՆ	13
1) Հայկական հարցի վերաբարձումը և տերությունների շահախնդրությունը	13
2) Պողոս Նութար Փաշան և Հայ Ազգային Պատվիրակության կազմավորումը	25
3) Պողոս Նութարի հայացքներն Արևմտյան Հայաստանում բարենորդումների իրականացման վերաբերյալ	44
ԳԼՈՒԽ Ե ՔՐՈ ՐԴ. ՊՈՂՈՍ ՆՈՒԹԱՐԻ ԳՈ ՌԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԾՐՁԱՆՆԵՐՈՒՄ	71
1) Պողոս Նութարի ծնննարկները հայկական բարենորդումների քնննարկման նախօրյակին	71
2) Պողոս Նութարի ջանքերը հայկական բարենորդումների խնդրում մեղմելու Գերմանիայի դիմապությունը	109
ԳԼՈՒԽ Ե ՐՐՈ ՐԴ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՁ ԵՎ ՊՈՂՈՍ ՆՈՒԹԱՐԸ /1913 թ. ՄԵՊ-ՏԵՄԲԵՐ – 1914 թ. ՀՈՒԼԵՍ/	128
1) Պողոս Նութարի գործունեությունը ոռա – քուրքական բանակցությունների ընթացքում /1913 թ. սեպտեմբեր – 1914 թ. հունվար/	128
2) Պողոս Նութարի դերը հայկական վիլայեթների ընդիանութնիշների ընտրության և նրանց իրավասությունների պաշտպանության գործում	170
ՎԵՐՁԱԲԱՆ	190
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ...	196
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	183